Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները

ԵՎՐԱՍԻԱ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գիտաժողովի նյութեր

2012

Եվրասիա միջազգային համալսարան

Եվրասիա միջազգային համալսարան

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները

Գիտաժողովի նյութերի ժողովածու

Երևան - 2012

ՀՏԴ 330.3(u 79.25):06
ԳՄԴ 65.9(2Հ)23
Հ 247

Հրատարակվում է
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Աշոտ Մարկոսյան (գլխավոր խմբագիր),տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սուրեն Օհանյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աղասի Սարգսյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարտին Ֆահրադյան, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Հովհաննես Հարությունյան (գլխավոր խմբագրի տեղակալ), տնտեսագիտության թեկնածու
Հովհաննես Ստեփանյան, իրավաբանական գիտությունների դոկտոր
Աշոտ Ենգոյան, քաղաքական գիտությունների դոկտոր
Աննա Օհանյան, ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (PhD)
Հակոբ Հարությունյան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Հ 247 **Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները:** Գիտաժողովի նյութերի ժողովածու/խմբ.խորհուրդ.— Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 1. 2012. — 224 էջ:

Գիտական տեղեկատուն ներկայացնում է Եվրասիա միջազգային համալսարանում 2012 թ. փետրվարի 15–ին տեղի ունեցած ամենամյա գիտագործնական համաժողովի նյութերը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական զարգացման հիմնախնդիրներին և առաջնահերթություններին:

Տպագրված նյութերը կարող են օգտակար լինել գիտական աշխատողների, դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, պետական կառավարման աշխատակիցների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 330.3(u79.25):06
ԳՄԴ 65.9(2Հ)23

ISBN 978–99941–974–6–0

© Եվրասիա միջազգային համալսարան, 2012

ԱՌԱՋԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանում 2012 թ. փետրվարի 15–ին տեղի ունեցավ ամենամյա գիտագործնական համաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական զարգացման հիմնախնդիրներին և առաջնահերթություններին:

Գիտաժողովում քննարկված զեկույցները վերաբերում են հանրապետության նյութական արտադրության և սոցիալական ոլորտի զարգացման ռազմավարությանը: Հատուկ անդրադարձ է կատարվել երկրի արտահանման և ներմուծման տնտեսական հաշվեկշռի բարելավմանը՝ ի օգուտ արտահանման, տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման և հատկապես որակյալ կադրերի պատրաստման հիմնախնդիրներին: Այդ նպատակով քննարկվել են եվրոպական առաջադեմ համալսարանների հետ համագործակցված կրթական գործունեության իրականացման, հանրապետության ծայրամասային և լեռնային շրջանների արագացված և տարածքի հավասարաչափ յուրացման ու այս գործում ագրոարդյունաբերական տնտեսության դերի բարձրացման, ընդերքի ռեսուրսների օգտագործման ռազմավարության, ներդրումների և հատկապես Հայաստան–Սփյուռք համագործակցության կատարելագործմանն առնչվող հարցեր:

Գիտաժողովում իրենց հետազոտության արդյունքներն են ներկայացրել կրթական ու գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտահետազոտական հաստատությունների աշխատողներ և հետազոտող ուսանողներ:

Սույն գիտական տեղեկատուն ներառում է գիտական նստաշրջանին ներկայացված 36 զեկույցներից 24–ը, որոնք առանձնանում են գիտական պատշաճ մակարդակով և հետազոտական աշխատանքի խորությամբ, տեսական և գործնական նորարարական մոտեցումներով:

ԲԱԺԻՆ I

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Տարածքային տնտեսական կլաստերի կառուցվածքային բաղադրամասերը

(մեթոդական դրույթներ)

Սուրեն Օհանյան

Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջերս շրջանառվող «կլաստեր»[1] հասկացությունը բավականին տարբեր մեկնաբանություններ ունի՝ և՛ տնտեսական առումներով, և՛ գործնականում դրսևորումների տեսակետից: Ամենատարածվածն այն է, որ այս հասկացությունը մեկնաբանվում է որպես մի արտադրական կառույց, որն ունի յուրահատուկ ռեսուրսային ներուժ, որտեղ նկատվում է ներդրումներ կատարելու անհրաժեշտություն և իրականացվում է տնտեսական գործունեություն: Տարածքային տեսակետից կլաստերը արտահայտվում է ռեգիոնալ կառուցվածքով, նրա կազմի մեջ մտնող ձեռնարկությունների աշխարհագրական մոտիկությամբ ու մեկ կամ մի քանի համանման (համասեռ) մասնագիտացման տնտեսության ճյուղերի ձեռնարկությունների համակենտրոնացմամբ:

Նկատի ունենալով հասարակական կյանքի կազմակերպման այս նոր՝ տարածքային տնտեսական կլաստերների (ՏՏԿ) առաջադիմական ձևով կազմակերպման խնդրի կարևորությունը,զարգացած երկրների փորձը, գործնականում կիրառելու անհրաժեշտությունը՝ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում, որպես յուրահատուկ բնատնտեսական և սոցիալ–պատմական նախադրյալներ ունեցող երկրի (ռեգիոնի), դրանց ձևավորման և զարգացման տնտեսական հիմնահարցերի ու առանձնահատկությունների բացահայտմանը:

Կլաստերը որպես հասարակության և հատկապես արտադրության տարածքային կազմակերպման նոր ձև ՀՀ–ում, մեր կարծիքով, կարող է ձևավորվել հետևյալ նախադրյալների հիման վրա.

1. Բնատարածքային ամբողջականության

ՀՀ–ի տարածքն արտահայտված է հարթավայրային, նախալեռնային և լեռնային բնատարածքային միավորներով և ենթամիավորներով, որոնք բնութագրվում են ինքնատիպ ռեսուրսային ներուժով, ինչպիսիք են հողային, ջրային, անտառային, ռեկրեացիոն, հանքային, շինարարական և այլն: Դրանք որոշակիորեն

1 «Կլաստեր» և «ճյուղային կլաստեր» տերմինները գիտական շրջանառության մեջ են դրվել տնտեսագետ Մ. Պորտերի կողմից (ԱՄՆ): Այնուհետև Մ. Էնրայտը մշակել է «ռեգիոնալ կլաստերի» տեսությունը:

ազդում են տրանսպորտային և սոցիալ–տնտեսական ենթակառուցվածքային համակարգերի ձևավորման վրա՝ ստեղծելով ռելիեֆի ձևաբանությամբ պայմանավորված տնտեսական տարածքային յուրահատուկ կառուցվածքներ: Համանման կառուցվածքներ ձևավորվում են արդեն Ողջի, Դեբեդ, Արփա, Արաքս, Որոտան և այլ գետերի հովիտներում ու վերին, ստորին հոսանքների շրջաններում: Այս հետևությունը հիմնավոր է այնքանով, որ այդ տարածքային միավորներն առանձնանում են տնտեսության զարգացման յուրահատուկ պատմությամբ, տնտեսության նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային ինքնատիպ բնութագրումներով, կլաստերաառաջացման կառուցվածքային տարրերով, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների կազմով ու դրանց փոխկապվածությամբ: Այս վերջին ստորաբաժանումներն ամբողջականացնող կապակցությունները պայմանավորում են ՏՏԿ–ի գործունեության սահմանները, երկրաչափական գծապատկերը, աշխարհագրական տեղադիրքը և այլն:

2. Տեղում առկա ռեսուրսային ներուժի

Ներկայումս ստեղծված իրադրության պայմաններում (տրանսպորտային շրջափակում, տնտեսության զանգվածային վերակազմավորման և վերամասնագիտացման գործընթացներ, սահմանափակ թվով, այն էլ լոկալ ազատ տնտեսական գոտիներ) տնտեսությունը գրեթե ամբողջությամբ զարգանում է տեղական հումքատեսակների օգտագործման հիման վրա:

Բնականաբար ՏՏԿ–ները կձևավորվեն և կզարգանան այդ հումքատեսակների հանույթի վերամշակման (արդյունաբերական հումք) և պատրաստի արտադրանքի արտադրության (ներառյալ գյուղատնտեսական հումքատեսակներից արտադրության)՝արտադրական հաջորդական շղթայի իրականացման՝ մինչև վերջնական արդյունքի ստացման և իրացման շուկա առաքման ուղղությամբ: Այս յուրահատկությունից ելնելով՝ կլաստերները կարող են առանձնանալ մասնագիտացման գլխավոր և ուղեկցող ճյուղերով ու դրանց սպասարկումը ապահովող ծառայությունների ենթակառուցվածքներով: Այդ դեպքում կլաստերները կբնութագրվեն իրենց գլխավոր արտադրական ուղղությունը բնորոշող ճյուղի անվանումներով. խաղողի, պտղի, բանջարեղենի, մսի, կաթի և այլ գյուղատնտեսական հումքատեսակների (օրինակ՝ խաղողավերամշակման, պտղավերամշակման և այլն) կամ արդյունաբերական հումքատեսակների գծով (պղնձի, մոլիբդենի, ոսկու, կապակցող և շինաքարերի և այլն): Այս պարագայում ամենագլխավորը կլաստերի առանցքային և ուղեկցող ճյուղերի բացահայտումն է և դրանց համարժեք ենթակառուցվածքների ձևավորումը՝ օգտագործելով շուկայական տնտեսությունը բնորոշող լծակները: Հավանաբար դրան կարելի է հասնել, մի դեպքում՝ բիզնես ծրագրերի իրականացման նպատակով արտոնյալ հարկային ու վարկային քաղաքականության վարման, մեկ այլ դեպքում՝ պետականորեն կարգավորվող լծակների կիրառման: Այսպիսով՝ ՏՏԿ–ները միմյանցից կտարբերվեն տնտեսական դիզայնով, տնտեսական ներուժով, տնտեսության մասնագիտացման բնութագրումներով՝ հատուկ առանձնացնելով գերակա ճյուղերը. (ինչպես, օրինակ՝ տնտեսության գիտատար կամ նորարարական ուղղությունները):

3. Միջազգային մասնագիտացման ճյուղերի առանձնացման

ՏՏԿ–երի առաջացումը և ՀՀ–ում դրանց ռեգիոնալ ցանցի ձևավորումը պայմանավորված է մասնագիտացման ճյուղերի առանձնացմամբ՝ դրանց թողարկած արտադրանքների ծավալի կլաստերի ներսում օգտագործման և նրանից դուրս արտահանված ծավալի համամասնությամբ: Այսպես, եթե արտահանված արտադրանքի ծավալը գերակշռում է ներքին շուկայում սպառվածի ծավալին, նշանակում է ճյուղն ունի միջազգային մասնագիտացում, և որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան կլաստերն ունի մեծ հզորություն: Բոլոր դեպքերում կլաստերների սահմանների զուգակցումը համայնքային վարչական շրջանների ու մարզերի սահմաններին կարող է դրական դեր խաղալ նրա նպատակային տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման և հատկապես ռազմավարական ու բիզնես ծրագրեր առավել շահավետորեն իրագործելու համար: Ավելացնենք նաև, որ յուրաքանչյուր տարածքային կլաստեր պետք է առավելագույն չափով բիզնեսի զարգացման համար լինի ներկայանալի, հնարավոր բիզնես ծրագրեր իրագործելու համար հասանելի հատկապես օտարերկրյա ներդրումների ու սփյուռքի մեր հայրենակիցների համար: Կլաստերը պետք է լինի բաց սոցիալ–տնտեսական համակարգ՝ իր զարգացման բոլոր հնարավորություններով ու բիզնես անձնագրերով (ծրագրերով):

4. Հաշվարկային կլաստերային էֆեկտի

Երբ տնտեսության զարգացման տարածքային նախադրյալների հիմնավոր զուգակցման և կլաստերաառաջացնող ճյուղերի շուրջ այլ շահավետ ճյուղերի կենտրոնացման ճանապարհով առաջանում է նոր տնտեսական կառուցվածքով համակարգ: Վերջինիս մեջ մտնող կառույցները փոխպայմանավորված լինելով միմյանցով՝ մեկը նպաստում է մյուսի առավել արդյունավետ գործարկմանն ու ռեսուրսների (հումքատեսակների և թափոնների) համատեղ ու համալիր օգտագործմանը, ինչպես նաև ենթակառուցվածքների միացյալ օգտագործմանը, որոնք առաջ են բերում էական խնայողություն, և որն առաջացնում է լրացուցիչ «էֆեկտ»: Վերջինս կարելի է անվանել որպես «կլաստերային էֆեկտ», որը տնտեսական մասնագիտացման խորացման և կոոպերացման զարգացման հետևանք կարող է լինել: Տնտեսության այս տարբերակներով կազմակերպման դեպքում կզարգանան նաև միջկլաստերային արտադրական հոսքերը, որոնք կարող են հանգեցնել զուգակցված ու խմբավորված (ինտեգրալ) առավել խոշոր տնտեսական տարածքային միավորների (կառուցվածքների), ինչպես, օրինակ՝ միջին և խոշոր մասշտաբի կլաստերների առաջացմանը:

5. Մասնագիտացված աշխատանքային ռեսուրսների ներուժի և դրա շարունակական վերարտադրության հաստատությունների առկայության

Տնտեսության գլխավոր և ուղեկցող ճյուղերի գործունեության տեսակետից ՏՏԿ–ները, որպես ամբողջական(հասուն) և ոչ ամբողջական (ոչ հասուն) տնտեսական համակարգեր, իրենցից ներկայացնում են աշխատանքային նյութական ռեսուրս–մարդկային ներուժ–արտադրության (կամ սպասարկման ծառայության) երեք բաղադրամասերից բաղկացած կառուցվածքային ստորաբաժանումներ: Դրանք ունեն հավասարարժեք նշանակություն, փոխազդում են միմյանց և փոխպայմանավորված են միմյանցով: Սակայն այդ միասնության շարժիչ ուժը մարդկային ռեսուրսներն են՝ իրենց բարձր մասնագիտական որակական բնութագրումներով:

Շուկայական տնտեսական համակարգում՝ միջճյուղային և ներճյուղային,ինչպես նաև ներկլաստերային ու միջկլաստերային մրցակցության պայմաններում, յուրաքանչյուր տնտեսվարող (արտադրող կամ ծառայություն մատուցող), շուկայական բացասական ազդեցություններից երաշխավորված չէ, եթե չի գտել իր շուկայական սեգմենտը՝ գործունեության աստիճանական և կայուն զարգացման ընթացքը: Այլ կերպ ասած՝ մարդկային մասնագիտական ներուժը որքան որակավորված լինի, տիրապետի գործունեության տեխնոլոգիական նորարարություններին, առաջադիմական ու հեռանկարային զարգացման միտումներին, անսխալ կանխատեսի մրցակցության (նաև տարածքային կտրվածքով) հետևանքները, ներդնի աշխատանքի արտադրողականության խթանման և բարձրացման ժամանակակից եղանակներ և այլն ՏՏԿ–ները կառանձնանան արդյունավետության բարձր մակարդակով: Հետևաբար, կլաստերի կառուցվածքի բաղկացուցիչ մասերի մեջ մարդկային ներուժի պատրաստումը և վերապատրաստումը առաջնային նշանակություն է ստանում: Բացի այդ, մասնագետների պատրաստմանը ներկայացնող նոր պահանջները ենթադրում են տեսական և գործնական գիտելիքների առնվազն հավասարաչափ ուսումնական ծանրաբեռնվածություն, առավելապես գործնական հմտություններով զինված և բարձր տեսական պատրաստվածություն ունեցող մասնագետների պատրաստում:

Բնականաբար բուհ–բիզնես (գործատու) համագործակցությունը ենթադրում է օրգանական կապի դրսևորում, երբ բուհը ներդաշնակ գործում է բիզնեսի հետ և բիզնեսի պահանջներին համահունչ, կամ էլ բիզնեսն է մոտենում կլաստերում պահանջարկ ունեցող բուհին ու այլ ուսումնական հաստատություններին: Բոլոր դեպքերում այդ անմիջական համագործակցությունը չափազանց հրատապ խնդիր է դարձել, որովհետև դրանց տարանջատ գործելու ներկայիս պրակտիկան խոսում է կլաստերային ոչ արդյունավետ տարածքային կազմակերպման և կառավարման մասին: Այդ կառուցվածքում դոմինանտ դեր են խաղում բարձր որակավորման մասնագետները, կլաստերի մասնագիտացման պահանջանին համապատասխան բարձրագույն և միջին մասնագիտական որակավորման, տեսական և գործնական հմտությունների զարգացման հնարավորություններով կադրերի վերարտադրությունն ու վերապատրաստումը ամբողջ կյանքի ընթացքում:

Հետևաբար, այսուհետ խնդիրը հանգում է ոչ թե պատահական կամ միակողմանիորեն հիմնավորված, այլ տվյալ կլաստերի տնտեսության ձեռնարկություններում պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստող ուսումնական հաստատությունների տեղաբաշխմանը և տարածքայնորեն օպտիմալ տեղաբաշխված տնտեսական ու սոցիալական ենթակայության օբյեկտների հետ ինտեգրմանը: Այս դեպքում Երևան քաղաքը ներկայացված կլինի տարածքային վարչական շրջանների թվով կլաստերներով, որոնք կունենան իրենց տնտեսության մասնագիտացման յուրահատուկ ուղղությունները և կհանգեցնեն միջկլաստերային ինտենսիվ համագործակցության զարգացմանը: Նույն կերպ հանրապետության տարածքը՝ ըստ մարզերի, քաղաքային ու գյուղական համայնքների կամ դրանց տարածքային ինտեգրված խմբերի, կներկայացվի որպես առանձին ու միմյանց փոխկապակցված կլաստերներ՝ պայմանավորված մասնագիտացված կառուցվածքային տնտեսական ստորաբաժանումներով:

Structural components of regional economic clusters (methodological points)

The new regional economic clusters in social life are known to have advantageous and effective methods of more advanced organization, which are employed in developed countries and are highly necessary to be implemented in practice. Taking this fact into consideration, the author of the article reasons out the economic problems and peculiarities of formation and development of clusters in Republic of Armenia as a country with unique natural–economic and socio–historic background.

Հայաստանի Հանրապետության տնտեսական իրադրությունը և զարգացման հիմնախնդիրները

Աշոտ Մարկոսյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Արտաշես Եղիազարով

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հայցորդ

Տնտեսագիտության տեսության դերը: Ականավոր տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի, ում հայացքներն ամենամեծ ազդեցությունն են ունեցել մարդկության զարգացման ընթացքի վրա, հատկապես XX դարի առաջին կեսերին, կարծիքով՝ «Տնտեսագիտության տեսությունն անմիջապես տնտեսական քաղաքականության մեջ կիրառվող արդեն պատրաստի առաջարկությունների հավաքածու չէ: Այն, ավելի շուտ, մեթոդ է քան ուսմունք, ինտելեկտուալ գործիք, տեխնիկա՝ օգնելու նրան, ով տիրապետում է դրան, հանգելու ճիշտ եզրակացության»[1], կամ. «Տնտեսագետների և քաղաքական մտածողների գաղափարները, երբ նրանք ճիշտ են, կամ երբ սխալվում են, ունեն անհամեմատ ավելի մեծ նշանակություն, քան ընդունված է կարծել կամ մտածել: Իրականում հենց միայն նրանք էլ կառավարում են աշխարհը»: Տնտեսագիտության մեկ այլ հսկայի՝ Լյուդվիգ ֆոն Միզեսի դիպուկ բնորոշմամբ՝ «Դուր է գալիս, թե ոչ, սակայն արդի քաղաքականության հիմնախնդիրներն իրականում զուտ տնտեսական են և չեն կարող ընկալվել առանց տնտեսագիտության տեսության: Միայն այն անձը, ով գլուխ է հանում տնտեսագիտության տեսության հարցերից, ի վիճակի է մշակել անկախ տեսակետ քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ»[2]:

Եթե նշված խոսքերի ճշմարտացիությունը կարևորվել է տասնյակ տարիներ առաջ, ապա ներկայումս, համաշխարհային տնտեսության ծավալման և զարգացման արդյունքում, տնտեսական ինտեգրման և համաշխարհայնացման (գլոբալացման) պայմաններում կայացվող տնտեսական որոշումների ազդեցությունը ստացել է ավելի մեծ կարևորություն, իսկ հետևանքները դարձել են ավելի նշանակալից: Ասվածի լավագույն ապացույցն է ժամանակակից համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը, սկսվելով ԱՄՆ–ի տնտեսությունից (2008 թ. կեսերից), կարճ ժամանակահատվածում արագորեն տարածվեց ողջ աշխարհում և ձեռք բերեց համամոլորակային բնույթ: Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետների գնահատականներով համաշխարհային տնտեսությանը ճգնաժամի հասցված վնասը անընդհատ աճում է և ներկայումս գնահատվում է շուրջ 25 տրիլիոն դոլար, որը համարժեք է աշխարհի ամենահզոր տնտեսություն ունեցող երկրի՝ ԱՄՆ–ի երկու տարվա ՀՆԱ–ի մեծությանը: Հիշեցնենք նաև, որ համաշ-

1 Պոլ Հեյնե, Տնտեսագիտական մտածելակերպ, թարգմանություն անգլերենից, Եր., «Էդիթ Պրինտ», 2008, էջ 5:

2 Курс экономической теории: учебник, 5–е исправленное, дополненное и переработанное издание. Киров: “АСА”,2005, с.11.

խարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի վնաս հասցրեց նաև ՀՀ տնտեսությանը, որի հետևանքով ՀՆԱ–ի նվազումը 2009 թ. կազմեց 14,1 տոկոս: Այլ կերպ ասած՝ բաց և փոքր տնտեսությունների ինչպես առկա վիճակը, այնպես էլ զարգացման հնարավորությունները մեծապես կախված են ոչ միայն տվյալ երկրի միկրո և մակրո քաղաքականություններից, այլ նաև արտաքին շուկաներից: Ավելին՝ վերջիններիս դերը ժամանակի ընթացքում ավելանում է: Այլ կերպ ասած՝ ներկայումս ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին երկրների ազգային տնտեսությունները գտնվում են մեծ փորձության՝ արտակարգ իրավիճակում, և զարգացման թիվ մեկ խնդիր է դարձել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարումը և հակաճգնաժամային ծրագրերի մշակումը, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումների իրականացումը: Այս համատեքստում նշենք նաև, որ ճգնաժամ ասելով մասնագիտական գրականության մեջ հասկացվում է տնտեսական զարգացման՝ արտադրության, ամենալայն իմաստով արժեքի, հարստության ստեղծման անսովոր խիստ և երկարատև անկումը, որն ավանդաբար սահմանվում է որպես իրական ՀՆԱ–ի նվազում երկու հաջորդական եռամյակների (վեց ամիսների) ընթացքում: Վերջերս այն տնտեսությունները, որոնց տնտեսական աճի տեմպերը դանդաղում են, նույնպես համարվում են անկման փուլում գտնվող[3]:

Հայաստանի տնտեսական իրավիճակի ընկալումները: Սոցիոլոգիական հետազոտությունները տեղեկատվական այն ուսումնասիրություններն են, որոնք օգնում են պարզելու երկրի տնտեսական իրադրության վերաբերյալ այդ երկրի քաղաքացիների կարծիքը: Հաճախ ԶՏՄ–ում կարդում ենք, որ այս կամ այն սոցիոլոգիական կենտրոնի, կազմակերպության կամ մասնագետների կողմից իրականացվել է այս կամ այն տնտեսական կամ սոցիալական մեծ հնչեղություն ունեցող երևույթի վերաբերյալ հարցում, սակայն ինչ–ինչ պատճառներով այդ հարցումների արդյունքները հեռու են պահվում հասարակական լայն շերտերից: Հավանաբար, դա արվում է՝ հասարակությունից ինչ–որ բան թաքցնելու կամ նրան անտեղյակության մեջ պահելու նկատառումներից ելնելով: Այս պարագաներում միանշանակ է, որ մեզանում վատ են օգտագործվում հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքում ստացված տեղեկությունները, մինչդեռ հատկապես զարգացած երկրներում այդպիսի հարցումները լայնորեն կիրառվում են, և դրանց արդյունքները դրվում են կարևոր խնդիրների լուծումների կայացման հիմքում: Պետք է նաև ընդգծենք, որ մասնագիտական բարձր մակարդակով կատարված ուսումնասիրությունները, որոնք դառնում են հանրության սեփականությունը մեզանում, դժբախտաբար, շատ չեն:

Ներկայումս հրապարակում գտնվող հետազոտություններից մեկում ներկայացված են Հայաստանի քաղաքացիների կողմից տնտեսական իրավիճակի ընկալումները[4]: Համաձայն կատարված հետազոտության՝ Հայաստանի տնտեսա-

3 Պոլ Հեյնե, Պիտեր Բոտկե, Դեյվիդ Պրիչիտկո, Տնտեսական մտածելակերպ, Թարգմանություն անգլերենից, Գիրք երրորդ, Եր., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 296, 298, 304:

4 Կոռուպցիան Հայաստանում, Տնային տնտեսությունների 2010 թ. հետազոտություն, Եր., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, 2011, էջ 13–18:

կան իրավիճակի վերաբերյալ բացասական ընկալումներ ունեցող մարդկանց թիվը մեզանում 2008–2010 թվականներին զգալիորեն աճել է, ավելին՝ նրանք մեծամասնություն են կազմել:

Կատարված հետազոտության հիմնական բաժիններից է Հայաստանի Հանրապետության առջև ծառացած հիմնական խնդիրների բացահայտումը: Ըստ որում յուրաքանչյուր հարցված կարող էր տալ մինչև երեք պատասխան (տոկոսներով արտահայտված): Ընդամենը տրվել է 17 հարց[5]: Հարցման պատասխաններում առաջին տեղը, ըստ 2008, 2009, 2010 թվականների, զբաղեցրել է գործազրկությունը համապատասխանաբար 66, 65 և 69 տոկոս, երկրորդ տեղը՝ գնաճը (բարձր գները)՝ 33, 20 և 43 տոկոս, երրորդ տեղը աղքատությունը՝ 39, 30, 34 տոկոս, չորրորդ տեղը ընդհանուր տնտեսական խնդիրները՝ 21, 23, 22 տոկոս (տե՛ս գծապատկեր 1–ը):

Հարկ է նշել նաև, որ 2010 թ–ին գնաճը համարվել է ավելի կարևոր խնդիր, քան 2008 թ–ին և 2009 թ–ին: Գնաճը, որպես Հայաստանում կարևոր հիմնախնդիր 2010 թ–ին շատ ավելի սուր է ընկալվել, քան 2009 թ–ին: Եթե 2009 թ–ին հարցվածների միայն 20 տոկոսն է գնաճը համարել հիմնախնդիր, ապա 2010 թ–ին 43 տոկոսը (կամ 23 տոկոսային կետով ավելի): Այս տեղաշարժի արդյունքում գնաճը, որ 2009 թ–ին համարվել էր Հայաստանում չորրորդ ամենակարևոր հիմնախնդիրը, 2010 թվականին նշվել էր որպես երկրորդ հիմնախնդիրը: Բերված տվյալներից և երևույթների ընկալումներից հետևում է, որ 2008–2010 թթ. Հայաստանի առջև ծառացած հիմնական առաջին չորս խնդիրներն ունեն տնտեսական պատճառներ և դրանց լուծումները գտնվում են տնտեսական քաղաքականության տիրույթում կամ սահմաններում:

Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի և արտաքին առևտրի հիմնախնդիրները: Ցանկացած երկրի, այդ թվում Հայաստանի Հանրապետության առջև կանգնած սոցիալ–տնտեսական հիմնախնդիրների լուծման գլխավոր ուղին տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումն է: Խնդիրն այն է, որ 2012 թ–ի ՀՀ պետական բյուջեի 101 մլրդ դրամ հավելյալ եկամուտներից մոտ 70 մլրդ դրամը պետք է ապահովի 4,2 տնտեսական աճը՝ 4±1,5 տոկոս շրջանակում գտնվող գնաճը: ՀՀ տնտեսական աճի իրատեսականությունը չափազանց կարևոր է, քանի որ յուրաքանչյուր 0,1 տոկոսային կետը մոտավոր հաշվարկներով պետք է ապահովի մոտ 2 մլրդ դրամ հավելյալ բյուջետային եկամուտ[6]:

---

5 Կոռուպցիան Հայաստանում, Տնային տնտեսությունների 2010 թ. հետազոտություն, Եր., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, 2011, էջ 17:

6 Ա.Չատինյան, Եվրո–չինական մարտահրավերներ. գլոբալ աճի դանդաղումը կխոչընդոտի ՀՀ բյուջեի կատարումը, «Օրակարգ», տնտեսական օրաթերթ, N 11 (80), 26.01.2012, էջ 5:

Գծապատկեր 1

Հայաստանի առջև ծառացած հիմնական խնդիրները (տոկոս, յուրաքանչյուր հարցված կարող էր տալ մինչև երեք պատասխան)

Ծանոթություն. 2008 և 2009 թթ. «ցածր եկամուտ/աշխատավարձ» տողի վերաբերյալ տվյալներ չկան:
Աղբյուրը՝ Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010 թ. հետազոտություն, Եր., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, 2011, էջ 17:

Կարևոր է նաև նկատել, որ ՀՀ տնտեսության կառուցվածքն այնպիսին է, որ տնտեսական աճը մեծապես պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող զարգացումներով և հանրապետության եղանակային պայմաններով (հանգամանք, որն ուղղակի զգալի ազդեցություն է թողնում գյուղատնտեսության ցուցանիշի վրա): 2012 թ. հունվարի երկրորդ տասնօրյակում ԱՄՀ–ն իր հրապարակած զեկույցում 2012 թ. համաշխարհային տնտեսության աճի կանխատեսումը 2011 թ. սեպտեմբերի կանխատեսման 4 տոկոսից իջեցրել է մինչև 3,3 տոկոսի: ՀՀ կառավարությունը 2012 թ. պետական բյուջեն հիմք էր ընդունել ԱՄՀ–ի սեպտեմբերյան կանխատեսումները: Այսինքն՝ համաշխարհային տնտեսության աճի դանդաղումը, ընդհանրապես, և եվրոգոտու ու ՌԴ–ի տնտեսությունների անկումը, որոնք հատկապես ազդում են ՀՀ տնտեսության վրա հաշվի չի առնվել պետական բյուջեի 2012 թ. ցուցանիշները մշակելիս:

ՀՀ ՀՆԱ–ում արդյունաբերության բաժինը կազմում է 15 տոկոս: 2011 թ–ին հանրապետության ամբողջ արդյունաբերության ծավալը կազմել է 992,1 մլրդ դրամ (աճը 2010 թ. նկատմամբ կազմել է 114,1 տոկոս), որից հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մասնաբաժինը կազմել է 169,1 մլրդ դրամ (աճը 2010 թվականի նկատմամբ՝ 112,2 տոկոս)[7] կամ արդյունաբերական ար–

7 Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար–դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 10, www.armstat.am

տադրանքի 17,0 տոկոսը: Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ–ում կազմում է 17 տոկոս: 2011 թվականին գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը կազմել է 838,0 մլրդ դրամ, որից 12,8 մլրդ–ը ձկնորսության բաժինն է, իսկ մնացածը (825,2 մլրդ դրամը) գյուղատնտեսությանը:

Վերջիններիս մեջ բուսաբուծության արտադրանքի մեծությունը կազմել է 456,0 մլրդ դրամ (գյուղատնտեսության արտադրանքի 55,3 տոկոսը), անասնաբուծության արտադրանքինը՝ 369,2 մլրդ դրամ (44,7 տոկոսը):

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2011 թ. հունվար–դեկտեմբերին, ընթացիկ գներով, կազմել է 5481,0 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 1329,5 մլն դոլար (ՖՕԲ գներով) և ներմուծումը՝ (ՍԻՖ) գներով 4151,5 մլն դոլար: Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է, 2822,0 մլն դոլարով: Ըստ նախնական տվյալների՝ 2011 թ. հունվար–դեկտեմբերին ապրանքների գծով արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը՝ հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 2182,6 մլն դոլար: Ըստ որում, ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2011 թվականին 2010 թվականի համեմատ ավելացել է 114,4 տոկոսով, այդ թվում ԱՊՀ երկրների հետ առևտրում 114,4 տոկոսով ԵՄ երկրների հետ առևտրում՝ 116,3 տոկոսով, այլ երկրների հետ առևտրում՝ 116,3 տոկոսով: Արտաքին առևտրաշրջանառության մեջ ԱՊՀ երկրների բաժինը 2010 թվականին կազմել է 28,0 տոկոս, 2011 թվականին՝ 26,9 տոկոս: ԵՄ երկրներինը համապատասխանաբար 31,9 տոկոս և 32,4 տոկոս, այլ երկրներինը՝ 40,1 տոկոս և 40,7 տոկոս: Եթե 2010 թվականին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 2707,9 մլն դոլար, ապա 2011 թվականին՝ 2822,0 մլն դոլար: Առևտրի բացասական հաշվեկշռի 34,8 տոկոսը 2010 թվականին բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 2011 թվականին՝ 33,6 տոկոսը, ԵՄ երկրներին համապատասխանաբար 19,4 տոկոս և 19,9 տոկոս, այլ երկրներինը՝ 45,7 տոկոս և 46,5 տոկոս[8]: ՀՀ տնտեսության վրա մեծ է, հատկապես, ՌԴ ազդեցությունը: Այսպես, ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 20,8 տոկոսը 2010 թվականին, և 20,3 տոկոսը 2011 թվականին բաժին է ընկել ՌԴ–ին, իսկ առևտրի հաշվեկշռի մնացորդի 24,9 տոկոսը 2010 թվականին և 23,7 տոկոսը՝ 2011 թվականին բաժին է հասել ՌԴ–ին:

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում՝ արտահանման մեջ 2010 թվականին 19,1 տոկոսը բաժին է հասել ԱՊՀ երկրներին, որից ՌԴ–ին՝ 15,4 տոկոսը, 2011 թվականին համապատասխանաբար 19,8 տոկոսը, ներմուծմանը (ըստ ապրանքի ծագման երկրի) համապատասխանաբար՝ 30,5 տոկոս, 22,5 տոկոս, 29,1 տոկոս և 21,5 տոկոս: Մեծ է ԵՄ երկրների բաժինը ՀՀ արտահանման մեջ այդ ցուցանիշը 2010 թվականին կազմել է 48,1 տոկոս, 2011 թվականին՝ 45,7 տոկոս, մինչդեռ ներմուծման (ըստ ապրանքի ծագման երկրի) մեջ ԵՄ բաժինը ավելի համեստ է՝ համապատասխանաբար 27,4 տոկոս և 28,2 տոկոս: Նշված ցուցանիշները այլ երկրների համար կազմել են համապատասխանաբար՝ 32,8 տոկոս, 34,5 տոկոս, 42,1 տոկոս, 42,7 տոկոս[9]: ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը բերված է աղյուսակ 1–ում:

---

8 Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար–դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 117–118, www.armstat.am

9 Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար–դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 120, www.armstat.am

Աղյուսակ 1

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքախմբերի և դրանց կառուցվածքը 2010–2011 թվականներին

	Արտահանում					
	2010 թ. հունվար–դեկտեմբեր		2011 թ. հունվար–դեկտեմբեր		Աճի տեմպը, %	2011թ. փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ (+, –)
	Հազար ԱՄՆ դոլար	Ընդամենը ներմուծման մեջ, %	Հազար ԱՄՆ դոլար	Ընդամենը ներմուծման մեջ, %		
Ընդամենը (այդ թվում՝)	1041056,6	100,0	1329501,2	100,0	127,7	–
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	23552,1	2,26	30070,6	2,26	127,7	0,00
բուսական ծագման արտադրանք	15845,0	1,52	23509,6	1,77	148,4	0,25
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	29,1	0,00	25,3	0,00	86,9	0,00
պատրաստի սննդի արտադրանք	131065,6	12,59	183915,7	13,83	140,3	1,24
հանքահումքային արտադրանք	306752,7	29,47	398783,6	29,99	130,0	0,53
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	9137,8	0,88	11140,0	0,84	121,9	–0,04
պլաստմասսա, կաուչուկ և դրանցից իրեր	15484,5	1,49	8685,2	0,65	56,1	–0,83
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	2242,5	0,22	3446,8	0,26	153,7	0,04
փայտ և փայտյա իրեր	710,8	0,07	634,6	0,05	89,3	–0,02
թուղթ և թղթից իրեր	706,5	0,07	729,3	0,05	103,2	–0,01
մանածագործական իրեր	6751,2	0,65	8372,3	0,63	124,0	–0,02
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	1423,4	0,14	1470,7	0,11	103,3	–0,03
իրեր քարից,գիպսից, ցեմենտից	16108,3	1,55	16894,7	1,27	104,9	–0,28
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	134049,4	12,88	196441,4	14,78	146,5	1,90
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	332428,9	31,93	364728,5	27,43	109,7	–4,50
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	30078,2	2,89	33525,1	2,52	111,5	–0,37
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	4999,2	0,48	30078,1	2,26	6,0 անգ.	1,79
սարքեր և ապարատներ	7344,5	0,71	14840,7	1,12	2,0 անգ.	0,41
տարբեր արդյունաբերական ապրանքներ	1623,0	0,16	1368,9	0,10	84,3	–0,05
արվեստի ստեղծագործություններ	723,8	0,07	840,2	0,06	116,1	–0,01

Աղյուսակ 1
(շարունակությունը)

	Ներմուծում					
	2010 թ. հունվար–դեկտեմբեր		2011 թ. հունվար–դեկտեմբեր		Աճի տեմպը, %	2011թ. փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ (+, –)
	Հազար ԱՄՆ դոլար	Ընդամենը ներմուծման մեջ, %	Հազար ԱՄՆ դոլար	Ընդամենը ներմուծման մեջ, %		
Ընդամենը (այդ թվում՝)	3748953,5	100,0	4151472,7	100,0	110,7	–
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	101448,5	2,71	133495,7	3,22	131,6	0,00
բուսական ծագման արտադրանք	214070,2	5,71	242302,6	5,84	113,2	0,13
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	49217,1	1,31	57987,0	1,40	117,8	0,08
պատրաստի սննդի արտադրանք	308810,4	8,24	348468,9	8,39	112,8	0,16
հանքահումքային արտադրանք	666021,6	17,77	821611,8	19,79	123,4	2,03
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	273514,6	7,30	303078,3	7,30	110,8	0,00
պլաստմասսա, կաուչուկ և դրանցից իրեր	148135,8	3,95	173079,6	4,17	116,8	0,22
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	9168,2	0,24	12118,4	0,29	132,2	0,05
փայտ և փայտյա իրեր	56545,5	1,51	68591,8	1,65	121,3	0,14
թուղթ և թղթից իրեր	68348,7	1,82	80353,2	1,94	117,6	0,11
մանածագործական իրեր	122558,5	3,27	160928,6	3,88	131,3	0,61
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	31994,2	0,85	33666,4	0,81	105,2	–0,04
իրեր քարից,գիպսից, ցեմենտից	82482,9	2,20	86999,1	2,10	105,5	–0,10
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	158867,6	4,24	214963,4	5,18	135,3	0,92
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	368197,7	9,82	326871,3	7,87	88,8	–1,95
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	651810,4	17,39	567457,5	13,67	87,1	–3,72
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	297132,6	7,93	371180,9	8,94	124,9	1,02
սարքեր և ապարատներ	69638,8	1,86	59090,2	1,42	84,9	–0,43
տարբեր արդյունաբերական ապրանքներ	69542,2	1,85	88169,7	2,12	126,8	0,27
արվեստի ստեղծագործություններ	1448,2	0,04	1058,3	0,03	73,1	–0,01

Հաշվարկված է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 122-ի տվյալներով:

Աղյուսակ 1–ի տվյալներից հետևում է, որ ՀՀ արտահանման ծավալները 2011 թվականին՝ 2010 թվականի համեմատ, ավելացել են 127,7 %–ով, իսկ ներմուծմանը՝ 110,7%–ով, այսինքն՝ արտահանման ծավալների հավելաճը ներմուծման հավելաճին գերազանցել է ավելի քան 2,7 անգամ, ինչն անկասկած, դրական տեղաշարժ է: Այդ տեղաշարժի հետևանքով փոփոխվել է ներմուծում–արտահանում հարաբերակցությունը: Այսպես, եթե 2010 թվականին այդ հարաբերակցությունը կազմել է 3,6 : 1, ապա 2011 թվականին՝ 3,1 : 1 : Դրանով հանդերձ պետք է նկատենք, որ նշված հարաբերակցությունը դեռևս ի նպաստ չէ ՀՀ–ի, քանի որ վճարային հաշվեկշռի բացասական մնացորդը հիմնականում ձևավորվում է զուտ արտահանման (ապրանքների ներմուծման և արտահանման տարբերությունը) միջոցով (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ընթացիկ հաշիվը և դրա բաղկացուցիչները 2000–2010 թվականներին

	2000 թ.	2002 թ.	2004 թ.	2006 թ.	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.
Ընթացիկ հաշիվ	-278,37	-147,89	-19,63	-117,13	-589,26	-1381,82	-1368,99	-1373,17
Ապրանք-ներ	-463,53	-368,76	-457,95	-895,86	-1600,26	-2663,53	-2081,28	-2032,55
Ծառայու-թյուններ	-55,80	-40,69	-98,93	-130,39	-212,54	-327,11	-268,12	-242,18
Եկամուտ-ներ	52,90	88,20	107,42	215,17	278,78	471,19	166,59	338,65
Ընթացիկ տրանս-ֆերտներ	188,06	173,35	429,84	693,95	944,76	1137,63	813,92	562,92

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը, Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ 2011, էջ 9:

Աղյուսակ 2–ի տվյալներից երևում է, որ 2000–2010 թթ. ընթացիկ հաշվի բացասական մեծությունը ավելացել է շուրջ 5 անգամ, ապրանքներինը՝ 4,4 անգամ, ծառայություններինը՝ 4,3 անգամ, եկամուտներինը՝ 6,4 անգամ, ընթացիկ տրանսֆերտները՝ 3 անգամ: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը լուրջ ազդեցություն է ունեցել ՀՀ ընթացիկ հաշվի վրա: Բավական է նշել, որ 2009 թվականին, 2008 թվականի համեմատ, ընթացիկ հաշվի «եկամուտներ» հոդվածի մեծությունը նվազել է 2,8 անգամ, իսկ «ընթացիկ տրանսֆերտները»՝ 28,5%–ով, և եթե 2010 թվականին, 2009 թվականի համեմատ, «եկամուտներ» հոդվածի մասով նկատվել է ավելի քան 2 անգամ, ապա «ընթացիկ տրանսֆերտներ»–ի մասով շարունակվել է դրանց նվազումը,

ինչը հանգեցրել է նրան, որ 2010 թվականի այդ հոդվածի մակարդակը կազմել է 2008 թ. համապատասխան մեծության 49,5%–ը, այսինքն՝ նվազել է կրկնակի անգամ: Բերված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում անցած (նշված) տասնամյակի ընթացքում հանրապետության վիճակը վատացել է, ինչը վկայում է, որ ՀՀ տնտեսությունը չի կարողացել գտնել միջոցներ և առաջին հերթին ձևավորել տնտեսության այնպիսի կառուցվածք, որպեսզի կարողանա դիմակայել համաշխարհային զարգացումների մարտահրավերներին:

Վերադառնալով աղյուսակ 1–ի տվյալներին՝ նկատենք, որ ՀՀ արտահանման մեջ զգալի բաժին է կազմում ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի մասը (2010 թ–ին՝ 31,93%, 2011 թվականին՝ 27,43%), երկրորդ տեղը զբաղեցնում է հանքահումքային արտադրանքը (արտահանման մոտ մեկ երրորդը), իսկ երրորդ տեղը բաժին է հասնում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերին, թանկարժեք մետաղներին և դրանցից պատրաստված իրերին (2010 թվականին՝ 12,88%, 2011 թվականին՝ 14,78%):

Նշված երեք ապրանքախմբերին բաժին է ընկել ՀՀ արտահանման 74,23%–ը՝ 2010 թվականին և 72,20%–ը 2011 թվականին: Արտահանման մեջ զգալի է նաև պատրաստի սննդի արտադրանքի բաժինը: Նշված 4 ապրանքախմբերի բաժինը 2010 թվականին կազմել է արտահանման 86,82%–ը, 2011 թվականին՝ 86,03%–ը:

Նման պայմաններում, երբ արտաքին շուկաները և դրանց վիճակը վճռական նշանակություն են ձեռք բերում, ՀՀ տնտեսական աճը լրջորեն կարող է վտանգվել, քանի որ հանրապետության հատկապես, երկու խոշոր առևտրային գործընկերների մոտ տնտեսական աճի դանդաղում է սպասվում: ՌԴ–ում ակնկալվում է ոչ թե 4,1 տոկոս, այլ 3,3 տոկոս տնտեսական աճ, իսկ ԵՄ–ում նախկինում ակնկալված 1,1 տոկոս աճի փոխարեն կարձանագրվի 0,5 տոկոս տնտեսական անկում: Իսկ դա նշանակում է, որ ՌԴ–ում, առաջին հերթին, բնակչության գնողունակության լուրջ աճ չի լինի, իսկ ԵՄ–ում կկրճատվեն արդյունաբերական ընկերությունների արտադրական ծրագրերը: ՌԴ–ին և ԵՄ–ին բաժին է ընկնում ՀՀ արտահանման մոտ 2/3–ը:

ՀՀ կառավարությունը 2012 թ. բյուջեի ուղերձում կանխատեսել էր, որ արտահանումը կաճի 13,5 տոկոսով, արդյունաբերությունը՝ 7,5 տոկոսով, ծառայություններինը՝ 3,5 տոկոսով: Արտաքին շուկաներում պահանջարկի նվազումը կդանդաղեցնի, առաջին հերթին, ՀՀ արդյունաբերության աճը: ՀՀ արտահանման շուրջ 1/3–ը կազմում է հանքարդյունաբերության և մետալուրգիայի արտադրանքը, իսկ դրա 2/3–ը բաժին է ընկնում ԵՄ–ին: Եթե 2012 թ. նույնիսկ մետաղների համաշխարհային շուկայում գների նվազում չնկատվի, որը քիչ հավանական է, պահանջարկի կրճատումն անխուսափելի է: Եթե նկատենք, որ ԱՄՀ–ն չի հավատում նաև Չինաստանի տնտեսության բարձր աճին (աճի ցուցանիշը նվազեցրել է 0,8 տոկոսային կետով՝ մինչև 8,2 տոկոս), ապա պարզ կդառնա, որ Չինաստանը չի կարողանա փոխհատուցել ԵՄ կողմից մետաղների պահանջարկի անկումը: Ներկայումս Չինաստանին բաժին է ընկնում պղնձի համաշխարհային սպառման շուրջ 20 տոկոսը, ինչը նշանակում է, որ տնտեսական աճի դանդաղման հետևանքով

կդանդաղի նաև այդ երկրում պղնձի սպառման աճը՝ անուղղակի ազդելով նաև ՀՀ –ից արտահանվող պղնձի վրա: Ինչպես արդեն նշել ենք ՀՀ արտահանման մեկ երրորդը բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը: Այս ոլորտի հնարավոր խնդիրները զգալի և կտրուկ ազդեցություն են թողնում տնտեսության այդ թվում՝ սպառման վրա: Ասվածի լավագույն ապացույցը 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էր:

Եթե հաշվի առնենք նաև ՌԴ–ի գործոնը, մասնավորապես այդ երկրում սպառման նվազումը, ինչպես նաև այն որ 2012 թ–ին նավթի միջին գինը, ըստ ԱՄՀ–ի մեկ բարելի հաշվով կլինի 100 դոլար (14), ապա ՀՀ մասնավոր փոխանցումների լուրջ աճ նույնպես չի սպասվում: ՌԴ–ից ՀՀ մասնավոր փոխանցումների (ՌԴ–ին բաժին է ընկնում մոտ 80 տոկոսը) և նավթի գների միջև առկա է ուղղակի կապ՝ որոշակի ժամանակային լագով:

Այսպիսով, ստացվում է, որ 2012 թ–ին արտաքին մակրոմիջավայրի փոփոխությունը վտանգելու է նախ և առաջ ՀՀ պետբյուջեի կատարումը: Եթե նկատենք, որ 2012 թ–ին ՀՀ պետական բյուջեով նախատեսված է ծախսերն ավելացնել 41,5 մլրդ դրամով և միևնույն ժամանակ բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կրճատել 16 մլրդ դրամով, ապա տնտեսական աճի դանդաղման հետևանքով լրացուցիչ եկամուտների ծրագիրը չկատարելու դեպքում ՀՀ կառավարությունը պետք է ընտրություն կատարի ծախսերի և պակասուրդի միջև:

Կարևոր է նկատել, որ չնայած արտաքին շուկաներում իրերի վիճակի վատթարացմանը հանրապետության ներսում ևս հնարավորություններ կան խթանելու արտահանումը: Խոսքը վերաբերում է դրամի արժեզրկմանը: Այս միջոցառումը հզոր լծակ է արտաքին շուկաներում հայկական ապրանքների և ծառայությունների մրցակցությունը բարձրացնելու ճանապարհին: Պետք է նկատենք, որ վերջին կես տարվա ընթացքում ՀՀ ԿԲ–ն նման կուրս է որդեգրել, ինչը ողջունելի է: Այսպես, 25.07.2011 թ–ին մեկ դոլարի փոխարժեքը հավասար էր 365 դրամի 26.01.2012 թ–ին՝ 387,74 դրամի[10]: Այսինքն՝ ընդամենը կես տարվա ընթացքում մեկ դոլարի հաշվով դրամը արժեքազրկվել է 6,2%–ով:

Economic situation in the Republic of Armenia and problems of economic development

Summary

As distingnished economists mention, economic theory is not only ready proposals for application, but also the method, mental instrument and technique to help us make the correct conclusions about the situation in the economy and ways for the development.

With this in mind, authors of the article discuss recent problems of armenian economy in the sphere of employment, foreign trade, external debt, current account and some other problems.

10 Ա.Չատինյան, Եվրո–չինական մարտահրավերներ. գլոբալ աճի դանդաղումը կխոչընդոտի ՀՀ բյուջեի կատարումը, «Օրակարգ», տնտեսական օրաթերթ, N 11 (80), 26.01.2012, էջ 5:

Հետադարձ հայացք Հայաստանի Հանրապետության տնտեսությանը

Գևորգ Գրիգորյան

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի և Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

Անցած երեք տասնամյակի (Մեծ Բրիտանիա՝ 1974 թ., Նորվեգիա, Գերմանիա՝ 1977 թ., Դանիա և Նոր Զելանդիա՝ 1987 թ., Կանադա՝ 1989 թ.) ֆինանսական անկայունության դրսևորումներն առաջացրին ֆինանսական ճգնաժամերի ծագման ու դրանց կանխարգելման վերաբերյալ հետազոտությունների պահանջարկ: Սակայն, ի տարբերություն 70–80–ական թվականների, ներկայիս ուսումնասիրությունները պայմանավորվում են ոչ թե արժութային փոխարժեքների տատանումներով կամ տնտեսական անկայունությամբ, այլ հիմքային՝ խորը տնտեսական, ֆինանսական, նույնիսկ վարկային և ներդրումային քաղաքականությունների հետազոտությամբ: Ընթացիկ ժամանակաշրջանի առաջին ճգնաժամը առաջացել է 1994–1995 թթ. Մեքսիկայում, այնուհետև՝ 1997–1998 թթ. Արևելյան Ասիայում, որը սկսվել է 1997 թ. ամռանը Թաիլանդում և տարածվել Ֆիլիպինների, Ինդոնեզիայի և Մալայզիայի վրա: 1998 թ. ֆինանսական ճգնաժամի թիրախ դարձան նաև Հարավային Կորեան և Ռուսաստանի Դաշնությունը: 2001 թվականին Թուրքիայի և Արգենտինայի ֆինանսական ճգնաժամերը վերը նշվածների շարունակությունն էին: Բացառությամբ Մալայզիայի դեպքի. ճգնաժամերից դուրս գալու ճանապարհները համակցվում էին Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ֆինանսական ներարկումներով, հավակնոտ տնտեսական բարեփոխումների ծրագրերով, սոցիալական վերաբաշխումներով: Ֆինանսական ճգնաժամերը կարելի է տարանջատել ըստ առաջացման տարաբնույթ պատճառների և ազդեցության՝ Մեքսիկա (1994–1995 թթ.) և Հարավարևելյան Ասիայի երկրներ (1997–1998 թթ.), Ռուսաստան (1998 թ.)՝ պարտատոմսերի շուկայի անվճարունակություն, Թուրքիա (2000 թ.)՝ բանկային համակարգ և Արգենտինա (2000–2002 թթ.)՝ արժութային ճախողված քաղաքականություն[1]:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը շարունակում է մնալ բոլոր երկրների թիվ մեկ մտահոգությունը. կառավարությունները ճգնաժամին դիմակայելու և դրա բացասական հետևանքները մեղմելու ուղղված մի շարք հակաճգնաժամային միջոցառումներ են իրագործում: Գրեթե բոլոր երկրների համապատասխան ծրագրերում հարկային կամ այլ տիպի բարեփոխումներ են իրականացնում:

Ճգնաժամի թիրախ դարձած երկրները ձեռնարկում են ռազմավարական քայլեր, որոնք խթանում են երկարատև կայուն տնտեսական աճ.

- նպաստավոր հարկային և մաքսային դաշտի բարելավմամբ,
- աշխատուժի շուկայում նոր աշխատատեղերի ստեղծմամբ, սոցիալական և կրթական միջոցառումների իրականացմամբ,
- ենթակառուցվածքային ծրագրերի իրականացմամբ,

1 Արգենտինայի ֆինանսական ճգնաժամը, ըստ ՄԱՀ գործադիր տնօրեն Միշել Քամդեսուսի, համարվում է 21–րդ դարի առաջին ֆինանսական ճգնաժամը:

- գիտական և նորարարական հիմքի վրա գործարարության զարգացմամբ,
- բնական պաշարների նկատմամբ՝ ջրային, անտառային և հանքային ավելի արդյունավետ մոտեցումների կիրառմամբ,
- փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմամբ:

Այսպես, մեր երկրում 2008 թ. հոկտեմբերի 1–ից հետո լուծարվել է 3063 կազմակերպություն: Մասնագետները դրանք բաժանում են երկու խմբի՝ «կարճ ապրող» և «երկար ապրող»: Լուծարված կազմակերպությունների մի մասը՝ 2310–ը, գործունեություն էր ծավալել 1,5 տարուց ավելի: Դրանցից 1600–ն անհատ ձեռնարկիչներ են, 710–ը՝ իրավաբանական ընկերություններ:

Լուծարված «կարճ ապրող» կազմակերպությունները 753–ն են, այսինքն՝ խոսքն այս դեպքում նորաստեղծ բիզնեսի մասին է. այդ ընկերությունները գործել են 1,5 տարուց էլ քիչ: Դրանց մեծ մասը՝ 695–ը, անհատ ձեռնարկատերեր են: Այլ կերպ ասած՝ կազմակերպությունների գերակշիռ մասը գործունեություն է ծավալել սպասարկման և մանրածախ առևտրի ոլորտներում:

Կառավարության կողմից հաստատված 2009 թ–ի պետական բյուջեի նախագծով կանխատեսվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 9,2 տոկոս աճ և ցածր գնաճ՝ 4 տոկոս՝ գումարած կամ հանած 1,5 տոկոս: Տեղեկացնելով այս մասին՝ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը նշել է, որ նման ցածր գնաճի համար ստեղծվել են բոլոր նախադրյալները: Մասնավորապես, 2010 թ–ին ծրագրվում էր 1 տոկոսից էլ ցածր բյուջեի դեֆիցիտ (պակասուրդ), որը հնարավորություն է տալիս զսպել գնաճային ճնշումները:

Հետաքրքիրն այն է, որ 2010 թ.առաջին կիսամյակի արդյունքներով՝ 300 խոշոր հարկատուներն 2009 թ. առաջին կիսամյակի խոշորներից ընդհանուր առմամբ 23 տոկոսով ավելի հարկ են վճարել: Նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունների ցանկի համաձայն՝ առաջատար 20–ի բոլոր ընկերություններն արձանագրել են հարկային վճարումների աճ: Եթե 2009 թ–ի հունվար–հունիսին միլիարդի շեմն անցել էին 24 ընկերություն կամ բյուջե վճարված 90,4մլրդ դրամ/ բյուջե վճարված հարկերի 53,8 տոկոս/, ապա 2010 թ–ի այն կազմել է 32–ը[2]:

2009 թ–ի պետբյուջեի նախագծով ՀՆԱ–հարկեր հարաբերակցությունն ավելանալու է 0,4 տոկոսային կետով և կազմելու 17,4 տոկոս: Եկամուտները կկազմեն 905 մլրդ դրամ, որը դոլարային արտահայտությամբ, տվյալ ժամանակահատվածում գործող փոխարժեքով փոքր–ինչ բարձր է 3 մլրդ դոլարից: Ծախսային մասը կկազմի 945 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 40 մլրդ դրամ: 2008 թ–ի բյուջեի եկամտային մասի 746 մլրդ դրամի համեմատ, 2009 թ–ի բյուջեի եկամտային մասն ավելացել է 24 տոկոսով, իսկ 945 մլրդ դրամ ծախսային մասը՝ 2008 թ–ի 822 մլրդ դրամի համեմատ՝ 13 տոկոսով: 2009 թ–ի բյուջեի եկամուտները կկազմեն ՀՆԱ 21 տոկոսը, ծախսերը՝ 22,7 տոկոսը, իսկ դեֆիցիտը՝ 0,96 տոկոսը: 1 շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը 2009 թ–ին եղել է 2666 ԱՄՆ դոլար, իսկ 2008 թ. այն կազմել 3606 ԱՄՆ դոլար: Այստեղ, իմ կարծիքով, լրացուցիչ մեկնաբանություններն ավելորդ են: Ներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում 1 շնչին ընկնող ՀՆԱ 2007–2010 թթ. դրությամբ[3]:

2 Հարկատու ՀՀ ԿԱ ՊԵԿ պարբերական, N 3/5/ 2010:

3 Հայաստան և հարևաններ, 20 տարի թվերով, 2011, «Սիվիլիթաս» հիմնադրամ, էջ 16:

Աղյուսակ 1

1 շնչին ընկնող ՀՆԱ 2007–2010 թթ.

Հայաստան	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.
	2853	3606	2666	2878

Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ աղքատության մակարդակը 50%–ից նվազել է մինչև 25%: Հայաստանում աղքատության իրական մակարդակը շատ ավելի բարձր է, քան այն ներկայացված է պաշտոնական ցուցանիշներով: Մյուս կողմից՝ 2008 թ. սկզբին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (Organization for Economic Coorperation and Development, OECD) Հայաստանին ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների շարքից դասեց միջին եկամտի մակարդակ ունեցող երկրների շարքին, որը ոչ մի կերպ չի կարող մեղմել գլոբալ ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները (աղյուսակ 1): Սակայն պետք է նշել, որ տարբեր միջազգային տնտեսական կազմակերպություններ ունեն երկրների դասակարգման իրենց սեփական չափանիշները: Այսպես, համաձայն Համաշխարհային բանկի դասակարգման՝ 2008 թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ–ի ծավալով Հայաստանը դասվել է միջինից ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների շարքին: Մասնավորապես, 2010 թ. սպասվում է 4 տրիլիոն 169 մլրդ դրամ համախառն ներքին արդյունք, 2008 թ. բյուջեով նախատեսված 3 տրիլիոն 520 մլրդ դրամի համախառն ներքին արդյունքի փոխարեն: 905 մլրդ եկամտային մասից 726 մլրդ դրամը կկազմեն զուտ հարկային մուտքերը, 128 մլրդ դրամը սոցիալական ապահովագրության վճարները:

Ընդհանուր առմամբ փոփոխություններ գրանցվեցին աշխատավարձի ֆոնդում, մասնավորապես, 2010 թ. 25 հազար դրամի փոխարեն Հայաստանում նվազագույն աշխատավարձը դարձավ 30 հազար դրամը, իսկ 2011 թ. նվազագույն աշխատավարձը դարձավ 32500 դրամ: Արդյոք դա դրական կանդրադառնա մեր՝ որպես քաղաքացու գրպանի և ՀՀ բյուջեի ծախսային հատվածի վրա: Նախատեսվում էր, որ բարձրանալու է նաև ուսուցիչների և դպրոցների վարչական աշխատողների աշխատավարձերը (որը այդպես էլ չբարձրացավ), ինչպես նաև բուժհիմնարկներում 1 հիվանդի համար հատկացվող գումարը:

Սակայն ֆինանսական ճգնաժամի պայմաններում նման քայլերը արդյոք հնարավորություն կտան իրականացնելու այդ միջոցառումները, եթե համաշխարհային ֆինանսական կառույցներն արդեն իսկ մտահոգություն են հայտնել ֆինանսական ցուցանիշների անկման վերաբերյալ և հատկապես երբ արդեն նկատվում է ՀՆԱ անկման միտումներ: Սակայն հետաքրքիրն այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը ներկայացրել է, որ հնարավոր է ապահովել զրոյական ցուցանիշից էլ բարձր տնտեսական աճ[4]: Նախարարի կարծիքով՝ դա հնարավոր կլինի շնորհիվ միջազգային կառույցների՝ Համաշխարհային բանկի,

4 ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի հարցազրույցը «ԱՌԿԱ» գործակալությանը:

ԱՄՀ–ի, Զարգացման Ասիական բանկի, ինչպես նաև ռուսական կառավարության կողմից հատկացված բավարար ռեսուրսների առկայության պարագայում:

Ինչպես նշել էր նախարարը, միջոցների տեղաբաշխման արագությունը պայմանավորված է լինելու Հայաստանի նախագծերն արագ իրագործելու հնարավորությամբ, ինչի համար անհրաժեշտ է ակտիվ աշխատանքներ տանել այդ ուղղությամբ:

«Գլոբալ ֆինանսական ճգնաժամ» թեմայով դեկտեմբերի 6–7–ին Դիլիջանում քննարկումների ժամանակ Ներսես Երիցյանը նշում է, որ Հայաստանը կարող է հանգիստ ավելացնել իր բյուջեի պակասուրդը մի քանի միլիարդ դոլարով առանց նշանակալի ինֆլյացիայի մակարդակ գրանցելու, քանի որ ՀՀ արտաքին պետական պարտքի մակարդակի հարաբերակցությունը ՀՆԱ–ին աշխարհում ամենացածրներից մեկն է (2008թ. տվյալներով այն կազմել է 13,5%): Մյուս կողմից՝ ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին ամփոփ հաշվետվությունում նշված է, որ «պետական պարտքի կառավարման քաղաքականությունը եղել է զգուշավոր՝ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 13,4՝ ԱՊՀ երկրների 33%–ի դիմաց»[5]: Իհարկե արտաքին պարտքի բարձր մակարդակը բացասական երևույթ է, և մենք լիովին համաձայն ենք, որ ՀՀ–ն իր արտաքին պարտքի մեծությամբ դասվում է ցածր արտաքին պարտքի մեծություն ունեցող երկրների թվին: Մի շարք երկրներում, այդ թվում նաև զարգացած, արտաքին պարտքի մակարդակը գերազանցում է ՀՆԱ–ի 40%[6], սակայն միևնույն ժամանակ այդ բոլոր երկրներն իրենց տնտեսության մեջ զգալի բարեփոխումներ կամ միջոցառումներ են իրականացրել նախքան ներկայիս ֆինանսական ճգնաժամի ի հայտ գալը: Սակայն, մեր կարծիքով, գլոբալ ֆինանսական ճգնաժամը ոչ մի կերպ չի կարող դրական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Համաձայն Համաշխարհային բանկի կանխատեսումների՝ Հայաստանում տնտեսական աճը 2009թ–ի արդյունքներով զրոյական ցուցանիշ պետք է գրանցի: Ընդորում, ԱՄՀ–ն Հայաստանում 2009թ–ի արդյունքներով կանխատեսել էր ՀՆԱ–ի բացասական աճ մինուս 1,5%–ի չափով, իսկ փաստացի տվյալներով այն կազմել է –14,1%: Որպեսզի ավելի պարզ լինի ասվածս, ներկայացնեմ կառավարության կողմից իրականացված քայլերը. այսպես, 2007թ. վերջին ՀՀ կառավարությունը դիմել էր Ռուսաստանին՝ տրամադրել վարկ տնտեսությունը փրկելու համար: 2009թ. փետրվարի 5–ին Ռուսաստանը հաստատեց, որ կտրամադրի Հայաստանին 500 մլն դոլար: Մեկ շաբաթ անց Համաշխարհային բանկը հայտարարեց, որ առաջիկա չորս տարիների ընթացքում Հայաստանին կտրամադրի 800 մլն դոլար: Այս միջոցները հիմնականում օգտագործվելու են գյուղական համայնքների ենթակառուցվածքների զարգացման և առևտրային բանկերի կողմից վարկերի տրամադրման միջոցով փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման համար: 2008թ. մարտի 4–ին ԱՄՀ հայտարարեց, որ ՀՀ կառավարությանը կտրամադրի 540 մլն դոլար:

---

5 ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին ամփոփ հաշվետվություն, կետ 6, էջ 3:

6 Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում ընդհանուր արտաքին պարտքի մակարդակը (պետական և մասնավոր) 2008թ. կազմել է ՀՆԱ–ի համապատասխանաբար 370, 137 և 172%: Այստեղ հարկ է նշել, որ հիմնականում գերակշռում է մասնավոր արտաքին պարտքը, սակայն բոլոր երկրների համար արտաքին պետական պարտքը գերազանցում է ՀՆԱ–ի 40%:

Այս կապակցությամբ ԱՄՀ մշտական ներկայացուցիչ Գիլյերմո Տոլոսան ասել էր հետևյալը.

— ՀՀ շուկայում գործող բանկերն արտասահման են փոխանցել մոտ 300 մլն դոլար կամ ՀՆԱ 3%, որը հետագայում մասնակի վերադարձվել է երկիր, որի արդյունքում նկատվել է վարկավորման ծավալների աճ[7]:

Չնայած մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել այն փաստը, որ տրանսֆերտները հանդիսանում են ՀՀ տնտեսության շարժիչ ուժերից մեկը, և համաշխարհային ֆինանսական ճգնաժամի արդյունքում զգալիորեն նվազեցին դեպի Հայաստան փոխանցվող կանխիկ տրանսֆերտները: Առաջին հերթին դրանք հնարավորություն են տալիս ֆինանսավորել առևտրային և ընթացիկ հաշվի վիթխարի պակասուրդը: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի 2008 թ. տվյալների՝ բանկային համակարգի միջոցով արտասահմանից փոխանցված միջոցների գումարը կազմել է 1,2 մլրդ դոլար, որը կազմել է ՀՆԱ–ի 14%–ը: Սա ընդամենը բանկային համակարգի միջոցով ՀՀ տարածք մուտք եղած գումարներ էին, որը չի արտացոլում դրամական զանգվածի իրական պատկերը, որն իրականում կարող է լինել եկած տրանսֆերտների կրկնակին: Այստեղից ակնհայտ է, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով 2009 թ. միանշանակ նվազեցին այդ միջոցների փոխանցումները դրանց հիմնական կենտրոններից՝ ԱՄՆ, ԵՄ և Ռուսաստան: Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք փաստել, որ այս ենթատեքստում ՀՀ տնտեսությունը նշանակալի կորուստներ ունեցավ, քանի որ ինչպես մենք արդեն նշել ենք ՀՀ տնտեսության զարգացումը զգալիորեն կախված է արտասահմանից ստացվող դրամական փոխանցումներից[8]:

Անդրադառնալով ՀՀ դրամավարկային քաղաքականությանը՝ հարկ է նշել, որ 2009 թ. մարտի 1–ին ՀՀ Կենտրոնական բանկը հայտարարեց, որ իրենք կրկին վերադառնում են լողացող փոխարժեքի արժութային ռեժիմի: ՀՀ ԿԲ ստեղծման օրից ի վեր պաշտոնապես հայտարարել է, որ նա վարում է ազատ լողացող փոխարժեքի արժութային ռեժիմ, հետևաբար, ե՞րբ էր ՀՀ ԿԲ անցել հաստատագրված փոխարժեքի արժութային ռեժիմի, որ հիմա կրկին վերադառնում է լողացող փոխարժեքի արժութային ռեժիմի: Մյուս կողմից, եթե նույնիսկ ՀՀ ԿԲ ազատ լողացող փոխարժեքի արժութային ռեժիմից անցել է հաստատագրված փոխարժեքի արժութային քաղաքականության, ապա ինչու դրա մասին չի հայտարարվել: Այսպես, ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում՝ «Դրամավարկային քաղաքականություն» բաժնի «Արժութային քաղաքականության նկարագրություն» ենթաբաժնում նշված է, որ «ՀՀ Կենտրոնական բանկի արժութային քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության արժութային պահուստների արդյունավետ կառավարման միջոցով ՀՀ դրամի հուսալիության ու միջազգային հեղինակության բարձրացմանը, ընթացիկ արժութային գործառնությունների և կապիտալի շարժի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծմանը: Նպատակների իրակա-

7 http://www.cdaily.am/home/paper/2011_05_20/news/25650

8 Այստեղ պետք է նշենք, որ արտասահմանից եկող տրանսֆերտների զգալի մասն ուղղվում է սպառման ոլորտ:

նացման համար հայտարարվել է համապատասխան արժութային ռեժիմ»: Այնուհետև կայքի նույն հատվածում նշված է, որ «ՀՀ կենտրոնական բանկը վարում է լեգատ լողացող փոխարժեքի քաղաքականություն, ինչը համահունչ է ազատականացված կապիտալի հաշվի գործարքներին և անկախ դրամավարկային քաղաքականության իրականացման սկզբունքներին: Կենտրոնական բանկի միջամտությունը արժութային շուկային իրականացվում է՝ ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից»[9]:

Խոսքս ուրախությամբ ավարտեմ՝ չնայած որ այն չի վերաբերում մեր երկրին:

Աշխարհում սննդի արագ սպասարկման կետերի ցանց ունեցող հայտնի «McDonald's»–ը միայն 2009 թ. 240 նոր կետեր է բացել՝ նվազագույնը 30–ը Ռուսաստանում: Պետք է նշել որ ամեն մի նման հաստատություն բացելու համար ծախսվում է 1 մլն դոլար: Այդ ընկերությունը հայտարարել է, որ վերջին 5 տարիների ընթացքում այս տարին իրենց համար ամենահաջողակն էր:

A reflection on RA economy

Summary

The manifestations of the financial instability during the last three decades / Great Britain 1974, Dania and New Zeland 1987, Canada 1989/ have evinced a demand for research about the origin of financial crises and their prevention.

The ways of overcoming the crises are combined with great financial investments made by The International Exchange Fund, projects of economic improvement and social redistributions.

The Global financial and economic crisis keeps being the main problem in all countries and the governments are taking a number of anti–crisis preventive measures aimed at confronting the crisis and reducing its negative effects. Tax and other improvements exist in almost all the appropriate projects of the countries.

9 http://www.cba.am/CBA_SITE/monetary/aforeign.html?_locale=hy (ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայք, 21.04.2009)

ՀՀ տնտեսական անվտանգության հիմնախնդիրները

Լիլյա Ավետիսյան

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի և Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Վերջին տասնամյակում ընդլայնվել են անվտանգության համաշխարհային ոլորտի հիմնախնդիրների շուրջ քննարկումներն ու գիտական բանավեճերն, ինչն, ի թիվս այլ հանգամանքների, անմիջականորեն պայմանավորված է մարդկային զարգացման գործընթացների ակնհայտ բարդացմամբ, նյութական աշխարհի առարկաների ավելացմամբ, միջուկային և զանգվածային ոչնչացման այլ զենքերի տարածմամբ, միջազգային ահաբեկչության ուժգնացմամբ, առողջապահական և բնապահպանական նորանոր սպառնալիքների ի հայտ գալով[1]:

«Ազգային անվտանգություն» հասկացությունն այսօր ներառել է մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները՝ ռազմաքաղաքական, սոցիալ–տնտեսական, տեղեկատվական, հոգևոր–հոգեբանական և այլն, որոնք, իրենց հերթին, սերտորեն առնչվում են միմյանց հետ: Արդյունքում՝ այդ ոլորտների միջև սահմանները սկսել են պայմանական բնույթ կրել: Ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է տնտեսական անվտանգությունը, որն առավել քան երբեք հստակեցման և խոր վերլուծության կարիք ունի: Ինչ է, ի վերջո, տնտեսական անվտանգությունը, որոնք են այն սպառնալիքները, որ առկա են երկրում և որոնք են տնտեսական անվտանգության ապահովման քաղաքական և տնտեսական նախադրյալները:

Տնտեսական անվտանգությունն իրենից ներկայացնում է պայմանների և գործոնների ամբողջություն, որն երաշխավորում է ինչպես ազգային տնտեսության անկախությունը, կայունությունը, շարունակական արդիականացումն ու կատարելագործումը, այնպես էլ հասարակության ու նրա անդամների բնականոն կենսագործունեությունը, ֆիզիկական պաշտպանվածությունը, հոգևոր և նյութական պահանջմունքների բավարարումը[2]: Այն ենթադրում է այնպիսի համակարգ, որի առկայության պայմաններում համապատասխան սպառնալիքների առաջացման հավանականությունն ու ազդեցության չափը հասնում են նվազագույնի՝ հասարակության, պետության և բնության միջև ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատման, կայուն տնտեսական զարգացման արդյունավետ մեխանիզմների կիրառման հենքի վրա:

Հաշվի առնելով զարգացած և զարգացող երկրներում գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական առաջնահերթությունները՝ կարելի է պնդել, որ տնտեսական անվտանգության բուն հասկացությունը բավական հարաբերական է: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ–ում տնտեսական անվտանգության ապահովման պետական ռազմավարությունը հիմնականում խարսխված է 32–րդ նախագահ Ֆրանկլին Դելանո

1 Сенчагов В., Экономическая безопасность: геополитика, глобализация, самосохранение и развитие, Москва, 2002, с. 128.

2 Абалкин Л., «Экономическая безопасность России: угрозы и их отражение», с. 4–13 / «Вопросы экономики», 1994, N 12. 87.

Ռուզվելտի կողմից հետպատերազմյան շրջանում մշակած և իրականացված քաղաքականության հիմնադրույթների վրա և ընդհանուր առմամբ ներառում է յուրաքանչյուրի համար նյութական բարիքների և սոցիալական ոլորտի ծառայությունների առավել մատչելիությունը: Մինչդեռ զարգացող երկրներում մտահոգված են այնպիսի խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են աղքատության, կաշառակերության կրճատումը, բնակչության նվազագույն կենսապայմանների ապահովումը, ազգային տնտեսության կայունացումը և այլն: Անցումային փուլում գտնվող մի շարք երկրներում արդեն մշակվել են տնտեսական անվտանգության հայեցակարգային մոտեցումները, ստեղծվել համապատասխան կառույցներ: Այս ուղղությամբ էական քայլեր են արվել Ռուսաստանում, որտեղ պետության հովանավորությամբ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել: Այս առումով ուշագրավ է ակադեմիկոս Սերգեյ Գլազևի մշակած տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային մեծությունների հանրահայտ աղյուսակը: Ուկրաինացի վերլուծաբան Տատյանա Սիլինան «անվտանգություն» հասկացությունը համեմատում է «երջանկություն» հասկացության հետ. «Մարդիկ երջանիկ են այն պատճառով, որ չգիտեն, թե որքան են դժբախտ»: Ամեն ինչ կախված է այն կոորդինատների համակարգից, որտեղ տեղավորել են հասարակությունը, ինչպես նաև տնտեսական անվտանգության անաչառ գնահատականից: Բայց ինչպես հայտնի է, հանրապետությունում անկախության տարիների ընթացքում պետական մակարդակով այդպես էլ չկառուցվեց կոորդինատների համակարգ, որով հնարավոր կլիներ որոշել պետության տնտեսական անվտանգությունը: Ինչպես կարելի է իմանալ՝ անվտանգ է երկիրն արդյոք և ինչպես չեզոքացնել սպառնալիքները, եթե մինչև հիմա ոչ մի տեղ պաշտոնապես գրված չէ՝ ինչպես չափել անվտանգությունը: Օրվա հրամայական է Հայաստանի ազգային տնտեսության առանձնահատկություններին համապատասխան տնտեսական անվտանգության բաղկացուցիչ մասերի՝ ներքին և արտաքին գործոնների վերլուծությունը, երկրի տնտեսական անվտանգության համակարգի ուսումնասիրությունը, ինչպես նաև տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված պետության տնտեսական ռազմավարության մշակումը, ներքին և արտաքին տնտեսական սպառնալիքների վնասազերծման հնարավոր մեխանիզմների ձևավորումը:

Անվտանգության ապահովումն ենթադրում է սպառնալիքների դեմ ակտիվ պայքար՝ դրանց վերհանման, կանխարգելման, թուլացման, հակադարձման և վերացման միջոցով: Սպառնալիքները տարաբնույթ են և հանգեցնում են իրենց նշանակությամբ և ծավալներով ոչ միօրինակ հետևանքների: Սպառնալիքների համակարգը փոփոխություն է կրում ժամանակի ընթացքում, սպառնալիքներն ի հայտ են գալիս և չեզոքանում, ավելանում և նվազում[3]:

Վերջին տասնամյակներին համաշխարհային տնտեսական զարգացման միտումները վկայում են, որ գլոբալացման, տնտեսական ինտեգրման գործընթացները, «տեխնոլոգիաների մրցավազքը» նոր մարտահրավերների առջև են կանգնեցնում հատկապես զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրներին[4]:

3 Մանասերյան Թ., «Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման տեսագործնական մոտեցումները», 21–26 էջեր /«Рынок капитала в Армении», Երևան, 2001, N 7, 8 (65, 66):

4 Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, մեթոդաբանություն և արդյունքներ, Երևան, 2005, 248 էջ:

Պակաս կարևոր չէ նաև այն իրողությունը, որ տնտեսական անվտանգության ապահովումը մի շարք զարգացող երկրներում պայմանավորված է գործոններով, որոնք զարգացող մյուս երկրներում ներառված չեն տնտեսական սպառնալիքների համակարգում: Այսպես, օրինակ՝ անկախացման առաջին տասը տարիներին Ռուսաստանից որակյալ աշխատուժի՝ գիտնականների, մասնագետների արտահոսքը մոտավոր տվյալներով կազմել է մոտ 95000–100000 մարդ, կամ ընդհանուր բնակչության 0,05%–ը: Իսկ Հայաստանի պարագայում, մտավոր կարողության արտահոսքը, որը կազմում է արտագաղթածների ավելի քան մեկ երրորդը, ամենահամեստ հաշվարկներով՝ բնակչության առավել աշխատունակ զանգվածի մոտ կեսը, կարելի է դասել ազգային աղետների շարքը: Այլ խոսքով՝ մտավոր կարողության արտահոսքն այսօր Հայաստանի տնտեսական անվտանգության էական սպառնալիքներից մեկն է: Ժողովրդագրական իրավիճակի լավացման տարբերակ մոտակա տարիներին չկա: Երկրում իրապես կկանգնի բարձր արդյունավետության աշխատանքի հնարավորության կտրուկ նվազման խնդիրը: Համապատասխանաբար կպակասեն մուտքերը բյուջե, կկրճատվի բնակչության գնողունակությունը: Մինչև 2015թ. երկրի բնակչությունը զգալիորեն կծերանա, իսկ երկրի աշխատանքային ներուժի կորուստն արտակարգ բարձր կլինի: Եթե նկատի առնենք, որ թոշակառուները մեր բնակչության ամենաքիչ ապահովված խմբերից են, կարելի է ենթադրել, որ այդ խմբի թվի մեծացման հետ երկրում նկատելիորեն կաճի և սոցիալական դժգոհությունը:

Թվարկելով երկրի տնտեսական անվտանգության սպառնալիքները՝ կարելի է հիշատակել նաև հայրենական արտադրանքի անմրցունակության, մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ի ցուցանիշի ցածր մակարդակի, սոցիալական դժգոհության նոր ալիքի բարձրացման, և, իհարկե, որոշակիորեն կայացած էներգետիկ համակարգի արտաքին կախվածության մասին, որը համարվում է ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներից մեկը: Մեկ այլ սպառնալիք է ստվերային տնտեսության և կոռուպցիայի առկայությունը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ Հայաստանի տնտեսությունը խոցելի է, չնայած փակ սահմանների և համաշխարհային տնտեսության հետ սահմանափակ կապերին: Գործազրկության աճը, փոխանցումների ներհոսքի կրճատումը, մի շարք խոշոր ընկերությունների փակումը համաշխարհային տնտեսական ճգնաժամի առջև երկրի տնտեսության խոցելիության դրսևորումներից էին:

Հատկանշական է, որ կառավարությունը, որպես առաջնահերթություն, իր քաղաքականության մեջ նախընտրում է ֆիսկալ միջոցները: Աշխատելով ապահովել պետության տնտեսական անվտանգությունը, նվազեցնել դրամական արժեզրկման մակարդակը և մեծացնել պետբյուջեի մուտքերը՝ կառավարությունը սպառնալիք է ստեղծում տնտեսվարող սուբյեկտների և բնակչության տնտեսական անվտանգության համար: Իսկ դա, իր հերթին, բերում է շատ բացասական միտման. ուժեղանում է պետության տնտեսական անվտանգության և գործարարների ու բնակչության զգալի մասի միջև տնտեսական անվտանգության հակադրությունը: Եվ այդ պայմաններում ծագում է գլխավոր սպառնալիքը. պետությունը, գործարարները և բնակչությունը կորցնում են ընդհանուր հետաքրքրություն-

ները, կորում է նրանց շահագրգռվածությունը՝ ստեղծելու կայուն իրավական և տնտեսական միջավայր: Արդյունքում՝ դանդաղում են ազգային տնտեսության ձևավորման, մրցակցային առավելությունների բացահայտման ու արդյունավետ իրացման, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացման գործընթացները, իսկ երկիրն, այսպիսով, հայտնվում է համաշխարհային տնտեսության և տարածաշրջանային զարգացումներից ավելի մեծ մեկուսացման մեջ:

Ճգնաժամի պայմաններում նկատվեց հովանավորչական բնույթի տնտեսական քաղաքականության միտում: Բավական է նշել, որ 20 առաջատար և նախկինում «բաց դռների» քաղաքականություն քարոզող երկրներից 17–ում ընդունվել են ավելի քան 47 պրոտեկցիոնիստական որոշումներ: Այդ երևույթը պայմանավորված չէր միայն ճգնաժամային իրավիճակից դուրս գալու տնտեսական–մարտավարական նկատառումներով, այլ արտահայտում է որոշակի երկարաժամկետ ռազմավարություն, որն ադեկվատ է ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգի տրամաբանությանը: Նոր իրողությունում վերացել է արևմտյան նախկին մենատիրությունը, և սրվել է առևտրաֆինանսական մրցակցությունը: Որպես հետևանք՝ տնտեսական էքսպանսիան ընդունել է տարավեկտոր բնույթ, և ներկայումս տնտեսապես առաջատար երկրները ստիպված են պաշտպանվել նախկինում «հետամնաց» համարվող երկրների տնտեսական հավակնություններից: Այսպիսով, արդի տնտեսական գործընթացները, հենվելով ունիվերսալ գաղափարախոսությունների հիմնադրույթների վրա, զուրկ չեն նաև որոշակի ազգային–պահպանողական գաղափարախոսական տրամաբանությունից: Նկատենք նաև, որ պրոտեկցիոնիզմն արտահայտում է ոչ միայն ինքնաբավության միտումը, այլև որոշակի տնտեսական հենք է ստեղծում տարավեկտոր գլոբալացման մաս կազմող այլ, օրինակ՝ տեղեկատվական բնույթի, անցանկալի գործընթացներին դիմակայելու համար:

Ազգային անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիք է հանդիսանում տնտեսության զարգացման գործընթացների համապատասխանեցումը համաշխարհային զարգացումների և արդի պայմանների տրամաբանությանը: Այս տեսանկյունից, անվտանգության հիմնախնդիրներն առնչվում են արտաքին տնտեսական, ներդրումային, հարկաբյուջետային, դրամավարկային, փոքր և միջին գործարարության խթանման, տնտեսական մրցակցության պաշտպանության, բնական մենաշնորհների կարգավորման, սակագնային, կառուցվածքային և այլ քաղաքականություններին:

Երկրի պետական անվտանգության և պաշտպանունակության ապահովումը մեծապես կախված է զարգացած և կայուն տնտեսությունից: Այս առումով չափազանց կարևորվում է ՀՀ տնտեսական անվտանգության ռազմավարությունը, դրա գնահատումը, ապահովման ուղղություններն ու մեխանիզմները, երկրի տնտեսական շահերի ապահովումը տարածաշրջանում:

Տնտեսական քաղաքականության վերաբերյալ ընդունվող որոշումների հիմնավորվածության ապահովմանը, սպառնալիքների չեզոքացմանն ուղղված ջանքերը պահանջում են իրականացնել տնտեսական անվտանգության մակարդակի գնահատում և վերլուծություն: Այդ նպատակով կիրառվում է որոշակի չափորոշիչների (չափանիշների) և ցուցանիշների համակարգ:

Տնտեսական անվտանգության չափանիշներն ենթադրում են բնական պաշարների չափերի, դրանց զարգացման հնարավորությունների, ինչպես նաև կապիտալի և աշխատանքի օգտագործման արդյունավետության մակարդակի, տնտեսության մրցունակության, արտաքին սպառնալիքներին դիմակայելու հնարավորությունների և անկախության, սոցիալական կայունության և սոցիալական հակամարտությունների պայմանների խորը և բազմակողմանի վերլուծություններ: Այդ չափանիշներից է նաև ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի համապատասխանությունն առավել զարգացած և առաջատար երկրների համանման ցուցանիշին, ինչպես նաև այն մակարդակին, որի դեպքում ներքին և արտաքին վտանգները հասնում են նվազագույնի[5]:

Ինչ վերաբերում է տնտեսական անվտանգության ցուցանիշներին, ապա առավել նպատակահարմար է առանձնացնել կենսամակարդակը, սղաճի տեմպերը, գործազրկության մակարդակը, տնտեսական աճը, բյուջեի ճեղքվածքը, պետական պարտքը, համաշխարհային տնտեսությանն ինտեգրման աստիճանը, արտարժույթի պաշարները, ստվերային տնտեսության տեսակարար կշիռը: Եթե մի շարք ցուցանիշների մեծությունը հայտնվում է ընդունված թույլատրելի սահմանից բարձր կամ ցածր, ապա համարվում է, որ տնտեսական համակարգն անբարենպաստ վիճակում է:

Երկրում պարզապես չկա մեկ միասնական մոտեցում ձևակերպելու սպառնալիքների բոլոր չափորոշիչները: Տնտեսական անվտանգության ամբողջական համակարգի ստեղծման ուղղությամբ աշխատանքներ տարվում են: Դեռ շարունակվում են բանավեճերը նաև այն մասին, թե ինչ չափանիշներ պետք է դառնան չափորոշիչները և ինչ սահմանային արժեքներ ունեն դրանք երկրի ու անհատի համար:

Անհրաժեշտ է հաստատել երկրի տնտեսական անվտանգության ապահովման Ազգային ծրագիր, որտեղ և կհամադրվեն տնտեսական անվտանգության բոլոր ցուցանիշները: Այդ ծրագիրը պետք է խիստ կառուցվածքային դառնա, իսկ տնտեսական անվտանգության ապահովման միջոցառումները խմբավորվեն ըստ ռեսուրսահումքային, էներգետիկ, ֆինանսային, ներդրումային, տեխնոլոգիական, արդյունաբերական, սոցիալական, արտաքին տնտեսական անվտանգության: Ծրագրում պետք է նաև լինեն տնտեսության ստվերայնացումը հաղթահարելու և տնտեսական գործընթացների տեղեկատվայնացման բաժիններ: Կարևոր է Հայաստանի տնտեսական անվտանգության հայեցակարգի մշակումը, որը հստակ կսահմանի յուրաքանչյուր տարվա համար անվտանգության ապահովման ուղղությունները: Այս դրույթներն իրագործելու համար պետք է ապահովել նաև տնտեսական անվտանգության իրավական հիմքը:

Ակնհայտ է տնտեսական անվտանգության հիմնախնդիրների գիտական–տեսական բազայի մշակման, հայեցակարգային հիմքերի ստեղծման և զարգացած երկրներում գործող համապատասխան սկզբունքներին դրանց ներդաշնակեցման անհրաժեշտությունը: Տնտեսական անվտանգության ապահովման պետա-

5 Илларионов А., “Критерии экономической безопасности”, с. 33–58 / “Вопросы экономики”, 1998, N 10. 91, Сенчагов В., Экономическая безопасность: геополитика, глобализация, самосохранение и развитие, Москва, 2002, 128 с.

կան ռազմավարության հիմքում պետք է ընկած լինեն սոցիալ–տնտեսական հնարավոր զարգացումների և դրանց հետևանքների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված կանխատեսումները:

ՀՀ տնտեսական անվտանգության հիմնախնդիրները բազմակողմ են և ենթադրում են ինչպես տեսական խնդիրների գիտական մշակում, այնպես էլ գործնական կենսագործման ուղղությունների, ձևերի ու եղանակների սահմանում: Այս առումով հարկ է առաջնային համարել անվտանգության ապահովման քաղաքական, տեղեկատվական և տնտեսական միջոցառումները:

The issues of economic security of the RA

Summary

Ensuring security has grown to ultimate priority especially in the current stage of development as it conditions, to a great extent, the immunity of democratic, spiritual, moral values, and essential interests of individuals, society and the state.

Security issues arise due to the independence of statehood and can be best solved via implementation of sovereign and targeted economic policy. Solving the security issues conditions, to a great extent, normal economic development, especially for countries in transition to market economy, such as Armenia.

Էլեկտրաէներգիայի արտադրության արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում

Մենիկ Ջուլհակյան

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հայցորդ

Ներկայումս համաշխարհային տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը անհրաժեշտ ծավալի և որակի էներգիայի արտադրությունն է: Ավելին՝ ինչպես գիտատեխնիկական առաջընթացի, այնպես էլ տնտեսական զարգացման և կենցաղի գրեթե բոլոր նվաճումների և ձեռքբերումների հիմքը էներգիան է, և արդի մեր կյանքը առանց էներգիայի գրեթե անհնար է պատկերացնել: Կարող ենք նաև նշել, որ ներկայումս մարդկային քաղաքակրթության բախտը և մարդկանց կենսամակարդակը մեծ չափով պայմանավորված են էներգիայի արտադրությամբ և մեր կյանքի տարբեր բնագավառներում դրա գործածության չափերով:

Վերոգրյալի տեսանկյունից բավական է նշել, որ սկսած 1971թ–ից աշխարհում էներգիայի օգտագործումը կրկնապատկվել է, իսկ բարձր եկամուտով տնտեսություններն օգտագործում են համաշխարհային ամբողջ էներգիայի համարյա կեսը: Հատկանշական է, որ 1971թ–ից սկսած զգալիորեն ավելացել է Չինաստանի կշիռը և 2006թ–ին այն հասել է 16%–ի՝ գրեթե հասնելով ԱՄՆ–ի տնտեսության կողմից օգտագործած էներգիայի մեծությանը (19%): Քանի որ ԱՄՆ–ը համարվում է բարձր եկամուտ ունեցող երկիր, մյուս բարձր եկամուտ ունեցող երկրների հետ, այդ բաժնի մեծությունը կազմում է 47%: Հնդկաստանի, Չինաստանի և այլ միջին եկամուտ ունեցող երկրների բաժինը կազմել է 49%, ցածր եկամտով երկրներինը՝ 4%:

Էներգիայի կարևորագույն բաղկացուցիչը էլեկտրաէներգիան է, որի արտադրության աղբյուրները կրել են զգալի փոփոխություններ: 2006թ–ին 1990թ–ի համեմատ ատոմային էներգիայի բաժինը էլեկտրաէներգիայի արտադրության մեջ աշխարհում նվազել է 2 տոկոսային կետով, հիդրոէներգիայի բաժինը 18%–ից նվազել է մինչև 16%: Զգալիորեն նվազել է նավթի բաժինը (10%–ից հասնելով 5%–ի): Ավելացել է գազի (15%–ից մինչև 20%) և ածխի բաժինը (37%–ից հասել է 41%): Զարգացող երկրներում նույնպես նշված ժամանակահատվածում նվազել է ատոմային էներգիայի բաժինը (7%–ից հասնելով 5%–ի): Հատկանշական է նաև այն, որ աշխարհի համեմատությամբ զարգացող երկրներում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ատոմային էներգիայի բաժինը 3 անգամ ավելի ցածր է: Եթե էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրների կազմում 1990–2006թթ–ին աշխարհում ածխի բաժինն ավելացել է 4 տոկոսային կետով (37%–ից հասնելով 41%–ի), ապա զարգացող երկրներում այդ մեծությունը կազմել է 12% (34%–ից հասնելով 46%–ի), այսինքն՝ աշխարհի համեմատությամբ 3 անգամ ավելի արագ է աճել այդ ցուցանիշը[1]: Նկատենք նաև, որ ածխի այրման միջոցով էլեկտրաէներգիայի ստացումը բնապահպանության տեսանկյունից անվտանգ չէ, այլ ընդհակառակը այդ գործընթացի արդյունքում զգալի վնաս է հասցվում շրջակա միջավայրին:

Էլեկտրաէներգիայի արտադրության գործում զգալի կշիռ ունեն հիդրոռե-

1 World Development Indicators, 2009, p.173.

սուրսները: Բավական է նշել, որ աշխարհում եթե 1990 թվականին այդ բաժինը կազմել է 18%, ապա 2006 թ–ին՝ 16%, իսկ զարգացող երկրներում համապատասխանաբար՝ 23% և 22%: Նշված վիճակը հասկանալի է այն պատճառով, որ հիդրոռեսուրսները, որպես էլեկտրաէներգիայի ստացման համեմատաբար էժան աղբյուր ավելի մեծ բաժին ունեն զարգացող երկրներում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեծ նշանակություն է տալիս հանրապետության էներգետիկ անկախության և էներգետիկ անվտանգության հարցերին, որոնք անհրաժեշտ են երկրի հետագա կայուն զարգացման համար:

Ինչպես էներգետիկայի զարգացման ամբողջական ծրագրի, այնպես էլ տարբեր նպատակային ծրագրերի հիմքում դրված է երկրի էներգետիկ անվտանգության խելամիտ մակարդակի ապահովման հայեցակարգը[2]:

Ցանկացած պետության գործունեության համար կարևոր նշանակություն ունեն այդ երկրի արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները, որոնք մարմնի արյունատար համակարգի նմանությամբ, ապահովում են բնականոն հաղորդակցությունը տնտեսության տարբեր ոլորտների միջև: Շուկայական տնտեսություն կառուցող երկրներում կառավարության գործունեության առանձնահատուկ ուղղություններից է ենթակառուցվածքների նորմալ վիճակի պահպանումը և զարգացումը: Ավելին՝ ՀՀ կառավարությունը, հայտնվելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դժվարությունների հորձանուտում, վերանայեց իր ծրագրերը և հսկայական ծավալի ներդրումներ ապահովեց ինչպես նոր ենթակառուցվածքների ստեղծման, այնպես էլ հների նորոգման համար: Բավական է նշել, որ միայն 2008–2011 թվականներին ապահովվել է 797 մլրդ դրամի (2,2 մլրդ ԱՄՆ դոլարի) ներդրում ենթակառուցվածքներում (տե՛ս աղյուսակ 1–ը):

Աղյուսակ 1

ՀՀ կառավարության կողմից 2008–2011 թվականներին ապահովված ներդրումները ենթակառուցվածքներում և դրանց կառուցվածքը

Ենթակառուցվածքները	մլրդ դրամ	% ընդամենի նկատմամբ
Ընդամենը, այդ թվում՝	797	100
Ջրամատակարարման ոլորտ	99	12,4
Ճանապարհաշինություն	88	11,0
Էներգետիկ համակարգ	342	43,0
Օդային հաղորդակցության ոլորտ	58	7,3
Կապի ոլորտ	210	26,3

Աղբյուրը՝ կազմվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008–2011 թվականների գործունեության արդյունքներ» (report.gov.am), Տնտեսական բարեփոխումների վերլուծական–տեղեկատվական կենտրոն, Եր., «Փրինթինֆո» տպագրատուն, 2011, էջ 33–ի տվյալներով:

2 Տե՛ս, մասնավորապես, ՀՀ կառավարության 2007 թ–ի նոյեմբերի 1–ի N 1269–Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը»:

Ինչպես տեսնում ենք վերը բերված տվյալներից, ենթակառուցվածքների հատվածում կատարված ներդրումների զգալի բաժինը 2008–2011 թվականներին ուղղվել է էներգետիկ համակարգ (կատարված ներդրումների 43,0%–ը), ինչը բացատրվում է այդ համակարգի կարևորությամբ հանրապետության տնտեսության և նրա բնակչության պահանջմունքներն այդ արտադրատեսակի նկատմամբ բավարարելու գործում: Հիշեցնենք նաև, որ էլեկտրաէներգետիկան ոչ միայն արդյունաբերության, այլ նաև տնտեսության մյուս ոլորտների «հացն» է: Հասկանալի է նաև, որ տնտեսության կայուն և վերընթաց զարգացումը, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարձրացումը անհնար է պատկերացնել առանց զարգացած և անխափան աշխատող էներգետիկ համակարգի:

Լինելով սակավ էներգակիրներ ունեցող երկիր՝ Հայաստանն այսօր տարածաշրջանում էլեկտրաէներգիա արտահանող երկիր է: 2008-2011 թվականներին հանրապետությունից արտահանվել է մոտ 2,8 մլրդ կՎտ ժամ էլեկտրաէներգիա: Հարկ է նաև նշել, որ էլեկտրաէներգիայի արտահանման ծավալներն 2011թ–ին, 2007թ.–ի համեմատ ավելացել են 50%–ով: ՀՀ կառավարությունը ոլորտի հետագա զարգացման նպատակով կատարել է մի շարք կարևոր քայլեր և զգալի ներդրումներ:

Հայաստանում հիդրոէներգետիկան կազմում է երկրի էլեկտրաէներգիայի արտադրության կարևոր բաղադրիչներից մեկը: Հայաստանի տեղակայված հիդրոէներգետիկ արտադրության ընդհանուր հզորությունը մոտ 1,100 ՄՎտ է, որից 1,050 ՄՎտ–ը շահագործվող է: Այս կարողության մոտ 95%–ը տեղակայված է հէկերի երկու կարևոր համալիրներում՝ Սևան–Հրազդան և Որոտան, որոնք արտադրում են տարեկան միջին կտրվածքով մոտ 1,600 ԳՎժ էլեկտրաէներգիա:

Աղյուսակ 2–ում ներկայացված է էլեկտրաէներգիա արտադրող տարբեր կայանների կիրառմամբ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների մասին տեղեկատվությունը: Աղյուսակի տվյալները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում, ի տարբերություն աշխարհի և զարգացող երկրների էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրների, զգալիորեն բարձր է հէկերի բաժինը, ինչը 2010թ–ին 2009թ–ի համեմատ ունեցել է 26,4%–անոց աճ և կազմել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիայի շուրջ 40%–ը: Նման հանգամանքը պայմանավորված է հանրապետությունում էներգետիկայի ոլորտում տարվող քաղաքականությամբ և, մասնավորապես, փոքր հէկերի կողմից թողարկվող արտադրանքի ավելացմամբ: Սա անշուշտ դրական երևույթ է: Հանրապետության հիդրոէներգետիկ ներուժի հնարավորությունները հաշվի առնելով՝ անկասկած է նաև, որ առաջիկայում երկրի էլեկտրաէներգիայի հաշվեկշռում կավելանա ջրից ստացվող էներգիայի բաժինը, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց շարքում կարևորվում են հարուստ հիդրոէներգետիկ պաշարների առկայությունը, ջրից ստացվող էներգիայի համեմատաբար ցածր ծախսերը, այն հանգամանքը, որ արտադրությունը ամբողջովին հիմնված է տեղական ռեսուրսների վրա և բացառվում է երկրի՝ դրսից վառելիքի մատակարարումը, այս արտադրությունը էկոլոգիապես մաքուր է:

Աղյուսակ 2

Էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի արտադրության ծավալները Հայաստանի Հանրապետությունում

	2010 թ. հունվար–դեկտեմբեր	2009 թ. հունվար–դեկտեմբեր	2010 թ. հունվար–դեկտեմբերը 2009 թ. հունվար–դեկտեմբերի նկատմամբ, %
Էլեկտրաէներգիա, ընդամենը, մլն կՎտ.ժամ	6491,3	5671,2	114,5
	100,0	100,0	
այդ թվում՝			
ՋԷԿ	1413,2	1128,5	125,2
%–ով ընդամենի մեջ	21,8	19,9	
ՀԷԿ	2584,0	2044,7	126,4
%–ով ընդամենի մեջ	39,8	36,1	
ՀԱԷԿ	2490,0	2493,7	99,9
%–ով ընդամենի մեջ	38,4	44,0	
Հողմային էլեկտրակայաններ	4,1	4,3	95,3
%–ով ընդամենի մեջ	0,1	0,1	
Ջերմային էներգիա, հազ ԳՋ	493,6	980,5	50,3

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար–դեկտեմբերին», Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱՎԾ, 2011 թ., էջ19:

Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ 2012 թվականին ևս էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակելու է նպատակաուղղվել ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու միջուկային նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների իրականացման համակարգումը, սեփական վերականգնվող էներգապաշարների իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

ՀՀ 2012թ–ի պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կշարունակվեն Որոտանի հէկերի համակարգի վերազինման,

Գյումրի–2 ենթակայանի վերականգնման ծրագրերի աշխատանքները: Կմեկնարկեն Հայաստան–Վրաստան 400 կՎ լարման օդային գծի կառուցման նախապատրաստական ծրագրերի, ինչպես նաև Հրազդան–Շինուհայր 220 կՎ լարման օդային գծի վերակառուցման աշխատանքները:

Հայ–ռուսական համատեղ «Մեծամորէներգաատոմ» ՓԲԸ–ի կողմից 2012 թ–ին կիրականացվեն միջուկային նոր էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքները:

Սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվեն Հայկական ԱԷԿ–ի երկրորդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքները:

2012 թ–ին նախատեսվում են հանրապետության տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները՝ Արաքս գետի վրա Մեղրի հէկ–ի կառուցման աշխատանքների իրականացում, Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում:

Current problems in the electricity production sphere in the Republic of Armenia

Summary

For the sustainable development of the world economy it is important to produce sufficient quantity of energy. One of the main constituent of energy consumed by all customers (economic entities, households and population) is electric power.

The structure of energy production changed in the period of 1990–2006. Production of nuclear power engineering, for example, has declined in 2 percentage points all over the world, while the use of natural gas and coal for energy production has increased.

The article also refers to the governmental policy in sphere of energy independence and energy safety in the Republic of Armenia, development programs in the energy sector of the economy.

Մարդկանց տարածական կողմնորոշման ազդեցության և գյուղատնտեսական խորհրդատվության մատուցման արդյունավետության փոխադարձ կապը

Հարություն Գևորգյան

Հայաստանի պետական ագրարային համալսարանի հայցորդ

Հրաչիկ Ջավադյան

Հայաստանի պետական ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի դեկան

Արմեն Սարգսյան

Հայաստանի պետական ագրարային համալսարանի մագիստրանտ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ ագրոպարենային համակարգը, 2004–2010թթ. ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 25,3, այդ թվում գյուղատնտեսությունը՝ 18,8 տոկոսը[1]: Ընդ որում, ըստ 2010–2020թթ–ի կայուն զարգացման ռազմավարական ծրագրի, ՀՀ–ում ձեռնարկված միջոցառումների և նախատեսված ծրագրերի շնորհիվ պլանավորվում է այդ ցուցանիշը նշանակալիորեն բարելավել՝ հաշվի առնելով ճյուղային և ոլորտային նոր համամասնությունները: Վերջինս նախատեսվում է իրականացնել մի կողմից՝ նոր տեխնոլոգիաների ներդրման և կիրառման, իսկ մյուս կողմից՝ ապրանք արտադրողների կրթական մակարդակի և որոշումների ինքնուրույն ընդունման կարողության բարձրացման միջոցով: Ինչպես նշում է Գ. Դեմիշկևիչը[2], գյուղատնտեսության մեջ առաջընթացը կախված է մարդկանցից, քանի որ նրանք են այն կարևոր օղակները, որոնք կարողանում են ներդնել նոր տեխնոլոգիաները՝ նպաստելով գյուղատնտեսական համախառն արտադրանքների ծավալների ավելացմանը:

Ագրարային ոլորտի մասնագիտական կադրերի շարունակական ուսուցումը և կրթության որակի բարձրացումը համարվում է ներկայիս ագրարային քաղաքականության կարևոր գործոններից մեկը[3]: Բազմաթիվ գիտնականների (Է. Հիլլ, Ա. Մեհրաբյան, Է. Ռոջերս)[4], ինչպես նաև մեր կողմից իրականացված հետազո-

1 Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն, Հավելված 1, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4–ի N1476–ն, 2010, էջ 68 http://www.minagro.am/doc/agstrategy_arm3.pdf

2 Демишкевич Г.М.., Подготовка аграрных консультантов в системе дополнительного профессионального образования, М.: РАКО АПК, 2006, 45 с.

3 Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն, Հավելված 1, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4–ի N1476–ն, 2010, էջ 68 http://www.minagro.am/doc/agstrategy_arm3.pdf

4 Mehrabian, A. “Silent Messages” – A Wealth of Information About Nonverbal Communication (Body Language)”. Personality & Emotion Tests & Software: Psychological Books & Articles of Popular Interest. Los Angeles, CA: self–published. Retrieved April 6, 2010. 64 p.; Rogers, Everett M. (2000). “The Extensions of Men: The Correspondence of Marshall McLuhan and Edward T. Hall.” Mass Communication and Society, 3(1): 117–135.

տությունները ցույց են տվել, որ ֆերմերների կրթության և խորհրդատվության որակը բարձրանում է ինչպես մասնագիտական գիտելիքների տրամադրման, այնպես էլ գիտելիքների մատուցման արդյունավետ տեխնոլոգիաների հիման վրա: Այսպես, ինչպես փաստում են Մ. Հիքսոնը, Մակ Կրոսկին և համանման ոլորտի հետազոտողները, 1991թ.[5], կախված նրանից, թե ինչպես է խորհրդատվությունը մատուցվում ֆերմերին, նույն սկզբունքով էլ նա ընկալում է մատուցված տեղեկատվությունը, որն էլ պայմաններ է ստեղծում համապատասխան քանակությամբ մնացորդային գիտելիքների ապահովման համար: Ընդ որում, թե այլ գիտնականների[6], և թե մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ խորհրդատվությունների ժամանակ բավական կարևորվում է մարդկանց միջև տարածական կողմնորոշման պահպանումը (պրոքսեմիկա), քանի որ, այդ դեպքում ավելի է մեծանում խորհրդատվության ընկալման մակարդակը: Եթե այն չի պահպանվում, ապա խորհրդատվության իրականացման մոնիթորինգի արդյունքները լինում են բացասական կամ առաջանում են կոնֆլիկտային երևույթներ խորհրդատուի և ֆերմերի միջև:

Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանում գործող խորհրդատվության մատուցման ժամանակ կիրառվում են տարբեր մեթոդներ, որոնցից ամենատարածվածը համարվում է խմբային մեթոդը, որի դեպքում մարդկանց միջև գործում են հիմնականում միջխմբային հարաբերություններ և կարևորվում է հեռավորության գործոնը, այս առումով հետազոտության ընթացքում մեր կողմից փորձ է արվել ուսումնասիրելու սեմինարների և դաշտային օրերի ժամանակ տարածական կողմնորոշումը խորհրդատու–ֆերմեր հարաբերություններում, բացահայտել որոշ խնդիրներ, որոնք հնարավորություն կտան վերջիններիս լուծման դեպքում ապահովելու խորհրդատվության մատուցման արդյունավետության առավել բարձր մակարդակը:

Հետազոտության նյութը և մեթոդը

Հետազոտության համար որպես օբյեկտ ընդունվել են ՀՀ Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզերում գործող խորհրդատվության ծառայությունները, որտեղ իրականացվել է ֆերմերների խորհրդատվությունը: Օգտագործվել են 2007–2010 թվականների այդ տարածաշրջաններում սեմինարների, դաշտային օրերի և անհատական այցելությունների ժամանակ հավաքագրված տվյալները և նյութերը: Ընդ որում տարածական կողմնորոշման ազդեցության գնահատման ժամանակ օգտագործվել են միևնույն խորհրդատու մասնագետների աշխատանքի արդյունքները, որոնք ստացվել են տարբեր ֆերմերներին խորհրդատվության մատուցման ընթացքում:

Հետազոտություններն իրականացվել են անհատական դիտարկումների, սոցիոլոգիական հարցումների և խորհրդատվությունների մնացորդային գիտելիքների գնահատման եղանակներով: Ընդհանուր առմամբ կատարվել է 132 դիտարկում, ֆերմերների հետ անցկացվել է 340 հարցում:

5 Hickson, M. III, & McCroskey, J. C. (1991).Diagnosing communication problems of academic chairs: Applied communication in context. ACA Bulletin, 78, 8–13.

6 Hickson, M. III, & McCroskey, J. C. (1991).Diagnosing communication problems of academic chairs: Applied communication in context. ACA Bulletin, 78, 8–13.

Հարցաթերթիկների միջոցով իրականացված հարցումների ժամանակ պարզաբանվել է խորհրդատու–ֆերմեր հեռավորության շեմը և դրա ժամանակ տեղի ունեցող միջանձնային և միջխմբային հաղորդակցության մեխանիզմները: Նշվել են նաև ֆերմերների ռեակցիան և հետադարձ կապը՝ կախված տարբեր հեռավորությունների դեպքում խորհրդատվությունների կազմակերպման ժամանակ:

Համաձայն մարդկանց միջև հեռավորության դասակարգման ընդունված տեսության՝ մեր հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները աստիճանակարգել ենք ըստ հետևյալ աղյուսակի.

Աղյուսակ 1

Ֆերմերների տարածական կողմնորոշումների դիտարկումներն ըստ մարզերի, 2007–2010 թթ.

Հ/հ	Հեռավորության տեսակը	Հետազոտված դիտարկումներն ըստ մարզերի				Ընդ.
		Արմավիր	Կոտայք	Արարատ	Արագածոտն	
1	Նեղ անձնական (ինտիմ) գոտի, 0–45 սմ	11	8	6	10	35
2	Անձնական գոտի 45–120 սմ	14	12	18	15	59
3	Սոցիալական գոտի 120–360 սմ	7	8	7	12	34
4	Հասարակական գոտի 360 և ավելի սմ	1	0	2	1	4
Ընդամենը՝		33	28	33	38	132

Սոցիոլոգիական հարցումների ժամանակ գնահատվել են ֆերմերների ստացված մնացորդային գիտելիքները: Գիտելիքների գնահատումը կատարվել է խորհրդատվությունից անմիջապես հետո՝ 4–միավորանոց համակարգով պարզ սանդղակի միջոցով, ըստ հետևյալ սկզբունքի՝

4 միավոր՝ ֆերմերը հիշում և ամեն ինչ վերարտադրում է ՇԱՏ ԼԱՎ:

3 միավոր՝ ֆերմերը հիշում և ամեն ինչ վերարտադրում է ԼԱՎ:

2 միավոր՝ ֆերմերը հիշում և ամեն ինչ վերարտադրում է ՎԱՏ:

1 միավոր՝ ֆերմերը հիշում և ամեն ինչ վերարտադրում է ՇԱՏ ՎԱՏ:

Բոլոր տվյալները մուտքագրվել և վերլուծության են ենթարկվել SAS text Mining վիճակագրական ծրագրի միջոցով: Կատարվել է բոլոր տվյալների կալիբրացիա և խաչաձև վալիդացիա, որից հետո ստացվել են տրամաբանական կախվածությունները ընդհանուր ռեգրեսիոն անալիզի մեթոդով:

Արդյունքներ և քննարկում

Ֆերմերների՝ գիտելիքների ընկալման վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ: Մեր ուսումնասիրությունների արդյունքում ուսուցումների ժամանակ,

կախված խորհրդատու–ֆերմեր տարածական կողմնորոշումից, մեր կողմից արձանագրվել և դասակարգվել են ներքոհիշյալ ցուցանիշները՝

Աղյուսակ 2

Ֆերմերների գիտելիքների ստուգման արդյունքները տարածական տարբեր կողմնորոշումների դեպքում

Հ/հ	Հեռավորության տեսակը	Գիտելիքների ստուգման միավորը	Գիտելիքների ստուգման արդյունքները, %			
			Արմավիր	Կոտայք	Արարատ	Արագածոտն
1	Նեղ անձնական գոտի	4	0	1	5	3
		3	22	12	33	26
		2	57	73	42	63
		1	21	14	20	8
2	Անձնական գոտի	4	12	16	14	12
		3	54	63	43	53
		2	24	19	21	18
		1	11	2	22	17
3	Սոցիալական գոտի	4	21	27	31	25
		3	56	45	38	48
		2	8	9	17	23
		1	15	19	14	4
4	Հասարակական գոտի	4	14	12	8	11
		3	54	63	41	61
		2	9	8	31	11
		1	23	17	20	17

Հետազոտության արդյունքները վկայում են (աղյուսակ 2), որ ուսումնասիրվող մարզերում, տարածական կողմնորոշումից կախված, գոյություն ունի տրամաբանական կախվածություն ֆերմերների մնացորդային գիտելիքների միջև: Այն ապացուցվել է վիճակագրական վերլուծության (SAS text mining) միջոցով, որի դեպքում հիմք են ընդունվել գիտելիքների գնահատման չորս միավորանոց համակարգը և լուծման արդյունքում ստացվել է ($R2=0.761$, $p<0.005$):

Ավելի դիդակտիկ լինելու համար կառուցվել է տարբեր հեռավորությունների դեպքում մնացորդային գիտելիքների կախվածության հետևյալ գրաֆիկը:

Մնացորդային գիտելիքների քանակությունը տարբեր հեռավորությունների դեպքում



Այն ցույց է տալիս, որ ֆերմերների մնացորդային գիտելիքները շատ են լինում այն դեպքում, երբ խորհրդատու–ֆերմեր հեռավորությունը գտնվում է անձնական կամ սոցիալական գոտիների միջև (45–360 սմ): Հակառակ դեպքում նրանք չեն կարողանում լավ ընկալել նյութը կամ չեն լսում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ինտիմ կամ նեղ անձնական գոտու մեջ տվյալ անձը թույլ է տալիս ներխուժել միայն էմոցիոնալ կապի մեջ գտնվող անձանց (ծնող–երեխա, ամուսիններ, բարեկամներ): Օտար անձի ներխուժման ժամանակ օրգանիզմում մեխանիկորեն առաջանում են պաշտպանական որոշակի մեխանիզմներ (դիմացինին վանելու, նրան մերժելու, պաշտպանվելու ցանկություն), որի ժամանակ որոշ չափով դադարում են տեղեկատվության ընկալման մեխանիզմները: Իսկ հասարակական գոտում տվյալ անձը շատ արագ է կորցնում հաղորդակցության կապը խորհրդատուի հետ, որը բերում է տեղեկատվության չլսելու կամ ոչ ճիշտ ընկալման:

Ինչ վերաբերում է անձնական և սոցիալական գոտիներին, ապա դրանք լավագույն հեռավորությունն են ֆերմերների հետ հաղորդակցության համար, քանի որ ֆերմերը անկաշկանդ է և հոգեբանորեն չի լարվում իր օդային տարածքը պաշտպանելու համար, և կարողանում է հստակ լսել և հասկանալ մատուցվող խորհրդատվությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Իրականացված հետազոտությունները հիմք են տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների և կատարելու հետևյալ առաջարկությունները՝

1. ֆերմերների խորհրդատվության ժամանակ լավագույն արդյունք ստացվում է այն դեպքում, երբ խորհրդատու–ֆերմեր հաղորդակցությունը տեղի

է ունենում անձնական կամ սոցիալական գոտիներում: Բացի այդ, նրանց մեծ մասի մոտ մնացորդային գիտելիքները պահպանվում են վերոհիշյալ հեռավորությունից շփման ժամանակ:

2. Գոյություն ունի ուղիղ համեմատական բազմանդամ կախվածություն տարածական կողմնորոշման և գիտելիքների ընկալման միջև, ընդ որում այն ունի աստիճանական աճման միտում անձնականից դեպի սոցիալական գոտի, սակայն կտրուկ նվազում է հասարակական գոտում է ($R^2=0.761$, $p<0.005$): Դա նշանակում է, որ խորհրդատվությունների ժամանակ ցանկալի է խորհրդատու–ֆերմեր փոխհարաբերությունները պահպանել 45–360 սմ–ի շրջակայքում: Տարածական այս չափանիշները չպահպանելու դեպքում նվազում է գիտելիքների ընկալման շեմը կամ առաջանում են կոնֆլիկտային երևույթներ:
3. Առաջարկվում է Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների և այլ կազմակերպությունների մասնագետներին հետևելու նշված ցուցանիշներին և պահպանելու տարածական կողմնորոշումը:

The linkage between influence of proxemic patterns and efficiency of agro–extension activity

Summary

The article shows the comprehension of farmers and the amount of residual knowledge after different types of distance orientation (proxemic patterns). We have sorted out four different types of distance between consultant and farmer during the seminars and field trips in the period between 2007 – 2010: The Intimate, The Personal, The Social and The Publi. After statistic analysis we discovered, that there is a significant correlation between distance and residual knowledge of farmers. During the consultation, sufficient results were achieved in case distance between consultant and farmer wasconducted in personal and social patterns, and respectively the residual knowledge was higher. In all other cases, residuals' knowledge was low and sometimes conflict situations emerged. The article suggests that Agriculture support center specialists follow the mentioned characteristics above and keep the proxemic patterns.

Առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները ՀՀ–ում

Գայանե Թովմասյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի ասպիրանտ

Զբոսաշրջությունը ներկայումս հանդիսանում է համաշխարհային տնտեսության խոշորագույն, բարձր արդյունավետ, շահութաբեր և առավել դինամիկորեն զարգացող ճյուղերից մեկը:

Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ զբոսաշրջիկների թիվը 2010 թ. կազմել է 935 մլն մարդ (2009 թ.՝ 880 մլն մարդ)[1]: Ըստ ԶՀԿ կանխատեսումների՝ 2020 թ. զբոսաշրջիկների թիվը կկազմի 1,6 մլրդ մարդ[2]:

Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ «Զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է»:

2010 թ. հունվար–դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում հանրապետություն են ժամանել 683 978 զբոսաշրջիկներ, 2009 թ. նույն ժամանակաշրջանի 575 281 զբոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 118,9%:

Զբոսաշրջության համակարգում իր ուրույն տեղն ունի առողջարանային–վերականգնողական զբոսաշրջությունը: Այն կարող ենք սահմանել որպես մարդկանց մշտական բնակության վայրից ժամանակավոր ելք առողջարանային–վերականգնողական նպատակներով:

Առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության նպատակն է՝ մարդու ֆիզիկական, ինտելեկտուալ և զգայական ուժերի ընդլայնված վերարտադրությունը, օրգանիզմի կենսական ուժերի վերականգնումը, ինչի համար էլ նրանք այցելում են առողջարաններ:

Առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման հիմքում ընկած են կուրորտներն ու առողջարանները:

Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգման (կոդ՝ 63191,0) համաձայն՝ «կուրորտը» բուժիչ բնակլիմայական պայմաններ և բուժիչ բնական միջոցներ ունեցող վայր է, որտեղ կառուցված են առողջարաններ, հանգստյան տներ, մարդկանց հանգստի և ժամանցի կառույցներ, և որտեղ գործում են սպասարկող ենթակառուցվածքներ[3]:

---

1 http://unwto.org/

2 http://www.unwto.org/facts/eng/vision.htm

3 «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների 2004–2008 թթ. հեռանկարային զարգացման ծրագիր», հաստատված 2003 թ. հոկտեմբերի 2–ի ՀՀ կառավարության նիստի N 39 արձանագրային որոշմամբ:

Առողջարանները հյուրանոցային տնտեսության այն մասնագիտացված օբյեկտներն են, որոնք բացի հյուրանոցային ծառայություններից, մատուցում են նաև հատուկ կարգի սպասարկում, այդ թվում՝ առողջարանային, բուժական և վերականգնողական[4]:

Առողջարանը (սանատորիա, լատիներեն sanare առողջանալ բառից) կարող ենք սահմանել որպես բուժիչ–կանխարգելիչ հաստատություն՝ նախատեսված բուժման, կանխարգելման և բժշկական վերականգնման (ռեաբիլիտացիայի) համար՝ գլխավորապես բնական բուժիչ, ֆիզիկական գործոնների կիրառմամբ:

Կախված բնական գործոնների բնույթից՝ կուրորտները բաժանվում են՝ կլիմայաբուժական (որոնց հիմնական բուժիչ գործոնները համարվում են կլիմայի տարբեր բաղադրատարրերը), հանքաջրաբուժական (բալնեոլոգիական, որոնց հիմնական բուժիչ գործոնը համարվում են տարբեր տեսակի հանքային ջրերը), ցեխաբուժական (որոնց հիմնական բուժիչ գործոնը համարվում են տարբեր տեսակի ցեխերը), խառը (որոնց ժամանակ կիրառում են բուժիչ գործոնների համալիր, օրինակ՝ հանքային ջրեր և ցեխեր, կամ կլիմա և հանքային ջրեր)[5]:

Հայաստանն ունի առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման զգալի ներուժ: ՀՀ առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ–ը (ՀՀ վերականգնողական և ֆիզիկական բժշկության, կուրորտաբանության մասնագիտացված ուսումնագիտագործնական բուժհաստատություն) Հայաստանում առանձնացրել է 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն բոլոր բնական, բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր, տորֆ, կլիմայաբուժության կազմակերպման համար նպաստավոր պայմաններ[6]: Այդ կուրորտներն են՝

1. Արզնի հանքաջրաբուժական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են միջլեռնային շղթայի հարմարավետ լանդշաֆտային–կլիմայական պայմանները և բուժիչ, սառը հանքային ջրերը,
2. Դիլիջանի լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են լեռնային շղթայի բարենպաստ լեռնաանտառային կլիմայական պայմանները և սառը, ածխաթթվային, բուժիչ հանքային ջրերը,
3. Հանքավան–Մարմարիկ հանքաջրաբուժական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են բարձրլեռնային գոտու բարենպաստ լանդշաֆտակլիմայական պայմանները՝ մաքուր օդը՝ հարուստ թթվածնով և անտառային հոտով, ինչպես նաև ջերմային, ածխաթթվային հանքային ջրերը,
4. Բջնի–Արզական–Աղվերան բալնեոկլիմայական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են մեղմ բարենպաստ կլիման, հարուստ անտառային ծածկը, բազմաթիվ հանքային աղբյուրները՝ տարբեր ֆիզիկաքիմիական, գազային բաղադրության,

---

4 «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 2003 թ.:

5 Л.Б. Журавлева, Курортное дело с основами курортологии, Сочи, 2008, с. 34.

6 http://fizecomed.com/

5. Ստեփանավան–Գյուլագարակ լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են չափավոր սառը, անտառային կլիման, մաքուր օդը, ածխաթթվային հանքային ջրերը,

6. Ծաղկաձորի լեռնակլիմայական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են բարենպաստ լեռնաանտառային կլիման, հսկայական անտառային ծածկի և լեռնային մարգագետինների առկայությունը, թեթև իոններով օդի հագեցվածությունը և էկոլոգիապես մաքուր մթնոլորտային օդում թթվածնի բարձր պարունակությունը,

7. Սյունիքի լեռնակլիմայական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են բարենպաստ կլիման, հանքային ջրերի աղբյուրները,

8. Լոռու կուրորտային գոտի, որի հիմնական բուժիչ գործոններն են բարենպաստ լեռնաանտառային կլիման, հանքային ջրերի աղբյուրները, բուժիչ տորֆի հանքաշերտերը,

9. Սևանա լճի ավազանի բալնեոկլիմայական կուրորտային գոտի, որի հիմնական բուժիչ գործոններն են բարենպաստ լանդշաֆտակլիմայական պայմանները, հանքային ջրերի աղբյուրները, բուժիչ տորֆի հանքաշերտերը,

10. Ջերմուկի կլիմայաբալնեոլոգիական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են չափազանց ջերմային, ածխաթթվային, հանքային ջրերը և բարձրլեռնային, անտառային կլիման[7]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի 10 կուրորտներն էլ ունեն բոլոր բնական բուժիչ ռեսուրսները, սակայն ցավոք ոչ բոլոր կուրորտներում կան առողջարաններ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից առողջարանային ծառայություններ մատուցելու լիցենզիա ունեն հետևյալ առողջարանները՝ Ջերմուկի «Օլիմպիա», Արարատ մոր և մանկան, Ջերմուկ աշխարհ, Գլաձոր, Արմենիա, Ջերմուկ N1, Վանաձորի հյուրանոցային և առողջարանային վերականգնողական համալիր, Ծաղկաձորի «Ռիպա», Սևանի «Արևիկ», Արզնիի, Հանքավանի «Խոտորջուր», Դիլիջանի «Իմպուլս» և Արզականի «Գանձաղբյուր» առողջարանները[8]: Նշվածներից բացի գործում է նաև Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առողջարանը, որը պատկանում է ՀՀ պաշտպանության նախարարությանը: Նշենք նաև, որ նախկինում գործունեության լիցենզիա են ունեցել ևս 6 առողջարան, որոնք ներկայումս չեն գործում:

Մեր կատարած հետազոտությունների արդյունքում պարզել ենք, որ լիցենզավորված 13 առողջարաններից 2–ում ներկայումս առողջարանային ծառայություններ չեն մատուցում, դրանք ծառայում են միայն որպես հանգստյան տներ: Դրանք են՝ Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանը և Դիլիջանի «Իմպուլս» առողջարանային համալիրը:

Փաստորեն, կարող ենք ասել, որ Հայաստանում ներկայումս գործում է 12 առողջարան: Այնինչ Հայաստանում կան 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները: Նշենք նաև, որ այս կուրոր-

7 http://www.fizecomed.com/kurorti_armenii_arm.htm

8 ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման վարչություն:

տային գոտիներում գործող առողջարաններում բուժում են՝ աղեստամոքսային, պերիֆերիկ և կենտրոնական նյարդային համակարգի, միզասեռական, գինեկոլոգիական, շնչառական, հենաշարժողական համակարգի, ողնաշարի հիվանդություններ, նյութափոխանակության խանգարումներ, սրտի իշեմիկ հիվանդություն ինֆարկտից հետո, առաջին և երկրորդ աստիճանների հիպերտոնիա, արյունատար անոթների աթերոսկլերոզ, գլխուղեղի արյան շրջանառության խախտումներ, կաթվածի հետևանքներ և այլն:

Ինչպես տեսնում ենք՝ Հայաստանի կուրորտային գոտիները հարուստ են կուրորտային ռեսուրսներով, տեղի առողջարաններում բուժում են մի շարք հիվանդություններ: Սակայն, ցավոք, Հայաստանի կուրորտներից ոչ բոլորում կան առողջարաններ, դեռ ավելին, որոշ կուրորտներում շատ առողջարաններ ներկայումս չեն գործում, կամ էլ առողջարանային ծառայություններ չեն մատուցում: Իսկ գործող առողջարաններն աշխատում են թերբեռնված, որոշ առողջարաններ աշխատում են միայն ամռան ամիսներին: Սա խոսում է այն մասին, որ Հայաստանում զարգացած չէ առողջարանային–վերականգնողական զբոսաշրջությունը՝ չնայած դրա համար առկա զգալի ներուժին:

Պետք է նշել, որ ԽՍՀՄ–ի տարիներին Ջերմուկ էին ժամանում շուրջ 30 000 զբոսաշրջիկ՝ ներկայիս 10 000–ի դիմաց, իսկ Արզնիի առողջարանը մինչ օրս միակն է տարածաշրջանում և նախկին ԽՍՀՄ–ում սրտի իշեմիկ հիվանդության բուժման, հետինֆարկտային և հետինսուլտային վերականգնման համար: Փաստորեն Հայաստանն ունի առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության հարուստ ավանդույթներ և զարգացման զգալի ներուժ: Սակայն առողջարաններ այցելողների թվաքանակում չափազանց քիչ է արտերկրից ժամանողների թիվը, դեռ ավելին, Հայաստանի բնակիչների մեծ մասի համար էլ կուրորտային հանգիստն այսօր ֆինանսապես անհասանելի է: Այսպես, փորձենք ներկայացնել մեր կուրորտներում առողջարանային հանգստի մեկ օրվա արժեքը մեկ անձի համար՝ Ջերմուկում՝ 8 500–100 000 դրամ, Արզնիում՝ 16 000–40 000 դրամ, Հանքավանում՝ 10 000–15 000 դրամ, Վանաձորում՝ 12 000–18 000 դրամ, Դիլիջանում՝ 10 000–32 000 դրամ, Գանձաղբյուրում՝ 22 000–42 000 դրամ: Այս գները ներառում են գիշերակացը, օրական 3 անգամյա սնունդը և որոշ բուժական ծառայություններ: Գները տատանվում են՝ կախված սենյակների տեսակներից՝ ստանդարտ, կիսալյուքս, լյուքս: Նշենք նաև, որ առողջարանային հանգստի բուժիչ էֆեկտ ստանալու համար ցանկալի է առողջարանում գտնվել գոնե 14 օր:

Փաստորեն ստացվում է, որ երկու շաբաթ առողջարանում անցկացնելու համար անձը պետք է վճարի 119 000–1 400 000 դրամ (կախված նրանից, թե ինչ սենյակ է նախընտրում): Եթե նաև ավելացվեն որոշ բուժական ծառայություններ, ապա բնականաբար այս գումարը կավելանա:

Ստացվում է, որ նման հանգիստը անհասանելի է նույնիսկ միջին խավի բնակչին, քանի որ Հայաստանում ըստ ԱՎԾ–ի տվյալների՝ միջին ամսական աշխատավարձը կազմում է 102 652,0 դրամ[9], էլ չենք խոսում այն մասին, որ ավելի ցածր վարձատրվող քաղաքացին կարող է միայն երազել առողջարանային հանգստի մասին:

9 http://armstat.am/am/?nid=126&id=08001

Պետք է նշել, որ թերի է առողջարանային զբոսաշրջության վիճակագրական հաշվառումը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական հաշվառման մոնիթորինգում ընդգրկված են միայն առողջատների և հանգստյան տների ամբողջական թվի վերաբերյալ տվյալներ (որոնք 2010 թ. դրությամբ կազմել են 32) և առողջարանների թվի առանձին հաշվառում չի իրականացվում: Բացի այդ, չի հաշվառվում նաև առողջարանային–վերականգնողական զբոսաշրջիկների թիվը, այլ միայն ըստ նպատակի ՀՀ ժամանողների թվի մեջ առանձնացվում է «բուժում» կատեգորիան, որի համար, ըստ Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության (ՀԶԿ) դասակարգման, բազային ենթակառուցվածքներ են հանդիսանում առողջարանները, հանգստյան և բուժման (վերականգնման) այլ հանգրվանները[10] (աղյուսակ 1): Այսպիսով՝ կարող ենք ասել, որ վերը ներկայացված ցուցանիշը չի արտացոլում Հայաստանի առողջարանային–վերականգնողական ներգնա զբոսաշրջիկների թիվը, քանի որ ինչպես նշվեց, բուժում կատեգորիայի բազային ենթակառուցվածքները միայն առողջարանները չեն, և բացի այդ, այս թիվը ցույց է տալիս միայն զբոսաշրջային կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը, ինչը 2010 թ. դրությամբ կազմել է 70 209: Եթե հաշվի առնենք նաև այն, որ ըստ ԱՎԾ–ի տվյալների 2010 թ. Հայաստան է ժամանել 683 978 մարդ, հետևաբար կարող ենք ասել, որ ժամանողների շատ քիչ մասն է դիմել զբոսաշրջային կազմակերպությունների օգնությանը:

Աղյուսակ 1

ՀՀ ժամանողների թիվն ըստ նպատակի 2007–2010 թթ.[11]

	2007 թ. Հունվար–դեկտեմբեր	2008 թ. Հունվար–դեկտեմբեր	2009 թ. Հունվար–դեկտեմբեր	2010 թ. Հունվար–դեկտեմբեր
Ընդամենը՝ զբոսաշրջիկներ*	59211	70648	65638	70209
Որոնցից՝ ըստ նպատակի				
գործնական	22240	27064	25701	31171
հանգստի և ժամանցի	11932	11379	13086	
կրթության	16	25	0	19
բուժման	130	190	143	579
այլ	24893	31990	26708	23430

*Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը:

10 «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների 2004–2008 թթ. հեռանկարային զարգացման ծրագիր», հաստատված 2003 թ. հոկտեմբերի 2–ի ՀՀ կառավարության նիստի N 39 արձանագրային որոշմամբ:

11 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Նույն կերպ ցույց տանք նաև ներքին զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի 2007–2010 թթ. ընթացքում (աղյուսակ 2)[12]:

Աղյուսակ 2

Ներքին զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի, 2007–2010 թթ.

	2007 թ. հունվար–դեկտեմբեր	2008 թ. հունվար–դեկտեմբեր	2009 թ. հունվար–դեկտեմբեր	2010 թ. հունվար–դեկտեմբեր
Ընդամենը՝ զբոսաշրջիկներ*	369 005	447 234	435 674	456 432
Որոնցից՝ ըստ նպատակի				
գործնական	93 084	111 361	103 154	107 104
հանգստի և ժամանցի	183 351	228 984	229 303	258 872
կրթության	42 666	56 352	54 931	50 362
բուժման	49 905	50 537	48 286	40 094

*Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին:

Աղյուսակից երևում է, որ բուժման նպատակով ներքին զբոսաշրջիկների թիվը 2010 թ. կազմել է 50 362 մարդ, սակայն այն չի արտացոլում առողջարանային ներքին զբոսաշրջիկների իրական թիվը, քանի որ ցույց է տալիս հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկների միասնական ցուցանիշը:

Քանի որ Հայաստանում չի իրականացվում առողջարանային–վերականգնողական զբոսաշրջիկների թվի հաշվառում, այդ նպատակով ինքներս փորձել ենք պարզել առողջարանային զբոսաշրջիկների (ինչպես նաև մահճակալների) թիվը՝ այցելելով Ջերմուկի, Արզնու, Սևանի, Վանաձորի, Հանքավանի և Դիլիջանի գործող առողջարանները (12 առողջարան): Ջերմուկի առողջարաններում մեզ տրամադրեցին միայն 2009–2010 թթ. առողջարանային զբոսաշրջիկների թիվը (բացառությամբ Ջերմուկ N 1 առողջարանի, որը սկսել է առողջարանային ծառայություններ մատուցել 2011 թ–ից), իսկ մնացած առողջարաններում՝ միայն 2009–2010 թթ. զբոսաշրջիկների մոտավոր թվերը, Գանձաղբյուրի և Վանաձորի առողջարաններն էլ այդ թիվը համարեցին առևտրային գաղտնիք, և հրաժարվեցին այն տրամադրելուց (աղյուսակ 3):

12 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 3

Առողջարանային զբոսաշրջիկների և մահճակալ–տեղերի թիվը, 2009–2010 թթ.

N	Առողջարանի անվանումը	Առողջարանային զբոսաշրջիկների թիվը		Մահճակալների թիվը
		2009 թ.	2010 թ.	
1	Գլաձոր	3193	748	500
2	Օլիմպիա (Ջերմուկ N3)	2037	3443	107
3	Ջերմուկ աշխարհ	2094	1322	225
4	Արարատ մոր և մանկան	1515	2253	180
5	Արմենիա (Նոր կյանք)	1266	1815	120
6	Արզնի առողջարան	մոտ 2100	մոտ 2200	160
7	Վանաձորի հյուրանոցային և առողջարանային–վերականգնողական համալիր	–	–	–
8	Հանքավանի «Խոտորջուր» առողջարան	մոտ 1500	մոտ 1600	400
9	Սևանի «Արևիկ» առողջարան	մոտ 700	մոտ 800	350
10	Լեռնային Հայաստան	մոտ 2500	մոտ 2700	160
11	Գանձաղբյուր	–	–	–
		16905	16881	2202

Ներկայումս Հայաստանում գործող առողջարաններում հանգստացողների թիվը, ըստ մեր իրականացրած հետազոտության արդյունքների, կազմում է 16881 մարդ (այն չի ընդգրկում Ջերմուկ N1, Գանձաղբյուր և Վանաձորի առողջարաններ-ի հանգստացողների թիվը):

Փորձենք գնահատել առողջարանային զբոսաշրջիկների թիվը զբոսաշրջիկ-ների ընդհանուր թվաքանակում: Այսպես, 2010 թ. առողջարանային զբոսաշր-ջիկների թիվը կազմել է Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թվի 2,4%–ը (16 881/683 979 * 100 % = 2,4 %), զբոսաշրջային կազմակերպությունների կողմից կազ-մակերպված զբոսաշրջիկների թվի 24%–ը (16 881/70 209*100 % =24 %), իսկ ներքին և ներգնա զբոսաշրջիկների ընդհանուր թվի (683 979+456 432=1140 411) 1,5%–ը (16 881/1140 411 * 100 % = 1,5 %):

Գնահատենք նաև առողջարաններում տարողունակության օգտագործման գործակիցը՝ օգտագործելով հետևյալ բանաձևը.

$$Գ_{կ} = \frac{Գ}{Մ x 365} x 100\%,$$

որտեղ $Գ_{կ}$–ն տարողունակության օգտագործման գործակիցն է,Գ–ն իրականացված գիշերումների թիվն է, որը կարող ենք որոշել մեր իրականացրած հետազոտությունների արդյունքում բացահայտված առողջարանային զբոսաշրջիկների տարեկան թիվը բազմապատկելով առողջարանային հանգստի միջին օրերի թվով,

Մ–ն՝ առողջարաններում մահճակալների թիվը[13]:

Փաստորեն կարող ենք ասել, որ Հայաստանի առողջարաններն աշխատում են թերբեռնված, քանի որ օգտագործվում է նրանց տարողունակության 21%–ը:

Առողջարանային–զբոսաշրջիկների թվի հաշվառումից բացի առողջարաններում իրականացրել ենք նաև մարքեթինգային հետազոտություն՝ առողջարանային–վերականգնողական զբոսաշրջիկների կամ առողջարաններում հանգստացողների շրջանակը, նրանց՝ առողջարան այցելելու նպատակը, առողջարանային հանգստից բավարարվածության աստիճանը պարզելու, նրանց բողոքներն ու առաջարկություններն իմանալու համար: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ հարցման մասնակիցների մեջ մեծ թիվ են կազմել նրանք, ովքեր դժգոհություններ են ունեցել առողջարանների պայմաններից, սպասարկման մակարդակից, բուժական ծառայությունների որակից, բժշկական անձնակազմի պատրաստվածությունից, առողջարաններում մատուցվող սննդի որակից, այնտեղ անցկացրած իրենց ժամանակից, առողջարանային հանգստի գներից և այլն:

Այժմ փորձենք առանձնացնել այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են Հայաստանում առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացմանը.

1. երկրի՝ որպես կուրորտային տարածաշրջանի վատ ներկայացվածությունը աշխարհում,
2. առողջարանների թերբեռնվածությունը, որոշ առողջարանների գործառնությունը միայն ամռան ամիսներին,
3. առողջարանների մեծ մասի ոչ բարվոք վիճակը և դրանց վերանորոգման դժվարությունները,
4. ոլորտի թերի վիճակագրական հաշվառումը,
5. առողջարանային ծառայությունների բարձր գներ և որպես հետևանք՝ երկրի բնակչության ցածր խավի համար առողջարաններ այցելելու անհնարինություն և միջին խավի համար կուրորտային հանգստի քիչ հասանելիություն,
6. զբոսաշրջային գործակալությունների կողմից առողջարանների քիչ ներկայացվածությունը,
7. ենթակառուցվածքների թերզարգացվածությունը,
8. առողջարաններում ժամանցի սակավ հնարավորությունները, սպասարկման ցածր մակարդակը,

13 Ковынева Л.В., Экономика туризма: конспект лекций – Хабаровск: Изд–во ДВГУПС, 2007, с. 46.

9. առողջարանների կողմից մարքեթինգային գործունեության իրականացման ցածր մակարդակը,
10. Հայաստանի 10 կուրորտային գոտիներից ոչ բոլորում առողջարաններ լինելը և այլն:

Մեր իրականացրած հետազոտությունների արդյունքում փորձենք ներկայացնել առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնական ուղիները.

1. քայլեր ձեռնարկել ՀՀ կուրորտային զբոսաշրջության արդյունքը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում ներկայացնելու, ՀՀ կուրորտային գոտիները գովազդելու ուղղությամբ՝ ներգնա կուրորտային զբոսաշրջության զարգացման նպատակով,
2. քայլեր ձեռնարկել ոլորտի վիճակագրական հաշվառման բարելավման ուղղությամբ: Ինչպես արդեն նշվեց վերևում, Հայաստանում առողջարանների և առողջարանային զբոսաշրջիկների թվի հաշվառում չի իրականացվում: Հետևաբար, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել նման հաշվառում՝ ոլորտի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու նպատակով,
3. ներգրավել ներդրումներ՝ հին առողջարանների վերանորոգման և նոր առողջարանների կառուցման համար,
4. մեծացնել առողջարաններում մարքեթինգային գործունեության իրականացման մակարդակը,
5. բարձրացնել առողջարանային սպասարկման, բուժական ծառայությունների, մատուցվող սննդի որակը, առողջարաններում շատացնել ժամանցի հնարավորությունները,
6. մշակել առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացման ծրագրեր, առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացման մարքեթինգային միջոցառումների ծրագիր,
7. առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացմանը էապես կնպաստի ՀՀ կուրորտային գոտիների և առողջարանների մասին տեղեկատվական ինտերնետային կայքի բացումը, որտեղ մանրամասն կներկայացվեն ՀՀ կուրորտային գոտիները, դրանց կուրորտային բուժիչ ռեսուրսները, առողջարաններում տրամադրվող ծառայությունները, բուժվող հիվանդությունները, առողջարանային հանգստի պայմանները, գները և այլն,
8. փոփոխություններ մտցնել առողջարանային հանգստի գնային քաղաքականության մեջ, քանի որ մեր քաղաքացիների միջին և ցածր խավի համար առողջարանային հանգիստն անհասանելի է, ինչի հետևանքով առողջարանային–վերականգնողական ներքին զբոսաշրջիկների թիվը քիչ է, առողջարաններն աշխատում են թերբեռնված,
9. քայլեր ձեռնարկել զբոսաշրջային կազմակերպությունների կողմից առողջարանային ուղեգրերի վաճառքի ծավալների մեծացման ուղղությամբ,
10. քայլեր ձեռնարկել ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ,

11. մշակել առանձին կուրորտային գոտիների և Հայաստանի կուրորտային համալիրի զարգացման ռազմավարական ծրագրեր,
12. առողջարանային–վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով ուսումնասիրել և ներդնել ոլորտի կառավարման միջազգային լավագույն փորձը:

The problems of spa–resort tourism development in Armenia

Summary

Spa–resort tourism is one of the main types of tourism. It can be characterized as people's temporary leaving their permanent residence on the purpose of health rehabilitation.

The purpose of spa–resort tourism is the expanded reproduction of physical, intellectual and emotional abilities of people. This is what they visit sanatoriums for.

Armenia has a great potential for spa–resort tourism development. There are 10 resorts in the country, all of which have natural curable resources. But, unfortunately, there are many problems and obstacles for spa–resort tourism development, such as financial, marketing, investment problems. The statistics of this spere are incomplete, there are no sanatoriums in each resort, etc. It is necessary to take some actions for spa–resort tourism development in Armenia, such as involving investments in the construction of new sanatoriums and reconstruction of the old ones, implementing marketing activities in sanatoriums, improving the level of service, quality of food and medical services in sanatoriums, elaborating strategic programs of development, etc. The main problems and the ways to their solutions are mentioned in the article.

Բաժին II

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ընդերքը որպես պետական սեփականության կառավարման օբյեկտ

Աշոտ Մարդոյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

1985–90 թթ–ին, երբ Հայաստանը նախկին ԽՍՀՄ–ում հանդիսանում էր զարգացած արդյունաբերական հանրապետություն, արդյունաբերական հզորությունները զբաղեցնում էին նրա տարածքի 5,5%–ը: Զարգացած էին հանքագործությունը, մետաղագործությունը, քիմիական ու մեքենաշինական, էլեկտրոնային, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերությունները:

1990 թ–ին տնտեսության կարևոր ճյուղերից էր հանքագործությունը և արդյունաբերությունը, որոնց արտադրանքը կազմում էր ընդհանուր համախառն արտադրանքի 1/3–ը: Խոշորագույն ձեռնարկություններից էին «Պոլիպլաստը» և «Նաիրիտ» սինթետիկ կաուչուկի գործարանները, պղնձի կոմբինատը Կապանում, պղնձամոլիբդենային գործարանը Քաջարանում, Արարատի ոսկու հումքի վերամշակման գործարանը, Հրազդանի ցեմենտի գործարանը և քիմիական կոմբինատները Երևանում ու Վանաձորում:

ՀՀ ընդերքը համարվում էր նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ամենաուսումնասիրված ոլորտներից մեկը: Դեռևս երկու դար առաջ արտասահմանյան կոնցեսիատերերը գնահատել են Հայաստանի ընդերքի գրավչությունը, որոնք էլ սկսել են հանքարդյունաբերական աշխատանքները Հայաստանի հարավում և հյուսիսում: Անխոս ինդուստրիալացման գործընթացը, որն ընթանում էր 1917 թվականի հեղափոխությունից հետո, և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը (1921) իր հետևից բերեց և բուռն կերպով զարգացրեց հանքարդյունաբերական աշխատանքները, ստեղծվեց աշխարհագրարդյունաբերական դպրոցը, որի նպատակն էր բավարարել երկրի հանքահումքային ռեսուրսների կարիքը և առաջին հերթին՝ մետաղինը[1]:

Երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ–ում, ընդհանուր առմամբ, հայտնաբերվել է ավելի քան 742 մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոներ, որոնցից մետաղական օգտակար հանածոների հանքավայրերը կազմում են 32–ը, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոներինը՝ 712,

1 Ա.Ռ.Ավագյան, Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների գնահատականը, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2000, 170 էջ:

որոնցից գերակշիռ մասը գտնվում է Արարատյան գետահովտի և Արագածի նախալեռնային գոտու տարածքում: Օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված հանքային իրավունքները առ 01.09.2011թ. կազմում են 505–ը[2]:

Բավականին փոքր տարածք ունեցող երկրի համար նմանատիպ հանքավայրերը ՀՀ–ին դարձնում են ընդերքի սեփականության առումով ամենառեսուրսապահովվածը:

Այսօր Հայաստանից արտահանվող նյութերի առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, որոնք երկրից արտահանվող արտադրանքների ցուցակում առավել կարևոր տեղ են զբաղեցնում: Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է հետևյալ մետաղական օգտակար հանածոների տեսակներով՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ծարիր, ալյումին, ինչպես նաև դրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղներով: Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում բացի հիմնական մետաղներից բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիմում, հելիում, թալիում, բիսմութ և այլն:

Բացի գնահատված և պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից, Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ[3]:

Ներկայումս Հայաստանի լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանք են հանդիսանում հիմնականում խտանյութերը (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի խտանյութեր), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրի տնտեսական ներուժը: Հայաստանում արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն փուլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծումը, հնարավորություն կտա բարձր արժողությամբ արտադրանքի ստացման, որն էլ կապահովի ՀՆԱ–ի աճ:

Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 15 պոչամբարներ (ոչ պաշտոնական աղբյուրները նշում են մոտ 30–ը), որոնց ծավալներն անցնում են մի քանի մլն խոր. մ–ից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես: Ներկայումս պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ[4]:

---

2 URL:http://www.minenergy.am/hy/en/endpasharner (մուտք 25.01.2012թ.)

3 Հ.Ս.Ավագյան, Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003, 276 էջ:

4 Հ.Ս.Ավագյան, Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003, 276 էջ:

Ոչ մետաղական հանքային պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ Հայաստանի Հանրապետությունն աշխարհում առաջատար տեղ է գրավում: Հանրապետության փոքրիկ տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի գրեթե բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն են ներկայացնում Հայաստանի տարածքում հրաբխային գործընթացների արդյունքում առաջացած լեռնային ապարները, որոնցից են թեթև ապարները՝ տուֆերը, պեռլիտները, պեմզաները, ցեոլիտները, հրաբխային խարամները և այլն: Տարատեսակ բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների պաշարների ծավալները հսկայական են:

Մինչ 01.01.2012թ–ը ընդերքօգտագործման ոլորտը կարգավորվում էր 1992 թ. ընդունված ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, որի խնդիրներն էին՝ ընդերքի և դրա օգտագործման շուրջ ծագող հարաբերությունների կարգավորումը, տնտեսության կարիքների բավարարման նպատակով, ընդերքի պահպանության, արդյունավետ և համալիր օգտագործման, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրի ապահովումը և այլն: Այս բնագավառում ՀՀ կառավարության իրավասությանը ենթակա են ընդերքի պահպանության ծրագրերի մշակումն ու զարգացումը, ընդերքի օգտագործման և պահպանության նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, ընդերքի օգտագործման և պահպանության տեխնիկական և տեխնոլոգիական չափանիշների մշակումն ու հաստատումը, բնապահպան տարածքներում գտնվող ու համապետական նշանակություն ունեցող և հանքավայրերի հետախուզման և օգտագործման, ինչպես նաև ընդերքի օգտագործման արգելքի հատուկ դեպքերի մասին որոշումների ընդունումը:

Բնական պաշարների ռացիոնալ օգտագործման գործում պետական կառավարման և վերահսկողության կենտրոնական դերը պատկանում է էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը:

Ընդերքօգտագործման կառավարման գործընթացը ենթադրում է հնարավոր հետևանքների կանխատեսման օբյեկտիվ անհրաժեշտություն, քանի որ փաստորեն գործ ունենք երկու փոխկապված կողմերի հետ, մի կողմից՝ հասարակություն–բնական միջավայր, իսկ մյուս կողմից՝ բնական միջավայր–հասարակություն: Բնական միջավայրի վրա ազդեցության գործընթացների գիտականորեն հիմնավորված կառավարումը պետք է հաշվի առնի ևս մեկ հանգամանք՝ բնական միջավայրն ունի որոշակի սահմանային պաշարներ, որոնք սակայն կարող են որոշակի սահմաններում ինքնավերարտադրվել:

Այս կապակցությամբ պետք է որոշված լինեն ընդերքօգտագործման գործընթացի օպտիմալ կառավարման հիմնական սկզբունքները: Հիմնական սկզբունքներից անհրաժեշտ է նշել հետևյալները.

- ընդերքօգտագործման կառավարումը որպես հասարակության զարգացման անբաժան տարր,
- ընդերքօգտագործման կառավարումը պետք է իրականացվի համակարգված ձևով,
- ընդերքօգտագործման կառավարումը հիմնվում է այդ գործընթացի անընդհատության վրա,

- ընդերքի պաշարները և օբյեկտները չեն համընկնում պատմականորեն ձևավորված վարչատնտեսականորեն առանձնացված տարածքներով,
- ընդերքի պաշարները, ի տարբերություն աշխատանքի արդյունքների, մարդու աշխատանքի արդյունք չեն և չեն կարող ամբողջովին տնօրինվել,
- հաշվառման ժամանակային և տարածական համագործակցություն,
- պարտադիր պատասխանատվություն ընդերքօգտագործման օրենսդրական հիմունքների կատարման համար կառավարման բոլոր մակարդակներում:

Պետական կառավարման կարևորագույն գործառույթներից են նաև պետական էկոլոգիական փորձաքննությունը և պետական տեսչական հսկողությունը: Վերահսկողության այս մեթոդները հատկապես կարևոր դեր են խաղում շուկայական հարաբերություններին անցման սկզբնական փուլում[5]:

Այսօր գիտատեխնիկական առաջընթացը, սոցիալական խնդիրների իրականացումն ավելի են սրել բնության հարստություններից խելամիտ օգտվելու և արտադրական թափոնները ռացիոնալ օգտագործելու անհրաժեշտությունը, որքանով հնարավոր են բնության բաղադրիչների՝ հողի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ընդերքի հարստությունների հետագա աղքատացում, մարդու համար կենսական նշանակություն ունեցող միջավայրի որակական լուրջ փոփոխություններ: Այդ վտանգը երկար տարիներ կարող է սպառնալ ոչ միայն բնությանը, այլև մարդկային գոյությանն ընդհանրապես՝ հասարակությունը զրկելով «հավերժական» միջոցներից օգտվելու հնարավորությունից: Վերջինիս վրա ուղղակի ազդեցություն ունեն արտադրական և կենցաղային թափոնների ոչ ճիշտ վերամշակումն ու վերօգտագործումը:

ՀՀ–ում տնտեսական աճը և բնակչության բարեկեցությունը զգալի կախման մեջ են դրվել բնական ռեսուրսների շահագործումից, և ՀՆԱ–ի աճ ապահովելու համար անխնա շահագործվում են ընդերքի հանածոները: Հանքարդյունահանման գործընթացներն ընթանում են՝ վտանգելով շրջակա բնական միջավայրն ու հարակից տարածքների մարդկանց առողջությունը, ինչպես նաև խոչընդոտում են տնտեսության համար ազգային մրցունակության հեռանկար ունեցող այլ ճյուղերի՝ տուրիզմի և գյուղատնտեսության զարգացմանը: ՀՀ–ում արդեն իսկ գործում են 505 հանքարդյունահանման լիցենզիաներ: Եվս 202 տեղամաս ուսումնասիրության փուլում է և համապատասխան պաշարների բացահայտման դեպքում տրամադրվում է շահագործման առանց սահմանափակման[6]: Հանքարդյունահանող ընկերություններն աշխատում են բացարձակ արտոնյալ պայմաններում՝ շրջակա միջավայր աղտոտելու դիմաց ընդհանրապես չվճարելով:

ՀՀ կառավարությունը, այս բոլորով հանդերձ, քայլեր է ձեռնարկում խթանելու գործարար միջավայրը հանքարդյունաբերության ոլորտում: Այստեղ առկա է նաև պարադոքսալ երևույթ. հանքարդյունաբերությունը, ՀՀ տնտեսության ամենաշահութաբեր ճյուղ լինելով հանդերձ, գործում է ներկայիս հարկային դաշտում, և դրանք շահագործողները օգտվում են ավելացված արժեքի հարկ չվճարելու ար-

5 Ա. Մարկոսյան, Ս. Դավոյան, Հ. Սարգսյան, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, 653 էջ:

6 URL:http://www.fx–commodities.ru/category/copper/ (մուտք20. 01. 2012թ.)

տոնությունից: Սրա արդյունքում ընդերքօգտագործող մասնավոր կազմակերպությունները ոչ միայն չեն վճարում ռենտան, այլև մեծ մասշտաբների համեմատ չնչին հարկեր են վճարում պետական բյուջե:

Համաշխարհային բանկի աջակցությամբ լրամշակված ընդերքի մասին նոր օրենսգիրքը (ուժի մեջ է մտել 01.01.2012թ–ից) ընթացակարգերը պարզեցնելով հանդերձ՝ չեն առաջադրվում բնական պաշարները ողջամտորեն օգտագործելու նախադրյալները, բնապահպանական սահմանափակումները, աղտոտման դիմաց վճարման երաշխիքները, ընդերքօգտագործողների ընտրության չափանիշներ, ինչպես նաև տեղեկատվության թափանցիկության ապահովման պարտավորություններ:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում կան հարկահավաքման, հարկային արդյունավետ վարչարարության խնդիրներ: ՀՀ կառավարությունը փորձում է լուծել այդ խնդիրը, հանքարդյունաբերողներին առաջարկելով տույժերի և տուգանքների ներում, եթե նրանք մոտ ժամանակամիջոցում կազմեն պարտքի մարման ժամանակացույց և սկսեն մարել հարկային կուտակված պարտավորությունները: Սակայն այդ որոշման արդյունավետությունը կասկածելի է:

Այդ առումով, պետության առջև ծառացած խնդիրների լուծման կարևոր պայման է շրջակա միջավայրի անաղարտության և բնության հարստությունների պաշտպանությունը, այդ նպատակով ձեռնարկվող միջոցների արդյունավետության բարձրացումը: Դրանց շարքում ուրույն տեղ են հատկացվում իրավական նորմերին, քանի որ առանց դրանց շրջակա միջավայրի պաշտպանությունն իր բոլոր կողմերով, ամբողջ հուսալիությամբ չի իրականացվի:

Շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցավոր արարքների իրավաբանական վերլուծության հրատապությունը, դրանց հասկացության բնորոշումը, համակարգումը, քրեական օրենսդրության մեջ տեսակների թվարկումը որակական առանձնահատկությունները և հանցագործություն կատարած անձանց դեմ պատժողական ճիշտ քաղաքականությունը վարելն այսօր ավելի քան արդիական խդիր է: Դեռևս գոյություն չունի օրենք «Թափոնների մասին», որտեղ պետք է անպայմանորեն արտացոլվեն վերը նշված բոլոր իրավական կողմերը:

Թափոնների կառավարման նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել պետական մոտեցում, որը բնական միջավայրը հանցավոր ոտնձգություններից զերծ պահելու երաշխիք է: Նշված բնագավառներում կարգ ու կանոն ձեռք բերելու գործում մեծ նշանակություն են ստանում շրջակա միջավայրի բոլոր կողմերի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների ուսումնասիրությունն ու կանխարգելումը, այդ ուղղությամբ ծրագրավորվող աշխատանքը: Դրանում մեծ դեր է հատկացվում նաև վարչական տուգանքներին:

Այնուամենայնիվ, «մեխանիզմների բացակայության կամ ոչ լիարժեքության պատճառով» շրջակա միջավայրի և թափոնների կառավարմանն ուղղված օրենսդրական դրույթները չեն կիրառվում ամբողջությամբ, որի արդյունքում դեռևս չի ձևավորվել բարենպաստ և աղտոտվածության ցածր մակարդակով բնութագրվող էկոլոգիական միջավայր, որը հնարավորություն կտար կրճատել արտանետումների ու թափոնների ծավալները:

RA mineral resources as an object of state–owned property management

Summary

The article analyses the current unhealthy relations in the field of underground resource management in the Republic of Armenia. RA mineral resurces are unsparingly utilized as this field provides the major part of the budget income. In addition, basic ecological rules are not observed during the underground resource management and the State as a proprietor of mineral resources makes no effort for the regulation of the field.

Since 01.01.2012 a new RA Code on mineral resources has come into force which, despite its gaps, can provide some positive shift in the relations of underground resource management.

Պետական գույքի օգտագործման արդյունավետության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Արման Սահակյան

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հայցորդ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ կառավարության գործառույթների շարքում կարևորվում է պետական գույքի կառավարումը: Իսկ դա նշանակում է, որ կառավարության մաս կազմող ցանկացած օղակի գույքի կառավարման հիմնական պատասխանատուն կառավարությունն է: Ըստ էության, պետական այս կամ այն գույքի տիրապետման և օգտագործման իրավունքը կառավարության անունից տրված է նրա կազմի մեջ մտնող պետական կառավարման մարմիններին (նախարարություններ, կոմիտեներ, վարչություններ և այլն), իսկ դրանց տնօրինման իրավունքը վերապահված է ՀՀ կառավարությանը: Այսինքն՝ ՀՀ կառավարության գործունեության կարևոր բնութագրիչների շարքում առանձնանում է պետական գույքի կառավարումը և դրա օգտագործումից ստացվող արդյունքների մեծությունը: Հետևաբար, պետական գույքի կառավարման արդյունավետության հիմնախնդիրն առաջանում է գրեթե ամեն անգամ, երբ որոշում է կայացվում այդ գույքը կամ դրա որևէ տարրն օգտագործման կամ դրա ամենատարածված ձևով՝ վարձակալության, հավատարմագրային կառավարման, կոնցեսիայի իրավունքով մասնավոր անձանց փոխանցելու, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև պետական գույքի օտարման կամ մասնավորեցման մասին որոշումներ կայացնելու ժամանակ: Այս հիմնախնդիրը և դրա լուծումները միայն առաջին հայացքից են տեսական բնույթ կրում: Իրականում, գրեթե բոլոր երկրներում ստեղծված են տարբեր մակարդակներում գործող պետական կառավարման մարմիններ, որոնց հիմնական գործառույթներն ու իրավասությունները կայանում են նրանում, որպեսզի ապահովվի պետության սեփականություն համարվող գույքի կառավարումը, ինչպես նաև բարձրանա օգտագործման արդյունավետությունը:

Պետական գույքի օգտագործման մասին քննարկումների ընթացքում, հատկապես երբ դրա օգտագործման առանձին ձևերի միջև ընտրության հարց է բարձրանում, անհրաժեշտություն է առաջանում կոնկրետ հաշվարկների օգնությամբ՝ թվային ցուցանիշներով ցույց տալ այդ գործընթացի արդյունավետությունը (կամ անարդյունավետությունը): Նման գնահատականներ տալիս, իհարկե, վերլուծողները հաշվի չեն առնում այն դեպքերը, ծրագրերը, երբ պետական գույքի օգտագործումը ի նպաստ է դրվում պետության պաշտպանության կարիքների ապահովմանը, սոցիալական որոշակի հիմնախնդիրների լուծմանը և մի շարք այլ ոլորտներում ծրագրերի իրականացմանը, որտեղ չի ակնկալվում գույքի օգտագործումից շահույթ ստանալը: Կամ, այլ կերպ ասած, նման դեպքերում չափվում է ոչ թե որոշակի գործարքի տնտեսական, այլ սոցիալ–տնտեսական (ամբողջական) արդյունավետությունը:

Պետական գույքի օգտագործման արդյունավետության հասկացությունը բխում է արդյունավետության ընդհանուր հասկացողությունից և դրա մասնավոր դեպքերից մեկն է: Ինչպես հայտնի է, տնտեսական արդյունավետությունը բնութագրում է կատարված ծախսերի (կամ ներդրված ռեսուրսների կամ ակտիվների) և ստացված արդյունքի մեծությունների հարաբերակցությունը և, որպես կանոն, խոսք է գնում արդյունավետության մասին, երբ ստացված արդյունքի մեծությունը գերազանցում է կատարված ծախսերի մեծությանը: Այս դեպքում գործարքը համարվում է շահութաբեր, իսկ հակառակ դեպքում՝ վնասաբեր: Ըստ որում, որքան բարձր է ստացված արդյունքի և կատարված ծախսերի հարաբերակցության աստիճանն, այնքան գործարքը համարվում է արդյունավետ (կամ շահութաբեր): Հարկ է նաև ընդգծել, որ արդյունավետությունը կարող է չափվել ինչպես ողջ տնտեսության (պետության), այնպես էլ առանձին կազմակերպության համար: Բնականաբար, այս երկու տարբեր մակարդակներում չափվող արդյունավետության աստիճանն ունի ինչպես գնահատման տարբեր չափանիշներ, այնպես էլ ցուցանիշներ:

Այս տեսանկյունից պետական գույքի կառավարման արդյունավետություն ասելով նկատի ունենք, որ պետական գույքի պահպանման և կառավարման ծախսերը պետք է փոքր լինեն այդ գույքի կառավարման արդյունքում ստացված արդյունքից կամ եկամուտներից:

Պետական գույքի օգտագործման արդյունավետությունը մեր կողմից գնահատելու համար ընտրել ենք ֆինանսական հոսքերի մոդելը՝ որպես ամենապարզ և միևնույն ժամանակ ամենաբացահայտ արդյունք ցույց տվող բանաձև: Պետական գույքի օգտագործման իրավունքը, ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, ներառում է «գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունը»[1], որը կարող է առաջանալ եկամտի, պտուղների, աճի և այլ ձևերով: Այն տեղայնացնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության գործառույթներում՝ կազմել ենք 2008–2011 թվականների համար եկամուտների և ծախսերի հետևյալ աղյուսակը (աղյուսակ 1): Ծախսերի մասում ներառել ենք ինչպես վերոնշյալ վարչության, այնպես էլ նրա կազմում ներկայումս ընդգրկված երկու պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերը, որոնք գործառույթներ են իրականացնում պետական գույքի մասնավորեցման, օտարման և վարձակալությամբ տրամադրելու ոլորտներում, ինչը թույլ է տալիս ցույց տալ պետության ամբողջական ծախսերի պատկերը:

Աղյուսակի տվյալները վկայում են, որ պետության եկամուտները, որոնք ձևավորվել են պետական գույքի օգտագործման արդյունքում, մշտապես գերազանցել են այդ նպատակների համար նախատեսված ծախսերին: Այս տեսանկյունից, կարող ենք փաստել Հայաստանի Հանրապետությունում պետական գույքի օգտագործման արդյունավետության մասին: Ավելին՝ մենք դիտարկել ենք միայն վերջին չորս տարիների ցուցանիշները, երբ, օրինակ, մասնավորեցման գործարքների

1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 163. Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը, http://www.arlis.am/

մասով առանձնապես ակտիվություն չի նկատվել, մինչդեռ նախորդ տարիներին մասնավորեցված ընկերությունների և «փոքր» օբյեկտների թիվը զգալիորեն մեծ է եղել, ուստի և շեշտակիորեն մեծ են եղել դրանց մասնավորեցման արդյունքում ստացված պետական բյուջեի եկամուտները: Մեկ այլ խնդիր է այն, որ շատ դեպքերում գույքի պահպանության, արդյունավետ կառավարման, մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների և բազմաթիվ այլ գործառույթների իրականացման համար պահանջվում են ավելի մեծ ծախսեր, որոնք պետական բյուջեի ծախսային հոդվածներում չեն նախատեսվում՝ պետական բյուջեի եկամտային մուտքերի սղության պատճառով:

*Աղյուսակ 1**

Պետական գույքի օգտագործման նպատակով կատարված փաստացի ծախսերը և ստացված փաստացի դրամական մուտքերն ու դրանց կառուցվածքը 2008–2011 (01.11.2011 թ. դրությամբ) թվականներին

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.
Ծախսերը				
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ	224460,8**	240556,7	306266,5	317959,4
	81,9**	81,0	84,5	85,0
«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ	18950,0	21480,0	21000,0	21138,0
	6,9	7,2	5,8	5,7
«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ	30648,0	35200,0	35000,0	35000,0
	11,2	11,8	9,7	9,3
Ընդամենը ծախսեր	274058,8	297236,7	362266,5	374097,4
	100,0	100,0	100,0	100,0
Դրամական մուտքերը				
Մասնավորեցումից	555200,8	199549,1	433336,2	269874,1
	61,3	39,6	58,8	44,0
Օտարումից	150465,9	118437,3	99143,0	179596,4
	16,6	23,4	134	29,3
Վարձակալությունից	199912,0	186557,4	204966,1	163629,6
	22,1	37,0	27,8	26,7
Ընդամենը պետական բյուջեի դրամական եկամուտներ	905578,7	504543,8	737445,3	613100,1
	100,0	100,0	100,0	100,0
Ընդամենը դրամական մուտքերի և ընդամենը ծախսերի տարբերությունը	631519,9	207307,1	375178,8	239002,7

* Աղյուսակը կազմված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

** Համարիչում՝ հազար դրամ, հայտարարում՝ տոկոսներով ընդամենի նկատմամբ:

Աղյուսակ 1–ի տվյալներից հետևում է նաև, որ պետական գույքի օգտագործման նպատակով կատարված փաստացի ծախսերի կազմում զգալի է (առանձին տարիներին 81,0–85,0%–ը) ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման աշխատակազմի բաժինը: Նշված երկու ՊՈԱԿ–ների ծախսերը ուսումնասիրված ժամանակահատվածում ունեցել են նվազման միտում. «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ–ի ծախսերը 2008 թվականի ընդհանուր ծախսերի մեջ կազմել են 6,9%՝ 2011 թվականի 5,7%–ի փոխարեն, «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ–ի ծախսերը համապատասխանաբար կազմել են 11,2% և 9,3%: Անհրաժեշտ է նշել, որ նշված երկու ՊՈԱԿ–ների ծախսերը, բացարձակ մեծությամբ, ավելացել են համապատասխանաբար 111,5%–ով և 114,2%–ով: Հասկանալի է, որ ՊՈԱԿ–ների ծախսերի տեսակարար կշիռների նվազումը ընդհանուր ծախսերի կազմում բացատրվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ծախսերի առաջանցիկ աճով՝ 2011 թվականին 2008 թվականի համեմատությամբ այն կազմել է 141,7%:

Աղյուսակ 1–ի տվյալներից հետևում է, որ պետական գույքի օգտագործումից ստացված դրամական մուտքերն ունեցել են նվազման միտում: 2011թ–ին 2008թ–ի համեմատությամբ նշված դրամական մուտքերը նվազել են 32,3%–ով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական գույքի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացվող մուտքերի նվազմամբ, որի արդյունքում դրամական մուտքերի այդ աղբյուրի բաժինը 2008թ–ի 61,3%–ից 2011թ–ին կազմել է 44,0%: Պետական գույքի օգտագործումից ստացված դրամական մուտքերի կազմում զգալիորեն (12,7 տոկոսային կետով) ավելացել է պետական գույքի օտարումից ստացված եկամուտների բաժինը: Եթե պետական գույքի մասնավորեցումից և օտարումից ստացված դրամական մուտքերը միավորենք մի խմբում, ելնելով այդ գործարքների ընդհանրական գծերից (երկու դեպքում էլ պետության իրավունքը գույքի նկատմամբ փոխանցվում է այլ՝ ոչ պետական սուբյեկտներին), ապա ստացվում է, որ պետական գույքի վարձակալությունից ստացված դրամական մուտքերը ավելացել են և վերջին երկու տարիների (2010–2011թթ.) ընթացքում կազմել են շուրջ 27–28%:

Եթե գնահատելու լինենք պետական գույքի օգտագործման արդյունավետությունը 2008–2011 թվականներին՝ հիմք ընդունելով ընդամենը եկամուտների (ընդամենը դրամական մուտքերի և ընդամենը ծախսերի տարբերությունը) և կատարված ծախսերի հարաբերակցությունը, ինչպես նաև ընդամենը պետական բյուջեի դրամական մուտքերի հարաբերակցությունը ընդամենը ծախսերին, ապա կարող ենք կազմել աղյուսակ 2–ը:

*Աղյուսակ 2**

Պետական գույքի օգտագործման արդյունավետությունը 2008–2011 թվականներին, %

Արդյունավետության ցուցանիշները	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.
1. Եկամուտներ/ծախսեր	230,4	69,7	103,6	63,9
2. Պետական բյուջեի դրամական մուտքեր/ծախսեր	330,4	169,7	203,6	163,9

* Կազմված է աղյուսակ 1–ի տվյալների հիման վրա:

Գծապատկեր 1–ում բերված է պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը ըստ վերը բերված երկու ցուցանիշների, պայմանով, որ երկու ցուցանիշների մեծությունները 2008 թ–ի համար ընդունված են 100 միավոր: Այսինքն՝ հաջորդ տարիների համար արդյունավետության մակարդակները հաշվարկված են այդ մեծության նկատմամբ:

Գծապատկեր 1–ից հետևում է, որ պետական գույքի օգտագործման արդյունավետությունը 2008–2011 թվականներին զգալիորեն նվազել է: Անկումը կտրուկ է եղել հատկապես 2009 թ–ին, երբ նկատվել է պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակի ավելի քան եռակի (պետական գույքի օգտագործումից ստացված եկամուտներ (պետական գույքի օգտագործման համար կատարված ծախսերի ցուցանիշի մասով) և գրեթե կրկնակի (պետական գույքի օգտագործումից պետական բյուջե մուտք եղած դրամական մուտքեր) պետական գույքի օգտագործման համար կատարված ծախսերի ցուցանիշի մասով) անկում: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2009 թ–ին մասնավորեցումից ստացված դրամական մուտքերի ծավալները նվազել են 64%–ով՝ 2008 թ–ի 555,2 մլն դրամի դիմաց 2009 թ–ին կազմելով 199,5 մլն դրամ: Ի դեպ, 2008–2011 թվականներին պետական գույքի օգտագործումից ստացված դրամական մուտքերի մեջ 2009 թ–ին մասնավորեցումից ստացված դրամական մուտքերը եղել են ամենացածրը և կազմել են 39,6%՝ 2008 թ–ի 61,3%–ի փոխարեն: 2009 թ–ին 2008 թ–ի համեմատ նվազել են նաև պետական գույքի օտարումից (21,3%), ինչպես նաև պետական գույքի վարձակալությունից (6,7%–ով) ստացված դրամական մուտքերը:

Գծապատկեր 1.

Պետական գույքի օգտագործման արդյունավետությունը 2008–2011 թվականներին



Պետական գույքի օգտագործման ցուցանիշների՝ նման ձևով վատթարացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում 2009թ–ին, հատկապես 2008թ–ի համեմատ, տնտեսական ակտիվության զգալի անկմամբ, ինչը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ուղղակի հետևանք է, երբ 2009թ–ին նախորդ տարվա համեմատությամբ, ՀՆԱ–ի նվազման չափը կազմեց 14,2%, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ է Երրորդ հանրապետության 2000–ական թվականների ողջ ժամանակահատվածի համար: Թեև 2010թ–ին նախորդ տարվա համեմատ նկատվել է պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակի զգալի բարձրացում, սակայն այդ ցուցանիշներն ունեցել են նվազման միտում 2011թ–ին: Ակնհայտ է, որ առաջիկայում նվազելու են պետական գույքի մասնավորեցումից և օտարումից ստացվող մուտքերը՝ այդ գործարքների թվի կրճատման հետևանքով և, հետևաբար, ավելի շատ ուշադրություն պետք է դարձվի պետական գույքի վարձակալության արդյունավետության բարձրացման վրա:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ պետական գույքի պահպանության հետ կապված ծախսերի ավելացումը, պետական գույքի հաշվառման և գույքագրման, պետության անունով սեփականության իրավունքների գրանցման գործառույթների լիարժեք իրականացումը առավել քաղաքակիրթ կդարձնեն պետական գույքային հարաբերությունները, ինչի արդյունքում պետությունը հանդես կգա որպես լիարժեք սեփականատեր՝ բարձրացնելով նաև պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը:

Curent problems of effective use of state property in the Republic of Armenia

Summary

One of the main directions of state economic policy is a proper management of state property and increase in public revenues. The rights for state property ownership and usage are distributed among state governmental bodies.

Problems of efficiency often appear when the government of the Republic of Armenia decide to lease, or to pass to the fiduciary management or by concession agreement any state property or a part of it. The same problems we need to solve during privatization of state property and in cases of state property using without compensation.

This problem is not only theoretical but also practical since it is related to the functions of many state agencies.

The author discusses some indicators for measuring of state property through effective use in the Republic of Armenia.

Իրական հատվածում ձեռնարկատիրական ռիսկերի գնահատման և կառավարման մի քանի հիմնախնդիրներ

Արտաշես Եղիազարով

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հայցորդ

Ձեռնարկատիրական ռիսկերի գնահատումը և դրանց կառավարումը դասվում է այն հիմնախնդիրների շարքին, որոնք, հատկապես անորոշության և արագ փոփոխվող հանգամանքների պայմաններում ձեռք են բերում էական նշանակություն, քանի որ վերջիններիս հետ կապված գործոնների ընթացքը կարող է մեծ ազդեցություն ունենալ երկրի հետագա զարգացման վրա: Ձեռնարկատիրական ռիսկերի կայունության և դրանց կանխատեսելիության ապահովումը հնարավորություն է տալիս ունենալ հավասարակշռված, արդյունավետ սոցիալ–տնտեսական զարգացում, որն իր հերթին հնարավորություն է ստեղծում ձևավորել ռացիոնալ զբաղվածություն, քաղաքացիների բարեկեցություն և սոցիալական պաշտպանվածություն, ինչպես նաև տնտեսական հավասարակշռված քաղաքականություն: Արդի ժամանակաշրջանում երկրի ռազմավարական խնդիրներից մեկն էլ տնտեսական քաղաքականության ոլորտում ազգային շահերի ապահովումն է, առանձնապես՝ իրական հատվածում: Տնտեսական գործընթացների դինամիկ զարգացումը, մրցակցության խորացումը, որոշ տնտեսական ինստիտուտների անկայունությունը, ֆինանսական լարվածությունը և բարեփոխումների իրագործման բարդություններն անընդհատ առաջացնում են ճգնաժամային իրավիճակներ, որոնք վտանգավոր են դառնում երկրի տնտեսության անվտանգության համար, ինչպես ֆինանսական, այնպես էլ իրական հատվածներում: Դրանով է պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի այն բացասական միտումների վերարտադրությունը, որոնք խոչընդոտում են տնտեսության իրական հատվածի կայուն գործունեությանը, այդ ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանը: Տնտեսության իրական հատվածի զարգացմանը խոչընդոտող ռիսկերը անկայուն շուկայական վիճակի, ռիսկերի գնահատման և վերջիններիս կառավարման, ինչպես նաև վերարտադրության համամասնությունների խախտման հետևանք են: Հայաստանում շուկայական վերափոխումների ժամանակահատվածում փոփոխության ենթարկվեցին ինչպես պետական տնտեսական կարգավորման մեխանիզմներն, այնպես էլ ֆինանսական և իրական հատվածների գործառույթներն ու ծավալները: Հաշվի առնելով ճգնաժամային իրավիճակների ախտանշանների և վտանգների արտահայտման առանձնահատկությունները՝ առավել էական է դառնում ռիսկերի գնահատման և դրանց կառավարման գործընթացը վերոնշյալ վտանգների բացառման և հաղթահարման համար: Տնտեսության իրական հատվածի և դրա առանցքային ճյուղերի՝ սկզբունքայնորեն փոփոխվող սոցիալ–տնտեսական զարգացման պայմաններին անբավարար հարմարվողականությունը պայմանավորված է մասամբ բացակայող գիտականորեն հիմնավորված իրական հատվածի ռիսկերի կառավարման ունիվերսալ

մեթոդներով: Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում իրական հատվածների վերլուծությունից հետևում է, որ ձեռնարկատիրական ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացները դեռևս կատարելագործման փուլում են, բացի այդ, ռիսկերի կառավարման հիմնական մեթոդներն ու մոտեցումները չգտնվեցին համընդհանուր ճանաչում ստացած և ճկուն, որը և հիմք հանդիսացավ ֆինանսատնտեսական մեծ ճգնաժամի համար: Այս տեսանկյունից վճռորոշ են դառնում տնտեսության հիմնական բջիջների՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության գնահատման և կառավարման հիմնահարցերը:

Վերը շարադրվածի տեսանկյունից արդիական է դառնում տնտեսության իրական հատվածի ձեռնարկատիրական ռիսկերի և դրանում գործող առևտրային կազմակերպությունների գնահատման և կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակում իրական հատվածում առաջացող ռիսկերի բնույթի կանխորոշումը և դրանց կառավարման գործընթացը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության առանձնահատկությունները, ինչպես նաև հետճգնաժամային զարգացումները (նկատենք, որ 2009թ–ին Հայաստանի Հանրապետությունն ունեցավ զգալի տնտեսական անկում)՝ ժամանակն է բացահայտել հանրապետության իրական հատվածի և առևտրային կազմակերպությունների ռիսկերի կառավարման հիմնախնդիրները և հիմնավորել այդ գործընթացի կատարելագործման անհրաժեշտությունը և ուղիները:

Տնտեսական գործունեության ժամանակ վարկային ռիսկերը կարող են առաջանալ ինչպես քաղաքական, այնպես էլ զուտ տնտեսական պատճառների հետևանքով: Այստեղից էլ քաղաքական և տնտեսական ռիսկերի հասկացությունները, որոնք առաջանում են մակրոտնտեսական մակարդակի հարաբերություններում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընթացքում: Տվյալ ռիսկերը հանդիսանում են արտաքին՝ ի տարբերություն ներքին ռիսկերի, որոնք վերաբերում են առևտրային կազմակերպությունների ներտնտեսային հարաբերություններին:

Առևտրային կազմակերպությունների գործունեության վրա քաղաքական գործոնները կարող են ունենալ ինչպես բացասական, այնպես էլ դրական ազդեցություն: Վերջիններիս դրական ազդեցությունը այդ գործընթացի վրա կարող է արտացոլվել, օրինակ, երբ իշխանության եկած նոր կառավարությունը, որը հայտարարել է ձեռնարկատիրությանն աջակցման ծրագրի ապահովման մասին, կարող է հանգեցնել տնտեսական ենթակառուցվածքի բարելավմանն ու ձեռնարկատիրական ռիսկի նվազմանը:

Մակրոտնտեսական մակարդակում տնտեսական գործոնները ընդհանուր առմամբ կապված են երկրի տնտեսության փոփոխություններից, այդ թվում շուկայի ենթակառուցվածքի, վճարային հաշվեկշռի, փոխարժեքի և այլ մակրոպարամետրերի փոփոխություններից:

Մակրոտնտեսական մակարդակում ձեռնարկատիրական ռիսկը կարող է առաջանալ նաև օրենսդրական, այդ թվում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի փոփոխությունների հետևանքով: Կոնկրետ առևտրային կազմակեր-

պության և շուկայի հարաբերությունների վրա ազդում է գործոնների ոչ պակաս քանակություն: Դրանք կարող են լինել փոփոխություններ, որոնք առաջացել են առևտրային կազմակերպության ֆինանսական վիճակի, նրա արտադրատնտեսական քաղաքականության և այլ հանգամանքների հետևանքով:

Ձեռնարկատիրական ռիսկի կառավարումը առևտրային գործունեություն ծավալող կազմակերպության նպատակաուղղված, օրինաչափ գործունեություն է դրա առաջացման հնարավորության նկատմամբ: Ռիսկի կառավարումը միշտ բնութագրում է մենեջմենթի որակը, տնտեսական գործունեության մեջ ընդգրկված ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման դեմ ուղղված միջոցառումներ ձեռնարկելու կազմակերպության ունակությունն ու գիտակցումը:

Ձեռնարկատիրական ռիսկի կառավարումն իրենից ներկայացնում է ոչ թե միմյանցից մեկուսացված միջոցառումներ, այլ գործողությունների որոշակի համակարգ, որի տարրերի թվին են դասվում.

1. տնտեսական գործունեության ընթացքում բացասական հետևանքներ առաջացնող ռիսկային գործոնների բացահայտումը,
2. ձեռնարկատիրական ռիսկի գնահատումը,
3. ձեռնարկատիրական ռիսկը նվազեցնող միջոցառումների, գործիքների մշակումը,
4. ձեռնարկատիրական ռիսկի կառավարման վերահսկման կազմակերպումը:

Ձեռնարկատիրական ռիսկի կառավարման միջոցառումները հարկավոր է տարբերակել և դասակարգել: Այս կապակցությամբ մի կողմից՝ ուրվագծվում է ռիսկի կառավարման քաղաքականությունը՝ կապված մի կողմից՝ դրա պատճառի, իսկ մյուս կողմից՝ դրա ազդեցության հետ: Միջոցառումների առաջին խումբը՝ կապված ռիսկի պատճառի առկայության հետ, ուղղված է ռիսկի հավանականության նվազմանը, անորոշության աստիճանի փոքրացմանը, վնասի վաղաժամ կրճատմանը: Ռիսկի ազդեցության հետ կապված միջոցառումներն, ընդհակառակն, ուղղված են հնարավոր կորուստների կրճատմանը, կազմակերպության գործունեության վրա ազդող առաջացած վնասի բացասական ներգործության մեղմացմանը: Տվյալ վնասը պետք է այնքան նվազեցվի, որպեսզի հնարավորինս առանց ընդհատման ապահովվի ձեռնարկատիրական գործունեություն ծավալող կազմակերպության գոյությունը:

Ձեռնարկատիրական ռիսկի կառավարումը իրական հատվածի տարբեր ոլորտներում նախատեսում է մի շարք միջոցառումներ և դրանց իրականացում: Դրանք կարող են լինել կազմակերպչական, կադրային, վարկավորման գործընթացի խափանումից կազմակերպությունը պաշտպանելու համար նախատեսված հատուկ և այլ միջոցառումներ: Կազմակերպչական միջոցառումները նախատեսում են նախ կազմակերպության վարկավորմամբ զբաղված անձանց պարտականությունների սահմանում: Սովորաբար դրանք ոչ միայն կազմակերպության վարկավորման գործընթացի ընդհանուր կառավարումն իրականացնող ղեկավարներն են, այլև անմիջականորեն վարկավորման գործառնությունների կառավարման և կազմակերպման ստորաբաժանումների ղեկավարները: Տնտեսության իրական հատվածում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների հաջողությունները մեծապես պայմանավորված են փոխառու մի-

ջոցներ ներգրավելու հնարավորությունից, քանի որ վարկային ռեսուրսներ տրամադրող կազմակերպությունը, գնահատելով տվյալ կազմակերպության ֆինանսատնտեսական վիճակը, հանդես է գալիս յուրահատուկ «բժիշկի» դերում: Ուստի ձեռնարկատիրական ռիսկի կառավարման տեսանկյունից՝ վարկավորման գործընթացի կազմակերպման խնդիրներին են դասվում՝

- վարկավորման ընթացակարգի և վարկային ռիսկի կառավարման մեթոդաբանության փաստաթղթերի մշակումը,
- վարկավորման ռազմավարության մշակումը,
- վարկավորման գործառնությունների կառավարման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- ռիսկը նվազեցնող համակարգի ներդնումը,
- վարկավորման ռիսկերի բացահայտման և գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերի մշակումն ու ներդնումը,
- ներկայացված նախագծերի քննարկման հաջորդականության սահմանումը և դրանց վարկավորման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- հաճախորդի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համակարգի ներդնումը և բանկի ստորաբաժանումների միջև կապը,
- վարկերի տրամադրման իրավասությունների ամրագրումը և լիազորությունների տրամադրման հնարավորությունը:

Առևտրային կազմակերպության կադրային միջոցառումներն ընդգրկում են գործունեության մեջ զբաղված աշխատակիցների և ղեկավարների ուսուցումն ու որակավորման բարձրացումը, աշխատանքի և արտադրության կուլտուրայի ձևավորումն ու պահպանումը, ինչպես նաև առևտրային գործընթացների վերահսկման հաջորդականության սահմանումը:

Ձեռնարկատիրական ռիսկի կառավարման հատուկ միջոցառումների թվին են դասվում այն տեխնոլոգիաները, կառավարման գործիքները, նորմատիվները, որոնք տնտեսական գործունեության իրականացման ընթացքում կիրառում են կազմակերպությունները:

Some problems of entrepreneurial risks evaluation and management in the real sector of economy

Summary

Prediction of entrepreneurial risks in the economy helps us to understand how we can manage a socio–economic development in the future. In this case we are able to create a rational and effective employment and social security policies and to achieve equality in the economic policy.

During free market reforms in the Republic of Armenia, the mechanisms of state regulation of the economy and functions of financial and real sectors of the economy have been changed.

The author discusses political and economic reasons of entrepreneurial risks rising on macro– and micro economy levels.

Մարդկային ռեսուրսների կառավարման առաջադեմ փորձի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում

Անուշ Մանուչարյան

Գործարարության պայմանների փոփոխմանը զուգահեռ փոխվում են նաև կազմակերպության ներքին գործընթացները, արժևորվում է ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը, որն իր հետ առաջ է բերում կազմակերպություններում նախկին գործընթացների կազմակերպման նոր եղանակներ և մեթոդներ: Նման փոփոխություններ տեղի են ունենում նաև կազմակերպության առանցքային գործընթացներից մեկի՝ մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) հետ:

ՄՌԿ գործընթացում տեղի ունեցող առանցքային փոփոխությունները դիտարկելու և միջազգային առաջադեմ փորձին ծանոթանալու նպատակով առաջարկում ենք ուսումնասիրել ներկայումս առաջատար ընկերություններում կիրառվող ՄՌ նորագույն մոտեցումները և մեթոդները, ինչպես նաև ծանոթանալ մի քանի առավել արդյունավետ ՄՌԿ գործիքների, որոնք կարող են որոշակի հարմարեցման արդյունքում հաջողությամբ կիրառվել նաև ՀՀ պայմաններում:

Ժամանակակից կազմակերպություններում ՄՌԿ գործառույթը ձեռք է բերում նոր ռազմավարական նշանակություն: Սա իր հերթին արտացոլվում է ՄՌԿ մասնագետների առջև դրված խնդիրների բնույթի փոփոխման մեջ: Եթե նախկինում ՄՌԿ մասնագետներն ընկալվում էին որպես առավելապես վարչական գործառույթների կամ առավելագույնը՝ աշխատանքային էթիկայի հարցերի, աշխատողների հոսունության և նվիրվածության համար պատասխանատուներ, ապա ներկայումս խնդիրների շրջանակը զգալիորեն ընդլայնվում է՝ հասնելով մինչև կազմակերպությունների երկարաժամկետ ռազմավարական նպատակների իրագործմանն աջակցում՝ հիմնականում աշխատակիցների ներուժի լիարժեք կիրառման շնորհիվ: Այս տեսանկյունից հետաքրքրական է ՄՌԿ ոլորտում իրականացվող վերջին հետազոտությունների արդյունքներին ծանոթացումը, որտեղ ներկայացված են առանձին ՄՌԿ գործառույթներում տեղի ունեցող հիմնական փոփոխությունները: Այսպես, օրինակ՝ ուսումնասիրելով Եվրոպայում ՄՌԿ ոլորտում առաջատար դեր ունեցող ՄՌ զարգացման հավատարմագրված ինստիտուտի (CIPD) կողմից հրապարակված 2010 թ. ամենամյա հաշվետվության «Ուսուցում և տաղանդների զարգացում» բաժինը (գծապատկեր 1), կարող ենք նկատել ուսուցման և զարգացման մեթոդների և մոտեցումների գերիշխող միտումը, այն է՝ կազմակերպության աշխատակիցների ուսուցման ներքին ծրագրերի գերակշռումը՝ շնորհիվ դրանց՝ կազմակերպության առանձնահատկություններին և կարիքներին առավել հարմարեցված լինելուն:

Գծապատկեր 1.

Ուսուցման և տաղանդների զարգացման ծրագրերի արդյունավետության վերաբերյալ անցկացված հարցման արդյունքներ[1]:



*Ուղղորդում:

Ինչպես նկատում ենք այս միտումը ավելի տարածված է դառնում՝ համեմատ ինչպես այլ ուսուցման մեթոդների, այնպես և նախորդ տարվա նույն տվյալների հետ:

Անդրադառնալով նույն ամենամյա հետազոտության մեջ արտացոլված մեկ այլ առանցքային նշանակություն ստացող ՄՌԿ գործառույթի վերաբերյալ տվյալներին, վարձատրության կառավարման վերաբերյալ տվյալներին (գծապատկեր 2)՝ նկատում ենք հետևյալ զարգացման միտումները:

1 CIPD annual survey report 2010. “Learning and talent development”. http://www.cipd.co.uk/NR/rdonlyres/BC060DD1–EEA7–4929–9142 1AD7333F95E7/0/5215_Learning_talent_development_survey_report.pdf

Վարձատրության համակարգի առաջնայնությունները[2]:



Ինչպես տեսնում ենք, վարձատրության կառավարման համակարգի առաջնայնությունները նույնպես ապացուցում են ՄՌԿ դերի փոփոխությունը, քանի որ առավել տարածված առաջնայնությունը գործարար ռազմավարության հետ համապատասխանության ապահովումն է և վարձատրության համակարգի մրցակցային դիրքի ապահովումը շուկայում՝ ի տարբերություն նախորդ տարվա, երբ առաջնայինը ծախսերի կրճատումն էր:

Ներկայացված տվյալները ակնհայտ կերպով ցուցադրում են ՄՌԿ գործընթացների զարգացման ընդհանուր միտումները՝ երկու առանցքային գործառույթների առաջնայնությունների օրինակով: Հասկանալու համար, թե ինչ մեթոդներով և եղանակներով են դրսևորվում տվյալ միտումները, դիտարկենք առաջադիմական հեռահաղորդակցային մի քանի ընկերություններում ՄՌԿ լավագույն փորձի մի քանի օրինակ: Հեռահաղորդակցությունը, հանդիսանալով դինամիկ զարգացող ոլորտ, բարձր պահանջներ է առաջադրում նաև աջակցող գործընթացների, այդ թվում՝ ՄՌԿ հանդեպ, ուստի այդ տեսանկյունից այս ոլորտում ՄՌԿ փորձը առավել հիշարժան է դառնում:

2 CIPD annual survey report 2010. Reward management. http://www.cipd.co.uk/hr–resources/survey–reports/reward–management–2010.aspx

Հետաքրքրական ենք համարում նաև առաջատար վերազգային հի ընկերությունների՝ Բրիթիշ Թելեքոմ, Ֆրանս Թելեքոմ, Տելեֆոնիկա, Վոդաֆոն ընկերությունների ՄՌԿ գործունեության մոտեցումների և ձեռքբերումների ներկայացումը: Այդ կազմակերպություններում ՄՌԿ դերը վաղուց արդեն դուրս է եկել ավանդական վարչական ՄՌԿ գործառույթների շրջանակներից, և մեր կարծիքով այս ընկերությունների նախաձեռնությունները կարող են օրինակ ծառայել նաև ՀՀ ոլորտում ՄՌԿ բարելավման համար:

Բրիթիշ Թելեքոմ ընկերության գործունեության հիմնական ոլորտը հեռահաղորդակցային ծառայությունների տրամադրումն է շուրջ 170 երկրներում[3]: Գործունեության ոլորտն ընդգրկում է տարատեսակ տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղական և միջազգային հեռախոսազանգերի, լայնաշերտ ինտերնետային ծառայությունների մատուցումը:

2008թ. Բրիթիշ Թելեքոմ ընկերության «Անձնակազմ և քաղաքականություն» թիմը հաղթող է ճանաչվել ՄՌԿ ոլորտի ամենահեղինակավոր «Անձնակազմն այսօր» մրցանակաբաշխության «ՄՌԿ տեխնոլոգիայի շնորհիվ» անվանակարգում: Հաղթող թիմը բաղկացած է եղել 14 մասնագետներից, ովքեր պատասխանատու են կազմակերպության 111000 աշխատակիցների համար: Այս մրցանակը շնորհվում է այն կազմակերպություններին, որոնք ցուցաբերել են տեխնոլոգիայի արդյունավետ կիրառում ՄՌ ստորաբաժանման աշխատանքում և դրանով իսկ ապահովել գործարար ցուցանիշների զգալի բարելավում: Կարևորություն է տրվում ոչ թե իրականացված փոփոխության տեխնոլոգիական նորույթին, այլ ՄՌԿ անձնակազմի կողմից այդ փոփոխության արդյունքում ստացված առավելությունների լիարժեք կիրառմանը[4]:

Կազմակերպության ՄՌԿ թիմի առջև խնդիր էր դրված զբաղվածության այնպիսի մոդելներ մշակել, որոնք աշխատանքը հասանելի կդարձնեն բնակչության սոցիալապես առավել խոցելի խմբերի համար, ինչպիսիք են միայնակ ծնողները, տարեցները, հաշմանդամները և անապահով բնակչության խավերը, որոնց համար սովորական աշխատանքային գրաֆիկով աշխատելը բարդություն է ներկայացնում: Առաջադրված խնդրի լուծման համար ԲԹ ՄՌԿ մասնագետների կողմից առաջարկվել են հետևյալ քայլերը.

- Կիրառել նույն տեխնոլոգիան, որն օգտագործվում էր նախկինում օպերատիվ արձագանքման կենտրոններում և գրասենյակներում տեղաբաշխված աշխատակիցների կողմից՝ հեռավար աշխատանքի հնարավորություն ապահովելը: Կազմակերպության “BT Homeshoring” ծրագրի միջոցով վերոնշյալ աշխատակիցները հնարավորություն ստացան իրենց աշխատանքն իրականացնել գտնվելով սեփական բնակարաններում:
- Տնտեսական անկում կամ լճացում ապրող տարածաշրջաններում իրականացնել հատուկ ուսումնական ծրագրեր՝ բնակիչներին նոր ծրագրով տնային պայմաններում աշխատել սովորեցնելու նպատակով:

3 http://www.bt.com/

4 Personnel Today Awards 2008: HR Through Technology Award. 26 September 2008 17:38

Տնային պայմաններում աշխատանքի հնարավորություն տալու հետ մեկտեղ, ծրագրի առավելություններից են կարճաժամկետ զբաղվածության պահանջարկի բավարարման առավել շահավետ եղանակի ձևավորումը, և նախկինում «տեղեկատվական» տարիքից դուրս համարվող բնակչության վերապատրաստման և զբաղվածության ապահովման լրացուցիչ հնարավորության ստեղծումը: Այս ծրագիրը նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության լավագույն օրինակ է, որը, մեր կարծիքով, հաջողությամբ կարող է կիրառվել նաև Հայաստանում:

ՄՌԿ գործընթացի արմատական վերափոխման և դրան ռազմավարական նշանակություն տալու լավագույն օրինակներից է Ֆրանս Թելեքոմ (ՖԹ) ընկերությունում 1999–2002թթ. իրագործված «ՄՌԿ վաղը. Առաջնորդող հավակնություն» (HR Tomorrow: a leading ambition) նախագիծը[5]: Նախագծի կարևորությունը պայմանավորված էր հեռահաղորդակցության շուկայում տեղի ունեցող ակտիվ զարգացումներով, նոր շուկաների առաջացմամբ, ազգային և միջազգային մրցակցության սրվելով: Նման պայմաններում, անձնակազմի շարժունությունն ապահովելու պահանջից ելնելով, առավել կարևոր էր դառնում ինչպես առհասարակ մենեջերների, այնպես և հատկապես ՄՌ կառավարիչների և ՄՌԿ գործընթացի դերը: Այդ ենթատեքստում հրատապ անհրաժեշտություն առաջացավ լիովին վերակառուցել ՄՌԿ գործընթացը՝ հետևյալ հիմնական նպատակներից ելնելով.

1. Առաջին գծի անմիջական ղեկավարների ուժեղացում՝ ՄՌ կառավարման և կազմակերպման գործառույթների իրականացման համար անհրաժեշտ որակավորումների զարգացմամբ և այդպիսով առաջին գծի կառավարչական անձնակազմը նաև կազմակերպության «առաջին գծի ՄՌ կառավարիչներ» դարձնելով,
2. ՄՌ ստորաբաժանման ծախսերի կրճատում՝ հասցնելով այն միջազգային այլ հհ ընկերությունների մակարդակին,
3. ՄՌ ստորաբաժանման միջոցով «տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերության» (Net Company) մշակույթի ձևավորումն ու զարգացումը և էլեկտրոնային ՄՌԿ ծրագրերի ներդրումը:

Նախագծի իրագործման առաջին փուլում միջոցառումներ իրականացվեցին Orange Ֆրանսիայի գլխամասային ընկերությունում: Այնուհետև 2002թ. նախագիծը փորձարկվեց Jordan Telecom–ում, որից հետո՝ 2003թ. ՖԹ բոլոր դուստր ձեռնարկություններում:

Ձեռնարկված վերափոխման հիմնական կողմերը հետևյալն էին.

- Ֆրանսիական բոլոր 600 ստորաբաժանումներում ՄՌԿ բաժինների վերակառուցում՝ շեշտադրելով տեղային ռազմավարությունը և կազմակերպության արդյունավետությունը,
- Վարչական ղեկավարման ձևափոխում և օպտիմալացում: Դա արտա-

5 REENGINEERING OF THE OF THE HR FUNCTION IN FRANCE TELECOM, MOHAMMED MATMATI (HR Professor at Grenoble Management School), BERNARD MERCK (ex VPHR at France Telecom), WATHEQ SABER (ex HR Director at Jordan Telecom)

հայտվեց ավտոմատացված աշխատանքային միջոցների ներդրմամբ, սպասարկումը պարզեցնող կառավարչական կանոնների հարմարեցմամբ, տասը ՄՌ սերվիս կենտրոնների (ՄՌՍԿ) ստեղծումով, որոնք կոչված էին ներքին հաճախորդներին՝ ղեկավարներին և տեղական ՄՌ ստորաբաժանումներին, տրամադրել օպերատիվ աջակցություն մի շարք ՄՌԿ և վարչական տարբեր հարցերի վերաբերյալ,

- ՄՌ ներքին էլեկտրոնային կայքի (ինտրանետի) գործարկում 140 000 աշխատակիցների համար՝ նախագծի առաջին փուլում, իսկ այնուհետև ֆրանսիական բոլոր դուստր ձեռնարկություններում՝ 170 000 աշխատակից, ապա՝ եվրոպական բոլոր մասնաճյուղերում:

Նախագծի երեք հիմնական ռազմավարական բաղադրիչներն էին՝

1. Նախագծի սկզբունքների համախումբը՝ TREC հապավումով (ֆրանսերեն՝ թափանցիկություն, պատասխանատվություն, հաճախորդի պահանջմունքների ընկալում, վստահություն),
2. POPSI մոտեցումը,
3. Նախագծի ներդրման փորձնական ծրագիրը:

POPSI մոտեցումն իրենից ներկայացնում է նախագծի ընթացքում փոփոխությունների կառավարման շրջանակը՝ բաղկացած հետևյալ տարրերից՝ գործընթաց /process (P)/, կազմակերպում /organisation (O)/, մասնագիտացում /professionalization (P)/ և տեղեկատվական համակարգ /system information (SI)/: Այս տարրերի շնորհիվ պետք է ապահովվեր ծրագրի նպատակներից մեկը՝ բոլոր գործընթացների ուղղվածությունը դեպի ընկերության ռազմավարական խնդրի լուծումը:

Առանձնակի հիշարժան ենք համարում POPSI մոտեցման բաղադրիչներից մեկը՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման ուղղությունը, քանի որ առհասարակ ՄՌԿ էլեկտրոնային միջոցների ներդրման գործընթացը կազմակերպություններում բավականին բարդ է և հաճախ ձախողվում է: Դրա հիմնական պատճառներն են տեղեկատվական տեխնոլոգիաների սահմանափակ հասանելիությունը, աշխատակիցների կողմից դրանց կիրառման բարդությունը՝ կապված աշխատանքի բնույթի, հմտությունների պակասի և մի շարք այլ սուբյեկտիվ գործոնների հետ:

Մենք հատուկ շեշտադրում ենք այս արգելքները, քանի որ դրանք հաճախ են հանդիպում նաև ՀՀ հի ոլորտում: Այս տեսանկյունից հետաքրքրական է իրականացված նախագծի ղեկավարության կողմից կայացված որոշումը: Այն է՝ դիմել աստիճանական ներդրման մոտեցմանը՝ առաջնություն տալով այն միջոցներին, որոնք վայելում են առավելագույն պահանջարկ աշխատակիցների մեծամասնության կողմից, հետո միայն ներդնել նորագույն և որոշ չափով բարդ տեղեկատվական միջոցները: Այս մոտեցումը տվեց սպասվածից լավ արդյունքներ:

POPSI մոտեցման մեկ այլ առավելությունն այն էր, որ հստակ գիտակցվեց և աշխատակիցներին հաջողությամբ փոխանցվեց այն գաղափարը, որ «տեխնոլոգիան ընդամենը մարդկանց շահերին ծառայող գործիք է քաղաքականության իրագործման համար»: Մոտեցման հաջողությունը պայմանավորված էր նաև նրանով, որ

նախքան որևէ նոր միջոցի ներդրման վերաբերյալ կենտրոնացված որոշում կայացնելը, ստեղծվում էին ընկերության տարբեր ստորաբաժանումների աշխատողներից կազմված «փորձարարական խմբեր», որոնք կարծիք էին ներկայացնում ներդրման մասին վերջնական որոշում կայացնելու վերաբերյալ:

Ինչպես ցանկացած նորարարություն, այս նախագիծը ևս բախվել է մի շարք արգելքների և բարդությունների, սակայն, մեր համոզմամբ այս նախագիծը ՄՌԿ վերակառուցման և նոր ռազմավարական դերը ստանձնելու լավագույն օրինակ է, ինչի որոշակի տարրեր կարելի է հաշվի առնել նաև ՀՀ հի ոլորտում ՄՌԿ բարելավման ծրագրերի մշակման և իրագործման ընթացքում:

Լավագույն փորձի ևս մեկ այլ օրինակ: Տելեֆոնիկա ընկերությունը[6], 1998 թ. դեկտեմբերի 1–ից գործելով լիովին ազատականացված շուկայում, դիրքավորում է իրեն որպես լավագույն փորձ կուտակող և փոխանցող կազմակերպություն: Ընկերության ՄՌԿ ռազմավարությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ կազմակերպությունը կարող է լավագույնը լինել նման դինամիկ ոլորտում միայն այն դեպքում, երբ ունի շահադրդված և իրազեկ աշխատակիցներ՝ ունակ նոր լուծումներ առաջարկելու և պատասխանատվություն ստանձնելու, ովքեր միաժամանակ և՛ թիմային ոգու կրողներ են, և՛ աշխատում են ընկերական, նորարարական և հավասարակշռված միջավայրում: Տելեֆոնիկայի ղեկավարությունը համոզված է, որ կազմակերպությունը կարող է աճել այնքան, որքան այն կզարգացնեն իր աշխատողները:

Ընկերությունը լուրջ աշխատանքներ է իրականացնում շուկայում լավագույն գործատուի դիրք զբաղեցնելու ուղղությամբ: Որպես նպատակային խումբ ընտրվում են այնպիսի պոտենցիալ աշխատակիցներ, ովքեր առաջին հերթին առանձնանում են ոչ թե իրենց մասնագիտական պատրաստվածությամբ, այլ դրսևորում են հետևյալ առանցքային հատկանիշները.

- Կորպորատիվ երկարաժամկետ տեսլականի առկայություն,
- Նպատակասլացություն և մշտապես խնդիրների հետ առնչվելու պատրաստակամություն, նվիրվածություն կազմակերպությանը և սեփական աշխատանքին,
- Նախաձեռնողականություն, գործարարություն և միաժամանակ բարեհամբույրություն հաճախորդների նկատմամբ,
- Եռանդ և աշխատանքային ներուժ,
- Թիմում աշխատելու կարողություն՝ մտահոգություններ արտահայտելով և լուծումներ առաջարկելով,
- Գործընկերներին ոգևորելու կարողություն,
- Ազատ տեղաշարժվելու պատրաստակամություն:

Ընկերությունը հետաքրքրություն է դրսևորում գործարարության վարման նոր այլընտրանքային ուղիների բացահայտման հանդեպ: Այդ իսկ պատճառով Իսպանիայի և Եվրոպական այլ երկրների առաջատար ուսումնական հաստատությունների հետ համատեղ իրականացնում է մի շարք համատեղ ծրագրեր ուսանողներին գործարարության մեջ ներգրավելու և կազմակերպությանը «թարմ արյուն»

6 http://www.telefonica.es/acercadetelefonica/eng/5rrhh/empresa.shtml

ներարկելու նպատակով: «Դուք ընտրում եք սահմանները, մենք տրամադրում ենք միջոցները»՝ ահա այն կարգախոսը, որով առաջնորդվում են կազմակերպության ՄՌԿ մասնագետները աշխատակիցների մասնագիտական զարգացման ապահովման հարցում: Ընդհանուր առմամբ նկատելի է ՄՌԿ հստակ ուղղվածությունը դեպի դինամիկ, սրընթաց և հավակնոտ միջավայրի ձևավորումը, ինչը լիովին համապատասխանում է կազմակերպության ընդհանուր ռազմավարությանը, որն էլ ՄՌԿ մոտեցման հաջողության գրավականն է:

Մեր կարծիքով՝ սա հհ ոլորտում աշխատակազմի հաջող հավաքագրման քաղաքականության և կոմպետենտությունների կառավարման օրինակ է, իսկ ընտրված առանցքային կոմպետենտությունները կարող են վերցվել որպես օրինակ հհ ոլորտի աշխատակիցների ընտրության համար նաև ՀՀ–ում:

ՄՌԿ յուրահատուկ մոտեցում է կիրառվում նաև **Վոդաֆոն ընկերությունում**[7]: Մասնավորապես խոսքը վերաբերում է աշխատակիցների պահպանման մեխանիզմներին և գործիքներին: Ինչպես նշում է Մեծ Բրիտանիայում Վոդաֆոնի ՄՌԿ տնօրենը՝ «Ամենից արդյունավետ պահպանման ռազմավարությունը լավ ղեկավարն է, այլ ոչ թե որոշակի ՄՌԿ ընթացակարգը և քաղաքականությունը: Մեր դերը, որպես ՄՌԿ մասնագետներ, որոշելն է, թե ինչպես ընտրել, խրախուսել և զարգացնել հաջողակ ղեկավարների: Մարդիկ ընդունվում են հզոր կազմակերպություններ, իսկ հեռանում են թույլ ղեկավարներից»: Ըստ այդմ՝ ՄՌԿ գործունեությունը հիմնականում ուղղված է երկրի տարածքում գտնվող 9 գրասենյակներում շուրջ 10 500 աշխատակիցների գործունեությունը կարգավորող ղեկավարների համար տեղային ստանդարտների մշակմանը:

Այս քայլերի շնորհիվ ընկերությունում ՄՌ հոսունության ցուցանիշը կազմում է միջինը 21%, մինչդեռ նույն ցուցանիշը մանրածախ առևտրի և ծառայությունների մատուցման ոլորտներում կազմում է միջինը 30%:

Կազմակերպությունում գործում են նաև ոչ նյութական խրախուսման ծրագրեր, որոնցից ամենածավալունը «Լեգենդներ» ծրագիրն է: Դրա էությունն այն է, որ ծրագրի շրջանակներում աշխատակիցներն իրենք առաջադրում են իրենց գործընկերներին «Լեգենդի կոչմանն» արժանանալու համար: Ծրագիրն իրագործվում է ՄՌԿ ստորաբաժանման կողմից, սակայն բոլոր որոշումները թողնված են աշխատողներին, ինչը աննկարագրելի դրական արդյունք է թողնում աշխատակիցների շահադրդման և աշխատանքի արդյունավետության վրա:

Այս մոտեցումը առկա է իրականացվող բոլոր ՄՌԿ ծրագրերում և ըստ կազմակերպության ղեկավարության՝ «Գոյություն ունի 100% անմիջական կախվածություն աշխատողների բավարարվածության և հաճախորդների բավարարվածության միջև»[8]:

Նման մոտեցումների իրականացումը մեր երկրում կլիներ ՄՌԿ գործընթացի զարգացման կատարյալ ցուցանիշ, սակայն դրա իրականացման համար միանշանակ անրաժեշտ են մի շարք մուտքային պայմաններ, որոնց թվում առաջնահերթը

7 http://www.vodafone.com/content/index.html

8 http://www.personneltoday.com/articles/2007/03/13/39651/vodafone–does–not–regard–staff–retention–as–an–hr–policy.html

բոլոր մասնակիցների գիտակցության բարձր մակարդակն է, և այդ ծրագրերի դերի գործնական կարևորումը:

Որպես ՄՌԿ ոլորտում միջազգային մակարդակով ներկայումս կարևորվող և առավել շրջանառվող հասկացություն, կարևոր ենք համարում նաև աշխատակիցների ներգրավվածության վերաբերյալ որոշ հետաքրքրական փաստերի ներկայացումը: Ընդհանուր առմամբ աշխատակիցների ներգրավվածության հասկացության տակ ընկալվում է աշխատողների կողմից առավել նվիրված մոտեցումը, որը ենթադրում է դերի փոփոխումը՝ առավել կատարողականից, դեպի որոշումներ կայացնող դերը: Ժամանակակից հարցումներն ապացուցում են, որ ուղղակի կապվածություն գոյություն ունի աշխատողների ներքին բավարարվածության և գործարար մի շարք ցուցանիշների միջև: Այսպես՝ ներգրավվածությունն անդրադառնում է.

- բացակայությունների վրա. ներգրավված աշխատակիցները տարեկան 2,7 հիվանդացության օրեր են ունենում՝ համեմատ այլ աշխատողների մոտ գրանցված 6,2 օրերի,
- աշխատողների հոսունության վրա. 87%–ով ավելի քիչ հավանական է ներգրավված աշխատակիցների արտահոսքը,
- ղեկավարին փոխելու ցանկություն. ղեկավարին փոխելու 90% դեպքերը պայմանավորված են մարդկային գործոնով,
- ստեղծագործական գաղափարների դրսևորում. ներգրավված աշխատակիցների 59%–ը համարում է, որ **«աշխատանքը բացահայտում է իմ ամենաստեղծագործ գաղափարները»**: Չներգրավված աշխատակիցների միայն 3%–ն է համաձայն այդ կարծիքի հետ:

Այսպես, ներկայացվեցին միջազգային հի ոլորտում հատուկ ընտրված ՄՌԿ այնպիսի օրինակներ, որոնք որոշակի զարգացումների արդյունքում կարող են կիրառվել նաև Հայաստանում: Բնական է, որ ցանկացած լավագույն միջազգային փորձ ներդնելուց առաջ կարևոր է հաշվի առնել նաև տեղական առանձնահատկությունները՝ այդ թվում ՄՌԿ գործող քաղաքականության և մոտեցման մեջ: Որպես այդպիսին, Հայաստանում ՄՌԿ հստակ մոտեցում դեռևս ձևավորված չէ, քանի որ ՄՌԿ ոլորտը մեր երկրում դեռ նոր է զարգանում:

Կարծում ենք համաշխարհային մակարդակով ՄՌԿ լավագույն օրինակների ճանաչումը առաջնահերթ է՝ դրանք հարմարեցնելու, տեղայնացնելու և մեր երկրում դրանք ներդնելու ու արդյունավետ ՄՌԿ գործընթացներ մշակելու համար:

Human Resource management Best Practice Implementation Ways in Republic of Armenia

Summary

Rapid changes in present–day business environment result in transformation of internal processes and create strong need for efficient use of available resources in organizations. This tendency is also clearly seen in the change of the role of human resource

management (HRM) function which gradually moves to a strategic business partner position, rather than an administrative function as it used to be perceived a few years ago.

The latest HRM studies prove this tendency. For instance, Chartered Institute of People Development 2010 annual survey results demonstrate that the prevailing tendency in learning and talent development function among leading European companies is the implementation of internal in–house development programs (56% of respondents). This assures higher rate of adjustment of development activities to company strategic goals and objectives as well as optimum use of training and development budgets. The same survey also presents the leading tendency in another core HRM function, which is the reward and compensation. 52% of survey respondents stated that alignment with the business strategy is the highest priority for the reward system in their companies.

In the article the author also describes examples of best existing practices in HRM processes within leading world–known telecommunication companies, such as British Telecom, France Telecom, Vodafone, Telefonica. These companies have gone far beyond realization of narrow and administrative part of HRM processes and serve as good example in implementation of up–to–date HRM technologies and tools, such as HRM IT solutions, core competency models applied in high potential employees attraction, reward and recognition non–financial motivation programs, decentralization of HRM processes, employee engagement and others.

The article describes HRM innovations successfully implemented in abovementioned companies and possible ways for their further implementation in HRM processes in Armenia, where HRM is in its early stage of development.

It is also important to note that any international best practice should be thoroughly adjusted and localized, considering specific national aspects. However, consideration of described and other best existing practices can serve as a valuable source for further development of HRM sphere in Armenia.

Տեսական և գործնական հիմնախնդիրները ՀՀ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում

Սևան Ասադուրյան

Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման 4–րդ կուրսի ուսանող

Մարդկային ռեսուրսների կառավարումը կարևոր գործառություն է, որը ձևավորվել է ժամանակի ընթացքում բազմաթիվ գործոնների ազդեցության ներքո, և համարվում է ինքնուրույն համակարգ:

Թեյլորը իր «Աշխատանքի գիտական կազմակերպման» մոտեցմամբ[1] մեծ ազդեցություն է թողել կազմակերպության կառավարման վրա ընդհանրապես և մարդկային ռեսուրսների կառավարման վրա մասնավորապես: Արհմիությունների հզորացմամբ ստեղծվեցին միանման համակարգեր սոցիալական ապահովվածություն, նվազագույն աշխատավարձի սահմանման, աշխատանքային ժամանակի կրճատման համար:

Մակ Գրեգորը իր գիտական աշխատանքներում մեծ ազդեցություն է թողել մարդկային ռեսուրսների գործնական կառավարման վրա: Նրանցում նա քննադատման է ենթարկել կառավարման գիտական մոտեցումը: Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգում մեծ ներդրում է ունեցել «մարդկային հարաբերությունների» դպրոցը, որը կարևորում էր մարդկային պահանջմունքների կանխագուշակումը և միջանձնային հարաբերությունները:

1991թ–ից ՀՀ–ն գտնվում է անցումային փուլում պլանային տնտեսությունից դեպի շուկայական տնտեսության, և մեր կողմից ընտրված ուղին չարդարացրեց իր վրա դրած հույսերը, այդ քայլերի հետևանքը մեզ բոլորիս հայտնի են՝ տնտեսության անկումը, ազգաբնակչության աղքատացումը,գործազրկության բարձր մակարդակը, որի պատճառն էր տնտեսական կապերի վերացումը: Անցումային փուլի բնութագրող առանձնահատկություններն են՝

- անկայուն կապերը կազմակերպությունների միջև և նրանց գործունեության համակարգման պակասը,
- անկայուն իրավական դաշտը և տնտեսական քաղաքականությունը:

Եթե այս ամենին հավելենք նաև տեղեկատվության և փորձի պակասը տնտեսության համարյա բոլոր ճյուղերում, այս ամենի արդյունքում ֆիրմաներում կառաջանա անորոշության մթնոլորտ, առաջնային նշանակություն կստանա անձնակազմի արդյունավետ կառավարումը: Համակարգի փոփոխության պատճառով կազմակերպությունների առջև կդրվեն նոր նպատակներ, որոնցից հիմնականներն են՝

- վարձու աշխատողների համակարգումը,
- «Ուղեղների արտահոսք»–ի բացառումը,
- աշխատավարձերի ինդեքսավորումը ինֆլյացիայի պայմաններում,
- անձնակազմի համապատասխան որակավորման ապահովումը սուր մրցակցության պայմաններում,

1 Проф.А.Я.Кибанова, Управление персоналом организации. Москва, ИНФРА–М, 2002, с. 12–14.

➢ անձնակազմի մոտ ուժեղացնել կազմակերպության մաս լինելու զգացողությունը:

Ներկայիս պայմաններում սուր մրցակցությանը դիմանալու համար կարևորություն է ստանում մրցունակ անձնակազմի առկայությունը, որը պայմանավորված է որակյալ կադրերի պատրաստման, դրանց որակավորման բարձրացման և քանակի ճշգրտման հետ, սակայն ներկայիս դրությամբ ՀՀ–ի կողմից վարվող քաղաքականությունը մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում չի նպաստում դրան, քանի որ թույլ է կապը մասնագետների պատրաստմամբ զբաղվող հաստատությունների և պահանջվող մասնագետների շուկաների միջև:

Հիմնական խնդիրը, որին բախվում են ՀՀ–ում գործող կազմակերպությունների մեծ մասը, անձնակազմի անարդյունավետ կառավարումն է, որն իր կարևորությունն է ստացել այժմյան պայմաններում, երբ կարևորվում է անձնակազմի վերապատրաստման պլանավորումը, համապատասխան կադրերի նախապատրաստումը, որը թույլ է տալիս արագ արձագանքել շուկայի փոփոխություններին և ուժեղացնել կազմակերպության դիրքերը շուկայում:

Չնայած այս ամենին՝ ՀՀ–ում գործող ֆիրմաների մեծ մասը չի կարևորում անձնակազմի անընդհատ վերապատրաստումները և որակավորման բարձրացումները, մեծ մասամբ կարևորվում է ընթացիկ հիմնախնդիրների լուծումը: Կրթական համակարգը չի ապահովում այն մասնագիտական պահանջները, որ պահանջում է որակավորված աշխատանքի շուկան: Ներկայիս անձնակազմի կառավարման համակարգը չի ապահովում անձնակազմի, մասնագետների և ղեկավար կազմի պահանջվող որակական թարմացումները, վերապատրաստման ծրագրերն ունեն հիմնականում սկզբնական նպատակ, որոնց միջոցով տրվում են պարզագույն գիտելիքները, որը բավարար չէ:

Անհրաժեշտ է վերապատրաստումների ենթարկել մարքեթինգի, կառավարման, մարդկային ռեսուրսների, նորամուծությունների և այլ հիմնական բաժինների բարձրագույն ղեկավարներին, որպեսզի նրանք իրենց հերթին բարձրացնեն իրենց պահանջները անձնակազմի նկատմամբ և տեղյակ լինեն ներկայիս համաշխարհային գիտության միտումներին[2], վերանայման պետք է ենթարկվի նաև ղեկավար անձնակազմի տարիքային կազմը, քանի որ կազմակերպությունների մեծ մասի ղեկավար կազմերն ունեն միջինից բարձր տարիքային կազմ, որի պատճառով էլ դժվարանում է նորարարությունների կիրառումը կազմակերպություններում:

Վերջին մի քանի տարվա ընթացքում կարևորություն է ստացել գործազրկության բարձր մակարդակը, որը գնալով աճում է ոչ միայն ՀՀ–ում, այլ նաև այլ երկրներում :

Գործազրկության աճի ամենակարևոր գործոններից մեկը հասարակության եկամուտների բաշխվածության ծայրահեղության աճն է, այն հատվածը, որը ստանում է բարձր եկամուտ, իր փոքր թվի պատճառով չի կարողանում ապահովել տեղական արտադրանքի բարձր պահանջարկ, որի պատճառով էլ տեղի է ունենում տեղական արտադրողների՝ շուկայից դուրս գալը:

2 http://financepro.ru/management/(մուտք 26.01.2012)

Կազմակերպության համար ամենասուր խնդիրներից են՝[3]

- որակյալ կադրերի արտահոսքը,
- ցածր կատարողականությունը և բավարարվածության ցածր մակարդակը,
- կառավարող անձնակազմի ցածր որակավորումը,
- անձնակազմի և ադմինիստրացիայի միջև հակասությունները,
- մոտիվացիայի ցածր մակարդակը:

Կազմակերպություններում բացակայում է անձնակազմի կառավարման ընդհանուր կառուցվածքը: Կազմակերպությունների մեծ մասում մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պարտականությունները ցրված են տարբեր բաժինների միջև, որի պատճառով էլ առաջանում է կատարվող գործողությունների և պարտականությունների կրկնություն, որն էլ թույլ չի տալիս արդյունավետ իրականացնել անձնակազմի կառավարումը:

Ղեկավարի կողմից անձնակազմի կառավարման ձևի փոփոխման դեպքում կարող է հակասություն առաջանալ անձնակազմի հետ, որը կապված է կազմակերպության ներքին միջավայրի հետ, նրանց պահպանողական մտածելակերպի հետ: Այսպիսի հակասությունները կարող են շատ ծանր լինել և քայքայիչ իրենց արդյունքներով:

Ըստ Կ. Դևիսի՝ առանձնացնում են երեք խումբ պատճառներ, որոնք արգելակում են նորամուծությունների մուտքը կազմակերպություն՝

- հիմնական պատճառը անձնական բնութագրիչներն են, այսինքն՝ անձը վախենում է կորցնել իր անհատականությունը և դիրքը կազմակերպությունում,
- սոցիալ–հոգեբանական գործոնները, այսինքն՝ անձը վախենում է նրանից, որ ոտնձգության կենթարկվի իր հոգեբանական հարմարավետությունը,
- տնտեսական կորուստների հավանականությունը, այսինքն՝ անձը վախենում է կորցնել իր վարձատրությունը:

Աշխատանքի արդյունավետության բարձրացումն ունի իր առանձնահատկությունները տարբեր կառավարման խմբերի համար:

Կառավարման ոլորտում ծագող խնդիրները, ըստ կառավարման մակարդակների, դասակարգվում են՝[4]

- վերին մակարդակում ծագող խնդիրները կապված են ղեկավարների ավտորիտար կառավարման ոճի հետ, նրանք ձգտում են արագ փակել այն բաց տարածքները անձնակազմի կազմում, որ առաջանում են: Ղեկավարները խառնաշփոթներից խուսափելու համար պետք է իրականացնեն տարեկան պլանավորում, որից հետո պետք է կատարել պարտականությունների հստակ բաժանում, բարձրագույն ղեկավարության մեջ են մտնում գործադիր տնօրենը, գլխավոր տնօրենը, բաժնետերերի խորհուրդը, կադրերի բաժնի պետը, և բոլոր հիմնական բաժինների պետերը, բարձրագույն մակարդակում անձնակազմի նկատմամբ պահանջարկի սահմանման հետ մեկտեղ պետք է սահմանել նաև ֆինանսական ծախսերը, որոնք նախատեսվում են անձնակազ-

3 Ньюстром Дж.В., Дэвис К., Организационное поведение, Издательство Питер–Юг: 2000, с. 320–370.

4 Н.А.Чижов, Управление персоналом N7, 2001г.16.08.2001.

մի հավաքագրման, սոցիալական ապահովվածության, վերապատրաստման և որակավորման բարձրացմանը: Բարձրագույն ղեկավարման համար ևս մի խնդիր է համարվում արդյունավետ կադրային քաղաքականության գնահատումը: Դրա իրականացման համար պետք է սահմանել այն չափորոշիչները, որոնցով պետք է իրականացնել գնահատումը, թե ինչ ժամանակահատվածի համար է կատարվում այդ գնահատումը, և վերջապես ինչպես է ազդում մարդկային ռեսուրսների համակարգի գործունեությունը ընդհանուր ֆիրմայի գործունեության վրա:

➢ մարդկային ռեսուրսների կառավարման ծառայության խնդիրներ, մարդկային ռեսուրսների կառավարման ծառայության մեջ են մտնում առանձին կադրերի բաժինը, ուսուցողական բաժինը, գնահատման և ընտրության բաժինը, սոցիալական ապահովվածության բաժինը և այլ մասնագիտական բաժինները, հիմնական խնդիրը, որ առաջանում է, դա մարդկային ռեսուրսների կառավարման ծառայության մեջ ներքին փոխհարաբերությունների համակարգի թերզարգացվածությունն է, որի պատճառով տարբեր բաժիններ իրար աջակցելու փոխարեն իրար վնասում են: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել բաժինների միջև կապերի հստակեցում, որի հաշվին էլ ավելի կպարզվի նրանց գործունեությունը:

➢ ստորաբաժանումների ղեկավարների խնդիրներ, այս մակարդակում խնդիրները շատ ավելի պարզ են և առաջանում են ամենօրյա գործունեության ընթացքում, այս խնդիրները հիմնականում կապված են ղեկավար կազմի կողմից այդ խնդիրները ինքնուրույն լուծելու հնարավորության բացակայությունից:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ղեկավարներին կցել հատուկ աշխատողներ, որոնք կզբաղվեն այդպիսի մանրուքների լուծմամբ, չեն ծանրաբեռնի ղեկավար կազմին, պետք է ստեղծել արտադրամասերի համար լիազորված անձինք, որոնք կհետազոտեն արտադրամասում առկա հարցերը և դրանց մասին կզեկուցեն արտադրամասերի ղեկավարներին հետագա գործունեության համար:

Theoretical and practical problems in human resource management in Republic of Armenia

Summary

This article discusses the problems that exist in RA in the sphere of human resource management. In contemporary economic relations, management of the human resources gets great importance. But in RA–s present conditions are not supported by the simplest rules that are important for the effective management of the human resources and the employers do not understand that it can provide a great amount of profit. The middle high age and RA nowadays social–economic situation plays a great role in the personnel management.

During the last few years, thanks to foreign investors, there have been observed positive movements which are not enough for changing situation nowadays.

Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման (կարիերայի) ուղղորդման համակարգի ներդրում. Հիմնախնդիրներ և տեսլական

Հայկուհի Գևորգյան

«Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, գնսորեն

Հիմնախնդիրներ

Խորհրդային ժամանակաշրջանում աշխատաշուկան կենտրոնացված էր և խիստ կառավարելի: Պետությունը լինելով խոշոր և միակ գործատուն՝ մասնագետների նկատմամբ ինքն էր սահմանում և ներկայացնում պահանջներ, իջեցնում պատվեր աշխատատեղերի համար: Սա նշանակում է, որ մասնագիտական կրթությունը բավարարում էր գործատուի պահանջներին, և հետևաբար արդյունքում ճիշտ օգտագործվում և վերահսկվում էին մարդկային աշխատանքային ռեսուրսները:

Ազատ շուկայական հարաբերությունների անցմամբ պայմանավորված՝ սկզբունքորեն փոխվել են աշխատանքի բովանդակությունն ու նպատակները: Ժամանակակից տնտեսական և քաղաքական իրավիճակը պարտադրում է առավել ճկուն և բարձր պահանջներ: Տնտեսության մեջ կատարվող կառուցվածքային փոփոխությունների և անվերջ նորացող տեխնոլոգիաների ներդրման պայմաններում որոշ մասնագիտություններ դառնում են ոչ կիրառելի, առաջանում է նոր մասնագիտությունների պահանջարկ:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը ևս անմասն չմնաց տնտեսական բարեփոխումներից, ինչի արդյունքում արձանագրվեց աշխատանքի շուկայի անհավասարակշռություն. ներկայումս աշխատաշուկայում մի կողմից՝ կան բազում թափուր աշխատատեղեր, մյուս կողմից էլ այդ աշխատատեղերը չեն համալրվում՝ համապատասխան մասնագետների բացակայության պատճառով:

Տնտեսական զարգացումներին համընթաց լիարժեք չի արձագանքում մասնագիտական ուսումնական համակարգը, ինչի արդյունքում երիտասարդները ծախսում են միջոցներ, ստանում մասնագիտություն, որակավորում, բայց, ի վերջո, կա՛մ չեն գտնում իրենց մասնագիտությամբ զբաղմունք, կա՛մ աշխատում են այլ մասնագիտությամբ:

* * *

Յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում, ի թիվս այլ կարևոր որոշումների, կատարում է նաև մասնագիտության ընտրություն: Դեռ մանուկ հասակում՝ ավանդական ատամհատիկի արարողության ժամանակ, ծնողներն ու հարազատներն անհամբեր սպասում են, թե շրջապատող առարկաներից երեխան ինչ ընտրություն կկատարի՝ դրանով էլ պայմանավորելով նրա ապագա մասնագիտությունը կամ զբաղմունքը: Կամ շատ հաճախ ծնողներն իրենց անկատար երազանքների

իրականացումը տեսնում են երեխաների մեջ՝ նրանց նախապես թելադրելով այս կամ ընտրությունը: Իրականում ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ: Մասնագիտության գիտակցված ընտրությունը, այն է՝ մասնագիտական կողմնորոշումը, երկարատև գործընթաց է, որը ենթադրում է մի կողմից՝ անձի, մյուս կողմից՝ աշխատաշուկայի վերլուծությունների համադրման արդյունքը:

Այս բնագավառում առկա միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրի լուծման գործում մեծ նշանակություն ունեն պետական քաղաքականությամբ մշակված սկզբունքները, որոնք անմիջականորեն նպաստում են ոլորտը կարգավորող մեխանիզմների բնականոն աշխատանքին:

Մասնագիտական կողմնորոշման հարցերը հասարակական հետաքրքրություն են դարձել միայն 19–րդ դարի վերջերից: Այն խնդիրը, որ իր ունակություններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրած անհատը ավելի մեծ օգուտ է բերում իրեն և հասարակությանը, հիմք է դարձել մասնագիտության ընտրության գիտական հիմնավորման անհրաժեշտության համար: Մի կողմից՝ սա աշխատաշուկայի, զբաղմունքների և մասնագիտությունների ուսումնասիրությունն է, մյուս կողմից՝ երիտասարդների անհատականության, նրանց ցանկությունների, հակումների և ընդունակությունների ուսումնասիրման մեթոդների ստեղծումն ու կիրառումը:

Անցյալ դարի 50–60–ական թվականներից Արևմուտքի մի շարք երկրներում ներդրվեց աշակերտներին մասնագիտության ընտրությանը նախապատրաստելու առավել առաջավոր համակարգ, որում ներգրավված են դպրոցը, մասնագիտական ուսումնական հաստատությունները և մասնագիտական կողմնորոշման կենտրոնները: Դպրոցի մանկավարժները մասնագիտացված կենտրոնների մասնագետների ղեկավարությամբ անցկացնում են աշակերտների մասնագիտական կողմնորոշում, կազմում են յուրաքանչյուրի դիտարկումների վրա հիմնված բնութագրեր և ուղղորդում են համապատասխան խորհրդատվությամբ:

Զարգացման ինչ–որ փուլում քննարկվող խնդիրը աշակերտների հետաքրքրության շրջանակից դուրս է գալիս ավելի լայն ասպարեզ՝ ծառայելով տարիքային և սոցիալական տարբեր խմբերի՝ դառնալով անդրագոգների՝ մեծահասակների կրթության մասնագետների գործունեության խնդիր: Տարբեր երկրներում գործում են մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական խորհրդատվության տարբեր համակարգեր: Այդ նպատակով ստեղծված կենտրոններն անընդհատ տվյալներ են հավաքում մասնագիտությունների սոցիալական, հոգեբանական, մանկավարժական և առողջապահական վերլուծությունների վերաբերյալ, ստեղծվում են այդ տեղեկատվությունը տարածելու համար ռեսուրսներ:

Գլոբալացման և սոցիալ–տնտեսական գործընթացների արագ զարգացման հետևանքով փոփոխված կյանքում ցկյանս աշխատատեղերին փոխարինելու են եկել աշխատանքի առավել դինամիկ ձևերը, և մարդիկ հարկադրված են ավելի գործուն մասնակցություն ունենալ իրենց կարիերայի կերտման և զարգացման գործում: Ներկա դարաշրջանում փոխվել են նաև աշխատանքային գործունեությանը վերաբերող հասկացությունների իմաստները: Ինչպես, օրինակ՝ «կարիերա» այլևս չի նշանակում որոշակի ուղիներ աշխատանքի ոլորտում կամ դեպի որևէ մասնագիտություն:

Անցյալում կարիերայի վերաբերյալ որոշումներ կայացնելը շատերի կողմից համարվում էր մի պարզ գործողություն: Հարկավոր էր սեփական անձի և հավանական աշխատատեղի մասին հավաքել և համադրել տեղեկություններ՝ ընտրություն կատարելու համար, հաճախ՝ մեկընդմիշտ: Մեր օրերում անհատները պետք է ցուցաբերեն այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ հարմարվողականությունը, ճկունությունը, նախաձեռնողականությունը և համատեղ աշխատելու կարողությունը՝ աշխատանքի տեղավորվելու և հաջողության հասնելու, ինչպես նաև սեփական գործ ստեղծելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում համակարգի նկարագիրը

Այսօր Հայաստանի Հանրապետությունում ակնհայտ է աշխատաշուկայի և մասնագիտական կրթության միջև անհավասարակշռությունը, քանի որ տնտեսության զարգացումները դեռ լիարժեք արտացոլում չեն գտել մասնագիտական կրթության համակարգի վրա: Մյուս կողմից՝ հանրակրթությունն աշակերտների համար չի ապահովում մասնագիտության գիտակցված ընտրության հնարավորություններ: Դեռահասներն ընտրում են մասնագիտություն՝ անկախ իրենց նախասիրություններից և աշխատաշուկայի պահանջարկից, հաճախ էլ՝ բավարարելով ծնողների «երազանքը»:

Շուկայական տնտեսության պայմաններում հայաստանցի գործատուն առավելապես միտված է երիտասարդ կադրի մեջ տեսնելու իրեն և գործին հավատարիմ, պատասխանատվության զգացում ունեցող և սովորել ցանկացող մարդու[1]: Թեև մասնագիտական կարողություններն ու ունակությունները ևս կարևոր են, սակայն, ինչպես հետազոտություններն են փաստում, դրանք հաճախ գործատուն պատրաստ է ինքը ձևավորել: Եթե դիտարկենք այն սկզբունքը, որ մասնագիտական կողմնորոշման խորհրդատվությունը բխում է մարդու անձնային առանձնահատկությունների և աշխատաշուկայի պահանջարկի համադրման արդյունքում միայն, ապա անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել երիտասարդների և դպրոցականների շրջանում մասնագիտական կողմնորոշման նպատակաուղղված աշխատանքների անցկացմանը:

Հայաստանում աշակերտների կողմնորոշվածության, մասնագիտությունների և զբաղմունքների աշխարհի մասին տեղեկացվածության և ընդհանրապես հանրակրթությունում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ հնարավորինս տարվող աշխատանքների և դրանց արդյունքների մասին մինչ օրս լիարժեք ուսումնասիրություն չի կատարվել: Միայն վերջերս Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան կազմակերպության կողմից «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի ծրագրի շրջանակներում կատարվել էր «Բարձր դասարանների աշակերտների կողմնորոշումը դեպի բարձրագույն կրթություն. շարժառիթների և արժեքների ուսումնասիրություն Երևանի օրինակով» հետազոտությունը, որում արտացոլված տվյալները փաստում են խնդրի կարևորության մասին: Մասնավորապես, նշվում է, որ Երևանի դպրոցների 10–11 դասարանների աշակերտների շրջանում այսօր թե՛ ուսուցիչների և թե՛ այլ իրավասու մարմինների կողմից չեն իրականացվում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ՝ 66,1%:

1 «Ամերիա» ՓԲԸ, ՀՀ աշխատաշուկայի ուսումնասիրություն (Ամերիա–ՀՀԱՈՒ) 2010, էջ 28:

Ներկայումս ՀՀ օրենսդրության շրջանակներում մասնագիտական կողմնորոշման խնդիրները հիշատակված են միայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» և «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում: Վերջինիս համաձայն՝ մասնագիտական կողմնորոշման գործառույթը միայն մասամբ իրականացվում է զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից՝ սահմանափակվելով հիմնականում աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով:

Հանրակրթության ոլորտում իրականացվող շարունակական և լայնածավալ բարեփոխումները թեև միտված են «ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը» (ՀՀ կրթության զարգացման 2011–2015 թթ. պետական ծրագիր), բայց այդ ուղղությամբ դեռևս չկան համապատասխան ընթացակարգեր:

Այսօր հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններով ու ծրագրերով նախատեսված չեն դասընթացներ, որոնք աշակերտներին կամ ուսանողներին կուղղորդեն դեպի աշխատաշուկա, նրանց կօժտեն կարիերայում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ կարողություններով:

Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների նկարագիրը

Ինչ է մասնագիտական կողմնորոշումը. «Ինչ մասնագիտություն ընտրել» հարցադրումն անխուսափելի է, որի պատասխանը փնտրում է յուրաքանչյուր մարդ իր տարիքային կամ սոցիալական զարգացման ինչ–որ մի փուլում: Հարցի լուծումը շատ կարևոր է ոչ միայն իր՝ անձի, այլև, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Երիտասարդին մասնագիտական ինքնագիտակցության հարցում օգնության է գալիս մասնագիտական կողմնորոշումը: Մասնագիտական կողմնորոշումը մանկավարժական աշխատանքի բնականոն շարունակությունն է, և ինչ–որ իմաստով համարվում է դրա տրամաբանական ավարտը: Մասնագիտության ընտրության հարցում աշակերտին խորհրդատվության տրամադրումը նպատակ ունի ոչ միայն օգնել նրան կազմակերպելու իր ուսուցման գործընթացը (երբ նա դպրոցում գիտակցված ուսումնասիրում է այնպիսի առարկաներ, որոնք կարող են նրան օգտակար լինել արդեն հասուն տարիքում, աշխատանքային միջավայրում), այլ նաև հոգեբանական տեսանկյունից վստահություն հաղորդելու աշակերտին իր ապագայի նկատմամբ:

Մասնագիտական կողմնորոշման գլխավոր նպատակն է անհատին օժտել կարիերայի զարգացման ընդհանուր կարողություններով, որը ներառում է նրա շարունակական զարգացումը՝ որպես ուսանողի (կամ ավելի լայն իմաստով՝ ուսումնառողի), աշխատողի և քաղաքացու:

Մասնագիտական կողմնորոշումը ենթադրում է մանկավարժության և հոգեբանության շրջանակներից դուրս, առավել ընդգրկուն համալիր աշխատանքներ՝ ուղղված մասնագիտության ընտրությանը: Պլատոնը դեռ իր դարաշրջանում գրել

է. «Ամեն առանձին անհատ պետք է զբաղվի այնպիսի մի բանով, ինչը պետք է պետությանը, և միևնույն ժամանակ նրանով, ինչին նա իր ամբողջ էությամբ ամենաշատն է համապատասխանում»: Այսպիսով՝ մոտ 2,5 հազարամյակ առաջ Պլատոնը նախանշել է այն, որ աշխատանքի և հասարակության զարգացման գործում անխուսափելի է անհատի գործունեության դերերի տարանջատումը:

Հիմնական հասկացությունների սահմանումները

Մասնագիտական կողմնորոշումը գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների, մասնագիտությունների, անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ նրան հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում:

Կարիերան կյանքի ընթացքում մարդու ստանձնած աշխատանքային դերերի հաջորդականությունն ու բազմազանությունն է: Առավել լայն իմաստով այն ընդգրկում է կյանքի դերերը, ազատ ժամանցի գործունեությունը, ուսումնառությունը և աշխատանքը:

Կարիերայի ուղղորդումը համակարգված գործառույթ է, որի նպատակն է ուղղորդման սուբյեկտին օգնել շարունակական ինքնազարգացման և ինքնակատարելագործման միջոցով բարձրացնել մրցունակությունը աշխատաշուկայում և ունենալ համակարգված շարունակական առաջընթաց ողջ աշխատանքային գործունեության ընթացքում:

Մասնագիտական ինքնորոշման էությունը կայանում է ընտրված մասնագիտության, զբաղմունքի, աշխատանքի շրջանակներում անձնական հետաքրքրության և իմաստի, փնտրման և այն գտնելու մեջ:

Մասնագիտական ինքնագիտակցությունը մարդու ինքնագիտակցությունն է, որի համար որոշակի աշխատանքային գործունեությունը հանդիսանում է միջոց՝ որպես կայացած անձ սեփական արժանապատվությունը հաստատելու համար:

Մասնագիտությունը (լատ.՝ նշանակում է «հայտարարում եմ իմ գործը») մարդու աշխատանքային գործունեության տեսակ է, որը պահանջում է որոշակի պատրաստվածություն և հանդիսանում է մարդու գոյատևման աղբյուր: Մասնագիտությունները տարանջատվում են կատարվող աշխատանքների բնույթով և պարունակությամբ, ինչպես նաև՝ աշխատանքային գործիքների կիրառմամբ:

Մասնագիտացումը (լատ.՝ հատուկ, յուրահատուկ) հատուկ պատրաստվածության և աշխատանքային փորձի վրա հիմնված գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ է, որն անհրաժեշտ է կոնկրետ գործունեության տեսակի համար այս կամ այն մասնագիտության շրջանակներում: Այսպիսով՝ մասնագիտացումը աշխատանքային գործունեության տարանջատումն է մասնագիտության շրջանակներում:

Զբաղմունքը աշխատանք է, որով անձն զբաղվում է տվյալ պահին, և որը նրա համար հանդիսանում է եկամուտի հիմնական աղբյուր: Ի դեպ, զբաղմունքը կարող է համընկնել մասնագիտության հետ:

* * *

Տարբեր տեսաբաններ տարբեր կերպ են բնութագրում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների շրջանակն ու իրականացման մեթոդները: Սակայն պետք է փաստել, որ սկզբունքները միասնական են: Ուստի կիրառել այս կամ այն տեսությունը, պահպանել ծառայությունների մատուցման մեթոդների հստակ հաջորդականությունը, պարտադիր պայման չէ: Մասնագիտական կողմնորոշման իրականացման սկզբունքները պայմանավորված են անձի կարիքներով: Այդ կարիքներից է բխում մասնագիտական կողմնորոշման իրականացման կոնկրետ մեթոդի կիրառումը: Նշենք, որ ամեն մեթոդ ունի աշխատանքի իր սկզբունքները: Ստորև ներկայացվում են հիմնական մեթոդները.

1. Մասնագիտական իրազեկում. այն ներառում է մասնագիտությունների և զբաղմունքների աշխարհի, աշխատաշուկայի, կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունների և պայմանների մասին տեղեկատվության տարածումը:

2. Մասնագիտական հետազոտումը մասնագիտական կողմնորոշման ծառայություններ մատուցելու նպատակով անձի ուսումնասիրումն է: Այս գործընթացում հետազոտվում են անձի բնավորության առանձնահատկությունները, կարիքները, արժեքային կողմնորոշիչները, հետաքրքրությունները, ընդունակությունները, մասնագիտական նախնական ուղղորդվածությունը:

3. Մասնագիտական խորհրդատվությունը նպատակ ունի բացահայտել անձի անհատական առանձնահատկությունների և այս կամ այն զբաղմունքի, մասնագիտության պահանջների համապատասխանությունը: Խորհրդատվությունը կարող է անցկացվել խմբային կամ անհատական ձևով, եթե նախապատրաստական կամ հիմնական փուլերն են, սակայն ավարտական փուլում այն պետք է լինի անհատական զրույցի ձևով, հնարավոր է՝ ծնող(ներ)ի մասնակցությամբ: Մասնագիտական խորհրդատվությունը կարող է ունենալ տեղեկատվական և հոգեբանամանկավարժական բնույթ: Արդյունքում դպրոցականը պետք է սպառիչ պատասխաններ ստանա իրեն հետաքրքրող մասնագիտության, այդ մասնագիտությամբ կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունների վերաբերյալ[2]: Որպես այս մեթոդի արդյունավետության ապահովում՝ կարիք կլինի աշխատանքը շարունակել այլ մեթոդներով՝ այցելություններ տարբեր աշխատատեղեր, հանդիպումներ տարբեր մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսների հետ, մասնակցություն մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպած միջոցառումների, հանդիպումների և այլն: Այս փուլում, արդեն ընդհանրացնելով մասնագիտական նախնական ախտորոշման և տեղեկատվության արդյունքների հիման վրա ստեղծված պատկերացումները, ամեն մի կոնկրետ անձի պետք է տրվի մասնագիտական խորհրդատվական եզրակացություն[3]:

---

2 Н. С. Пряжников, Профориентация в школе и колледже – игры, упражнения, опросники. 8–11 классы, ПТУ и колледж. Москва, ВАКО, 2008.

3 Н. С. Пряжников, Профориентация в школе и колледже – игры, упражнения, опросники. 8–11 классы, ПТУ и колледж. Москва, ВАКО, 2008.

4. Մասնագիտական ընտրություն մեթոդի նպատակն է բացահայտել մարդու հարմարվողականությունը կոնկրետ աշխատանքին, զբաղմունքին: Այս աշխատանքները, որպես կանոն, իրականացվում են դպրոցից դուրս՝ հատուկ լաբորատորիաներում կամ գործատուի մոտ՝ ձեռնարկություններում, որտեղ, ըստ մասնագիտությունների, ստեղծված են հատուկ հարմարություններ:

Պետք է տարբերակել մասնագիտության ընտրությունը մասնագիտությունների ընտրությունից[4]: Թվում է, թե նույնական են, սակայն մեթոդիկայով դրանք իրարից շատ են տարբերվում. մասնագիտության ընտրության դեպքում ընտրում են տվյալ մասնագիտությանն առավել համապատասխանող անձին, իսկ մասնագիտությունների ընտրության ժամանակ խոսքը գնում է անհատի անձնային առանձնահատկություններին համապատասխան մասնագիտության ընտրության մասին, այսինքն՝ մեթոդը ենթադրում է անձից անցում դեպի մասնագիտությանը:

5. Սոցիալ–մասնագիտական հարմարեցման փուլում ակտիվ գործընթացների միջոցով իրականացվում է երիտասարդի հարմարեցում նոր սոցիալական միջավայրին, աշխատանքի պայմաններին և կոնկրետ մասնագիտությանը: Մասնագիտական հարմարեցման փուլի հաջողությունը մասնագիտության ճիշտ ընտրության, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշներից մեկն է:

6. Մասնագիտական դաստիարակության նպատակն է մարդկանց մոտ ձևավորել պատասխանատվության, պարտավորվածության զգացում, ինքնուրույն որոշում կայացնելու, ընտրություն անելու կարողություններ:

Մինչ կանդրադառնանք «մասնագիտական ինքնորոշում» հասկացությանը՝ որպես մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունքի, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ կապ կա մասնագիտական ինքնորոշման հիմնական բաղադրիչների միջև: Այս թեման համարվում է բազմաթիվ հետազոտությունների առանձին առարկա:

Մի շարք հետազոտողների կարծիքով՝ մասնագիտական ինքնորոշման հիմնական բաղադրիչներից մեկը մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում անձի հետաքրքրությունների զարգացումն է[5]: Մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը անձի մասնագիտական ինքնորոշման գործընթացում զբաղեցնում է առաջնային տեղը: Հետաքրքրության բացահայտման համար գոյություն ունեն հոգեբանական–մանկավարժական բազմաթիվ մեթոդներ:

Անձի հետագա արժեքային կողմնորոշման համար կարիքներն ու հետաքրքրությունները համարվում են հիմնական պայմանները: Պլանավորելով իր ապագան և նախանշելով կոնկրետ միջոցառումներ՝ նպատակներ և գործողություններ մարդն առաջին հերթին ելնում է իր գիտակցության մեջ արմատավորված, որոշակիորեն դասակարգված արժեքներից: Սոցիալական արժեքների լայն հատվածում կողմնորոշվելով՝ անհատն ընտրում է այն, ինչն առավել մոտ է իր կարիքներին:

Արժեքներն իրենց հերթին առաջադրում են դրդապատճառները: Արժեքները,

4 О. И. Кононогова, Профессиональное самоопределение учащихся в учереждениях дополнительного образования, “Педагогика”, 2007.

5 О. И. Кононогова, Профессиональное самоопределение учащихся в учереждениях дополнительного образования, “Педагогика”, 2007.

անցնելով անհատական կենսակերպի միջով, մտնում են անհատի հոգեկան աշխարհը՝ դառնալով անհատական արժեքներ, որոնք համարվում են գործունեության մոտիվացիայի աղբյուրներից մեկը[6]: Մասնագիտության ընտրության դրդապատճառների բացահայտումը հնարավորություն է տալիս պարզել, թե ինչն է հատկապես դրդել անձին ընտրելու տվյալ զբաղմունքը: Սա հնարավորություն է տալիս բացահայտել անձի վերաբերմունքն արժեքներին:

Դրդապատճառը հանգեցնում է գործողության, իսկ նպատակն ուղղորդում է այն:

Այսպիսով՝ կատարվում է սեփական կարիքների գիտակցում, դասակարգվում է դրանց հաջորդականությունը, առանձնացվում են նախընտրությունները, առաջ են գալիս հետաքրքրությունները, որոնք իրենց զարգացման ընթացքում կարող են վերածվել հակումների, ձևավորվում են արժեքները, ձևակերպվում են դրդապատճառները, հստակեցվում են նպատակները, ուսումնասիրվում են անձի այն հնարավորությունները, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել նպատակին հասնելու համար: Այս ամենից հետո արդեն որոշում է կայացվում անցնելու կոնկրետ գործողությունների, այսինքն՝ տեղի է ունենում **ինքնորոշում:**

Մասնագիտական կողմնորոշումը պետք է անմիջականորեն կապված լինի իր արժեքային կողմնորոշիչների հետ, որոնցում հավասարապես ներառվում են և՛ անհատական, և՛ հասարակական արժեքները: Յուրաքանչյուր անհատ ձգտում է ընդօրինակել այն արժեքները, որոնք առավելապես համապատասխանում են իր նպատակներին և հետաքրքրություններին: Հարաբերականորեն մարդու մասնագիտական գործունեությանը վերագրում են հետևյալ արժեքները՝[7]

- ✓ ինքնահաստատում հասարակությունում, սոցիալական շրջապատում,
- ✓ հեղինակություն աշխատավայրում,
- ✓ ծանոթների, ընկերների կողմից ճանաչելիություն,
- ✓ ինքնադրսևորում և ինքնակատարելագործում – հետաքրքիր աշխատանք,
- ✓ իմացության, կարողության և ունակության կիրառում,
- ✓ աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցում,
- ✓ լավ վարձատրություն. նյութական և պրակտիկ արժեքներ,
- ✓ պաշտոն, կարիերայի առաջխաղացման հնարավորություն, անձի բավարարվածություն:

Այսպիսով՝ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կարևոր նախապայման է անձի վերլուծությունը, ըստ որի՝ խորհրդատու–մասնագետը պետք է կազմի անձի բնութագիրը: Սա հնարավորություն է տալիս առավել հասցեական և նպատակային խորհրդատվություն տրամադրելու:

Նպատակահարմար է մասնագիտական կողմնորոշման աշխատանքի անհատական և խմբային ձևերի կիրառումը՝ հաշվի առնելով տարիքային խմբերը: Օրինակ՝ դպրոցականների համար տարանջատել տարրական, հիմնական և ավագ դպրոցի աշակերտներին, իսկ շրջանավարտներին և ուսանողներին պետք է դի-

6 О. И. Кононогова, Профессиональное самоопределение учащихся в учереждениях дополнительного образования, “Педагогика”, 2007.

7 О. И. Кононогова, Профессиональное самоопределение учащихся в учереждениях дополнительного образования, “Педагогика”, 2007.

տարկել որպես առանձին խումբ: Կամ խմբավորել նրանց ըստ կարիքի, որն է՝ մասնագիտության ընտրության նպատակով խորհրդատվության, մասնագիտական կարողությունները զարգացնելու կարիք ունեցող կամ աշխատանք փնտրող երիտասարդներ և այլն:

Անհրաժեշտության դեպքում օգտակար է կիրառել դիտարկման, թեստավորման, հարցազրույցի և/կամ զրույցի մեթոդները:

Օրինակ՝ դիտարկման ժամանակ խորհրդատուն աշակերտի կամ ուսանողի մասին իր ամփոփիչ նկարագիրը կազմելու համար պետք է կարծիքներ հավաքի նաև դասավանդողներից, ընկերներից՝ անձին դիտարկելով իրեն շրջապատող միջավայրում: Դիտարկման արդյունքները պետք է համադրվեն խորհրդատուի կազմած նկարագրի հետ: Թեստավորումը ենթադրում է անձի մասնագիտական նախընտրությունների և անձնային որակների չմիջնորդավորված բացահայտում: Այս մեթոդի կիրառման համար մշակվում և գործում են թեստային առանձին համակարգեր: Զրույցը պետք է ունենա թեմատիկ ուղղվածություն, կարող է անցկացվել աշակերտների, ուսուցիչների, դասղեկների, դպրոցների տնօրենների, ինչպես նաև ծնողների հետ: Զրույցով կարող են հանդես գալ ամենատարբեր ոլորտների մասնագետներ, ուսուցիչներ, ծնողներ: Զրույցի թեմաները մասնագիտություններն են, նրանց առանձնահատկությունները, մասնագիտական հմտությունների, կարողությունների ձեռքբերման յուրահատկությունները: Կենդանի շփումն այս պարագաներում ավելի հուսալի արդյունք կարող է տալ, քան թեստավորումը:

Շարունակական աշխատանքներ ենթադրող ծառայությունների դեպքում անձի հետ անցկացված յուրաքանչյուր հանդիպման արդյունքը գրանցվում և պահվում է նրա անձնական գործում:

Դպրոցականների մասնագիտական կողմնորոշման համար իրական հիմք պետք է ծառայեն դպրոցական բազմամասնագիտական կրթությունն ու դաստիարակությունը[8]:

Դպրոցական երեխաների համար յուրաքանչյուր տարիքային խմբում մասնագիտական կողմնորոշման նպատակները տարբեր են՝

- տարրական դպրոցում՝ 1–4–րդ դասարաններ – մասնագիտությունների աշխարհի մասին պատկերացումների ձևավորում, մարդու կյանքում աշխատանքի դերերի մասին պատկերացում՝ տարբեր տեսակի գործողությունների ցուցադրման միջոցով,
- հիմնական դպրոցի առաջին փուլ՝ 5–7–րդ դասարաններ – մասնագիտության ընտրության հետ կապված հետաքրքրությունների և կարողությունների զարգացում,
- հիմնական դպրոցի երկրորդ փուլ՝ 8–9 դասարաններ – մասնագիտական մոտիվացիայի ձևավորում՝ հիմնական կարողություններն ու հակումներն ինքնուրույն վերլուծելու պատրաստվածության միջոցով,
- ավագ դպրոց՝ 10–12–րդ դասարաններ – ինքնորոշման արժեքային և իմաստային կողմերի ձևավորում, աշակերտների մասնագիտական պլանա-

8 Н. С. Пряжников, Профориентация в школе и колледже – игры, упражнения, опросники. 8–11 классы, ПТУ и колледж. Москва, ВАКО, 2008.

վորման և նախընտրությունների պարզում, ընդունակությունների և կարողությունների զարգացում՝ մասնագիտական հոսքերում առանձին առարկաների առավել խորն ուսումնասիրման միջոցով:

Դպրոցական փուլերով չի սահմանափակվում մասնագիտական կողմնորոշման գործընթացը: Այն առավել լայն նկարագիր է ստանում արդեն իր կարիերայի պլանավորման և զարգացման հաջորդ փուլերում՝ քոլեջում, բուհում ուսումնառության շրջանում, մասնագիտություն և որակավորում ստանալուց հետո, աշխատանք փնտրելիս, առաջին աշխատանքը կատարելիս և/կամ մասնագիտությունը փոխելու ճանապարհին[9]: Կարճ ասած՝ սա գործընթաց է ողջ կյանքի ընթացքում:

Մեծահասակների հետ աշխատանքում ավելի շեշտադրվում է անհատի մասնագիտական և քաղաքացիա–հասարակական կարողությունների զարգացումը:

Այսպես, արդեն խոսվել է այն մասին, որ մասնագիտական կողմնորոշման գլխավոր նպատակն է անձին օժտել կարիերայի զարգացման ընդհանուր կարողություններով՝ ի նպաստ նրա շարունակական զարգացմանը՝ որպես ուսանողի, աշխատողի և քաղաքացու: Այս ուղղությամբ աշխատանքները ևս կարող են անցկացվել խմբային և անհատական:

Նկատի ունենալով, որ ներկայումս ոչ հանրակրթական, ոչ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններով ու ծրագրերով նախատեսված չեն դասընթացներ, որոնք աշակերտներին կամ ուսանողներին կօժտեին կարիերայում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ կարողություններով՝ ներդրվող համակարգը պետք է ապահովի այդ խնդրի լուծմանն ուղղված գործառույթ, այն է՝ իրականացնի դեռահասների և երիտասարդների հետ շարունակական աշխատանք, որի արդյունքում նրանք ձեռք կբերեն հետևյալ կարողությունները՝ ճանաչել և արժևորել սեփական անձը, արդյունավետ հարաբերվել մյուսների հետ, ընտրել ու ձևավորել ուսումնառության համապատասխան պլան, հետազոտել կարիերայի հնարավորությունները[10]:

Ա. Ճանաչել և արժևորել սեփական անձը

1. կարողանալ բացահայտել և արժևորել սեփական ուժեղ կողմերը, արժանիքները (արժեքները), հետաքրքրություններն ու հակումները, ունակությունները, հմտությունները,
2. հասկանալ, թե ինչպես է անհատական բնութագիրը (հատկանիշները) ազդում անձնական, սոցիալական, կրթական և կարիերայի նպատակներին հասնելու վրա,
3. կարողանալ օգտագործել դպրոցում, ուսումնարանում, քոլեջում կամ բուհում և ուսումնական հաստատությունից դուրս ստացած փորձը, գործողությունները և հետաքրքրությունները՝ իր ներուժի մասին ավելի շատ բան իմանալու համար,

---

9 Н. С. Пряжников, Профориентация в школе и колледже – игры, упражнения, опросники. 8–11 классы, ПТУ и колледж. Москва, ВАКО, 2008.

10 «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ, «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման փորձնական կենտրոնի ստեղծման և գործարկման ուղեցույց», 2006 թ.:

4. զարգացնել հմտություններ, որոնք ուղղված են պատանեկությունից հասունության շրջան անցման ընթացքում առաջացող ֆիզիկական և էմոցիոնալ խնդիրների հաղթահարմանը,
5. կարողանալ բացահայտել, նկարագրել և ընդունել սեփական զգացմունքներն ու վերաբերմունքն իր և այլոց նկատմամբ,
6. կարողանալ ներկայացնել (նկարագրել) իր հույսերը, ակնկալիքներն ու մտահոգությունները,
7. հասկանալ, թե ինչպես է միջավայրն ազդում անձի վարքագծի վրա:

Բ. Արդյունավետ հարաբերվել մյուսների հետ

1. ցուցադրել արդյունավետ միջանձնային (մասնավորապես ուրիշների հետ և ուրիշների համար աշխատելիս, և հատկապես՝ գործատու–աշխատող) շփման հմտություններ,
2. սահմանել որակները, որոնք իրենք ակնկալում են այլոց հետ շփվելիս,
3. կարողանալ գնահատել տարբեր վարքագծերի արդյունքները (հետևանքները),
4. կարողանալ պատշաճ ձևով դրսևորել ու մատուցել իր զգացմունքները, վերաբերմունքը և գաղափարները, հասկանալ ուրիշի զգացմունքների և կարիքների նկատմամբ զգայուն լինելու (հարգանքով վերաբերվելու) կարևորությունը,
5. ճանաչել, թե ինչ վարքագիծ են դրսևորում մարդիկ տարբեր խմբերում, և գնահատել այդ վարքը,
6. ցուցադրել և կիրառել խմբում արդյունավետ աշխատելու հմտություններ,
7. հասկանալ, թե ինչպես է հասարակությունը (համայնքը) ներազդում իր անդամների փոխկապակցվածության վրա,
8. կարողանալ շփվել տարբեր մշակույթներին պատկանող, տարբեր կարողությունների, ունակությունների տեր և տարբեր տարիքի մարդկանց հետ,
9. հասկանալ, թե ինչպես են տարբեր տիպի զարգացումներից բխող փոփոխություններն ազդում մտավոր և ֆիզիկական վիճակի վրա, իսկ վերջինս՝ կարիերայի հետ կապված որոշումների ընդունման վրա,
10. կարողանալ հաղթահարել (կառավարել) սթրեսը և ցուցաբերել վարքագիծ, որն ապահովում է ֆիզիկական ու մտավոր առողջություն:

Գ. Ընտրել ու ձևավորել ուսումնառության համապատասխան պլան

1. քաջ ծանոթ լինել ուսման ամեն փուլում իրենց համար մատչելի կրթական տարբերակներին,
2. կարողանալ օգտագործել տարբեր ուսուցողական աղբյուրներ՝ համակարգչային տեղեկատվական համակարգեր, ախտորոշիչ թեստեր և այլն,
3. կարողանալ ճիշտ ընտրել հետագա ուսումնառության հաստատությունը,
4. հասկանալ, թե ինչպես է ուսումնառությունը հարաբերում աշխատանքի ընտրության հետ,
5. կարողանալ դասընթացները ընտրել՝ հիմնվելով առաջարկի, սեփական ուժերի, հետաքրքրությունների, ունակությունների և նվաճումների գիտակցության վրա,

6. իրենց իսկ մասին նոր տեղեկությունների հիման վրա կարողանալ վերանայել կրթություն ստանալու ծրագրերը,
7. ընտրել դասընթացներ, որոնք իրենց առջև կբացեն առավել լայն աշխատանքային հնարավորություններ,
8. օգտագործել անհատական աշխատանքային փորձը, ինչպիսիք են՝ ժամանակավոր աշխատանքը, համատեղ ուսուցումը և կամավորական աշխատանքը՝ իրենց ուսումնական նախագծերի ձևավորմանը նպաստելու նպատակով,
9. իրենց ուսուցման մի աստիճանից մյուսը բարեհաջող անցնելու համար տիրապետել անհրաժեշտ գիտելիքների և վարքագծի,
10. գիտակցել հաջող ուսուցման համար մոտիվացման նշանակությունը,
11. իմանալ, թե ինչ լրացուցիչ և ավանդական միջոցներ են առկա, և ինչպես դրանք օգտագործել,
12. իրենց կրթական աստիճանին համապատասխան ուսանելու հմտություններ զարգացնել,
13. տիրապետել ժամանակի արդյունավետ կառավարման հմտություններին:

Դ. Հետազոտել կարիերայի հնարավորությունները

1. հասկանալ կարիերայի աճի հետ կապված հասկացությունների (օրինակ՝ կարիերա, պաշտոն, աշխատանք, զբաղմունք) իմաստն ու կարևորությունը,
2. գիտակցել իր կյանքի ամեն փուլի պլանավորման կարևորությունը՝ ուսանողական, աշխատանքային և կենսաթոշակային,
3. իմանալ, որ սեփական փորձը և որոշումներն ազդում են կյանքի ընթացքի վրա, և թե ինչպես նրանք կարող են վնասել ապագա կարիերային,
4. տեղյակ լինել, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ սոցիալ–տնտեսական պայմանները և դրանց փոփոխման միտումները կարիերայի պլանավորման վրա,
5. իմանալ, թե ինչպես օգտագործել տարբեր կողմնորոշիչ գործընթացները,
6. կարիերայի նախագծման հարցում ցուցաբերել արդյունավետ կողմնորոշվելու հմտություն,
7. կարողանալ բացահայտել իրատեսական աշխատանքային ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը,
8. կարողանալ բացահայտել և յուրացնել աշխատանքի ընտրություն կատարելու որոնումների համար պահանջվող մատչելի աղբյուրները,
9. կարողանալ օգտագործել սեփական անձի, ուրիշների հետ ունեցած իրենց հարաբերությունների, իրենց հմտությունների, ինչպես նաև իրենց կրթական նախագծերի մասին ձեռք բերած գիտելիքները կարիերայի պլանավորման համար:

Ծնողների դերը. Անհերքելի է ծնողների մասնակցությունը երեխաների մասնագիտության ընտրության գործում, ուստի մասնագիտական կողմնորոշման ծառայություններում առանձին տեղ է հատկացվում ծնողների հետ աշխատանքին: Փորձը ցույց է տալիս, որ բարձր դասարանների աշակերտների մասնագիտական ինքնորոշման հետ կապված խնդիրները հաճախ ծագում են այն դեպքում, երբ անձը որպես ինքնուրույն անհատականություն լիարժեք ձևավորված չէ, ինչի

հիմքում հիմնականում ընտանեկան դաստիարակությունն է: Շատ դեպքերում մեծացող երեխաների հետ հարաբերություններում ծնողները լիարժեք չեն գիտակցում իրենց խնդիրները: Նրանք առավելապես հակված են երեխաների փոխարեն որոշումներ կայացնելու, ինչը լուրջ խոչընդոտ է անհատի ձևավորման գործընթացում և խանգարում է երեխայի մասնագիտական ինքնորոշմանը: Մասնագիտության ընտրության հարցերը և ուսումնառություն ստանալու ուղիներ գտնելը դժվար խնդիր են թե՛ երեխաների և թե՛ նրանց ծնողների համար: Մասնագիտական ինքնորոշման գործընթացը կրճատելուն ուղղված ծնողների հոգեբանական ճնշման փորձերը, որպես կանոն, բացասական արդյունք են տալիս՝ երեխաների մոտ առաջացնելով անհանդուրժողականություն, իսկ երբեմն՝ մերժում ցանկացած ինքնորոշման քայլից:

Մասնագիտության ճիշտ ընտրության մասին ծնողների պատկերացումները հաճախ իրական կյանքից հետ են մնում և ավելի համապատասխանում են արդեն երկրի սոցիալ–տնտեսական զարգացման անցած էտապին: Դրա պատճառը աշխատաշուկայում նոր մասնագիտությունների առաջացումն է, երկրի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման նոր ուղիները: Ոչ միշտ են ծնողները մասնագիտական տեսանկյունից տեսնում և օբյեկտիվ գնահատում երեխաների հետաքրքրություններն ու կարողությունները: Հաճախ նրանց խորհուրդները հիմնված են լինում այս կամ այն մասնագիտության, այսպես կոչված, հեղինակության վրա: Հատկապես ժամանակակից դեռահասների ծնողները, որոնք դեռ խորհրդային մտածողության կրողն են, դժվար կարող են կանխորոշել աշխատաշուկայում պահանջարկվող մասնագիտություններն ու արժեքները: Ուստի անհրաժեշտություն է առաջանում մասնագիտական կողմնորոշման լուրջ աշխատանքներ տանել նաև ծնողների հետ:

Ծնողներին մատուցվող ծառայությունները ևս տարբերակվում են՝ ըստ երեխաների տարիքից և կարգավիճակից: Յուրաքանչյուր տարիքային խմբի համար սահմանվում են առանձին նպատակներ և կանխատեսվող արդյունքներ: Աշխատանքները ներառում են զրույցներ, քննարկումներ, ծանոթացում աշխատաշուկայի կանխատեսվող զարգացումներին, տարբեր մասնագիտությունների նկարագրերին, նաև՝ մասնագիտական կրթության համակարգի, կրթություն և ուսուցում իրականացնող հաստատություններում ուսումնառության հնարավորությունների և պայմանների մասին:

Մասնագիտական կողմնորոշում, թե կարիերայի ուղղորդում. Կարիերայի ուղղորդումը ցկյանս ծառայություն է և չի նշանակում սոսկ ուսումնառության գործընթացին հաջորդող աշխատանք, այլ այս երկուսը փոխկապակցված են: «Բարձր եկամուտ ունեցող երկրներում «կարիերայի ուղղորդում» եզրույթը փոխարինում է «մասնագիտական (vocational) ուղղորդում» եզրույթին. մասնագիտական (vocational) ուղղորդումը միտված է զբաղմունքի ընտրության, և տարբերակվում է կրթական ուղղորդումից, որի ուշադրության կենտրոնում ուսումնական դասընթացների ընտրությունն է: Կարիերայի ուղղորդումը միավորում է այս երկուսը և շեշտում ուսումնառության և աշխատանքի փոխազդեցությունը»: «Կարիերայի ուղղորդում» եզրույթի ամենաընդգրկուն և լայնորեն ընդունված սահմանումը

տրվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից[11]: Սույն փաստաթղթում «կարիերայի ուղղորդում» եզրույթն ընդհանուր առմամբ ներկայացվում է որպես «ծառայություններ և գործունեության տեսակներ, որոնք նախատեսված են օգնելու ցանկացած տարիքի մարդկանց՝ իրենց ողջ կյանքի ընթացքում ցանկացած պահի կատարելու կրթությանը, ուսուցմանը և զբաղմունքին առնչվող որոշումներ և կառավարելու իրենց կարիերան»: Կարիերայի ուղղորդումն օգնում է մարդկանց մտորելու իրենց ձգտումների, հետաքրքրությունների, որակավորումների և ունակությունների մասին: Օգնում է ըմբռնել աշխատաշուկան և կրթական համակարգերը, ինչպես նաև սա կապել այն ամենին, ինչ իրենք գիտեն իրենց մասին: Կարիերայի համակողմանի ուղղորդումը ջանում է մարդկանց սովորեցնել պլանավորել և ընդունել աշխատանքին և ուսումնառությանն առնչվող որոշումներ: Կարիերայի ուղղորդումը աշխատաշուկայի և ուսման հնարավորությունների մասին տեղեկությունները դարձնում է առավել հասանելի՝ դրանք համակարգելով և տրամադրելով՝ ըստ կարիքի[12]:

Այլ կերպ ասած՝ «կարիերայի ուղղորդումը» ընդգրկուն եզրույթ է, որն օգտագործվել է նկարագրելու մի շարք գործողություններ, որոնք օգնում են մարդկանց կյանքի և աշխատանքի ընդհանուր ըմբռնումից անցում կատարելու կյանքի, ուսումնառության և աշխատանքի իրատեսական տարբերակների կոնկրետ ըմբռնման:

Հայաստանում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգ

Ինչպես արդեն խոսվեց, հետխորհրդային Հայաստանում միանշանակ չի գործում մասնագիտական կողմնորոշման ձևավորված և միասնական համակարգ, ինչն իր բացասական ազդեցությունն է ունենում, ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացման վրա: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մասնագիտական կողմնորոշումն ուղղված է աշխատաշուկային անհրաժեշտ որակյալ կադրերի համալրման միջոցով երկրի տնտեսության կայուն զարգացմանը՝ միանշանակ է, որ այս գործընթացում կարևորվում է միասնական քաղաքականությունը և միաժամանակ բոլոր սուբյեկտների ներգրավվածությունը:

Միայն 2007 թվականի հոկտեմբերին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ստեղծվեց «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի առաքելությունն է մասնագիտության ընտրության հարցում դպրոցականներին ուղղորդել դեպի աշխատաշուկա՝ բացահայտելով նաև նրանց անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններն ու նախասիրությունները, և աջակցել աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանն ու առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելուն: Սակայն ակնհայտ է, որ համակարգի բացակայության պայմաններում կենտրոնն իր սահմանափակ հնարավորություններով և ռեսուրսներով ցանկալի արդյունքներ ապահովել չի կարող:

11 Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, (OECD–ՏՀԶԿ), 2004 թ.:

12 Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, (OECD–ՏՀԶԿ), 2004 թ., էջ 10:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրի լուծման գործում մեծ նշանակություն ունեն պետական քաղաքականությամբ մշակված սկզբունքները, որոնք անմիջականորեն նպաստում են ոլորտը կարգավորող մեխանիզմների բնականոն աշխատանքին[13]: Իսկ արդեն ծառայությունների մատուցման գործում լուրջ ներգրավվածություն պետք է ունենան դպրոցները, մասնագիտական ուսումնական հաստատությունները, քաղաքացիական հասարակության կառույցները, շահագրգիռ այլ մարմինները:

Այս պայմաններում ժամանակի հրամայականն է ունենալ մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման միասնական քաղաքականություն, որում լուրջ դերակատարություն պետք է ունենան աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ–ի, էկոնոմիկայի նախարարությունը, կրթության և գիտության նախարարությունը՝ կրթության ազգային ինստիտուտի, հանրակրթական և ավագ դպրոցների մասնակցությամբ, մասնագիտական ուսումնական հաստատությունները, բուհերը, գործատուները և դրանց միությունները, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատները, հասարակական կազմակերպությունները:

Ուսումնասիրելով միջազգային փորձը և այն համադրելով հանրապետությունում առկա իրավիճակի, համապատասխան ենթակառուցվածքների առկայության, հնարավորությունների հետ՝ առաջարկվում է Հայաստանում մասնագիտական կողմնորոշման համակարգի մի մոդել, որը «պետք է հիմնված լինի ողջ կյանքի ընթացքում տարիքային տարբեր խմբերում և սոցիալ–աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց համար մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության և կարիերայի շարունակական աճի հնարավորությունների ապահովմանը՝ նկատի ունենալով մարդու անձնային հատկանիշներն ու աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը» (Մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգի նախագիծ. այն մշակվել է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ներգրավել կրթության և գիտության նախարարության պատասխանատուներին և սոցիալական գործընկերներին և ներկայացվել է ՀՀ կառավարություն):

Մասնագիտական կողմնորոշման առաջնային և հիմնական օղակը և՛ ընդգրկման, և՛ բովանդակության առումով հանրակրթության համակարգն է, որտեղ սկսվում, շարունակվում և հիմնականում ամբողջացվում են կողմնորոշման աշխատանքները:

Մասնագիտական կողմնորոշման հաջորդ փուլը կամ օղակը նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններն են: Այստեղ մասնագիտական կողմնորոշումը պետք է կրի շարունակական բնույթ և իրականացվի կարիերայի կենտրոնների միջոցով:

Առաջարկվող մոդելով մասնագիտության, աշխատանքի և զբաղմունքի հարցում դեռևս հստակ կողմնորոշում չունեցող, վերամասնագիտացման ու վերա-

13 Մասնագիտական զարգացման եվրոպական կենտրոն [CEDEFOP], Մասնագիտական կողմնորոշման (կարիերայի) ուղղորդման որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ, 2004 թ.:

որակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարվելու կարիք ունեցող անձանց մասնագիտական խորհրդատվության ու կողմնորոշման աշխատանքների հիմնական օղակ դիտարկվում են զբաղվածության պետական և ոչ պետական կառույցները:

Ներկայացվող մոդելում որպես մասնագիտական կողմնորոշման հանրապետական ուսումնամեթոդական կենտրոն առաջարկվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնը՝ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի հետ սերտ համագործակցությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնագիտական կողմնորոշման ոլորտը լայն է ու բազմագործոն, ունի տնտեսական, սոցիալական, մշակութային, հոգեբանական բազմաշերտ կառուցվածք, իսկ ձևավորվող համակարգի գործունեության մեջ պետք է ներգրավվեն պետական կառավարման տարբեր մարմիններ, սոցիալական գործընկերներ, քաղաքացիական հասարակության այլ օղակներ, ուստի համակարգի կայացման հաջողությունը մեծապես պայմանավորված է լինելու այս հարաբերություններում ընդգրկված մարմինների ու կառույցների փոխհամաձայնեցված, փոխլրացնող, հստակ համակարգված աշխատանքով:

Ինչպես արդեն նշվեց, մասնագիտական կողմնորոշման կամ կարիերայի ուղղորդման (քանի որ խոսքը վերաբերում է ողջ կյանքի ընթացքում կողմնորոշմանը, ճիշտ կլինի կիրառել «կարիերայի ուղղորդում» եզրույթը)[14]. համակարգի առաջարկվող մոդելը դեռ լրամշակման փուլում է: Ուստի այսօր առավել մանրամասն խոսել համակարգի գործունեության մեխանիզմների մասին, դեռ վաղ է:

Որպես պետական քաղաքականության հարց, մասնագիտական կողմնորոշումը (կարիերայի) ուղղորդումն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևորություն: Պետությունը չի կարող ստանձնել այդ ծառայությունները միայնակ տրամադրելու պատասխանատվությունը: Միայն պետության վրա հույս դնելը, առանց շահագրգիռ կողմերի, սոցիալական գործընկերների և քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցության, երկարաժամկետ կտրվածքով կարիերայի ուղղորդման ծառայությունը կդարձնի ոչ կայուն և անբավարար:

Մասնագիտական կողմնորոշման որակի գնահատման եվրոպական չափանիշների համակարգը

Ստորև նկարագրված չափանիշները հիմնված են 2003–2004 թթ–ին Մասնագիտական զարգացման եվրոպական կենտրոնի [ՄԶԵԿ/CEDEFOP] կողմից մասնագիտական կողմնորոշման որակի ապահովման եվրոպական համակարգերի վերաբերյալ նախաձեռնված ուսումնասիրության արդյունքների վրա: Դրանք համակցում են այն չափանիշները, որոնք, ինչպես պարզվել է, ընդհանուր են կողմնորոշման համար գործածվող որակի ապահովման գոյություն ունեցող բազմապիսի համակարգերի համար, այն չափանիշների հետ, որոնք տեղին և ցանկալի են համարվում նման ցանկացած համակարգում ներառելու համար:

14 Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, (OECD–ՏՀԶԿ), 2004 թ.:

Քաղաքացիների և օգտվողների ներգրավվածությունը

Մասնագիտական կողմնորոշման համար որակի ապահովման համակարգերը պետք է՝

- տեղեկություններ ներառեն ծառայություններից օգտվողների համար՝ վերջիններիս իրավունքների վերաբերյալ,
- ապահովեն, որ անհատ օգտվողների հետ կանոնավոր խորհրդակցություններ իրականացվեն ծառայություններից նրանց բավարարվածության և փորձառության վերաբերյալ,
- ծառայություններ տրամադրողներից պահանջեն կանոնավոր օգտագործել նման խորհրդակցություններից ստացված արդյունքները,
- օգտվողներին ընդգրկեն կողմնորոշման ապրանքների և ծառայությունների մշակման, կառավարման և գնահատման գործում:

Ծառայություններ տրամադրողների ունակությունները

Մասնագիտական կողմնորոշման համար որակի ապահովման համակարգերը պետք է՝

- կողմնորոշման ծառայություններ տրամադրողներից պահանջեն անհրաժեշտ ունակություններ ունենալ կողմնորոշման աշխատանքները կատարելու համար, որոնց իրականացմանն իրենք կոչված են,
- կողմնորոշում իրականացնողներից պահանջեն ունենալ կամ աշխատել ունենալ այնպիսի որակավորում, որը կապահովի, որ նրանք տիրապետեն կողմնորոշման աշխատանքները նախաձեռնելու համար անհրաժեշտ ունակություններին,
- ներառեն կողմնորոշում իրականացնողների աշխատանքի մոնիթորինգը կամ գնահատումը՝ կողմնորոշման աշխատանքների արդյունքի առումով,
- պահանջեն շարունակական մասնագիտական զարգացում և ծառայությունների բարելավում,
- ստանդարտների և որակի ապահովման ընթացակարգերի մշակման գործում ներառեն կողմնորոշում իրականացնողների բոլոր համապատասխան միություններին:

Ծառայության բարելավում

Մասնագիտական կողմնորոշման համար որակի ապահովման համակարգերը պետք է՝

- ներառեն ծառայության հստակորեն սահմանված ստանդարտներ, մոնիթորինգի որևէ եղանակ՝ պարզելու համար, թե արդյոք ծառայությունը համապատասխանում է այդ ստանդարտներին, և, այն դեպքերի համար, երբ դա այդպես չէ, համապատասխան ընթացակարգ, որին անհրաժեշտ է հետևել՝ ծառայությունը ստանդարտին համապատասխանեցնելու համար,
- ներառեն մոնիթորինգի և գնահատման որևէ եղանակ՝ պարզելու համար, թե արդյոք ծառայությունները և տեղեկությունները բարելավելուն

միտված քայլերն իրականում հանգեցրել են նրան, որ ապահովվել են սահմանված ստանդարտները և շարունակական բարելավումը. ներառեն տարբեր թիրախ խմբերի կարիքների առումով կողմնորոշման ծառայությունների տրամադրման տարբերակման և մոնիթորինգի որևէ եղանակ,

- ծառայություններից պահանջեն կապեր ձևավորել ոչ ֆորմալ կերպով կողմնորոշում տրամադրող խմբերի և մարմինների (ինչպիսիք են՝ ծնողները, կամավորական կազմակերպությունները կամ ժամանցին առնչվող մարմինները) հետ և աջակցություն տրամադրեն վերջիններիս,
- ապահովեն, որ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ օգտագործվող նյութերը (օրինակ՝ գնահատման գործիքները) համապատասխանեն որակի ապահովման տեխնիկական նկարագրին:
- **Կապակցվածությունը**

Մասնագիտական կողմնորոշման համար որակի ապահովման համակարգերը պետք է.

- ներառեն կապեր՝ ուղղված կառավարության համապատասխան մարմինների ներսում և դրանց միջև մասնագիտական կողմնորոշման ոլորտում որակի ապահովման առումով արդյունավետ աշխատանքային հարաբերությունների խթանմանը,
- ապահովեն կոնֆլիկտների բացակայությունը կողմնորոշման տարբեր սեկտորներում գործող կամ տարբեր թիրախ խմբերի վերաբերող որակի ապահովման տարբեր համակարգերի միջև,
- ներառեն կողմնորոշման ծառայություններ տրամադրող գործակալությունների միջև կապերի օգտագործման և օգտակարության մոնիթորինգի եղանակներ:

Վերանայման առանձնահատկությունները

Մասնագիտական կողմնորոշման համակարգերը և ծրագրերը հարկ է պարբերաբար վերանայել, որպեսզի՝

- լավագույնս օգտագործվեն առկա ռեսուրսները,
- խթանվի փոխգործակցությունը կրթության, վերապատրաստման և զբաղվածության ոլորտների միջև,
- անընդհատ զարգացող սոցիալական և տնտեսական պայմանների, կոնկրետ խմբերի փոփոխվող կարիքների և ոլորտին վերաբերող գիտելիքների առաջընթացով պայմանավորված՝ համապատասխան փոփոխությունների ենթարկվեն դրանց կազմակերպումը, բովանդակությունը և մեթոդները,
- ազգային քաղաքականությունների արդյունավետության պահանջից ելնելով՝ անցկացվեն բարեփոխումներ:

Նախաձեռնվում են հետազոտական աշխատանքներ՝ աջակցելու համար ապացույցների վրա հիմնված քաղաքականության և համակարգերի մշակմանը:

Մշակվում են հետազոտական և կողմնորոշման փորձարարական ծրագրեր, որպեսզի՝

- գնահատվի ցկյանս կողմնորոշման համակարգի առանձին բաղադրիչների ներքին և արտաքին արդյունավետությունը,
- որոշվեն ցկյանս կողմնորոշման տրամադրման այլընտրանքային տարբերակների և մեթոդների ուղղակի և անուղղակի ծախսերն ու օգուտները,
- որոշվեն տնտեսական գործունեության որոշակի սեկտորների և բնակչության որոշակի խմբերի համար ցկյանս կողմնորոշման մշակման համար առաջնահերթությունների սահմանման և ռազմավարությունների մշակման չափանիշները,
- ավելացվեն գիտելիքները ցկյանս կողմնորոշման հոգեբանական, սոցիոլոգիական և մանկավարժական կողմերի վերաբերյալ,
- բարելավվեն հոգեբանական թեստերը և այլ մեթոդները, որոնք օգտագործվում են ունակությունների հատկորոշման, հակումների և հետաքրքրությունների գնահատման, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության միջոցով յուրացված գիտելիքների և հմտությունների մակարդակների գնահատման համար,
- գնահատվեն զբաղվածության հնարավորությունները տնտեսական գործունեության տարբեր սեկտորներում և մասնագիտությունների գծով,
- բարելավվեն առկա տեղեկությունները աշխատաշուկայի, ներկայացվող պահանջների և կարիերայի առաջխաղացման հնարավորությունների վերաբերյալ:

Վարչարարական մոտեցումները և մեթոդները մշակվում և փոփոխվում են այնպես, որ աջակցեն ցկյանս կողմնորոշման ծրագրերի իրականացմանը:

Investment of professional orientation (career) guidance system in the republic: problems and vision

Summary

Taking into account the fact that professional orientation is directed to sustainable the development of the country's economy through recruitment of qualified personnel demanded in labour market, the united policy and at the same time the involvement of all subjects are very important in this process.

On the one hand, the interest of young people doesn't grow towards professions wich have demand in labour market; on the other hand, the person doesn't look for a profession or an occupation according to his personality due to the lack of professional orientation system and the specialists providing appropriate services in Armenia at present. Children choose profession without having professional consultancy and mostly being satisfied with their parents' advice or social demand.

In recent years, as a result, the level of unemployment is higher among young people, surpassing the average level of unemployment in the country. In contrast, to this, the demand for qualified workforce has risen in the labour market, in a number of spheres the "ageing" of specialists has been recorded. An important problem for the country is also internal and external migration, the reasons for which can also arise because of the lack of professional orientation system. The problem is outstanding in the country's regions, where, in the result of labour market analysis, vacancies have not been supplemented for a long time because of the lack of specialists and great number of the unemployed or young migrant people who, after getting vocational education, try to ensure their employment in any way.

At present, in Republic of Armenia it's necessary to develop the right circulation of knowledge between vocational education and business, which should be done for the formation of qualified workforce, providing employment for young people. This system must be an important component of free market economy.

ԲԱԺԻՆ III

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Արտահանման խրախուսումը՝ Հայաստանի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն

Արսեն Պետրոսյան

«Տնտեսական անվտանգության աջակցության նախաձեռնություն» հիմնադրամի նածխագահ, տնտեսագիտության թեկնածու

Այսօր արդեն Հայաստանում ապացուցման կարիք չունի այն հանգամանքը, որ արտահանումը հանդիսանում է երկրի զարգացման կարևորագույն պոտենցիալը: Ավելին՝ որոշ հեղինակավոր փաստաթղթեր արտահանման աճը երկրի զարգացման գերպահանջ են որակում[1], ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավումը՝ ազգային անվտանգության խնդիր, մասնավորապես բնակչության կենսաբանական և երկրի պարենային անվտանգության հիմնահարց[2]: Արտահանման կարևորության և ՀՀ առևտրային հաշվեկշռի ոչ բարվոք վիճակի վերաբերյալ դիպվածային քննարկումներն ու արձանագրումներն ակտիվացան 2006–2007 թվականներին: Այդ ժամանակ արդեն մեր **տեսական** ու գիտական հրապարակումները կարելի էր ուշացած համարել՝ նկատի ունենալով այս թեմատիկայի հույժ գործնական կարևորությունը տնտեսության և պետականության համար, ինչպես նաև համեմատելով իրավիճակը ԱՊՀ կամ Արևելյան Եվրոպայի նորանկախ շատ երկրների հետ: Սակայն պահանջվեց ևս մի քանի տարի մինչև արտահանման խնդիրներն իրենց կարևորությանն արժանի տեղը գտան կառավարության պաշտոնական փաստաթղթերում և ծրագրերում, սկսեցին բարձրաձայնվել և անկեղծորեն ընդունվել տնտեսական ոլորտի պատասխանատուների կողմից[3]: Սակայն մինչ օրս այդպես էլ չի հաստատվել ու գործադրվել արտահանման խրախուսմանն ուղղված համապարփակ ու լիարժեք քաղաքականություն: Վերջերս էկոնոմիկայի նախարարության կողմից շրջանառության մեջ էր դրվել «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շրջանակը» փաստաթուղթը: Հատկանշական է այն, որ թեև նշված փաստաթուղթը դեռևս իր արժանի իրավական կարգավիճակը չի ստացել[4], այդուհանդերձ այն ընդգրկված է էկոնոմիկայի նախարարության 2012–ի գերակա խնդիրների շարքում:

---

1 Հայեցակարգ արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի, «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» Մատենաշար, թիվ 6, Երևան, 2005:

2 ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության 2–րդ կետ, Աշոտ Թավադյան – Տնտեսական անվտանգության ազդակները և հիմնախնդիրների լուծման ուղիները, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6314

3 Տես «Հայաստանի արտահանման խթանման խնդիրները» թեմայով ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի համատեղ կազմակերպած կոնֆերանսի զեկույցներն ու նյութերը, դեկտեմբերի 11, 2011, Երևան:

4 Հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15–ի N 49 արձանագրային որոշմամբ:

Առկա իրավիճակ և վերաբերմունք

Կարծում ենք, որ նշված փաստաթուղթը բավարար ձևաչափերով և շահագրգռվածությամբ չքննարկվեց հասարակական և գործարար շրջանակներում: «Տնտեսական անվտանգության աջակցության նախաձեռնություն» հիմնադրամը գտնում է, որ այս փաստաթուղթը, առկա *ԳԵՐԱԿԱ ԽՆԴՐԻ* մասնակի ձևակերպումը լինելով հանդերձ, ենթակա է չհաջողելու մեծ ռիսկի ու դա բնավ էլ կապված չէ փաստաթղթի որակական կամ ռազմավարական կարգավիճակի հետ[5]: Ուղղակի, կարծում ենք, որ նախքան «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շրջանակն» ուրվագծելը, անհրաժեշտ է մեկ աստիճան բարձր մակարդակում ամրագրել Հայաստանի զարգացման նպատակին ծառայող՝ **արտահանման խրախուսման ռազմավարությունը**, որից նոր բխեցնել արդյունաբերական քաղաքականությունը: Մասնավորապես, պետք է անդրադարձ կատարվի խնդրին առնչվող այնպիսի որոշիչ, անկյունաքարային հարցերի, ինչպիսիք են.

Ա. Ըստ գործընկեր երկրների, տնտեսության ճյուղերի և ապրանքախմբերի՝ արտահանման–ներմուծման կառուցվածքի վերլուծությունն ու վերջին տարիների միտումները.

Բ. Արտահանման և արտաքին պարտքի կապվածությունը.

Գ. Փոխարժեքի քաղաքականությունը.

Դ. Ինստիտուցիոնալ և օրենսդրական խնդիրներն ընդհանրապես, այլ ոչ միայն արդյունաբերության շրջանակներում.

Ե. Տրանսպորտը և կապը.

Զ. Արտաքին տնտեսական հարաբերությունների և տնտեսական դիվանագիտության համակարգը, ներառյալ համապատասխան առաքելություն և պատվիրակված գործառույթներ ունեցող կառույցները:

Նշված հարցերին անդրադառնալով՝ կտեսնենք, որ առանձին ճյուղերի կամ ապրանքների առումով 2000–ականների կեսերին ունեցած մեր համեմատաբար լավ արտահանման դիրքերն արդեն զիջել ենք, կհասկանանք, որ այս կամ այն ճյուղի կամ ապրանքի արտահանման կայուն պոտենցիալի հիմքը, որպես կանոն, այդ ապրանքների՝ ներքին շուկայում ամրապնդվելն է, կհասկանանք, որ, առանց համակարգային ռազմավարության զբոսաշրջությունը զարգացնելով, մենք հիմնականում նպաստում ենք հարևան երկրների արտահանմանը, քանի որ ներքին շուկայում սպառում ենք գերազանցապես ներկրված ապրանքներ, կփաստենք, որ գործարարության զարգացման խորհուրդների ու միջկառավարական տնտեսական հանձնաժողովների աշխատանքները չեն հանգեցրել արտահանման համապատասխան ցուցանիշների բարելավմանը, կնկատենք, որ ներմուծման դեպքում գործընկերոջ նկատմամբ հյուրընկալ ու պատրաստակամ ենք այնքան, որքան հետևողական և ճանաչված չենք այդ գործընկերոջ երկրում:

---

5 ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ արդյունաբերողների և գործարարների միության համատեղ կազմակերպած՝ քննարկվող փաստաթղթի հրապարակային ներկայացման ժամանակ «Տնտեսական անվտանգության աջակցության նախաձեռնություն» հիմնադրամը հրապարակավ ներկայացրել է իր դիրքորոշումը փաստաթղթի, առկա իրավիճակի և որդեգրած մոտեցումների վերաբերյալ (Երևան, «Կոնգրես» հյուրանոց, 10 հոկտեմբերի, 2011):

Փաստաթղթում արծարծվող առանձին ոլորտային ծրագրերը, որոնցից մի մասը կան, որոշները ենթադրվում է, որ կլինեն ընթացքում՝ մշակված լինելով արտահանման քաղաքականությունից անկախ կամ չբխելով համապատասխան **գերակա փաստաթղթից,** շատ կասկածելի է, որ կարող են ցանկալի ձևով ծառայեցվեն արտահանման խրախուսմանն ուղղված գերակա նպատակին կամ նախագծվեն ու իրականացվեն այդ նպատակի տեսանկյունից արդյունավետորեն:

Դինամիկ զարգացող շատ երկրներ, իրենց հասարակությունների բարեկեցության ու առանձին անդամների բարօրության ցուցանիշներն արդեն փորձում են չափել ոչ միայն «մեկ շնչին ընկնող ՀՆԱ» ֆիսկալ ցուցանիշով, այլ նաև այդ ցուցանիշները ճշգրտող «կանաչ ՀՆԱ» կամ «երջանիկ քաղաքացի» հասկացություններով: Մինչդեռ մենք, այսօր խնդիր ունենք ընդամենը ազգովին ընկալելու, այն դասագրքային ճշմարտությունը, որ լավն ենք ու պիտանի ժամանակակից գլոբալ քաղաքակրթությանը ճիշտ այնքան, որքան կարողանում ենք պիտանի «բառ ու բան» ստեղծել աշխարհի համար ու հրամցնել…

Այսօր Հայաստանի տնտեսական քաղաքականությունը կարելի է բնութագրել հետևյալ երեք կետերով.

1. Հայաստանը արտահանում է հիմնականում հումք՝ աշխատուժ (արտահայտվում է նաև ուղեղների արտահոսքով) և հանքանյութ (ներառյալ մետաղի ջարդոն):
2. Հայաստանը ներկրում է ամեն ինչ:
3. Աշխատանքային միգրանտների, մշտապես արտերկրում բնակվող մեր հայրենակիցների կողմից, ինչպես նաև արտաքին դրամաշնորհների ու պետական վարկերի հաշվին փաստացի ֆինանսավորվում է Հայաստանի ներմուծումը, որը գերազանցում է արտահանմանը 3–4 անգամ:

Աղյուսակ 1

Հայաստանի արտահանման–ներմուծման հաշվեկշիռը 2007–2011 թվականներին

(մլն ԱՄՆ դոլար)

	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.*
Արտահանում	1 152,3	1 057,2	710,2	1 041,1	1 206,7
Ներմուծում	3 267,8	4 426,1	3 321,1	3 749,0	3 751,3
Տարբերություն	–2 115,5	–3 368,9	–2 610,9	–2 707,9	–2 544,6

* 11 ամսվա տվյալներ

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ գաղափարների, ծրագրերի պակաս այսօր չկա: Եթե ոչ ՀՀ–ում ապա աշխարհում բավականին փորձ կա կուտակված: Խնդիրն ուղղակիորեն կապվում է ՀՀ–ում ընդհանրապես կառավարման համակարգի և օրենքի գերակայության հիմնախնդիրների հետ: Այնուհետև կարևորվում են ծրագրի գործարկումն ու գործընթացի սուբյեկտիվ կազմակերպումը: Մեզ պետք են քիչ թե շատ լուրջ համակարգեր ներդրած և կայացրած մարդիկ, հետևողական պրոֆեսիոնալներ, որոնք, հայրենասեր լինելով, էությամբ ընկալում են այսօր Հայաստանի համար արտահանման գերակա խնդիր լինելը: Այս անձանց (թիմին) անհրաժեշտ է օժտել բավարար իրավասություններով, ճկունությամբ և ապահովել անվերապահ քաղաքական կամքով՝ համապատասխան կառույցի առջև դրվող նպատակները կյանքի կոչելու համար: Այո՛, կարևոր է, թե ինչպիսի և ում կողմից ղեկավարվող կառույցներ կզբաղվեն արտահանման խրախուսման ռազմավարության համակարգմամբ և իրականացմամբ: Կախված համապատասխան գործառույթներ ստանձնող պրոֆեսիոնալների անձից, ինչպես նաև քաղաքական կամքից ու հետևողականությունից՝ ամենալավ նախագծված համակարգը կամ ծրագիրը կարող է անհաջողությամբ տապալվել, կամ հակառակը՝ ոչ այնքան գերազանց միջոցառումների համախումբը կարող է հաջողությամբ ընթանալ ու արդեն կարճ ժամանակում տալ իր դրական արդյունքները: **Սակայն ասվածը չի նշանակում թե կարելի է “ճանապարհ ընկնել” առանց խնդիրները հստակ ամրագրող և կոնկրետ նպատակներ նախանշող կուռ և համակարգված փաստաթղթի:**

Առաջարկվող մոտեցումներ և ռազմավարություն

Մեր կողմից առաջարկվող միջոցառումները բխում են հասարակությունում ձևավորված պահանջմունքներից, գործարար և ստեղծագործ աշխարհի սպասելիքներից, համահունչ են միջազգային փորձի այն հատվածին, որը համապատասխանում է մեր երկրի առկա վիճակին: Առաջարկվող մեխանիզմները հիմնված են պետության դերի բարձրացման, պետական կառավարման հզորացման, ազգային տնտեսություն կառուցելու գաղափարախոսության և երկրում կատարվող իրադարձությունների և տնտեսական իրավիճակի համար պետության պատասխանատվության գիտակցման վրա: Արտահանման ներուժ ունեցող և մրցունակ տնտեսությունը նաև ազգային արժանապատվության, հեղինակության, պետության վարկանիշի և քաղաքական խնդիրների լուծման կարևորագույն նախապայմաններից է:

Ելնելով այս ամենից՝ ռազմավարության սկզբունքները պետք է լինեն.

- Ամբողջականությունը,
- Ճկունությունը,
- Հետևողականությունը,
- Հայրենասիրությունը:

Իսկ ուղղությունները՝

- Կազմակերպա–կառուցվածքային միջոցառումներ,
- Արտաքին տնտեսական հարաբերություններ,

- Դրամավարկային քաղաքականություն և խթանիչ փոխարժեք,
- Արտահանման ֆինանսավորում,
- Հայկական բրենդների առաջխաղացում,
- Սերտիֆիկացիա և ստանդարտներ,
- Ներդրումների ներգրավում,
- Արտահանման և ներմուծման պետական կարգավորում,
- Արտահանման պոտենցիալի բացահայտում և բարելավում:

Արտահանման խթանման ռազմավարության իրագործումը նախ և առաջ պահանջում է որոշակի համակարգվածության կազմակերպական միջոցառումների իրականացում:

Այսօր Հայաստանում որևէ պետական կառավարման մարմին մասնագիտացված կարգով չի զբաղվում արտահանման խնդիրներով: Թեև գործում է զարգացման հայկական գործակալությունը, սակայն թե՛ այդ հաստատության գործառույթները, թե՛ աշխատանքի շրջանակը, թե՛ կարգավիճակը, թե՛ որակը չեն կարող ապահովել համապետական մասշտաբով արտահանման խրախուսման համակարգի ձևավորումը և արտահանմանը խոչընդոտող խնդիրների լուծումը: Կարծես նման խնդիրը պետք է հանդիսանար ՀՀ էկոնոմիկայի նախարարության հիմնական գործառույթներից և դե յուրե դա այդպես է: Այս գերատեսչության կանոնադրության մեջ որպես խնդիր հստակ ամրագրված է արտահանման խթանումը, իսկ գործառույթներում նշված է, որ էկոնոմիկայի նախարարությունը **«մշակում է բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ», «ուսումնասիրում և վերլուծում է արտաքին շուկաները և ներկայացնում առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ»:** Սա թղթի վրա, սակայն իրականում տարիներ շարունակ բոլորովին այլ ուղղություններով են տնօրինվել այս կարևորագույն պետական կառույցի ռեսուրսները: Նաև կարևոր է նշել, որ արտահանման խթանումը փաստացի դառնալով երկրի զարգացման ռազմավարությունը՝ պետք է արժանանա ամենամեծ ուշադրությանը՝ միաժամանակ ապահովելով բազմաթիվ խնդիրների լուծում տարբեր պետական մարմինների կողմից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք հետևյալ մակարդակներով ուղղահայաց ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումը՝

- ՀՀ նախագահին կից արտահանման խրախուսման ազգային խորհուրդ,
- Արտահանման խթանման ռազմավարության գործադրման մասով լիազորված պետական կառավարման մարմին (օրինակ՝ էկոնոմիկայի նախարարությունը),
- Մասնագիտացված գործակալություններ՝ ՓՄՁ ԶԱԿ, ԶՀԳ,
- Արտահանման մասնագիտացված ընկերություններ՝ պետական, պետական մասնակցությամբ կամ օժանդակությամբ,
- Արտահանման կողմնորոշում ունեցող գործող կամ այդ նպատակով հատուկ ստեղծվող արտադրական ձեռնարկություններ:

Նախ, կարևորագույն քայլ ենք համարում ՀՀ նախագահին կից ստեղծել արտահանման խրախուսման ազգային խորհուրդ՝ բաղկացած Հայաստանի և Սփյուռքի ներկայացուցիչներից, ռազմավարության իրականացման առանցքային մարմինների ղեկավարներից, ազգային վիճակագրական ծառայության ղեկավարից, գործարար և հասարակական շրջանակներից: Նման մարմնի ստեղծումը պետք է վկայի երկրի ղեկավարության կողմից քաղաքական կամքի արտահայտման և խնդրի նկատմամբ առանձնահատուկ ուշադրության մասին: Այս մարմինն ունի նաև կարևորագույն գործառույթ՝ պետական մարմինների գործունեությունը արտահանման խրախուսման ռազմավարության շրջանակներում ուղղորդելու և վերահսկելու մասով:

Հաջորդ մակարդակին գտնվում է լիազոր պետական կառավարման հանրապետական մարմինը, որի գործունեության արդյունավետության չափորոշիչներից պետք է լինի երկրի մրցունակության իրական չափելի աճը, արտաքին ապրանքաշրջանառության, արտահանման կառուցվածքի և ծավալների ցուցանիշների բարելավումը՝ հաշվետու ժամանակաշրջանից հաշվետու ժամանակաշրջան:

Արտահանմանն աջակցող նոր և հիմնական օղակ պետք է հանդիսանան արտահանման մասնագիտացած կազմակերպությունները, որոնք պետք է իրենց վրա վերցնեն այն գործառույթները, որոնք միջազգային չափանիշներով փոքր և միջին հայկական ընկերությունները ի վիճակի չեն կատարել: Այս ընկերությունների մասնագիտացումը կարող է լինել տարածաշրջանային և/կամ ըստ ապրանքախմբերի: Այս ընկերությունները պետք է մասամբ կատարեն ռազմավարությունից բխող որոշ աշխատանքներ (սերտիֆիկացում, առևտրային ներկայացուցչություն, վերլուծություններ, շուկաների ուսումնասիրության, այլ երկրներում հայկական տնտեսավարողների շահերի պաշտպանության և այլն):

Ստորին օղակը՝ դա հենց արտահանող ընկերություններն են, արտահանվող ապրանքներ արտադրողները, թե նրանք, որ գործում են այսօր, թե նրանք, որոնք պետք է հիմնադրվեն խրախուսման անհրաժեշտ միջավայր ձևավորվելու պարագայում:

Այսպիսով, արտահանման գործառութային կառուցվածքը, սկսած հիմնախնդիրների և պահանջների ձևակերպումից մինչև ամենաբարձր մակարդակով խնդիրների լուծումը, ստանում է հետևյալ տեսքը:

Արտաքին տնտեսական հարաբերություններ

Արտահանման խրախուսման ռազմավարության հաջողության կարևորագույն գրավականը գրագետ աշխատանքն է միջազգային ասպարեզում: Այստեղ կառանձնացնենք հետևյալ ինստիտուտների գործադրումը՝

- ՀՀ դիվանագիտական–առևտրային ներկայացուցչություններ,
- Առևտրային համաձայնագրեր,
- Քլիրինգային հաշվարկների համակարգ,
- Միջպետական վարկեր, դրամաշնորհներ,
- Ըստ երկրների՝ առանձնահատուկ գծապատկերներ:

Արտահանումը պետք է դառնա մեր արտաքին քաղաքականության արդյունավետության չափորոշիչներից մեկը: Արտաքին գործերի նախարարությունը, ինչպես նաև դիվանագիտական, առևտրային ներկայացուցչությունները պետք է դառնան այս գործընթացի կարևորագույն մասնակիցներից: Ինչպես լիազոր մարմնի՝ էկոնոմիկայի նախարարության գործունեության արդյունավետության չափորոշիչներից պետք է լինի արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշների բարելավումը, այնպես էլ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատանքի կարևորագույն արդյունք հարկավոր է դիտել իրենց հյուրընկալ երկրներում կամ տարածաշրջաններում ապրանքների առաջխաղացումը, առևտրային ցուցանիշների առողջացումը հայկական ապրանքների խանութների կամ ընկերությունների առևտրային ներկայացուցչությունների հիմնումը և այլն:

Արտահանման հիմնախնդիրների մի մեծ խմբակազմ վերաբերում է միջազգային ասպարեզում իրականացվող միջոցառումներին: Կարևորում ենք ոչ միայն բազմակողմանի և երկկողմանի համաձայնագրերի կնքումը, այլ նաև արդեն ստորագրվածների դրույթների շահեկանորեն կիրառումը, պարբերաբար ուսումնասիրությունը՝ անհրաժեշտության դեպքում բանակցությունների և խորհրդատվությունների իրականացումը: Թեև ՀՀ–ն ունի մի շարք պարտավորություններ միջազգային կազմակերպությունների առջև, որոնք մասամբ չեն բխում մեր տնտեսության շահերից, սակայն մենք դեռևս չենք օգտագործել այն փոքր հնարավորությունները, որոնք առկա են այդ պարտավորությունների շրջանակում: Ավելին՝ չպետք է բացառել դրանց վերանայման և այդ առումով օտարերկրյա գործընկերների հետ փոխհամաձայնության գալու անհրաժեշտությունը:

Հայաստանը ընդհանրապես չի կիրառում երկկողմ տնտեսական համաձայնագրերի ինստիտուտը: Աշխարհի շատ երկրներ կնքում են նման պայմանագրեր՝ ձեռք բերելով պայմանավորվածություն գնել օտարերկրյա ապրանքներ իրենց ապրանքների մատակարարման դիմաց:

Անհրաժեշտ է ընդգծել արտահանման համար նպաստավոր երկրների կազմը, մշակելով յուրաքանչյուրի համար առանձին գծապատկեր, որը պետք է ներառի ռազմավարության գործիքակազմի այս կամ այն ուղղությունների համադրումը:

Դրամավարկային քաղաքականություն և խթանիչ փոխարժեք

Արտահանման ու հայկական ապրանքների մրցունակությանը մեծագույն խնդիրներ առաջացրեց դրամի արժևորումը, որն առկա էր մինչև 2009 թվականի մարտ ամիսը: Դրա հիմնական պատճառներից էր մասնավոր տրանսֆերտների աճը: Այս իրավիճակը փաստացի խրախուսեց ներմուծումը: Մի քանի տարիների ընթացքում Հայաստան ներկրվող ապրանքների տեսակարար կշիռը համապատասխան ապրանքային շուկաներում ավելացավ մի քանի անգամ, որոշ ապրանքների մասով հայկական արտադրողները լուրջ դիրքեր զիջեցին ներքին շուկայում:

Արտահանման ֆինանսավորում

Արտահանման ֆինանսավորում են համարվում՝

- Արտահանման ապահովագրությունը կամ երաշխավորությունը,
- Ֆինանսական աջակցությունը՝ վարկեր, ֆինանսավորում, վերաֆինանսավորում, տոկոսադրույքի սուբսիդավորում,
- Ֆինանսական օգնությունները, դրամաշնորհները:

Նշված եղանակներից ոչ մեկը Հայաստանում ըստ էության չի գործում, թեև բոլորն էլ կարող են դառնալ լուրջ խթան արտահանման համար:

Առաջնային խնդիրն է արտահանման ապահովագրության ինստիտուտի ներդրումը՝ դարձնելով այն ապահովագրության ամենապահանջված տեսակներից մեկը: Լայնորեն պետք է օգտագործվի երաշխավորությունների համակարգը՝ հատկապես միջպետական գնումների կամ միջպետական պայմանագրերի հիման վրա կատարվող գործարքների դեպքում: Արտահանման համար առանձնահատուկ, ընդգծված, պարզեցված և մատչելի նպատակային վարկավորման համակարգեր գոյություն չունեն:

Մենք կարող ենք և պետք է կիրառենք բոլոր այս միջոցները՝ որոնք թույլ կտան մի կողմից՝ օտարերկրյա գնորդին վճարումները կատարել որոշակի ժամանակահատվածի ընթացքում, մյուս կողմից՝ երաշխավորել Հայաստանից կատարվող մատակարարումները:

Հայկական բրենդների առաջխաղացում

Ապրանքներ արտահանող հայկական արտադրողներն իրենց բրենդների առաջխաղացումը, շուկայի ուսումնասիրությունները կատարում են սեփական ուժերով կամ օտարերկրյա գնորդի միջոցով: Երկու կողմերի ռեսուրսները, որպես կանոն, չեն բավարարում հնարավոր ցանկալի մեծ արդյունք ստանալու համար: Հայկական ընկերությունների պարագայում խնդիրներն են ֆինանսների սահմանափակությունը, թե՛ գիտելիքների, թե՛ հմտության, թե՛ հաճախ, անհրաժեշտ ամբիցիաների բացակայությունը: Օտարերկրյա գնորդի համար՝ խթանիչների բացակայությունը և ներդրումների ռիսկայնությունը: Հեռանկարային և մրցունակ մի շարք հայկական ապրանքատեսակների համար անհրաժեշտ է բրենդների առաջխաղացման պետական քաղաքականության իրականացում: Արտերկրում Հայաստանը չի ընկալվում որպես մրցունակ ապրանքների հայրենիք, Հայաստանը չի ճանաչվում որպես հայտնի ապրանքատեսակների արտադրության երկիր: Բացառություն է կազմում թերևս կոնյակը, այն էլ ԱՊՀ երկրներում: Նույնիսկ այս դեպքում չի կարելի խոսել ԱՊՀ, հատկապես Ռուսաստանի տարածքում հայկական կոնյակի բացարձակ հաջողությունների մասին:

Խնդրի լուծումը ենթադրում է հետևյալ մոդելների համադրում՝

1. Հեռանկարային ապրանքատեսակների խմբավորում միասնական բրենդների տակ:

2. Միջազգային կոոպերացիան հաջորդ տարբերակն է, որը թույլ կտա ֆրանչայզինգի գործադրումը՝ օտարերկրյա հայտնի բրենդների միջոցով հայկական ապրանքների շուկայական առաջընթացը:

3. Հայաստանում հանրահայտ բրենդների ներկայություն:

Սերտիֆիկացիա և ստանդարտներ

Հայկական ընկերությունների ամենատարածված դժվարություններից է արտաքին շուկաներում իրենց ապրանքների սերտիֆիկացումը և գնորդ երկրի ստանդարտների ու պահանջների բավարարումը: Ակնհայտ է, որ նույնիսկ հայկական չափանիշներով համեմատաբար խոշոր ընկերություններն այս հարցում կրում են լուրջ դժվարություններ: Լիազոր կառույցների, գործակալությունների աշխատանքը պետք է ուղղված լինի արտահանողների՝ նման խնդիրների լուծման հարցում աջակցությանը: Աջակցության տեսակներ կարող են լինել.

– Խորհրդատվությունների մատուցումը,
– Տեղեկատվության տարածումը և տեղեկատվական բազաների առկայությունը,
– Այլ պետությունների համապատասխան մարմինների հետ համագործակցությունը և բանակցությունների վարումը,
– Հայկական ընկերություններին անմիջական կազմակերպական, քաղաքական և այլ բնույթի աջակցության ցուցաբերումը,
– Նման աշխատանքների իրականացման համաֆինանսավորումը կամ ամբողջությամբ ֆինանսավորումը:

Ներդրումների ներգրավում

Հայաստանում ներդրումների ներգրավումը մնալու է առաջիկա տարիների տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից: Ի տարբերություն նախկինում իրագործված տնտեսական կուրսի, նոր՝ արտոնյալ կարգավիճակ պետք է ստանան ոչ թե, օրինակ, սպասարկման ոլորտի կազմակերպությունները, այլ արտահանմանը միտված արտադրական ձեռնարկությունները: Այս խնդրի ենթատեքստում պետք է դիտարկել հայտնի համաշխարհային բրենդների կողմից արտահանման ուղղվածությամբ ձեռնարկությունների հիմնումը, ինչի մասին վերևում ասվեց:

Արտահանման և ներմուծման պետական կարգավորում

Արտահանման խրախուսման ցանկացած մոդելի դեպքում, երկրները չեն խուսափում հատուկ խթանիչ միջոցների գործադրումից.

- Արտահանման վարկերը,
- Արտոնյալ ոլորտային վարկերը,
- Արտոնյալ ոլորտային հարկերը,
- Արտահանող ընկերությունների համար ներմուծման ավելի արտոնյալ ռեժիմի սահմանումը (որոշ երկրներում գործում է սահմանափակում՝ ներմուծել ոչ ավելի, քան արտահանում են),
- Առանձին ոլորտների խթանման առանձնահատուկ միջոցառումների կատարում,
- Փոքր և միջին գործարարության զարգացում:

Հատուկ ցանկանում ենք նշել, որ առաջարկվող մեխանիզմները պետք է կրեն ոլորտային և համընդհանուր բնույթ: Հայաստանում տնտեսության մոնոպոլիզա-

ցիայի բարձր աստիճանի պայմաններում անընդունելի է ոլորտային արտոնությունների փոխարեն արտոնյալ ռեժիմի սահմանում ճյուղում գործող առանձին ընտրյալ կազմակերպությունների համար:

Ինչ վերաբերում է ՓՄՁ զարգացմանը, ապա այստեղ առկա է հստակ մեթոդական տարբերություն Հայաստանի և այլ երկրների միջև: ՓՄՁ զարգացումը ամբողջ աշխարհում դիտվում է արտահանման պոտենցիալի ավելացման կոնտեքստում, սակայն Հայաստանի ՓՄՁ մասին խոսվում է անորոշ, վերացական առանց արտահանման առաքելություն շնորհելու: ՓՄՁ զարգացումը՝ քաղաքացիների գործարար–ստեղծագործական պոտենցիալի օգտագործումը պետք է ապահովի այն մեծածավալ աշխատանքային ճակատը, որով պետք է զբաղված լինեն արտահանման մասնագիտացած կառույցները:

Արտահանման պոտենցիալի բացահայտում

Թեև այսօր նպատակ չենք դրել վերլուծել արտահանման պոտենցիալն ըստ առանձին ճյուղերի և երկրների, սակայն այն բավական խորը և հետևողական աշխատանք պահանջող առաջին քայլերից է, անգամ նախքան ռազմավարության վերջնական փաստաթղթի ձևակերպումը: Թեև հասարակական և քաղաքական ընկալումների մեջ արտահանվող հեռանկարներ դիտվում են մի քանի հայտնի ապրանքների մասով՝ կոնյակ, հումք, ոչ ոգելից ըմպելիքներ, այնինչ Հայաստանի արտահանման պոտենցիալը շատ ավելի հզոր է: Խոսքը վերաբերում է ոչ միայն գյուղմթերքի վերամշակմանն ու արտահանմանը, այլ նաև թեթև արդյունաբերությանը, էլեկտրաէներգիա արտահանելու փոխարեն էներգատար արտադրությունների հիմնմանը, ասել է թե՝ հերթական ռեսուրսի վաճառքով հարևան պետությունների արդյունաբերական հզորացումն ապահովելու փոխարեն սեփական հզորությունների ձևավորմանը, ծառայությունների ոլորտի զարգացմանը, սակայն ոչ միայն ֆինանսական շուկայի և տուրիզմի, այլ, օրինակ՝ տրանսպորտային համակարգի, որը կարծես պետք է լիներ արտահանման մեծ կշիռ ունեցող ՀՀ ամենազարգացած ու արագ աճող ճյուղը՝ իր հերթին հանդիսանալով կայուն հենք արտահանումների համար:

Արտահանման խրախուսման համապետական ռազմավարական ծրագրի որդեգրումը կձևավորի անհրաժեշտ նպաստավոր մթնոլորտ ու մտածելակերպ, որոնք թույլ կտան զորաշարժի ենթարկել և՛ պետական կառավարման համակարգը, և՛ ամբողջ հասարակությունը: Սա պետք է լինի տնտեսության կառավարման և կտրուկ՝ թռիչքային զարգացման քաղաքականություն, որը պահանջելու է ուժերի գերլարում և նվիրվածություն:

Armenia: Export Promotion as a Long Term Development Strategy

Summary

Today there is no need for proof that the export is the main potential for the country development. Also, there is no lack of programs and ideas in this area. However, there are no state agencies that are engaged in these issues. At the same time we can describe the current economic policy of Armenia in three points:

1. Armenia is exporting mainly raw materials– labor force and ore (including salvage)
2. Armenia is importing everything
3. The gap between export and import, which is about 400%, is financing (compensating) by foreign transfers, credits and grants.

The author is suggests applying Export Promotion Strategy with the following principles. Integrated, flexibility, consequent, patriotism. Then the publication states the institutional as well as the functional structure of the export (promotion) system.

The start of the Pan–Armenian Export Promotion Program will shape the necessary favourable atmosphere and way of thinking which will enable to reach the spasmodic development of economic. This requires high efforts of power and devotion, but it is feasible.

Օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը, դրանց բաշխումը և խթանման ուղիները Հայաստանի Հանրապետությունում

Կորյուն Շահբազյան

Ֆինանսական վերլուծաբան, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հայցորդ

Երկրների միջև օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) միջոցով զարգացող փոխադարձ կապերը ֆինանսական գլոբալացման կարևոր մաս են՝ առաջ քաշելով մարտահրավերներ ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների քաղաքականություն մշակողների համար: ՀՀ ներդրումային քաղաքականությունը ՀՀ կառավարության գործունեության կարևորագույն ուղղություններից է: Այն ձևավորվել է ազատական սկզբունքների հիման վրա և նպատակաուղղված է համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրացմանը, ինչպես նաև երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, նոր ներդրումների ներգրավմանը, որի միջոցով էլ հնարավոր կլինի ստեղծել նոր աշխատատեղեր, ներգրավվել նոր տեխնիկա, մուտք գործել նոր շուկաներ և այլն:

ՀՀ–ն ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն: Նշենք նաև, որ ՀՀ–ում չեն կիրառվել հատուկ սահմանափակումներ տնտեսության որևէ բնագավառ մուտք գործելու կամ որևէ ընկերության հիմնական կապիտալում մասնակցության առավելագույն չափը սահմանելու և ազգային անվտանգության շահերից տարածաշրջանային սահմանափակումների վերաբերյալ: Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը սահմանում է ՀՀ տարածքում օտարերկրյա ներդրողների գործունեության համար բարենպաստ պայմաններ: Ընդ որում՝ օտարերկրյա ներդրողներին տրամադրվում է տնտեսական գործունեության ցանկացած ձևով զբաղվելու ազատություն, բացառությամբ այն տեսակների, որոնք ուղղակիորեն արգելվում և սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ: Օտարերկրյա կապիտալով ընկերությունների հիմնադրումն ու գործունեության կարգը և ձևերը նույնն են, ինչ տեղական ներդրողների համար[1]:

ՀՀ տնտեսություն օտարերկրյա ներդրումների հոսքերը 2010 թ. հունվար–դեկտեմբերին կազմել են 1505,7 մլն դոլար, որը 2009 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 41,1%–ով, ընդ որում ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 693,4 մլն դոլար (նվազել է 23,5%–ով), այլ ներդրումներինը՝ 811,9 մլն դոլար (նվազել է շուրջ 2 անգամ), պորտֆելային ներդրումներինը՝ 0,4 մլն դոլար (նվազել է 96,4%): 2010 թ. ընթացքում ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից, ներդրումների տեսքով, հանրապետությունից ֆինանսական միջոցների արտահոսքը կազմել է 94,4 մլն դոլար[2] (տե՛ս աղյուսակ 1–ը):

---

1 «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 31.07.1994 թ.), բաժին 1, հոդված 4:

2 «Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար–փետրվարին», Օտարերկրյա ներդրումները 2010 թ. հունվար–դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Եր., 2011 թ. էջ 70:

Աղյուսակ 1

Օտարերկրյա ներդրումների հոսքը
2008–2011 թթ. ըստ տեսակների
(մլն ԱՄՆ դոլար)

	Օտարերկրյա ներդրումների ներհոսք			Օտարերկրյա ներդրումների արտահոսք		
	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.
Ընդամենը ներդրումներ	1932,0	2555,4	1505,7	72,5	193,7	94,4
Ուղղակի ներդրումներ	1132,4	906,2	693,4	10,2	52,7	8,3
Պորտֆելային ներդրումներ	6,6	11,0	0,4	0,0	10,6	1,5
Այլ ներդրումներ	793,0	1638,2	811,9	62,3	130,4	84,7
Առևտրային վարկ	46,5	49,9	26,6	21,5	8,8	12,1
Կարճաժամկետ	–7,6	31,2	5,9	21,5	80,2	–
Երկարաժամկետ	54,1	18,7	20,7	–	–	72,5
Վարկեր	746,5	1588,3	785,2	40,8	121,6	62,6
Կարճաժամկետ	119,4	–	49,4	36,2	120,6	9,9
Երկարաժամկետ	627,1	1588,3	735,8	4,6	1,6	–
Դրամավարկային կարգավորման մարմիններ	16,8	337,4	99,7	–	–	–
Պետական կառավարման մարմիններ	160,1	1065,0	313,7	–	–	–
Բանկեր	289,3	0,0	150,3	4,0	0,0	7,9
Այլ հատվածներ	160,9	186,2	172,1	0,6	2,0	0,4

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ–տնտեսական վիճակը 2011 թ. հունվար–փետրվարին, էջ 70:

ՕՈՒՆ կառուցվածքում 2008–2010 թթ. տեղի են ունեցել բացասական տեղաշարժեր: Այսպես՝ ուղղակի ներդրումների բաժնեմասը ամբողջ ներդրումների կազմում 58,5%–ից նվազել է մինչև 46%, դրան հակառակ՝ նույնքանով աճել է «այլ

ներդրումների» կշիռը՝ 41%–ից դարձել է 53,9%: Այլ ներդրումները բաղկացած են ֆինանսական ռեսուրսներից, որոնց կազմում 2010 թ. առևտրային վարկերը կազմել են 3,3%, այլ վարկերը՝ 96,7%:

Այնուամենայնիվ, մինչև 2009 թ. նկատվել է օտարերկրյա ներդրումների անընդհատ աճ, ինչը վկայում է, որ օտարերկրյա ներդրողները սկսել են ավելի շատ վստահել Հայաստանի տնտեսությանը, հավատում են պետության և կազմակերպությունների ֆինանսական կայունությանն ու վճռականությանը, լավատեսորեն են գնահատում զարգացման մոտակա հեռանկարները: Վերջինը հաստատվում է նաև համաշխարհային ֆինանսական շուկաներում Հայաստանի վարկային վարկանիշի բարձրացմամբ, ինչը թույլ է տալիս օտարերկրյա կապիտալը ներգրավել նախկինից ավելի շահավետ ֆինանսական պայմաններով:

Թեև ՕՈՒՆ–ի ճյուղային կառուցվածքն 2008–2010 թվականներին անկայուն է, սակայն ընդհանուր ուղղություններով այն էականորեն չի փոխվել: Եթե արդյունաբերությունում օտարերկրյա կապիտալի ներհոսքի հիմնական մասը 2003–2007 թթ. բաժին էր ընկնում մշակող ոլորտին, ապա հետագա տարիներին՝ մետաղների հանքաքարի արդյունահանման և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում օտարերկրյա ներդրումներն աճել են համապատասխանաբար ավելի քան 5,7 անգամ և 57,1%–ով: Օտարերկրյա ներդրումները 2010 թ., բացարձակ արտահայտությամբ, 2008 թ. նկատմամբ նվազել են մոտ 555 մլն ԱՄՆ դոլարով կամ 44,1%–ով[3]:

Աճն ակնհայտ է շինարարության ոլորտում, որտեղ իրականացված օտարերկրյա ներդրումները, 2010 թ–ին աճելով մոտ 8 անգամ նախորդ տարվա նկատմամբ, դրա տեսակարար կշիռը կարողացել են հասցնել 0,05–ից մինչև 0,51 տոկոսի: Սակայն 2010 թ. այս ոլորտում իրականացված ներդրումները դեռևս չեն գերազանցում 2008 թ. ցուցանիշին: Էականորեն աճել են նաև մեծածախ առևտրի ոլորտում իրականացված օտարերկրյա ներդրումները՝ 2010 թ–ին նախորդ տարվա նկատմամբ բացարձակ աճը կազմել է 4,8 մլն ԱՄՆ դոլար կամ 80%:

Տնտեսության իրական հատվածում 2008–2010 թթ. ՕՈՒՆ–ի կուտակային ծավալի Ռուսաստանին բաժին ընկնող ներդրումների տեսակարար կշիռը 70%–ից նվազել է մինչև 38,5: Սակայն դրա հետ մեկտեղ շարունակում է լինել առաջինը: Երկրորդ տեղը զբաղեցնում է Ֆրանսիան, որը 2010 թ. դրսևորում է նվազման միտում՝ նվազելով 25,3%–ով: Լիբանանը, շնորհիվ 2008–2010 թթ. ներդրումների մեծ ծավալների, ամրապնդվել է չորրորդ տեղում: Արգենտինան, վերջին տարիներին նախորդ տարիների նկատմամբ կտրուկ ավելացնելով ներդրումների ծավալը կարողացել է առաջ անցնել ԱՄՆ–ից: Վերջին երկու տարում նկատվում է նաև ԱՄՆ–ի կողմից իրականացվող ներդրումների նվազում, ըստ որում՝ 2010 թ. դրանց կազմում ուղղակի ներդրումներն աննշան են եղել՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 53,3%–ով (տե՛ս աղյուսակ 2–ը): Վերջին տարիներին ՀՀ տնտեսության իրական հատվածում նկատվող ներդրումների ծավալների նվազումը բացատրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով:

3 ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ–տնտեսական վիճակը 2011 թ. հունվար–փետրվարին, էջ 73–76:

Աղյուսակ 2

Օտարերկրյա ներդրումների ծավալն ըստ երկրների

Երկիրը	2008 թ.		2009 թ.		2010 թ.	
	Ընդամենը ներդրումներ	Այդ թվում՝ ուղղակի	Ընդամենը ներդրումներ	Այդ թվում՝ ուղղակի	Ընդամենը ներդրումներ	Այդ թվում՝ ուղղակի
Ընդամենը	1257643,1	1000911,2	935485,3	732118,5	702661,6	482999,4
այդ թվում՝						
Ռուսաստանի Դաշնություն	880071,7	714508,8	502854,7	384831,2	270342,3	194539,8
Ֆրանսիա	90756,7	83756,0	197421,4	197421,4	146787,2	146787,2
Արգենտինա	90051,6	87666,8	50660,7	48258,2	32635,1	29751,8
Լիբանան	40588,8	11838,0	22189,3	13548,8	17499,7	11292,5
ԱՄՆ	30199,6	17700,0	18863,4	12982,9	16142,1	6058,3
Լիխտենշտեյն	24000,0	–	16,1	16,1	–	–
Գերմանիա	23707,6	23707,6	19358,0	19358,0	47339,8	21951,2
Լյուքսեմբուրգ	13031,0	6687,0	3343,0	2487,0	6820,0	5168,0
Կիպրոս	10797,1	10797,0	6943,2	6939,7	14354,7	11975,9
Իռլանդիա	6407,0	6407,0	289,1	289,1	329,0	329,0
Նիդերլանդներ	4507,9	4507,9	71096,4	4569,2	64310,7	3501,8
Բելգիա	3862,6	3862,6	1322,4	1213,1	1725,7	1565,5
Միացյալ Թագավորություն	3860,2	1130,9	843,4	82,5	3813,1	3736,7
Հունգարիա	617,3	107,3	–	–	411,3	11,3
Իտալիա	432,1	432,1	33480,3	33480,3	4908,7	4908,7
Ուկրաինա	101,2	101,2	–	–	137,8	0,3
Այլ երկրներ	28000,0	28000,0	6000,0	6000,0	20000,0	20000,0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար-փետրվարին, էջ 71:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման տեղական նշանակության հիմնախնդիրների մի մասը պետք է լուծվի պետական, մյուս մասը՝ կորպորատիվ մակարդակով:

Ներդրումային խթանների ոչ ճիշտ կիրառումը կարող է ներդրումային անհավասարակշիռ միջավայրի պատճառ հանդիսանալ: Այնուամենայնիվ, որոշ խթանների ճիշտ կիրառությունը կարող է արագացնել ՕՈՒՆ–ների ներհոսքը: Հարկ ենք համարում նշել, որ այդ խթանները չեն փոխարինում ներդրումային միջավայրի ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին: Խթանները պետք է դիտարկել որպես գործող բարենպաստ միջավայրի հավելում:

Ըստ «Բարենպաստ գործարար ու ներդրումային միջավայրի համար լավագույն փորձի ուղեցույցի»[4] խթանների ընտրության ժամանակ պետք է կիրառվեն հետևյալ սկզբունքները.

1. Խթանների վերաբերյալ պետք է մշակվի պետական ռազմավարություն,
2. Ազատ գոտիների (տնտեսական հատուկ գոտիներ) առկայությունը: Ազատ գոտիները կամ տնտեսական հատուկ գոտիները պետք է ստեղծվեն այնպիսի տարածքներում, որոնք աշխարհագրական տեսակետից մրցունակ են ներդրողների համար:
3. Ներդրումային երաշխիքներ և ապահովագրություն քաղաքական ռիսկից:

Ներդրողներին կարող է մտահոգել այն, որ տվյալ երկրի ներդրումային և քաղաքական միջավայրերը չափազանց մեծ ռիսկ են պարունակում ներդրումների ողջ ընթացքի ժամանակ: Այս հանգամանքներում ներդրումները խթանելու համար երկրները պետք է, այսպես կոչված, «ինքնիշխան երաշխիք տրամադրեն», այսինքն՝ կառավարությունը ֆինանսական երաշխիք է ապահովում կորուստների կամ չվճարման այն դեպքերի համար, որոնք երկրի քաղաքական, իրավական կամ տնտեսական իրավիճակների արդյունք են:

Ինչ վերաբերում է քաղաքական ռիսկի երաշխիքներին, ապա այն կարելի է ներկայացնել որպես այնպիսի ապրանք, որը ներդրողը գնում է ծրագրերը ձախողումներից պաշտպանելու համար:

Քննարկելով ներկայացված փաստերը և ուսումնասիրությունները՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ այնպիսի ոչ հարկային տարբերությունների շտկումը, ինչպիսիք են ենթակառուցվածքի հետամնացությունը, ոչ արդիական օրենքները, մակրոտնտեսական և քաղաքական անկայունությունը և ռեսուրսների բաշխման տնտեսական պատնեշները, կարող են մեծապես խոչընդոտել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը երկիր: Տնտեսության ընդհանուր ազատականացումը, ինչպես նաև տարածաշրջանային ինտեգրացիան օտարերկրյա ներդրումների խթանման համար նույնպես կարևոր դեր են խաղում իրավիճակի դրական սցենարով զարգացման առումով: Զարգացող ու անցումային շրջանում գտնվող երկրների պատասխան քայլը պետք է լինի լրիվ ազատականացված և բիզնեսի համար բարենպաստ արդյունաբերական գոտիների ստեղծումը, որը կօգնի ինչպես ներդրումների ներհոսքին, այնպես էլ տնտեսական աճի խթան-

4 ԵԱՀԿ, Բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի համար լավագույն փորձի ուղեցույց:

մանը[5]: Չնայած հարկային խթանները, մնացած բոլոր հավասար պայմաններում, կարող են հանգեցնել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքին, էմպիրիկ հետազոտությունները չեն հաստատում սրա առկայությունը: Մինչդեռ հարկային համակարգի պարզությունը, անշուշտ, կարող է ունենալ դրական ազդեցություն:

Foreign direct investment flows, their distribution and ways of supporting in the Republic of Armenia

Summary

A foreign direct investment flows between countries are the part of financial globalization processes. At the same time such flows of investments (inflows and outflows) display a new challenge for policy makers in both developed and developing countries.

Investment policy is one of the main directions of the economic policy in the Republic of Armenia. Armenia adopted an open doors policy for any types of investments. This policy ought to provide a county's competitive advantages. Results of this policy are more investments in all sectors of economy, increase in labor force and technologies, new markets for domestic production.

5 Aitken B., G. H. Hanson, and A. Harrison, 2007, Spillovers, Foreignlnvestment, and Export Behavior Journal of Snternational Economics, Vol. 43. pp 103–132.

Համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները 1999–2009 թթ–ին

Արմեն Ժամհարյան

Երևանի պետական համալսարանի մագիստրոս (արևելագիտության ֆակուլտետ),
Եվրասիա միջազգային համալսարանի մագիստրոս (կառավարման ֆակուլտետ),
RESO Insurance (ապահովագրական գործակալ)

Համաշխարհային տնտեսության ներկայումս ընթացող ինտենսիվ համաշխարհայնացման (գլոբալացման) պայմաններում, որին աջակցող կարևոր գործոններից մեկը տնտեսական ինտեգրման խորացումն է, կարևոր է դառնում ազգային տնտեսությունը համաշխարհային տնտեսությանը լիարժեք ինտեգրելու խնդիրը, ինչը շարունակական գործընթաց է: Անկախության հռչակումից հետո Հայաստանը լուրջ քայլեր ձեռնարկեց շուկայական արմատական բարեփոխումների իրականացման և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրվելու նախադրյալներ ստեղծելու ուղղությամբ: Հայաստանը, որն իր առջև նպատակ էր դրել դառնալ շուկայական տնտեսություն ունեցող երկիր, իր տնտեսական քաղաքականության նպատակակետ է համարում համաշխարհային տնտեսությանն ինտեգրվող, ազատ և բաց տնտեսության ստեղծումը:

Տնտեսության զարգացման այդպիսի շրջանում շատ կարևոր է, որ ՀՀ արտաքին տնտեսական հարաբերություններն ամուր լինեն արտաքին շուկայի հետ, քանի որ վերջիններս ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման և ժողովրդի բարեկեցության մակարդակի աճն ապահովող կարևորագույն միջոցներից են: Տնտեսության արմատական վերակառուցման պայմաններում մեծանում են արտաքին տնտեսական կապերի ստեղծման հնարավորությունները, արտասահմանյան երկրների հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծման նախադրյալներ են առաջանում, ընդլայնվում են երկրների հնարավորություններն արտաքին տնտեսական գործունեության բնագավառում: Համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու համար կարևոր նշանակություն ունի համագործակցությունը գիտության բնագավառում, համատեղ ծրագրերի մշակումների կատարումն օտարերկրյա ինստիտուտների հետ: Մեր կարծիքով՝ առաջնային կարևորություն ունեն հետազոտությունները աստղաֆիզիկայի, միկրոկենսաբանության, ռադիոէլեկտրոնիկայի, քիմիական, բժշկագիտության, տնտեսագիտության բնագավառներում և այլն:

Հայաստանի տնտեսական ինտեգրման հիմնական ուղղություն է համարվում ԵՄ–ն: Հայաստանի և ԵՄ կապերը երկարաժամկետ են և նշանակալից: ԵՄ–ն աջակցում է Հայաստանում ազատ շուկայական տնտեսության անցման գործընթացին: Այն կոչված է օգնելու Հայաստանին՝ զարգացնելու իր տնտեսական ներուժը՝ տարբեր բնագավառներում ցուցաբերելով որոշակի աջակցություն:

1999 թ–ի հուլիսի 1–ին ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը /ԳՀՀ/ ԵՄ–Հայաստան փոխհարաբերությունների համար

նոր ժամանակաշրջանի սկիզբ հանդիսացավ: 2004 թ. հունիսին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում: 2005 թ. մարտին Եվրոպական հանձնաժողովն Եվրոպական խորհրդին ներկայացրեց վերջիններիս մասին զեկույցները: Եվրոպական Միության նախաձեռնությամբ Հայաստանի ընդգրկումն Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ–ԵՄ հարաբերությունները տեղափոխեց որակական նոր մակարդակ: Գործընկեր և համագործակցող կարգավիճակ ունեցող երկրից Հայաստանը դարձավ ԵՄ հարևան երկիր:

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում ՀՀ–ԵՄ համատեղ Գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ Նախագահի 2005 թվականի մայիսի 11–ի ՆԿ 100–Ա կարգադրությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի աշխատանքները համակարգում է ՀՀ էկոնոմիկայի նախարարը:

Բանակցությունների 3 փուլերի արդյունքում 2006 թ. նոյեմբերի 14–ին Բրյուսելում հաստատվել և ստորագրվել է ՀՀ–ԵՄ համատեղ Գործողությունների ծրագիրը /ԳԾ/[1]: Բանակցությունների առաջին փուլը տեղի է ունեցել 2005 թ. նոյեմբերի 28–ին՝ Երևանում, երկրորդ փուլը՝ 2006 թ. մարտի 6–7–ը՝ Բրյուսելում և երրորդ փուլը՝ 2006 թ. մայիսի 3–ին՝ Երևանում:

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ–ԵՄ Գործողությունների ծրագրի իրականացումը նշանակալիորեն կնպաստի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը ԵՄ չափանիշներին: Այս համատեքստում ամուր հիմքեր կստեղծվեն հետագա տնտեսական ինտեգրման համար՝ հիմնվելով տնտեսության և առևտրի բնագավառում այնպիսի կանոնների և դրույթների ընդունման ու կիրառման վրա, որոնք կխթանեն առևտուրը, ներդրումները և տնտեսական աճը: Ծրագիրը կօգնի մշակել և իրականացնել այնպիսի քաղաքականություն և միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն տնտեսական աճին, սոցիալական ներդաշնակեցմանը, աղքատության նվազեցմանը և շրջակա միջավայրի պահպանությանը՝ խթանելով կայուն զարգացման երկարաժամկետ իրականացումը:

Եվրոպական կառույցների հետ Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակներում պետական մարմինների կողմից իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է համակարգող հանձնաժողով, որի նախագահն է ՀՀ նախագահը (ՀՀ նախագահի 2006 թվականի մայիսի 20–ի ՆՀ 114–Ն հրամանագիր):

ԵՄ–ի կողմից ՀՀ–ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու նպատակով 2005 թվականի փետրվարին ՀՀ–ն պաշտոնապես դիմել է ԵՄ–ին՝ ներկայացնելով ՀՀ տնտեսության վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության ոչ շուկայական տնտեսության կարգավիճակի վերանայման հայց» փաստաթուղթը: Ներկայումս եվրոպական կողմը, համաձայն սահմանված ընթացակարգերի, քննարկում է ՀՀ–ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու հարցը:

2005 թվականի Մայիսի 1–ին ստեղծվել է ԵՄ–ում ՀՀ առևտրային ներկայացուց-

1 http://www.mineconomy.am/am/13/

չություն և նշանակվել է ներկայացուցիչ, որի նստավայրը Բրյուսելն է (ՀՀ կառավարության 23.12.2004թ. N 1935–Ն որոշում): Նշված կառույցի հիմնումը նույնպես ընդգծում է Հայաստանի ցանկությունը՝ ընդլայնել համագործակցությունը Եվրոպական Միության հետ: Այս քայլն ևս կնպաստի Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առևտրատնտեսական կապերի խորացմանը:

2009 թվականի ապրիլի 23–ին Բրյուսելում Եվրոպական Համայնքների Հանձնաժողովի կողմից պաշտոնապես հրապարակվել է «2008 թվականի Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ–ԵՄ Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացի մասին» զեկույցը:

2009 թվականի մայիսի 6–ին Հայաստանի Հանրապետության նախագահի ՆԿ–68–Ա կարգադրությամբ հաստատվել է Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն–Եվրոպական Միություն Գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009–2011 թվականների միջոցառումների ցանկը:

Ակնհայտ է հետևյալ գծով ՀՀ արտահանման մեջ ԵՄ երկրների համակենտրոնացումը: Բելգիա արտահանման հիմնական մասը կազմում են թանկարժեք քարերը և մետաղները, Գերմանիա արտահանման մեջ դրանց հետ մեկտեղ գերակշռում են նաև ոչ թանկարժեք մետաղները:

Արտաքին տնտեսական կապերի կատարելագործումը պահանջում է զարգացնել սպասարկման և միջազգային զբոսաշրջության ոլորտը, որի համար անհրաժեշտություն կառաջանա արմատապես բարելավել սպասարկման ամբողջ ենթակառուցվածքները՝ ճանապարհները, վերականգնել պատմական հուշարձանները և տեսարժան վայրերը, ինչպես նաև ստեղծել միջազգային նշանակության առողջարաններ: Հանրապետության տնտեսական ինտեգրացիայի զարգացման հեռանկարների պարզաբանումն ակնհայտորեն կախված է այն ծրագրերի իրականացումից, որոնք ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ ընդունվել և իրագործվում են:

ՀՀ կառավարությունն ընդունել է 2000թ. ապրիլի 20–ի «Հայաստանի Հանրապետության զբոսաշրջիկության զարգացման հայեցակարգի մասին» թիվ 15, 2001թ. մայիսի 3–ի «Հայաստանի Հանրապետության ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգի մասին» թիվ 18 որոշումները, որոնցով հստակեցվել են համապատասխան ոլորտների զարգացման ուղղությունները և իրականացման ենթակա միջոցառումները: Բացի այդ, մշակման փուլում է Հայաստանի տնտեսական կայուն զարգացման ռազմավարությունը, որով նախանշվելու են երկրի զարգացման հիմնական ուղղություններն ու գերակայությունները: Զբոսաշրջության զարգացման որոշակի մակարդակում, ի լրումն մյուս արդյունքների, որոնք վերաբերում են աշխատատեղերի ստեղծմանը և ծառայությունների շուկայի բուռն զարգացմանը, պետք է ակնկալել նաև արտարժույթի զգալի ներհոսք, որն ուղղակիորեն մեղմելու է ընթացիկ հաշվի դեֆիցիտը, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի լուրջ զարգացման դեպքում նույնպես պետք է ակնկալել մի շարք դրական արդյունքներ, որոնց թվում առավել կարևոր կարող է դիտվել համընդհանուր տեղեկատվական դաշտից դուրս չմնալու հանգամանքը:

Խորհրդային տարիներին Հայաստանում կար զբոսաշրջիկների մեծ հոսք (1987թ.՝ 100 հազ. զբոսաշրջիկ): ԽՍՀՄ փլուզման և հանրապետությունում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր պայմանների հետևանքով 90–ական թվականների սկզբներից հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թիվը կտրուկ կրճատվել է (1996թ.՝ 13 հազ.), որից հետո նորից սկսել է աճել՝ 1999թ. կազմելով 40 հազ.:

Հայաստանում կա 3 միջպետական մայրուղի, ավտոճանապարհների խտությունը կազմում է 0,2կմ/հա, որոնցից 77%–ն ունի պինդ ծածկույթ: 1995–2000թթ. ՀԲ–ն տրամադրել է 35 մլն դոլար վարկ ավտոճանապարհների վերականգնման համար[2]: Հայաստանում գործում են երկու միջազգային և տաս տեղական օդանավակայաններ, ինչը շատ կարևոր նախապայման է տուրիզմի զարգացման համար:

2000թ. սկսած՝ օտարերկրյա զբոսաշրջիկների հիմնական հանգրվան «Արմենիա», «Էրեբունի» և «Երևան» հյուրանոցների արմատական վերակառուցումից բացի, հանրապետությունում սկսեցին կառուցվել բարձրակարգ, միջազգային ժամանակակից չափանիշներին համապատասխանող հյուրանոցներ: Նկատելիորեն փոխվեց նաև սպասարկման մակարդակը, աշխուժացան հանրապետական ավտոմայրուղիների կառուցումն ու վերակառուցումը: Զբոսաշրջությունը, փաստորեն, ամբողջապես դարձավ մասնավոր ձեռներեցների գործունեության ոլորտը, և ստեղծվեցին զբոսաշրջային բազմաթիվ կազմակերպություններ: Ըստ վիճակագրական ծառայություններից ստացած տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների՝ 2010թ–ի հունվար–դեկտեմբերին Հայաստան են ժամանել 683979 զբոսաշրջիկ: Այս աղյուսակում տրված են 2009–2010թթ–ին Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թվի մասին որոշ տվյալներ (աղյուսակ 4).

Աղյուսակ 4

ՀՀ միջազգային զբոսաշրջության մի քանի կարևոր ցուցանիշներ (2009թ.)

Հյուրանոցների քանակը, որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	43
Ժամանողներ (որոնցից տեղավորվել են)	575281
Հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	65683
Բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	509643
Մեկնողներ (որոնցից ուղևորությունը կազմակերպվել է)	526193
Զբոսաշրջիկային կազմակերպությունների կողմից	11234
Ինքնուրույն	514959

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների

2 The World Bank, World Development Indikators, 2000

տվյալների՝ 2010թ–ի հունվար–դեկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 21%–ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, իսկ 79%–ը՝ ոչ ԱՊՀ երկրներին:

Աշխարհում ընթացող ինտեգրացիոն գործընթացներից անմասն չի մնում նաև Հայաստանը: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության հանքահումքային ռեսուրսները և ներքին շուկան բավարար չեն ինքնուրույն տնտեսական աճ ապահովելու համար: Դա բնորոշ է աշխարհի շատ երկրներին: Հետևաբար՝ երկրի ապագա տնտեսական ռազմավարությունը պետք է բովանդակի համաշխարհային տնտեսությանն ինտեգրման և դրան ու երկրի հնարավորություններին համապատասխան ներքին տնտեսական քաղաքականության կարևոր ուղղությունները:

Ազատ տնտեսական գոտիների (այսուհետև՝ ԱՏԳ) ստեղծումը յուրահատուկ քայլ կարող է դառնալ Հայաստանի տնտեսությունը համաշխարհային տնտեսական համակարգին ինտեգրելու ուղղությամբ: Հանրապետությունում ԱՏԳ–երի ձևավորման հիմնական նպատակն է լինելու ստեղծել երկարատև ներդրման գործունեության ակտիվացման համար արտոնյալ պայմաններ, ներգրավել օտարերկրյա կապիտալը, արտադրության կազմակերպման և կառավարման փորձը, նորագույն տեխնոլոգիաները, շուկան հագեցնել բարձրորակ ապրանքներով: Հայաստանում ԱՏԳ –երի ձևավորմանն ուղղված առաջին քայլերն արվել են Մոսկվայի ժողովրդական տնտեսության ակադեմիայի, մասնավորապես ակադեմիկոս Ա. Աղանբեկյանի գլխավորած գիտական խմբի նախաձեռնությամբ[3]:

Հայաստանում ԱՏԳ–երի ստեղծման ծրագրեր մշակելիս անհրաժեշտ է ուսումնասիրել աշխարհում հաջող գործող գոտիների, ինչպիսիք կան Չինաստանում, Հարավային Կորեայում, ԱՄՆ–ում, Իռլանդիայում, ինչպես նաև անհաջող գոտիների, ինչպիսիք կային Ռուսաստանում, Ֆիլիպիններում, ստեղծման փորձերը, պարզել այս գոտիների հաջողության և անհաջողության պատճառները, գործունեության հետևանքները և այլն[4]:

Այսօր ԱՏԳ–ների ստեղծման կարևոր նախապայման է զարգացած ենթակառույցների առկայությունը: Սակայն Հայաստանում բոլոր ենթակառույցները ժառանգություն են մնացել խորհրդային ժամանակաշրջանից և կարիք ունեն վերանորոգման և արդիականացման: Վերջին շրջանում բավականին աշխատանք է տարվել հանրապետության ենթակառուցվածքները արդիականացնելու ուղղությամբ, սակայն առանց լուրջ ներդրումների դա շատ դժվար է:

ՀՀ–ում ԱՏԳ–երի ստեղծումը կնպաստի՝

1. ՀՀ արտահանման կարողության ընդլայնմանը,
2. ներմուծմանը փոխարինող արտադրությունների զարգացմանը,
3. ներդրումների ներգրավմամբ տվյալ տարածքի սոցիալ–տնտեսական, գիտատեխնիկական և բնապահպանական հիմնահարցերի լուծմանը,
4. աշխատանքի ներդրման երաշխավորված տեղերի ստեղծմանը,
5. քիչ պիտանի հողերի առավել արդյունավետ օգտագործմանը,
6. տնտեսության համար բարձրորակ մասնագետների պատրաստմանը,

3 «Հայաստան 2020». Զարգացման և անվտանգության ռազմավարություն, Երևան, 2002, էջ 358:

4 Վ. Լ. Խանումյան, ԱՏԳ–ների ձևավորման նախադրյալները և զարգացման ռազմավարությունը ՀՀ–ում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» №13, Երևան 2002, էջ 58:

7. համաշխարհային տնտեսության (այդ թվում նաև հարևան երկրների) հետ տնտեսական համագործակցության ընդլայնմանը, զարգացմանը և այլն[5]:

Վերջին տարիներին լուրջ և հուսադրող փոփոխություններ են արձանագրվել երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների ոլորտում: Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցության մեջ նկատվում է արտահանման ծավալների որոշակի աճ: Եթե 1999 թվականին ներմուծման ծավալը արտահանման ծավալին գերազանցում էր 4,1 անգամ, ապա 2004 թվականին՝ 1,9 անգամ: Տեղի է ունենում ներմուծվող ապրանքների փոխարինում հայրենական արտադրանքով: Աստիճանաբար բարելավվում է արտահանման կառուցվածքը, մեծանում է պատրաստի արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը: Փոխվում է նաև արտաքին ապրանքաշրջանառության աշխարհագրական կառուցվածքը, կրճատվում է ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը, աճում է ԵՄ և այլ երկրների բաժինը:

Թեև ՀՀ բնակչության մտածելակերպում արմատացած իներցիայով Հայաստանը տնտեսական ամենասերտ հարաբերություններ պետք է ունենա ԱՊՀ անդամ պետությունների հետ, սակայն աստիճանաբար ամրապնդվում է նաև այն մոտեցումը, որ պետք է տնտեսական հարաբերություններ ունենալ աշխարհի բոլոր երկրների և հատկապես ԵՄ անդամ երկրների հետ: Համաշխարհային տնտեսությանն ինտեգրման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է քաղաքական ու տնտեսական գործոններով, ոչ մի կասկած չի հարուցում, սակայն շատ էական է որոշել ինտեգրման գլխավոր ուղղությունը: Ներկայումս տնտեսագետների շրջանում աստիճանաբար տիրապետող է դառնում այն տեսակետը, որ հանրապետության հեռանկարային զարգացման նախընտրելի ռազմավարությունը երկրի ներգրավումն է Եվրամիության մեջ:

Ինչ վերաբերում է ՀՀ–ում եվրոպական ԲՈՀ–երի ներգրավման գործընթացներին, ապա ՀՀ–ում ԲՈՀ–երի համար առավել հրապուրիչ ոլորտներ կարող են հանդիսանալ բարձր տեխնոլոգիական ապրանքների, գյուղմթերքների արտադրությունը, սննդի արդյունաբերությունը, թանկարժեք քարերի մշակումը:

Վերջին տարիներին առաջին պլան է մղվել համաշխարհային ինտեգրման զարգացման այնպիսի ուղղվածությունը, ինչպիսին է ինստիտուցիոնալացումը, այսինքն՝ այնպիսի կառույցների, կազմակերպությունների ստեղծումը, որոնք պետք է կարգավորեն անդամ երկրների միջև ընթացող գործընթացները և ապահովեն բոլոր շահագրգռված երկրների համագործակցության արդյունավետությունը: Այդպիսի կազմակերպություններից է Առևտրի համաշխարհային կազմակերպությունը: Ակնհայտ է, որ ցանկացած տնտեսական ինտեգրացիոն միավորման հիմքը հանդիսանում է առևտուրը: Ուստի պատահական չէ, որ ԱՀԿ–ն կողմնորոշված է առևտրի ազատականացմանը, որը օբյեկտիվ նախադրյալներ է ստեղծում տնտեսական ինտեգրացման խորացման համար[6]:

---

5 Կիրակոսյան Վերգինե, Համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման ուղիները, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2007թ, էջ 127:

6 Գ.Ե. Կիրակոսյան, «Միջազգային տնտեսական զարգացման առանձնահատկությունները», «Էկոնոմիկա», № 5, 2000, էջ 14:

ԵՄ–ին ՀՀ ինտեգրման կազմակերպական ուղի կարելի է համարել նաև ՀՀ–ի՝ ԱՀԿ–ին անդամակցումը (2003 թ. փետրվարի 5–ին Հայաստանը պաշտոնապես դարձավ ԱՀԿ 145–րդ անդամը), որը, ճիշտ է, ուղղակիորեն ԵՄ–ին անդամակցման նպատակ չի հետապնդում, այնուամենայնիվ առանց ԱՀԿ–ի անդամակցության ինտեգրվել ԵՄ–ին հնարավոր չէ[7]: Ընդ որում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցությունից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային համակարգում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Այսպես՝ 2003 թվականին 2002–ի համեմատությամբ արտաքին ապրանքաշրջանառության ծավալներն ավելացել են 30%–ով և կազմել ամենամեծ ցուցանիշը անցած 10 տարվա ընթացքում[8]: Ամբողջ ապրանքաշրջանառության մեջ ավելացել են նաև արտահանման ծավալները (2002 թ. համեմատությամբ 2003 թ. ավելացել է 34%–ով):

Չնայած համաշխարհային տնտեսության և ՀՀ տնտեսության միջև խորացող հարաբերություններին՝ պետք է նկատել, որ Հայաստանի տնտեսության բացվածությունը դեռևս բավականին փոքր է թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրների հետ համեմատ: Հատկապես ՀՆԱ–ի նկատմամբ արտահանման ցուցանիշը Հայաստանում ամենափոքրն է դիտարկված մի շարք երկրների ցանկում:

Հայաստանի Հանրապետության տնտեսական ինտեգրման մյուս հիմնական ուղղությունը ԱՊՀ–ն է: ԱՊՀ–ն ստեղծվել է 1991 թ. դեկտեմբերի 8–ի՝ ԱՊՀ ձևավորման մասին Բելովեժյան համաձայնագրին կից արձանագրությամբ, ինչպես նաև 1991 թ. դեկտեմբերի 21–ի՝ Ալմա Աթայի հռչակագրով: Հետագայում ԱՊՀ–ին միացան բոլոր նախկին խորհրդային հանրապետությունները, բացի Մերձբալթյան հանրապետություններից[9]:

Նախկին խորհրդային հանրապետությունների ինտեգրացիային պատրաստակամությունը տարբեր էր, որը որոշվում էր ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական և նույնիսկ էթնիկական գործոններով: Ինտեգրացիայի նկատմամբ զսպված հարաբերություններ ԱՊՀ–ի շրջանակներում նկատվում էր Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի կողմից, ավելի դրական՝ Բելառուսի, Հայաստանի, Կիրգիզիայի և Ղազախստանի կողմից:

1992 թ. կնքված ԱՊՀ կանոնադրությունը բաղկացած է մի քանի բաժնից՝ նպատակները և սկզբունքները, անդամությունը, կոլեկտիվ անվտանգությունը և ռազմաքաղաքական համագործակցությունը, համագործակցության մարմինները, միջխորհրդարանական համագործակցությունը, ֆինանսական հարցեր: Համագործակցության ստեղծման հիմքում դրվել են անդամ երկրների ինքնիշխանության, հավասարության, միջազգային իրավունքի ինքնուրույն և իրավահավասար սուբյեկտներ լինելու սկզբունքները:

---

7 Վ.Լ. Խանումյան, Միջազգային առևտրի հիմնախնդիրները և Հայաստանը, Երևան, 2005 թ., էջ 102:

8 Թորոսյան Թ., Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆինանսներ, Երկրորդ հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2005 թ., էջ 377:

9 Սարգսյան Ա.Պ., Հայաստանի տնտեսական ինտեգրացիան համաշխարհային տնտեսությանը, Մենագրություն, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, 2001 թ., էջ 165:

Նոր միջպետական կառույցի ձևավորման նպատակներն էին.

1. քաղաքական, տնտեսական, բնապահպանական, հումանիտար և մշակութային բնագավառներում համագործակցության իրականացումը,
2. ընդհանուր տնտեսական տարածքի շրջանակներում անդամ երկրների տնտեսական և սոցիալական համակողմանի ու հաշվեկշռված զարգացմանը, ինչպես նաև միջպետական համագործակցությանը և ինտեգրացիային նպաստելը,
3. մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ապահովումը՝ համընդհանուր սկզբունքների, միջազգային իրավունքի նորմերի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) փաստաթղթերին համապատասխան,
4. միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման նպատակով անդամ պետությունների միջև համագործակցության իրականացումը,
5. անդամ պետությունների միջև վեճերի և առճակատման խաղաղ կարգավորումը և այլն[10]:

Համագործակցության ստեղծման պահից անդամ պետությունների հիմնական գործողություններն ուղղված էին այնպիսի բնագավառներում համագործակցության զարգացմանն ու խորացմանը, ինչպես արտաքին քաղաքականությունը, պաշտպանությունը և անվտանգությունը, տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը՝ այդ բնագավառներում ընդհանուր դիրքորոշման մշակման և ընդհանուր քաղաքականության իրականացման նպատակներով:

Իր գոյության տարիների ընթացքում ԱՊՀ–ն անցել է բազմաթիվ փորձություններով: Չնայած դրան՝ գլխավորն այն է, որ այն գոյատևեց: Նորանկախ պետությունների կայունացումն ու զարգացումը չհանգեցրին նախկին խորհրդային հանրապետությունների միավորման գաղափարի փոշիացման:

Ավելին՝ անկախ երկրների փոխկապվածության այս ձևը հավաստում է գտել քաղաքական մի շարք փաստաթղթերում, ինչպես նաև կոնկրետ գործերում, առաջին հերթին՝ տնտեսության ոլորտում: Այս ճանապարհին ԱՊՀ–ն անցել է մի քանի փուլով:

- Առաջին փուլ՝ 1991–1993 թթ.: Միութենական հանրապետությունները ձեռք բերեցին քաղաքական անկախություն, ձևավորեցին պետականություն և ֆինանսական, տնտեսական, մաքսային ու սահմանապահ ինքնուրույն կառույցներ: Սակայն առայժմ նրանց ժողովրդատնտեսական համալիրները շարունակում են աշխատել միասնական տնտեսական տարածքում՝ միասնական արժույթով: Եվ չնայած ԱՊՀ շրջանակներում ընդունվում են միասնական շուկայի պահպանման վերաբերյալ հարյուրավոր որոշումներ, կենտրոնախույս միտումներն ուժեղանում են:
- Երկրորդ փուլ՝ 1993–1996 թթ.: ԱՊՀ երկրներն ամրացրին իրենց քաղաքական ինքնավարությունը, ինքնուրույն մտան համաշխարհային հանրության մեջ, նախկին Խորհրդային Միության մեջ չմտնող հարևան երկրների

10 Սարգսյան Ա.Պ., Հայաստանի տնտեսական ինտեգրացիան համաշխարհային տնտեսությանը, Մենագրություն, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, 2001թ., էջ 166:

հետ հաստատեցին գործարար կապեր: Իսկ ԱՊՀ շրջանակներում համատեղ ընդունվող որոշումների նկատմամբ վերաբերմունքն աստիճանաբար դարձավ ավելի կոշտ ու քննադատական: Անկատար մնացին Տնտեսական միության ստեղծման և բազմաթիվ այլ համաձայնագրեր: Սակայն առանձին պետությունների միջև առաջանում է ավելի սերտ կապեր ստեղծելու ձգտում: Այն արտահայտվում է 3 երկրների՝ Մաքսային միության և Կենտրոնասիական տնտեսական միավորման ձևավորմամբ:

Երրորդ փուլ՝ սկսվել է 1997թ–ից: Բոլոր մասնակիցներն ընդունում են համագործակցությունում առկա ճգնաժամը, որն արտահայտվում է հիմնարար որոշումների չկատարմամբ, տնտեսական բազմաթիվ հարցերում և ԱՊՀ կառուցվածքային կազմակերպություններում մասնակցությունից որոշ պետությունների հրաժարումով:

Առանձին պետություններ և գիտնականներ առաջարկում են գործադիր բոլոր կառույցների միավորման գաղափարը, և առաջին պլան են մղվում տնտեսական համագործակցությունը, ազատ առևտրի գոտու ստեղծումը, մաքսային և արժութային միությունների ձևավորումը:

1993թ. սեպտեմբերին ԱՊՀ երկրները ստորագրեցին Տնտեսական միության ստեղծման մասին պայմանագիր, որը որպես հեռանկարային նպատակ հռչակեց փուլային և կամավոր հիմքերով, շուկայական հարաբերությունների վրա կառուցված միասնական տնտեսական տարածքի վերականգնումը, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, համաձայնեցված քաղաքականության իրականացումն այնպիսի բնագավառներում, ինչպես դրամավարկային հարաբերությունները, բյուջեները, գները, արժութային հարցերը և մաքսատուրքերը, ազատ գործարարության և ներդրումների խրախուսումը[11] և այլն: Ավելի ուշ Մոսկվայում կնքվեց պայմանագիր, որը ենթադրում էր դրամավարկային, ֆինանսական քաղաքականության կոորդինացում և հարկային համակարգի ունիֆիկացում[12]: Այս պայմանագրում խոսվում էր նաև ԱՊՀ շրջանակներում երկու արժութային համակարգերի՝ բազմարժութային համակարգի և ռուբլու գոտու ստեղծման մասին: Սակայն ռուբլու գոտու ձևավորման համաձայնագիրը, որը կնքվեց 1993թ–ի սեպտեմբերի 7–ին վեց երկրների՝ Ռուսաստանի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի և Ղրղզստանի միջև, տապալվեց[13]:

1994թ. ԱՊՀ պետությունների ղեկավարները ստորագրեցին Մաքսային միության ստեղծման պայմանագիր ազատ առևտրի գոտու ստեղծման մասին: Այն նախատեսում էր ԱՊՀ շրջանակներում մաքսային և մյուս գանձումների փուլային կրճատում և հետագայում Միջպետական տնտեսական խորհրդի ստեղծում:

---

11 Декларация глав государств–участников об основных направлениях развития Содружества Независимых Государств: «Содружество, Информационный вестник Совета глав государств и совета глав правительств СНГ» №1 (31), 1999, с. 65.

12 Ջ.Ա. Թադևոսյան, Դ.Ռ. Գալոյան, Միջազգային տնտեսական ինտեգրացիա, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2006թ., էջ 101:

13 Соглашение о создании Межгосударственного экономического Комитета Экономического союза: «Содружество, Информационный вестник Совета глав государств и Совета глав правительств СНГ» №3 (16), 1994, с. 49.

Այնուհանդերձ հարաբերություններում դժվարությունները չեն վերանում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՊՀ-ն ի վիճակի չեղավ առանց ժողովրդատնտեսական միասնական համալիրի փլուզման հետևանքով առաջացած հսկայական կորուստների իրականացնել տնտեսական մերձեցումը՝ ինտեգրացիոն կապերի պահպանմամբ: Կենտրոնախույս միտումները շարունակում են աճել:

Կենտրոնախույս միտումների աճին նպաստող գործոններից կարելի է առանձնացնել.

1. Ինտեգրման գաղափարը սկսեց կենսագործվել ԱՊՀ բոլոր երկրներում հետզհետե աճող տնտեսական անկման և այնպիսի երևույթի փլուզման պայմաններում, որն ընդունված է անվանել ժողովրդատնտեսական միասնական մեխանիզմ: Այս ամենը չէր կարող չծնել ռեսուրսների սուր դեֆիցիտ և, որպես հետևանք, նախանշել նախկինում ձևավորված արտադրակոոպերացիոն և առևտրատնտեսական կապերի փլուզումը:
2. Առանձին երկրներում արմատավորվեցին շոշափելի տարբերություններ շուկայական վերափոխումների ժամկետների, տեմպերի, բնույթի և ուղիների, ներքին շուկայի կառուցման և գնագոյացման, սեփական արժութային և ֆինանսաբյուջետային համակարգերի և վերջապես՝ արտաքին տնտեսական կապերի ազատականացման ասպարեզներում:

Համագործակցության երկրների տնտեսական ներկա դրությունը բնութագրվում է սոցիալ-տնտեսական բարեփոխումների նպատակադրումներում լուրջ տարբերություններով, ազգային տնտեսությունների ինքնիշխանացմամբ, հեռավոր արտասահմանի երկրներին վերակողմնորոշմամբ:

Իրականում ԱՊՀ-ն վերածվել է միջտարածաշրջանային տնտեսական մի շարք միավորումների, որոնց թվի մեջ մտնում են Ռուսաստանի և Բելառուսի Միությունը, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի Համագործակցությունը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի (Ուզբեկստան, Ղազախստան, Ղրղզստան), Արևելաեվրոպական (Ուկրաինա, Մոլդովա) և Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Մոլդովայի(ԳՈՒԱՄ) խմբավորումները:

ԱՊՀ գործունեության տարիների փորձը ցույց է տալիս, որ ԱՊՀ տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների իներտությունը զգալի կանխորոշվում է այդ գործընթացի թույլ արտահայտված շուկայական բնույթով և միջպետական քաղաքական կապերի վառ շեշտադրմամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, նշենք, որ 2004թ. դրությամբ օտարերկրյա կապիտալով ընկերությունների թիվը մեր հանրապետությունում կազմում էր 2024, որոնցից ԱՊՀ երկրների մասնակցությունն առկա էր միայն 560-ում (27,6%): Իսկ ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության միտումներն ու համադրական վերլուծություններն էլ ավելի ակնհայտ են դարձնում համագործակցության շրջանակներում տարեցտարի նվազող առևտրատնտեսական հարաբերությունները (աղյուսակ 5):

Աղյուսակ 5[14]

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը ԱՊՀ երկրների հետ 2007-2009 թթ.

(հազ. ԱՄՆ դոլար)

	2007 թ.	2007 թ.	2008 թ.	2008 թ.	2009 թ.	2009 թ.
	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում
ԱՊՀ երկրներ	267 475,5	1 032 365,1	249 215,5	1 262 771,5	138 327,5	1 041 770,3
Ադրբեջան	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Բելառուս	2 487,2	23 604,6	2 787,6	28 378,0	4 628,2	24 605,8
Ղազախստան	7 248,5	14 618,0	2 899,9	18 487,9	2 404,2	3 216,4
Ղրղզստան	154,4	16,4	218,5	26,8	192,0	372,5
Մոլդովա	2 465,2	1 688,6	1 640,6	1 278,5	1 302,2	1 852,4
Ռուսաստան	201 542,5	720 440,4	208 174,9	851 172,5	107 426,3	792 241,6
Տաջիկստան	60,2	236,0	23,4	27,2	264,7	2,1
Թուրքմենստան	2 520,2	9 539,3	4 467,4	38 017,7	2 990,2	14 322,7
Ուզբեկստան	1 519,6	10 434,8	3 108,9	10 541,0	1 609,7	3 208,4
Ուկրաինա	46 258,2	251 787,1	21 928,4	314 841,8	12 647,3	201 948,4
Ոչ ԱՊՀ երկրներ	884 825,3	2 235 422,9	807 945,9	3 163 357,9	571 830,0	2 279 363,6

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2007-2009 թթ-ի ընթացքում ԱՊՀ երկրներ արտահանումը կրճատվել է 2 անգամ (267 475,5-ից հասնելով 1041770,3 հազ. ԱՄՆ դոլարի), իսկ ոչ ԱՊՀ երկրներ արտահանումն ավելացել է շուրջ 3 անգամ (884 825,5-ից հասնելով 2 279 363,6 հազ. ԱՄՆ դոլար): Միևնույն ժամանակ ԱՊՀ-ից 2007-2009 թթ-ի ընթացքում ներմուծումը մնացել է նույն մակարդակի վրա՝ աննշան ավելացման միտումով: Պատկերը նույնն է նաև ոչ ԱՊՀ երկրների հետ փոխհարաբերություններում: Ամփոփելով՝ կարելի է ասել, որ ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառությունը վերջին երեք տարում նվազման միտում ունի: Դիտարկենք ՀՀ և ՌԴ միջև արտաքին առևտրի առանձնահատկությունները 2007-2009 թթ-ին: Այստեղ ևս պատկերը նույնն է. նկատում ենք արտահանման ծավալի կրկնակի նվազում (201542,5-ից հասնելով 107 426,3 հազ. ԱՄՆ դոլարի) և ներկրման անփոփոխ ծավալներ: Արտահանման խիստ ցածր ծավալը ռազմավարական այնպիսի հարևանի հետ, ինչպես Ռուսաստանն է (նկատի ունենալով հայ-ռուսական, առավել քան երբևէ, հավասարակշիռ հարաբերությունները, բարձր մակարդակի քաղաքական, ռազմական պայմանագրերը, նախկին տնտեսական կապերը, մեծաթիվ հայերի՝ Ռուսաստանում բնակ-

14 http://www.armstat.am/am/?nid=45&year=2010 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010:

վելու, աշխատելու փաստը), մտահոգվելու տեղիք է տալիս: Պետք է հաշվի առնել նաև այն, որ ՌԴ արտահանման ծավալի գերակշռող մասը բաժին է ընկնում միայն Մոսկվային, իսկ Դաշնային հարավային տարածաշրջաններ (Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասեր, Ռոստովի, Վոլգոգրադի, Աստրախանի մարզեր և այլն) արտահանվող ապրանքների ծավալն անհամեմատ փոքր է: Մինչդեռ այս տարածքում առկա են արտաքին առևտրի ծավալման աճի հեռանկարային լուրջ պայմաններ՝ տարածքային մերձավորությունը, նախկին տնտեսական կապերը և կոոպերացիան, հայ ազգաբնակչության համեմատաբար մեծ թիվը: Նման հնարավորություններ կան նաև դաշնային մյուս տարածաշրջաններում, և դրանց օգտագործումը հեռու է բավարար լինելուց:

Հայաստան-Ռուսաստան տնտեսական հարաբերությունների՝ միջպետական պայմանագրերով կարգավորումը, անշուշտ, արդյունավետության ապահովման ամուր հիմք է: Բայց, հաշվի առնելով Ռուսաստան պետության դաշնային կառուցվածքը և մեր երկրի հետ տարածքային անհամեմատ մեծությունը, համագործակցության արդյունավետությունն առավել կբարձրանա ՌԴ տարածքային սուբյեկտների հետ առևտրատնտեսական անմիջական կապերի հաստատմամբ: Մանավանդ որ վերջիններս ունեն տնտեսական ինքնուրույնություն:

Անհրաժեշտ են նաև արտահանման կառուցվածքային փոփոխություններ՝ ապրանքների տեսականու առումով: 2009 թ. արտահանման ընդհանուր ծավալում (1 041 770,3 հազ. ԱՄՆ դոլար) ամենամեծ բաժինն ունի ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտահանումը (80 114,2 հազ. ԱՄՆ դոլար), որը, սակայն, շուրջ 30 %-ով նվազել է 2007 թ-ի համեմատությամբ (126 192,2 հազ. ԱՄՆ դոլար): Սրա մեծ մասը բաժին է ընկնում բացառապես կոնյակին: Մննդամթերքի մյուս տեսակներից մեծ է մսի և մսից պատրաստված սննդամթերքների չափը (1164,4 հազ. ԱՄՆ դոլար): Այս թիվը քիչ ավելի է 2007 թ-ի համեմատ (1 260,5 հազ. ԱՄՆ դոլար): Իսկ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, ոսկերչական իրերը՝ ընդամենը 105 075,1 հազ. ԱՄՆ դոլար՝ կրկնակի նվազելով 2007 թ-ի համեմատ՝ 208 729,3 հազ. ԱՄՆ դոլար, հանքաքարերը՝ 115 886,5 հազ. ԱՄՆ դոլար, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները՝ 105 075,1 հազ. ԱՄՆ դոլար, արհեստական կաուչուկը և ռետինե իրերը՝ 0,7 հազ. ԱՄՆ դոլար, էլեկտրական մեքենաները և սարքավորումները, ձայնագրող ապարատները և դրանց մասերը՝ 1,9 հազ. ԱՄՆ դոլար և այլն: Այսինքն՝ ՌԴ արտահանվող ապրանքների շարքում աննշան է վերջին տարիներին Հայաստանից արտահանվող տեսականիում բարձր տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ծավալը: Նման իրողությունների պայմաններում առավել համոզիչ է դառնում արտահանման ավելացման գործում ազատ տնտեսական գոտու կիրառման կարևորությունը: Դա առավել արժևորվում է ինտեգրացման և գլոբալացման ներկա գործընթացների պայմաններում:

Ներկայումս ԱՊՀ շրջանակներում գործում են ավելի քան 50 միջպետական խորհրդատվական և համակարգող մարմիններ[15]: ԱՊՀ-ում պետությունների մասնակցությունը չի ենթադրում որևէ սահմանափակում, քանի որ ցանկացած պե-

15 Ա.Հ. Ներսիսյան, Լ.Մ. Մարտիրոսյան, ԱՊՀ երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, Ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի աշխարհագրական մասնագիտությունների համար, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ, 2010 թ.:

տություն ինքը կարող է ընտրել համագործակցության ուղղությունը և մասնակցության աստիճանը:

ՀՀ-ը, լինելով ԱՊՀ անդամ և սերտ տնտեսական հարաբերություններ ունենալով ԵՄ-ի հետ, նաև հանդիսանում է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) անդամ՝ 10 այլ երկրների հետ (Ալբանիա, Ադրբեջան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա և Ուկրաինա): Այդ համաձայնագիրն ընդգրկում է մի շարք ոլորտներ, ներառյալ՝ տնտեսական համագործակցություն և առևտուր, ներդրումներ, գիտական ու տեխնիկական համագործակցություն, ՍԾՏՀԿ բանկի հիմնադրում և համագործակցություն փոխադրումների ու կապի ոլորտներում: Համաձայնագրով չեն նախատեսվում դրույթներ՝ արտոնյալ առևտրի մասին:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին համաշխարհային տնտեսության զարգացման միտումների մեջ կարևոր տեղ է հատկացվում երկու խոշոր տնտեսական երևույթների՝ միջազգային տնտեսական ինտեգրացիայի և համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) հետագա խորացմանը: Ներկայումս աշխարհի ոչ մի պետություն, որքան էլ տարողունակ լինի նրա ներքին շուկան, չի կարող զերծ մնալ այս գործընթացներից: Սա առավել ևս վերաբերում է տնտեսական կիսաշրջափակման մեջ գտնվող, բնական ռեսուրսների սակավություն, փոքր ներքին շուկա ունեցող Հայաստանին, որը դեռևս չի հաղթահարել անցումային տնտեսական ցնցումները: Հայաստանի համար չափազանց կարևոր է ինտեգրացիայի նախընտրելի ուղղության որոշումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը հանդիսանում է ԱՊՀ անդամ և առավել սերտ տնտեսական կապերի մեջ է ԱՊՀ անդամ երկրների և Եվրոպական Միության անդամ երկրների հետ՝ այդ որոշումը պետք է կայացվի վերոնշյալ երկու ինտեգրացիոն խմբավորումների միջև: Ներկայումս ԱՊՀ անդամ պետությունների միջև առկա է տնտեսական կապերի որոշակի ճգնաժամ, իսկ հեռանկարներն ու զարգացման միտումները մշուշոտ են: Ի տարբերություն ԱՊՀ-ի՝ Եվրոպական Միությունը գտնվում է ինտեգրացիայի ավելի բարձր աստիճանի վրա, բացի այդ, Հայաստանի արտաքին առևտրի ծավալների հարաբերակցությունը միտում ունի փոխվելու ի օգուտ Եվրոպական Միության: Այսպիսով, նախընտրելի տարբերակը Եվրոպական Միությանը ինտեգրվելն է՝ պահպանելով, սակայն, ավանդական (ԱՊՀ) շուկաների հետ տնտեսական կապերը: Հայաստանը լուրջ անելիքներ ունի նաև՝ արտահանման համար արտադրվող ապրանքների հետ կապված: Այս առումով, ՀՀ համար հեռանկարային են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և զբոսաշրջության ոլորտները: Գլոբալացման սպառնալիքների ու առավելությունների գնահատման ելակետը պետք է դառնա այն տեսակետը, որ համաշխարհայնացումն (գլոբալիզացումն) գլոբալացումն օբյեկտիվ իրողություն է, անհրաժեշտ է ուղղակի որոշել սեփական երկրի վերաբերմունքը, տեղը և վարքագիծը դրա շրջանակներում:

The problems of integration of RA in the world economy and the ways of their solution in 1999-2009

Summary

It is very important to know the main direction of economic integration. Armenia has close relations only with CIS and EU, and that is why Armenia can only choose between CIS and EU. The Armenians think that it is necessary to have the closest relations not only with the CIS member countries, but also close economic relations with all the countries of the world economy and especially with all EU member countries. There are no doubts about the need for economic integration, which is conditioned by political and economic factors, but it is very important to know the general direction of integration. Now the dominant view among economists is that Armenia's basic economic integration direction is EU (because the EU's economy is bigger and more developed than CIS economy).

ԲԱԺԻՆ IV

ԻՐԱՎԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դերը և գործնական առանձնահատկությունները քրեական իրավունքում

Անդրանիկ Աբաջյան

Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս

Ներկայիս դատական և քննչական պրակտիկայում քիչ չեն տնտեսական հանցագործությունները, որոնք տարբերվում են իրենց տեսական և գործնական առանձնահատկություններով: ՀՀ քրեական օրենսգրքի 22–րդ գլուխը, այն է՝ 187–216–րդ հոդվածները նվիրված են տնտեսական հանցագործություններին, որոնք դասակարգվում են որոշակի խմբերի (գլուխների)՝ հիմք ընդունելով այն համասեռ հասարակական հարաբերությունների շրջանակը, որոնց դեմ ուղղված են որոշակի հանցագործություններ[1]: Ներկայացվող թեման վերաբերում է հենց այն հասարակական հարաբերություններին, որոնք այսօր չեն պաշտպանվում ՀՀ քրեական օրենքով, ինչն էլ արարքի գիտական որակման տեսանկյունից հղի է մի շարք քրեաիրավական խնդիրներով:

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված են հանցագործություններ, որոնք անմիջականորեն ուղղված են առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեության ապահովմանը: Մեր օրենսդիրը տնտեսական հանցագործությունների բաժնում շեշտը դրել է միայն առևտրային կաշառքի (քր. օր–ի հոդված 200) և արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու (քր. օր–ի հոդված 201) և առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (214) հոդվածների վրա, զուգահեռականներ անցկացնելով պետական ծառայության դեմ ուղղված այնպիսի հանցագործությունների օբյեկտիվ կողմերի հետ, ինչպիսիք են պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (քր. օր–ի հոդված 308) կաշառք ստանալը (քր. օր–ի հոդված 311) և կաշառք տալը (քր. օր–ի հոդված 312): Հիմք ընդունելով ներկայիս շուկայական հարաբերությունները, որտեղ կազմավորվել են բազմաթիվ առևտրային և այլ կազմակերպություններ, կարծում եմ, որ օրենսդիրը պետք է հաշվի առներ նաև այդ կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի լիարժեք պաշտպանության հիմնախնդիրը:

Առևտրային կաշառքը համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի առաջին մասի «Առևտրային կամ այլ կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պե-

1 ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, Խմբ.՝ Գ.Ս.Ղազինյան, Երևան, 2004թ., էջ 391–393:

տության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար» պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Համաձայն նույն հոդվածի 3–րդ մասի «Առևտրային կամ այլ կազմակերպության կառավարչական գործառույթ իրականացնող ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից **կաշառք ստանալը**, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար» պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Սակայն պետք է նշել, որ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարող են կատարվել ոչ միայն առևտրային կաշառքի, առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու և արհեստավարժ մարզամրցումների, հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու դեպքեր, այլև արարքներ, որոնք գիտական որակման տեսանկյունից վիճարկելի են կամ ընդհանրապես նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական հանցագործությունների բաժնում[2]: Օրինակ՝ վերցնենք դատական պրակտիկայից հետևյալ դեպքերը.

Անձը աշխատել է առևտրային կազմակերպություն հանդիսացող, տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթ ստացող՝ «Բնակարաններ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունում՝ որպես ժամանակավոր կացարանների բնակիչներին սպասարկող ծառայող: Ս.Դ.Պողոսյանին պատկանող, քաղաքի թիվ 200 տնակային տարածքում տեղադրված տնակը հաշվառելու և համարակալելու համար վերջինս 2008 թվականի օգոստոս ամսի կեսերին՝ իր կառավարչական գործառույթներն իրականացնելու ժամանակ, այցելել է նշված տնակ և շորթման եղանակով, տնակը չհաշվառելու սպառնալիքով Ս.Դ.Պողոսյանից պահան-

2 Уголовное право России., Особенная часть. Под редакцией академика В.Н. Кудрявцева и проф. А.В.Наумова, М., 2001, с. 220.

ջել է կաշառք, որի մի մասը ստացել է նույն պահին, իսկ մնացածը 2008 թվականի օգոստոսին[3]: Անձը ՀՀ քրեական օրենսգրքի 311–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ սակայն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասով և դատապարտվել ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մարտի 16–ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 8–ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ[4]:

Ինչպես տեսնում ենք տվյալ արարքի որակումը բխում է որոշակի առանձնահատկություններից, մի կողմից՝ արարքը ճիշտ չի որակվել, ինչը հանգեցրել է քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման, ինչպես նաև սխալ է մեկնաբանվել քրեական օրենքը, իսկ մյուս կողմից՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311.1–րդ հոդվածի 5–րդ մասի իմաստով անձը հանրային ծառայող չի համարվում, նա հանդիսացել է հանցագործության սուբյեկտ ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 311.1–րդ հոդվածի 5–րդ մասի, այլ 200–րդ հոդվածի 5–րդ մասի իմաստով, ուստի նրան մեղսագրվող արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի ոչ թե 311.1–րդ հոդվածի 1–ին, այլ 200–րդ հոդվածի 4–րդ մասով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28–րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով, իսկ նշված օրենքի 52–րդ հոդվածը լիազորում է համայնքին, բացառապես իր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու որոշմամբ ստեղծել առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ: ՀՀ Սահմանադրության 5–րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Ուստի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից առևտրային կազմակերպություն կարող է ստեղծվել բացառապես այդ մարմնի լիազորությունների իրականացման նպատակով, հակառակ դեպքում կխախտվի ոչ միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նշված դրույթը, այլև ՀՀ Սահմանադրության 5–րդ հոդվածը: Սույն գործով քաղաքի ավագանու 2006 թվականի հուլիսի 14–ի որոշմամբ՝ հիմնադրվել է «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունն այն պատճառաբանությամբ, որ լուծարվել են սեփական տները սպասարկող թաղային կոմիտեները, բազմաբնակարան շենքերի սպասարկումը իրականացնում են համատիրությունները, իսկ «Բնակարանային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որը սպասարկել է քաղաքի ժամանակավոր կացարանները, համայնքապատկան հին ֆոնդի տները սնանկ է ճանաչել:

3 Գաղտնիության ապահովման նպատակով հոդվածում քննարկվող մարդկանց տվյալները փոխված են:

4 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2009–2010 թթ., հատոր 2–րդ, Երևան, 2010 թ., էջ 125:

Վերոգրյալից բխում է, որ «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ավագանու որոշմամբ, գործել է քաղաքապետի հաստատած կանոնադրությամբ, տեղական ինքնակառավարման մարմնի խնդիրների և գործառույթների իրականացման, այդ թվում՝ ժամանակավոր կացարանների հաշվառման, համարակալման, հասցեավորման նպատակով: Հետևաբար այն փաստարկը, որ «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է առևտրային կազմակերպություն, ամենևին չի բացառում այդ կազմակերպության և դրա աշխատակիցների կողմից տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված առանձին խնդիրների և գործառույթների իրականացումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը պետք է օժտված լինի կազմակերպական, կառավարչական, վարչատնտեսական գործառույթներով: Տվյալ դեպքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ անձը հանդիսանալով «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից, իրականացրե՞լ է արդյոք քաղաքացիական աշխատանք և կարո՞ղ է արդյոք պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311.1–րդ հոդվածի 5–րդ մասի իմաստով համարվել հանրային ծառայող: ՀՀ քրեական օրենսգրքի 311.1–րդ հոդվածի 1–ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու՝ վարձատրություն տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակներում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր ծառայողական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 311.1–րդ հոդվածի 5–րդ մասի համաձայն՝ (…) հանրային ծառայողներ են համարվում, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1–ին հոդվածի համաձայն, հանրային ծառայություն իրականացնող անձինք:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի 1–ին կետի համաձայն՝ «հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը»:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի 5–րդ կետի համաձայն՝ քաղաքացիական աշխատանքը ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերա-

պահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:

Համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման՝ անձը հանդիսացել է «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից 2008 թ. հունվարի 9–ին վերջինիս հետ կնքված թիվ 25 աշխատանքային պայմանագրի հիման վրա, որով նրան հանձնարարվել է սպասարկելու ժամանակավոր կացարանների բնակիչներին: Նա տեղական ինքնակառավարման մարմնի հետ՝ ի դեմս քաղաքապետարանի, վերջինիս վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացման համար որևէ պայմանագիր չի կնքել, հետևաբար նա տեղական ինքնակառավարման մարմնի վարձու աշխատող չի հանդիսացել, նրա կատարած աշխատանքը քաղաքացիական աշխատանք չի կարող համարվել[5]:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով: Նույն օրենսգրքի 108–րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածների համաձայն՝ բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է բաժնետիրական ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում առևտրային կամ այլ կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից շորթմամբ կաշառք ստանալու համար: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասի իմաստով առևտրային կաշառք ստանալ է համարվում նշված անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար ապօրինաբար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար, երբ առևտրային կաշառքը պահանջվում է անձի իրավունքը կամ օրինական շահերը չվերականգնելու սպառնալիքով[6]:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52–րդ հոդվածի համաձայն՝ «Համայնքը իր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու որոշմամբ կարող է ստեղծել (…) առևտրային կազմակերպություններ

5 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2009–2010 թթ., հատոր 2–րդ, Երևան, 2010 թ., էջ 125:

6 ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, Խմբ.՝ Գ.Ս.Ղազինյան, Երևան, 2004 թ., էջ 391–393:

(…)»: **Տվյալ դեպքում գույքի սեփականատերը՝ համայնքը (քաղաքը), պահպանելով դրա նկատմամբ սեփականության իրավունքը, այն փաստացի հանձնել է իր կամքով ստեղծված քաղաքացիական իրավունքի նոր սուբյեկտի՝ առևտրային կազմակերպության («Բնակարանների սպասարկում» ՓԲԸ) կառավարմանը:** Սեփականատիրոջ՝ համայնքի գույքի օգտագործման հիման վրա առևտրային կազմակերպությունը կարող է թողարկել և իրացնել արտադրանք, կատարել աշխատանքներ, մատուցել ծառայություններ: Այլ կերպ՝ «Բնակարանների սպասարկում» ՓԲԸ–ն հանդիսացել է քաղաքացիական իրավունքի նոր սուբյեկտ, որի հիմնական նպատակը եղել է շահույթի ստացումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի հատուկ սուբյեկտին ապօրինաբար դրամ, արժեթղթեր կամ այլ գույք է տրվում կամ նրանց գույքային բնույթի ծառայություններ են մատուցվում, որպեսզի նրանք, իրենց գրաված դիրքի հետ կապված, կաշառք տվողի օգտին կատարեն որոշակի գործողություններ (անգործություն)[7]: Անձը հանդիսացել է առևտրային կազմակերպության կառավարչական գործառույթներ իրականացնող ծառայող, քանի որ իր կողմից ապօրինաբար դրամ ստանալը կապված է առևտրային կազմակերպությունում նրա զբաղեցրած դիրքի, ինչպես նաև նրա կողմից իրականացվող հատուկ լիազորությունների շրջանակի հետ: Նրանից է կախված եղել տուժողին պատկանող տնակը հաշվառելու հարցը, վերջինով էլ, իր հերթին, պայմանավորված է եղել տուժողին հետագայում բնակարան հատկացնելու հարցի լուծումը:

Այսպիսով՝ եթե հիմք ընդունենք այն հանգամանքը, որ «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունն հիմնադրվել է ավագանու կողմից 2006 թվականի հուլիսի 14–ի որոշմամբ, ապա Բ.Մարտիրոսյանի կողմից կատարված արարքը պարունակում է 311.1–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշները, իսկ եթե գույքի սեփականատերը՝ համայնքը (քաղաքը), պահպանելով դրա նկատմամբ սեփականության իրավունքը, այն փաստացի հանձնել է իր կամքով ստեղծված քաղաքացիական իրավունքի նոր սուբյեկտի՝ առևտրային կազմակերպության («Բնակարանների սպասարկում» ՓԲԸ) կառավարմանը, ապա արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 200–րդ հոդվածի 4–րդ մասով:

Բացի այդ, քննչական և դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, որտեղ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի գործողությունները թեկուզ և պարունակում են հանցագործության հատկանիշներ, սակայն արարքի հակաօրինականության բացակայության հիմքով չեն կարող դիտվել որպես հանցագործություն և առաջացնել քրեական պատասխանատվություն:

ՀՀ տարածքում գործում են խոշոր կազմակերպություններ, ձեռնարկություններ, մասնավոր հիմունքներով ստեղծված (հատուկ լիցենզավորված) անվտանգություն ապահովող կազմակերպություններ, որտեղ անձը կարող է ոչ միայն չարաշահել իր լիազորությունները, այլ ուղղակիորեն անցնել դրանք:

Օրինակ՝ ՌԴ քրեական օրենսգրքի 23–րդ գլուխը ամբողջությամբ վերաբերում է առևտրային և այլ կազմակերպությունների ծառայության շահերի դեմ ուղղված

7 ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Խմբ.՝ Գ.Ս.Ղազինյան, Երևան, 2000 թ., էջ 196:

հանցագործություններին: ՌԴ քրեական օրենսգրքի նույն գլխում նախատեսված 203–րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում մասնավոր թիկնապահական կամ խուզարկուական ծառայության ղեկավարի կամ ծառայողի կողմից իր լիազորություններն անցնելու համար, որոնք տրված են լիցենզիայի դրույթներին համապատասխան և կիրառվել են իր գործունեության շահերին հակառակ, եթե այդ գործողությունները կատարվել են բռնությամբ կամ դրա կիրառման սպառնալիքով[8]:

Մասնավոր թիկնապահական կամ խուզարկուական ծառայության ղեկավարի կամ ծառայողի գործունեության բովանդակությունը և խնդիրները նախատեսված են «ՌԴ–ում մասնավոր թիկնապահական (պահնորդական) կամ խուզարկուական գործունեության մասին» ՌԴ օրենքում[9]:

ՀՀ–ում նույնպես 2012թ. փետրվարի 9–ին ընդունվեց օրենք «Մասնավոր պահնորդական գործունեության» մասին: Համաձայն նույն օրենքի 1–ին հոդվածի 2–րդ կետիч «Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք»: Այսպիսով հարց է ծագում, թե ՀՀ–ում քրեական օրենսգրքի որ հոդվածով պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի օրինակ պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող իրավաբանական անձի ղեկավարը, եթե անցել է իր լիազորությունների սահմանը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 214–րդ հոդվածի՝ **առևտրային** կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը, եթե անձանց, կազմակերպություններին կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Տվյալ հոդվածով նախատեսված այն արարքը, որը վնաս է պատճառել միայն առևտրային կազմակերպությանը, որը չի հանդիսանում պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա կազմակերպություն, կարող է հիմք հանդիսանալ քրեական հետապնդում իրականացնելու համար բացառապես տվյալ կազմակերպության դիմումով կամ նրա համաձայնությամբ[10]:

Եթե արարքը վնաս է պատճառել այլ կազմակերպություններին կամ անձանց, հասարակության կամ պետության օրինական շահերին, ապա քրեական հետապնդումն իրականացվում է ընդհանուր հիմքերով:

---

8 Коментарий к уголовному кодексу РФ. Под ред. Н.Ф.Кузнецовой, М., 1998, с. 479.

9 Уголовное право Российской Федерации. Особенная часть. Учебник / Под ред. А.И. Рарога, М., 2000, с. 289.

10 Уголовное право России. Учебник для вузов. В 2–х т. Т. 2. Особенная часть / Под ред. А.Н.Игнатова, Ю.А. Красикова. М., 1999, с. 117.

Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 214–րդ հոդվածի դիսպոզիցիան չի ընդգրկում լիազորություններն անցնելու հետ կապված հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները, քանի որ անձը չի կատարել գործողություններ, որոնք ընդգրկված են 214–րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներով:

ՀՀ քրեական օրենսգրքի 214–րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ երեք պարտադիր հատկանիշներով.

1. առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ օգտագործելը,
2. անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառելը,
3. ծառայողի արարքի և նշված հետևանքի միջև պատճառական կապի առկայությունը[11]:

Ինչպես տեսնում ենք անձի գործողություններում բացակայում են լիազորությունների չարաշահման առանձնահատկությունները, իսկ լիազորություններն անցնելը (ոչ պաշտոնական) նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքում:

Ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական հանցագործությունների բաժինը՝ գտնում եմ, որ այն պետք է լրացնել այնպիսի հանցակազմով, որը քրեական պատասխանատվություն կսահմաներ նմանատիպ հանցագործությունների կատարման համար: Գտնում եմ, որ առևտրային և այլ կազմակերպություններում լիազորությունները չարաշահելուց բացի, պետք է նախատեսված լինի նաև լիազորությունները անցնելը հետևյալ բովանդակությամբ:

Հոդված 214.1 Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները անցնելը:

Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝ եթե այդ գործողությունները զուգորդվել են բռնությամբ կամ բռնության սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նույն արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

---

11 ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, Խմբ.՝ Գ.Ս.Ղազինյան, Երևան, 2004թ., էջ 453:

The role and practical features of crimes against legal activities of commercial and other organizations in criminal law

The 22nd chapter of the Criminal Law, that is articles from 187 to 216, describe economic crimes which are classified into certain groups (chapters) based on homogeneous range of public relations and towards which certain crimes are directed. The presented topic refers to those public relations that are not being protected by RA Criminal Law nowadays, which in its turn is fraught with a number of criminal issues from the viewpoint of academic qualification of the act.

Our legislator has stressed only on articles of commercial bribery (article 200 of the Criminal Law), bribery of participants and organizers of professional rehearsals, competitions and solemn commercial tenders (article 201 of the Criminal Law) and abuse of power given by employees of commercial and other organizations (article 214 of the Criminal Law) in the section of economic crimes by drawing parallels with objective sides of such crimes against public service as abuse of official power (article 308 of the Criminal Law), receiving a bribe (article 311 of the Criminal Law) and giving a bribe (article 312 of the Criminal Law). Based on current market relations around which a number of commercial and other types of organizations have been formed, in my opinion the legislator should have considered the problem of full protection of rights and legitimate interests of those organizations.

There are cases in investigative and judicial practice where, even though the actions of a person committed a publicly dangerous act contain crime features they can not be viewed as crime and cause criminal responsibility due to absence of antilegitimacy of the act.

Disposition of article 214 of the Criminal Law does not contain features of regulations of the relations connected with overcoming the power, as the person has not committed actions included in obligatory characteristics of the objective side of the crime as outlined in article 214.

Exploring the chapter of economic crimes of the Criminal Law of the Republic of Armenia I find that it needs to be replenished with such crime list that would define criminal responsibility for similar crimes. In my opinion, besides abusing the power in commercial and other organizations, overcoming of power should also be foreseen with the following content.

Article 214.1 Overcoming of power by employees of commercial and other organizations

Commitment of such acts on purpose by employees of commercial and other organizations which are obviously out of their power of duty and have resulted in significant damage for other persons, rights and legitimate interests of organizations, legitimate interests of public or the country (over the price or value of five–hundred–fold the amount of the minimum salary at the moment of the crime in case of damage to property) if those acts have been accompanied by violence or threat of violence.

is punished by fine with the amount from three–hundred–fold to five–hundred–fold the amount of the minimum salary or by arrest from two to three months of duration or by imprisonment for maximum of two years.

The same act which has caused serious consequences:

is punished by fine with the amount from five–hundred–fold to one–thousand–fold the amount of the minimum salary or by arrest from two to three months of duration or by imprisonment for maximum of four years.

Սոցիալական անհաւասարութեան գաղափարախօսական աղբիւրները Հայաստանի մէջ ըստ «ազատ շուկայական» համակարգի

Արա Խանճեան

Կալիֆորնիայի Վենտուրայի քոլեջի դասախոս (Ph.D.)

Խաչիկ Տէր Ղուկասեան

Արգենտինայի Սան Անտրէս համալսարանի դասախոս (Ph.D.)

Ներածական. Ազատ Շուկայ, Պատմութեան Աւարտ եւ Պետութեան Վախճան, կամ՝ ինչպէս լիբերալիզմի հեկեմոնիան Պաղ Պատերազմէն յետոյ

Ինչպէս նախկին Խորհրդային բոլոր հանրապետութիւններու պարագային, Հայաստանի մէջ ալ համայնավար վարչակարգի փլուզումը ուղի հարթեց ժողովրդավարութեան հաստատման եւ պետականօրէն ծրագրաւորուած տնտեսութեան ազատականացման: Անկախ պետականութեան կառուցումը, հետեւաբար, գրեթէ միաձուլուեցաւ այն ինչի հետ որ քաղաքագիտական գրականութեան մէջ հանրածանօթ դարձած է որպէս «անցումային գործընթաց» իր երկու վերոնշեալ բաղկացուցիչ տարրերով –քաղաքական համակարգի ժողովրդավարացում եւ տնտեսական համակարգի ազատականացում, առանց, անշուշտ, Հայաստանի պարագային անտեսելու արցախեան պատերազմի որոշիչ անդրադարձը:

Անկախ պետականութեան կառուցման միաձուլումը համակարգի ժողովրդավարացման եւ տնտեսական ազատականացման հետ կարելի է ըսել այլընտրանքային չէր տրուած ըլլալով որ Խորհրդային պատմական փորձառութեան սնանկացման փաստին դէմ յանդիման երկու գործընթացներն ալ համաշխարհային բնոյթ ստացած էին, անարգել իրենք իրենց կը հաստատէին որպէս զարգացման ուղի: Սակայն, հակառակ 1991–1995 ՀՀ Սահմանադրութեան հարցով ներազգային չորսամեայ առողջ բանավէճի առկայութեան, ուր, փաստօրէն, քաղաքական ու տնտեսական հասարակարգի առնուազն երկու տարբեր բնորդներ քննարկուեցան, ի վերջոյ, օրուայ իշխանութիւններու կողմէ ընդդիմութեան ձայնը լռեցնելու կոպիտ միջամտութեան գնով, պարտադրուեցաւ քաղաքատնտեսական հասարակարգի օրուայ գաղափարախօսական մէկ բնորդը որ կը յատկանշուի որպէս լիբերալ ժողովրդավարութիւն/ազատ շուկայական տնտեսութիւն: Գաղափարախօսական այդ բնորդի կոնկրետացման արտացոլացումը եղան կառավարման նախագահական համակարգը եւ տնտեսական ազատականացման անցնումի շոքային տարբերակը, ընդ որում, տնտեսութեան սեփականաշնորհումն ու շուկայի բացումը իրականացան առանց հանգրուաններու, անմիջական ու զանգուածային ձեւով:

Երկու մատնանշում անհրաժեշտ է հոս մէջբերել:

Առաջին, ընդհանրապէս բոլոր նախկին համայնավարական երկիրներու անցումային գործընթացը, Արեւելեան Եւրոպա ըլլայ այն թէ նախկին խորհրդային տարածք, տեղի ունեցաւ այս բնորդի գործնականացումով: Ինչ որ, բնականաբար, պատահական չէր, կային արտաքին պայմանաւորումներ, նոյնիսկ ճնշումներ, եւ երկրէն ներս նոր կազմաւորուող դրամատէր դասակարգին մօտ միջազգային ֆինանսներու հասողութիւն ձեռքբերելու շահագրգռութիւն:

Երկրորդ, բոլոր նախկին համայնավար երկիրներու մէջ հաստատուած այս քաղաքա–տնտեսական հասարակարգը, հակառակ այդ երկիրներու ներքին բոլոր վերիվայրումներուն, ներառեալ այսպէս կոչուած «գունաւոր յեղափոխութիւններ», իր շարունակականութեան կարողականութեան փաստը տուաւ: Իշխանութեան համար մղուող պայքարը տարբեր հատուածներու կամ անձնաւորութիւններու կողմէ մրցակցական իր փուլին բնորդի լաւագոյն գործադրման մարտահրաւէրին կ'անդրադառնայ, կոռուպցիայի թէ ինֆլյացիայի դէմ լաւագոյն պայքարի ատակութեան շուրջ կը բանավիճի, մէկ խօսքով՝ բնորդի թեքնիքական բարելաւման կը ձգտի, սակայն երբեք բնորդին գաղափարախօսական այլընտրանքը կամ արմատական, այսինքն՝ համակարգային, փոփոխութիւնը օրակարգի չի վերածեր:

Այս իրողութիւնը անշուշտ կը խօսի այն մասին որ համակարգի կառոյցը ամրակայուած է: Հայաստանի պարագային այդ շարունակականութեան փաստը տուաւ եւ 1998ի իշխանափոխութեան, եւ 2008ի նախագահական ընտրութիւններու ժամանակ. այն համակարգը որ անցումային գործընթացը վերածեց իշխանակարգային կառոյցի, մէկ եւ միեւնոյն գաղափարախօսական ուղղուածութիւնը ունի սոցիալ–տնտեսական քաղաքականութեան ոլորտին մէջ, թէկուզ եւ ազգային քաղաքականութեան օրակարգով ՀՀ առաջին Նախագահին եւ իր յաջորդներուն միջեւ տարբերութիւնը ակնյայտ է, ինչպէս եւ կան այս օրակարգի տարբեր կէտերու մէջ մօտեցման թէ հեռանկարային բնոյթի տարբերութիւններ երկրորդ եւ երրորդ Նախագահներուն միջեւ:

Լիբերալ ժողովրդավարութիւն/ազատ շուկայական տնտեսութիւն միաձոյլ գաղափարախօսական թէզը սկզբնականօրէն բանաձեւուած է Ֆրանսիս Ֆուքույամայի–Francis Fukuyama–1989ի այլեւս դասական «Պատմութեան աւմ՞րտը»[1] յօդուածով: Անոր արձագանգն են ի մէջ այլոց 1989ի Ուաշինկթընեան Կոնսենսուսը, որուն յանձնարարութիւններու հիման վրայ Լատին Ամերիկեան երկիրներ բարեկարգեցին իրենց տնտեսութիւնները 1990ականներուն, եւ Խորհրդային Միութեան փլուզումէն յետոյ նախկին համայնավար երկիրներու ԱՄՆի արտաքին օժանդակութեան քաղաքականութիւնը կանոնաւորող **Ֆրիտրմ Աքթ** անուան օրէնքը:Նոյն գաղափարախօսութեան հետեւումով եւրոպական գործընթացը թեւակոխեց Մասթրիխեան եւ յետ–Մասթրիխեան փուլը: Հակառակ օրին բարձրացած քննադատական ալիքին, որ գաղափարախօսական այս բնորդը բանաձեւեց որպէս Միակ Մտածողութիւն –Pensée Unique–դիտել տալով որ ան ժխտելով ամէն այլընտրանք խորքին մէջ ամբողջատիրական մտածողութիւն է, լիբերալ ժողովրդավարութիւն/ազատ շուկայական տնտեսութիւն ֆորմուլան տիրականօրէն իշխեց անցնող գրեթէ ամբողջ քսանամեակին եւ միայն 2001–2էն

1 "The End of History?" The National Interest, 1989 (Summer)

յետոյ Հարաւային Ամերիկայի մէջ տեղի տուաւ այսպէս կոչուած «Ձախ Թեքում»ի նոր հակուածութեան որպէս տիրական գաղափարախօսութիւն:

Հակառակ իր ենթադրած ներքին տրամաբանութեան, որուն համաձայն մարդկային ազատութեան երաշխիք լիբերալ ժողովրդավարութիւնն ու ազատ շուկայական տնտեսութիւնը իրարմով պայմանաւորուած են, զիրար կը փոխ–լրացնեն, բնորդը խորքին մէջ կը ներփակէր խորին հակասութիւններ: Այդ հակասութիւններուն առաջինը լիբերալ ժողովրդավարութեան սահմանափակումն է, երբ հարցը կը վերաբերի այն տարածելու նաեւ ազատ շուկայական տնտեսութեան վրայ, որովհետեւ այս վերջինը սկզբունքայնօրէն չ'ընդունիր եւ ոչ մէկ կաշկանդում: Աւելին՝ տնտեսութեան ազատականացման որոշումները ընդհանրապէս ժողովրդավարականօրէն չեն առնուիր որպէսզի վերահսկողութեան ռիսկը շրջանցնեն: Այսինքն՝ խորքին մէջ կայ ազատ շուկայական տոկմա որուն պէտք է յարմարի ժողովրդավարութիւնը ինք, եւ միակ ժողովրդավարութիւնը որ ինքզինք կ'ընդունի սահմանափակել նման ձեւով լիբերալ ժողովրդավարութիւնն է, որը, հետեւաբար, ժողովրդավարութեան միակ ընդունելի տարբերակն է...

Խորհրդային Միութեան փլուզումէն յետոյ, Հայաստանի ինչպէս միւս նախկին Խորհրդային հանրապետութիւններուն մէջ տնտեսութեան ազատականացումը առաջնորդեց մարքսեան ձեւաւորումով դրամագլուխի առաջին կուտակման, որուն հետեւանքով ալ առաջացան դասակարգային բաժանումներ: Լիբերալ ժողովրդավարութիւնը ձեւ առաւ այդ գործընթացին զուգահեռ եւ արգելք չհանդիսացաւ հասարակութեան դասակարգային շերտաւորման եւ անխուսափելի բեւեռացման: Այս զոյգ գործընթացներով ձեւաւորուող անկախ պետութիւնը ի վերջոյ դէմ յանդիման եկաւ սոցիալական անարդարութեան հարցին որպէս արդիւնք հարստութեան անհաւասար բաժանման: Աղքատացած ժողովրդային լայն հատուածներուն բնական ձգտումն է իր քուէով փոխել այս իրավիճակը, լիբերալ ժողովրդավարութեան ընդմէջէն ինքզինք սահմանող պետութիւնը ի յայտ եկաւ նախ եւ առաջ ազատ շուկայական տնտեսութեան պահպանման դերով, որով եւ դրամագլուխի առաջին կուտակումը, պետական թէկուզ եւ անուղղակի հովանաւորութեամբ, վերաճեցաւ մենաշնորհներու:

Հոս է որ երեւան կ'ելլէ հասարակարգի գաղափարախօսական բնորդի մէկ այլ հակասութիւնը. մինչ մէկ կողմէ ազատ շուկայական տնտեսութիւնը կը ձգտի պետութեան դերը նուազեցնել ընդհուպ մինչեւ անոր «վախճանը» երբ հասարակութիւնը, ենթադրաբար, պիտի հասնի ինքնակառավարման մակարդակին, միւս կողմէ պետութեան դերը անխուսափելի կը թուի նոյն այդ ազատ շուկայի պիտակին տակ առաջացած մենաշնորհներու պահպանման համար:

Լիբերալիզմի այն ներքին հակասութիւնը յետ–Պաղ Պատերազմեան ոլորտին յատուկ չէ անշուշտ: Անոր անդրադարձած է Karl Polanyi իր դասական *The Great Transformation*[2] գործին մէջ, որուն թէզը կը հաստատէ, թէ ազատ շուկայի գաղափարը ինքնին ութոփիա մըն էր որ չէր կրնար ինքնինստինքեան գոյութիւն ունենալ առանց քանդելու հասարակութեան մարդկային ու բնական էութիւնը: Ազատ շուկայի ենթադրած այդ քանդումին դէմ է որ հասարակութիւնը միջոցառումներ ձեռք

2 Karl Polanyi, The Great Transformation. Boston, MA: Beacon Press, 2001, p. 317.

առաւ, եւ, ինչպէս գրքի ամբողջ տեւողութեան Polanyi ցոյց կու տայ, ամբողջ հարիւրամեայ պատմական գործընթաց մը յատկանշուեցաւ այս «կրկնակի շարժումով» –double movement. մէկ կողմէ ազատ շուկայի տարածումն ու անոր հետեւանքով դարեր ամբողջ գոյութիւն ունեցած հասարակարգերու քանդում, միւս կողմէ հասարակական դիմադրութեան կազմակերպումը ընդդէմ ազատ շուկայի ենթադրած այս քանդումին: Ինչ որ առաւելի յատկանշական է, սակայն, Polanyi–ի վերլուծումին մէջ՝ լիբերալ պետութեան դերն էր այդ ութոփիայի պահպանման եւ տարածման մէջ: Այսինքն՝ եթէ մէկ կողմէն ազատ շուկայի ութոփիան ծնունդ տուաւ լիբերալ պետութեան, լիբերալ պետութիւնը իր կարգին այդ ութոփիային հաւատաց ու անոր համար գործեց առանց կանխատեսելու, առանց ոչ իսկ ենթադրելու, որ ազատ շուկան ինքզինք կրնար քանդել ինչպէս պատահեցաւ 1929ին, կամ հասարակական դիմադրութիւնը կրնար առաջնորդել ֆաշիստական թէ կոմունիստական ամբողջատիրութիւններու եւ անոնց ներհակ այլ բնոյթի աղէտներու:

Այն ինչ որ 1980ական թուականներէն ի վեր ժողովրդականացած է որպէս համաշխարհայնացում –գլոբալիզացիա– համանման է 19րդ դարու ազատ շուկայի համաշխարհային տարածման գործընթացին: Հիմնական տարբերութիւնը երկու գործընթացներուն կը կայանայ դրամատիրութեան կառոյցին. մինչ 19րդ դարու դրամատիրութիւն էապէս ծանր ճարտարարուեստի արտադրութեան վրայ հիմնուած էր, 20րդ դարու աւարտին միջազգային տնտեսութեան մէջ ֆինանսներու շրջագայումը զարգացման գլխաւոր շարժակի կը վերածուի: Առաւել՝Միացեալ Նահանգներ կու գայ ստանձնելու համակարգի ամրակայման ու տարածման այն դերակատարութիւնը որ Մեծն Բրիտանիա խաղացած էր մէկ դար առաջ: 1980ական թուականներուն, եւ զուգահեռաբար համաշխարհային տնտեսական համակարգի կառուցային այս փոփոխութեան, երկու գեր–պետութեանց, Միացեալ Նահանգներու եւ Խորհրդային Միութեան, միջեւ լարուածութիւնը սրեցաւ եւ արտայայտուեցաւ Ռեկընի վարչակարգին կողմէ նախաձեռնուած ռազմարշաւին ընդմէջէն, որ, ի վերջոյ, արիւնաքամ ըրաւ արդէն լճացած եւ Աֆղանիստանի պատերազմով հիւծելու սկսած խորհրդային տնտեսութիւնը: Ծանօթ է, որ Գորբաչովի բարենորոգումները կը միտէին տնտեսութեան վերաշխուժացման, սակայն այդ քաղաքականութիւնը ի վերջոյ յանգեցաւ իր չնախատեսած եւ չցանկացած արդիւնքին՝ Խորհրդային Միութեան փլուզման եւ անոր հետ՝ համայնավար գաղափարախօսութեան մահացու ճգնաժամուն:

Խորհրդային պատմական փորձի սնանկացման փաստը մէկ կողմէ եւ Ուաշինկթընէն ու անոր հովանաւորութեան տակ գործող միջազգային ֆինանսական հաստատութիւններու ճնշումները միւս կողմէ կրնան բացատրել ի շարս այլ նախկին Խորհրդային հանրապետութիւններու նաեւ Հայաստանի անցումային գործընթացի ժամանակ ազատ շուկայական գաղափարախօսութեան մենաշնորհը, որ հաստատուեցաւ, ամրագրուեցաւ եւ խորացաւ շնորհիւ անկախութենէն ի վեր որդեգրուած տնտեսական պետական քաղաքականութեան: Այդ գաղափարախօսութիւնը, միաժամանակ, անցումային գործընթացով, եւ ի մասնաւորի սեփականաշնորհման ծրագրով, կը ձգտի երաշխաւորել երկրի հարստութիւնը իր ձեռքերուն մէջ կեդրոնացուցած փոքրամասնութեան ռէալ մենաշնորհներուն լեգիդիմութիւնը: Ի՞նչ ալ

ըլլան իշխանութեան համար մղուած պայքարներուն ընթացքին հանրային բանավէճերը, եւ հակառակ արտաքին քաղաքականութեան մէջ առկայ տարբեր մօտեցումներուն, Հայաստանի մէջ, դժբաղդաբար, չէ ձեւաւորուած ազատ շուկայի ութոփիայի նկատմամբ առողջ քննադատական մտածողութիւն: Այս մտածողութեան բացակայութիւնն, ի դէպ, կը բացատրէ, ի մէջ այլոց, ժողովրդային լայն խաւերու վստահութիւն ներշնչող ընդդիմութեան մը կազմաւորումը:

Նման մտածողութիւն պէտք է շրջանցէ տեսական այն թակարդը որուն համաձայն Հայաստանի մէջ մենաշնորհային մեծ դրամագլուխի շուկայական տնտեսութիւնը ազատ տնտեսութիւն չէ, հետեւաբար լուծումն այն է որ պետութիւնը պէտք է երաշխաւորէ այդ պայմանները, վերացնէ կոռուպցիան, վերածուի իսկական լիբերալ պետութեան եւ ապա առաջարկն ու պահանջարկը իրարու կը հաւասարակշռեն: Ազատ շուկան պարզապէս ութոփիա մըն է, եւ շփոթ կ'առաջացնէ տնտեսական զարգացման մէջ պետութեան իսկական դերակատարութեան մէջ, որովհետեւ՝ (ա) սխալ է այն տեսական բանաձեւումը, որուն համաձայն տնտեսական զարգացումը կը յանգեցնէ պետութեան կշիռի նուազեցման, (բ) զարգացած երկիրներուն մէջ պետութիւնը միշտ ալ դերակատար եղած է տնտեսութեան մէջ, եւ (գ) 2001–2էն ի վեր Հարաւային Ամերիկայի մէջ «Թեքում դէպի Ձախ» երեւոյթն ու 2008ի ֆինանսական համաշխարհային տագնապը բարացուցական դարձուցած են պետութեան դերակատարութեան վերարժեւորումը:

Հայաստանի մէջ, սակայն, հակառակ 2008էն ի վեր սոցիալական ճգնաժամի խորացման, ազատ շուկայական ութոփիան տեղի չի տար, ինչ որ, անշուշտ, պատահականութեան արդիւնք չէ: Անոր ետին կայ անցումային տարիներուն իրենց տնտեսագիտական պատրաստութիւնը Արեւմուտքի ամենաուղղափառ թեքումով համալսարաններուն մէջ ստացած մտաւորականներու ամբողջ հատուած մը, որուն թեքնիք պատրաստութիւնը եթէ բարձր մասնագիտական մակարդակի է, այդուհանդերձ, դժբաղդաբար, զուրկ է քննադատական մտածողութենէ կամ այլընտրանքային առաջարկներու բանաձեւում է: Ամբողջ բանավէճը, երբ ըլլայ, զուտ թեքնիքական բնոյթի է, կամ ալ՝ անձնական մրցակցութեան մղումով: Քննադատական մտքի նման բացակայութիւն իր կարգին պատահական չէ երկրի մը մէջ ուր տնտեսական քաղաքականութիւնը հիմնականին մէջ իշխող փոքրամասնական դասակարգի մենաշնորհներու պահպանման կը ծառայէ: Չկայ ժողովրդային խաւ մը, որ քաղաքացիական հասարակութեան գիտակցութեամբ սոցիալական հարցերու բարձրացման եւ սոցիալական իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր զօրաշարժ առաջացնէ: Ոչ ալ կան քաղաքական ուժեր, որոնք այդ այլընտրանքի յանձնառութեամբ իշխանութեան համար մղուած օրինական պայքարը հիմնեն ժողովրդային գիտակցման ու զօրաշարժի երկարաժամկէտ հեռանկարին վրայ եւ ատոր համար ալ հրաժարին իշխող փոքրամասնութեան մենաշնորհներուն թէկուզ եւ մտաւորականօրէն քննադատելու ինքնազսպումէն:

Բայց լիբերալ ժողովրդավարութիւն/ազատ շուկայական տնտեսութիւն գաղափարախօսական բնորդի համաշխարհային հեկեմոնիան տեղի տալու սկսած է: Հարաւային Ամերիկայի մէջ «Դէպի Ձախ Թեքում» երեւոյթը, անոր ամենէն յանդուգն արտայայտութեամբ՝ Վենեզուելայի Նախագահ Ուկօ Չավէսի Պոլովարեան

Յեղափոխութեան «21րդ դարու սոցիալիզմ», եւ գաղափարախօսական, եւ կոնկրետ այլընտրանքի առկայութեան փաստը տուած է: Մասնակցական ժողովրդավարութիւնը միակն է որ զանգուածային լայն զօրաշարժի ուղիով սոցիալական անհաւասարութեան լուծումներու ուղի կը հարթէ: Նոյն երկիրներու տնտեսական հետեւողական զարգացումը վերջին տասնամեակին ցոյց կու տայ նաեւ պետութեան ակտիւ դերի կարեւորութիւնը ազատ շուկայական տնտեսութիւնը այլընտրանքային զարգացման համակարգով բանաձեւելուն մէջ: 2008ի տագնապէն յետոյ, եւ անոր հետեւանքներու շարունակակման լոյսին տակ, սպասելի է որ գաղափարախօսական նոր այլընտրանք մը բանաձուի: ....

Հայաստանի մէջ սոցիալական անհաւասարութեան գաղափարախօսական արմատներու բացայայտումը նպատակադրող մեր այս գրութիւնը որպէս մեկնակէտ ունի վարչապետ Տիգրան Սարգիսեանի «Պետութեան վախճանը» յօդուածը[3], որ հարազատ արտայայտութիւնն է այն ինչ Polanyi բանաձեւած է որպէս «ազատ շուկայական ութոփիա» եւ պարադիկմային մարմնացումն է Հայաստանի անկախացումէն ի վեր տնտեսական քաղաքականութեան վրայ միահեծանօրէն տիրող նէօլիբերալ գաղափարախօսութեան: Բրիտանացի պատմաբանին Մեծ Բարեփոխումը թէզի վարկածին տեսութեան հիման վրայ, մեր յօդուածը առաջին հերթին պատմական ոլորտի մէջ կը տեղադրէ Հայաստանի յետ–խորհրդային անցումի գործընթացը՝ բացայայտելու համար ազատ–շուկայական տնտեսա«գիտական» համոզումներուն գաղափարախօսական ենթահողը եւ պետութեան դերը՝ անցումային գործընթացի ժամանակ դրամագլուխի կուտակման ու նոր հասարակարգի նախ ստեղծման, ապա եւ ամրապնդման ու պահպանման մէջ: Ապա, երկրի սոցիալական անհաւասարութեան տնտեսական գործօններու վերլուծումով մենք կը հասնինք այն եզրակացութեան որ անհրաժեշտ են ոչ միայն թեքնիք բնոյթի պատշաճեցումներ վերջ տալու համար հարստութեան անարդար բաշխումին այլ դէպի սոցիալ–դեմոկրատական համակարգ առաջնորդող արմատական բարեկարգումներ որոնք անխուսափելիօրէն նաեւ տնտեսական քաղաքականութեան գաղափարախօսութեան փոփոխութիւն մը պիտի արտացոլեն:

Ազատ շուկայական ութոփիան եւ պետութեան դերը

Karl Polanyi իր դասական **The Great Transformation**[4] գործին մէջ կը վերլուծէ այն ինչ կը բանաձեւէ որպէս « 19րդ դարու քաղաքականութիւն»ը, որ հարիւր տարուայ խաղաղութիւն պարգեւելէ յետոյ մարդկութեան փլուզեցաւ Առաջին Համաշխարհային Պատերազմին: Առաջին անգամ 1944ին լոյս տեսած անգլիացի մտաւորականին այս աշխատասիրութիւնը, որուն ենթախորագիրն է «Մեր ժամանակի քաղաքական եւ տնտեսական ակունքները» (“The Political and Economic Origins of Our Time” –թարգմանութիւնը գրութեան հեղինակին) կը նպատակադրէ բացայայտել այդ փլուզման խորքային գործօնները եւ անհրաժեշտ դասերը քաղել ի մտի ունենալով Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին արդէն ձեւաւորուող նոր աշխարհակարգը:

3 Տիգրան Սարգիսեան, Պետութեան վախճանը, 21րդ դար, 1 (19), 2008, էջ 3–26:

4 Karl Polanyi, The Great Transformation. Boston, MA: Beacon Press, 2001, p. 317.

Polanyi կը հաստատէ թէ 19րդ դարու քաղաքականութիւնը կառուցուած էր չորս հիմնարկութիւններու –institutions– վրայ: Անոնցմէ երկուքը քաղաքական բնոյթի էին, միւս երկուքը՝ տնտեսական: Առաջին հիմնարկութիւնը ուժերու հաւասարակշռութեան համակարգն էր, որ առաջքը առաւ Մեծ Պետութիւններու միջեւ երկարատեւ եւ աւերիչ պատերազմի: Երկրորդը ոսկիի չափանիշն էր –gold standard–, որ կը խորհրդանշէր համաշխարհային միակ տնտեսութեան կազմակերպումը: Երրորդը ազատ շուկան էր –self–regulating market–՝ 19րդ դարու նիւթական բարիքներու ստեղծման աղբիւրը: Չորրորդը՝ լիբերալ պետութիւնն էր: Այս չորս գործօններէն Polanyi ամենէն էականը կը նկատէ ազատ շուկայի հիմնարկութիւնը, այն «նորարութիւնը» որ ծնունդ տուաւ իւրայատուկ քաղաքականութեան մը: «Ոսկիի չափանիշը լոկ փորձ մըն էր ներքին շուկայական համակարգը տարածելու միջազգային դաշտ: Ուժերու հաւասարակշռութեան համակարգը ոսկիի չափանիշին վրայ բարձրացած վերնակառոյց մըն էր որ, մասամբ, գործեց այդ չափանիշին ընդմէջէն: Լիբերալ պետութիւնը ազատ շուկայի ստեղծումն էր»[5]:

The Great Transformation–ին գլխաւոր թէզը կը հաստատէ, թէ ազատ շուկայի գաղափարը ինքնին ութոփիա մըն էր որ չէր կրնար ինքնինստինքեան գոյութիւն ունենալ առանց քանդելու հասարակութեան մարդկային ու բնական էութիւնը: Ազատ շուկայի ենթադրած այդ քանդումին դէմ է որ հասարակութիւնը միջոցառումներ ձեռք առաւ, եւ, ինչպէս գրքի ամբողջ տեւողութեան Polanyi ցոյց կու տայ, ամբողջ հարիւրամեայ պատմական գործընթաց մը յատկանշուեցաւ այս «կրկնակի շարժումով» –double movement. Մէկ կողմէ ազատ շուկայի տարածումն ու անոր հետեւանքով դարեր ամբողջ գոյութիւն ունեցած հասարակարգերու քանդում, միւս կողմէ հասարակական դիմադրութեան կազմակերպումը ընդդէմ ազատ շուկայի ենթադրած այս քանդումին: Ինչ որ առաւելի յատկանշական է, սակայն, Polanyi–ի վերլուծումին մէջ՝ լիբերալ պետութեան դերն էր այդ ութոփիայի պահպանման եւ տարածման մէջ: Այսինքն՝ եթէ մէկ կողմէն ազատ շուկայի ութոփիան ծնունդ տուաւ լիբերալ պետութեան, լիբերալ պետութիւնը իր կարգին այդ ութոփիային հաւատաց ու անոր համար գործեց առանց կանխատեսելու, առանց ոչ իսկ ենթադրելու, որ ազատ շուկան ինքզինք կրնար քանդել ինչպէս պատահեցաւ 1929ին, կամ հասարակական դիմադրութիւնը կրնար առաջնորդել ֆաշիստական թէ կոմունիստական ամբողջատիրութիւններու եւ անոնց ներհակ այլ բնոյթի աղէտներու:

Իր համոզումներով խորապէս հումանիստ Polanyi աշխատասիրութիւնը կ'աւարտէ խորհրդածելով մարդկային ազատութեան ապագայի մասին: Վկայ ըլլալով ազատ շուկայի ութոփիայի հետեւանքով ամբողջ քաղաքակրթութեան մը փլուզման, միաժամանակ, սակայն, հաւատալով մարդ արարածի կարողութեան՝ դասեր քաղելու պատմութենէն, ան կը հետեւի այլ հանրածանօթ հումանիստի մը՝ Robert Owen–ի ընկերվարական համոզումներուն, որոնք մարդ արարածին ազատութիւնը կը դիտեն հասարակութեան ընդմէջէն եւ ոչ թէ անկէ դուրս՝ կրօնական թէ ազատ շուկայական ութոփիաներու մէջ: Ոչ ալ, բնականաբար, ֆաշիստական թէ կոմունիստական հասարակարգերու մէջ որոնք ազատութեան ժխտումն իսկ

5 Karl Polanyi, The Great Transformation. Boston, MA: Beacon Press, 2001, p. 3.

են: Այդ ազատ հասարակութիւնը, ինչպէս դեռեւս Երկրորդ Համաշխարհային Պատերազմի համատարած աւերումին մէջ իր գիրքը գրող Polanyi համոզուած էր, պէտք ունի այն ժամանակ արդէն ձեւաւորուող բարեխնամ պետութեան –Wellfare State– որուն մարմնաւորումը կը հանդիսանար օրին ԱՄՆի նախագահ Franklin D. Roosevelt–ի New Deal–ը:

Հակառակ սոցիալիստական իր յանձնառութեան, եւ հակառակ իր թէզի ակնյայտօրէն մարքսեան տրամաբանութեան, Polanyi չի մատնուիր դրամատիրութեան կործանման որեւէ մարգարէութեան աժան փորձութեան: Ընդհակառակը, եթէ իր թէզին տրամաբանութեան հետեւինք, ինչ որ ան միաժամանակ ինչ որ չափով կը կանխագուշակէր եւ կը փափաքէր՝ 19րդ դարու քաղաքականութեան ծնունդ տուած Մեծ Բարեփոխման բնոյթէն տարբեր այլ Մեծ Բարեփոխում մըն էր, այն որ պիտի հիմնուէր քէյնէզեանական տնտեսագիտութեան, բարեխնամ պետութեան, իր ճակատագրին տէր ակտիւ քաղաքացիական հասարակութեան մը եւ միջազգային համագործակցութեան վրայ:

Այն ինչ որ 1980ական թուականներէն ի վեր ժողովրդականացած է որպէս համաշխարհայնացում –գլոբալիզացիա– շատ մը զգաստ վերլուծողներ բանաձեւած են որպէս «Երկրորդ Մեծ Բարեփոխում»: Պատմական բոլոր համակարգային փոփոխութիւններուն նման, համաշխարհայնացումն ալ ունէր եւ իր ուղին հարթող քաղաքական գործօնները, եւ անոնց լեգիդիմութեան ձգտող գաղափարախօսական բանաձեւումները: Այս իմաստով, եւ առանց խորացնելու, համաշխարհայնացման գործընթացը վերակենդանացուց ազատ շուկայական ութոփիան, որ իր բանաձեւումը գտաւ ԱՄՆի նախագահ Ronald Reagan–ի 1980ական թուականներուն հռչակաւոր դարձած «պետութիւնը լուծում չէ, պետութիւնը ինքը խնդիրն է» –“The State is not the solution; the State is the problem”– նախադասութեամբ: Այն ինչ ԱՄՆի –եւ միաժամանակ Մեծն Բրիտանիոյ– մէջ ծնունդ առած էր որպէս Պահպանողականներու ընտրարշաւ –«յեղափոխութիւն» պիտի անուանուի հետագային– որուն կէտ–նպատակն էր New Deal–ի բարեխնամ պետութիւնը վերցնել եւ զայն փոխարինել «շուկայի բարեկամ պետութեամբ» –market–friendly State– մը, Պաղ Պատերազմի աւարտին վերածուեցաւ միջազգային բեմին վրայ մնացած միակ գերպետութեան՝ ԱՄՆի արտաքին քաղաքականութիւնը յատկանշող գաղափարախօսական ինքնութեան: Francis Fukuyama–ի հանրածանօթ «Պատմութեան աւարտ»ի բանաձեւումը այս գաղափարախօսութեան թերեւս ամենէն ցայտուն եւ տարածուած հաստատումն է:

Ազատ շուկայի ութոփիային վրայ հիմնուած է նաեւ Տիգրան Սարգսեանի «Պետութեան վախճանը» յօդուածը[6]: Նման հիմնաւորման առիթ կու տայ յատկապէս այն իրողութիւնը, որ հակառակ պետութեան մասին խօսելուն, յօդուածին մէջ ակնյայտօրէն բացակայ է այդ «ինստիտուտ»ի պատմական զարգացման քաղաքական տեսութիւն մը: Յօդուածագիրը կ’օգտագործէ պետութեան յղացքի քանի մը սահմանումներ, անոնց հիման վրայ կ’առանձնացնէ պետութեան երեք հիմնական յատկանիշեր եւ անոնց իմաստազրկման հեռանկարին հետեւումով կը զար-

6 Տիգրան Սարգսեան, Պետութեան վախճանը, 21րդ դար, 1 (19), 2008, էջ 3–26:

գացնէ պետութեան վերացման իր տեսութիւնը[7]: Այդուհանդերձ, թէկուզ եւ բացառաբար քաղաքական տնտեսութեան –political economy– տեսանկիւնէն (ա) սխալ է այն տեսական բանաձեւումը, որուն համաձայն տնտեսական զարգացումը կը յանգեցնէ պետութեան կշիռի նուազեցման, (բ) զարգացած երկիրներուն մէջ պետութիւնը միշտ ալ դերակատար եղած է տնտեսութեան մէջ, եւ (գ) 2008ի ֆինանսական համաշխարհային տագնապը բարացուցական դարձուցած է պետութեան դերակատարութեան վերարժեւորումը:

Ստորեւ կը մանրամասնենք այս երեք տեսական բանաձեւումները իւրաքանչիւրին պարագային ներկայացնելով փաստական տուեալներ, եւ մեր մասնակի եզրայանգումներուն մէջ կ'անդրադառնանք Հայաստանի մէջ ազատ շուկայական ութոփիայի էութեան եւ անոր շարունակման վտանգին:

Ա) Տնտեսական աճի զուգահեռ տնտեսութեան մէջ պետութեան կշիռն ալ կ'աւելնայ

Տասնիններորդ դարու Գերմանացի տնտեսագէտ Ատոլֆ Վակների համաձայն, երբ պետութիւնները տնտեսապէս կը զարգանան և կը հարստանան, պետութեան ծախսերը բաղդատած երկրի տարեկան ընդհանուր արտադրութեան –կամ ինչպէս տնտեսագէտները կ'ըսեն Համախառն Ներքին Արտադրութեան (ՀՆԱ), կը բարձրանայ և պետութեան կշիռը տնտեսութեան մէջ կ'աւելնայ: Այս երեւոյթը կոչուեցաւ Վակների Օրէնք: Երկրի մը մէջ պետութեան կշիռի ցուցանիշներէն մէկը կառավարութեան տարեկան ծախսերուն չափն է բաղդատած ՀՆԱին: Քսաներորդ դարը ցոյց տուաւ թէ Վակների Օրէնքը ճիշդ էր: Բոլոր տնտեսապես զարգացած երկիրներուն մէջ, նոյնիսկ ԱՄՆ և Ճաբոն, տասնամեակներու ընթացքին երբ երկրի տնտեսութիւնը աճած է, նաեւ բարձրացած է պետութեան կշիռը տնտեսութեան մէջ: Երկիր մը երբ տնտեսապէս կը զարգանայ և կը հարստանայ, պետութիւնը կրնայ աւելի հարկ հաւաքել և ի վիճակի կ՚ըլլայ հայթայթելու ուսում և առողջապահութիւն ժողովուրդի բոլոր անդամներուն համար, ինչ որ եւ պետութեան ծախսերը կը բարձրացնէ: Զարգացող բոլոր տնտեսութիւնները, առաւել, կարիք կը ստեղծեն պետական ծառայութեանց յաւելեալ կարգաւորման:

Տնտեսապես զարգացած ու հարուստ երկրի մը կառավարութիւնը կրնայ աւելի ծառայութիւններ հրամցնել ժողովուրդին, հետեւաբար զարգացած և հարուստ երկիրներու մէջ ամէն մէկ նախարարութիւն կ՚ունենայ շատ աւելի ծառայութիւններ և գրասենեակներ քան թէ տնտեսապէս նուազ զարգացած երկիրներու մէջ: Օրինակ, երբ ԱՄՆի գիւղատնտեսական նախարարութեան համացանցը երթանք, **www.usda.gov** կը տեսնենք թէ նախարարութիւնը ունի 12 տարբեր գրասենեակներ, 17 կազմակերպութիւններ, և 7 ծառայութիւններ: Իսկ ամէն մէկ բաժանմունք ունի բազմաթիւ ենթաբաժանմունքներ, ստեղծելով հսկայական պետական վարչամեքենայ որ խորապէս կը կարգաւորէ շուկան: Հայաստանի մէջ տակաւին այդ բազմաթիւ պետական բաժանմունքները գոյութիւն չունին: Այս կը նշանակէ թէ երբ Հայաստանի տնտեսութիւնը եկող տասնամեակներու աճի և զարգանայ, կառավարութիւնը կարելիութիւնը պիտի ունենայ տրամադրելու ժողովուրդին բազ-

7 Նոյն տեղում, էջ 5:

մաթիւ նոր ծառայութիւններ որոնք այսօր տրամադրելու իվիճակի չէ քանի չունի նիւթական կարողութիւն: Կարգ մը պարագաներու, պետութիւնը նման ծառայութիւն չի տրամադրեր որովհետեւ տնտեսութիւնը տակաւին պէտք եղած չափով չէ զարգացած եւ, հետեւաբար,նման պետական ծառայութեան կարիքը դեռեւս շատ չ'զգացուիր: Այս կը նշանակէ թէ ժամանակի ընթացքին տնտեսական զարգացման պայմաններու մէջ պետութեան կշիռը և դերը Հայաստանի մէջ պիտի բարձրանայ և ոչ թէ նուազի:

Հայաստանի պետութեան ծախսերը երկրի ՀՆԱ–ին մօտաւորապես 20 տոկոսը կը կազմեն: Երբ զարգացած երկիրներու տնտեսական պատմութիւնը նկատի ունենանք, կը տեսնենք թէ Հայաստանի պետութիւնը մեծնալու և իր կշիռը բարձրացնելու տակաւին շատ ճամբայ ունի կտրելիք: Նուազագոյնը պէտք է իր կշիռը բարձրացնէ, 20 տոկոսէն, 30 տոկոս որպէսզի հասնի տնտեսապէս զարգացած երկիրներու պետութիւներու մակարդակին: Հետեւաբար, տակաւին չզարգացած տնտեսութեան մը պարագային պետութեան վախճանին մասին կարելի է խօսիլ միայն գաղափարախօսական համոզումի դիրքերը, ոչ թէ որպէս առարկայական իրողութիւն կամ այն ինչ կանխատեսելի է, այլ՝ այն ինչ ցանկալի է:

Այսպէս, մէջբերելու համար քանի մը օրինակ, Ֆրանսայի և Անգլիոյ պարագային, մօտաւորապէս 1915–ին պետութեան ծախսերը բաղդատած ՀՆԱ–ին անցան 20 տոկոսի սահմանը: Ֆրանսայի պետութեան ծախսերը 2005–ին մօտաւորապես երկրի եկամուտին 52 տոկոսն էին, մինչ Անգլիոյ պարագային մօտաւորապես 45 տոկոսը: Իսկ Շուէտը և ԱՄՆը մօտաւորապես 1950–ին անցան 20 տոկոսի սահմանը: 2005–ին Միացեալ Նահանգներու մէջ պետութեան ծախսերը երկրի եկամուտին մօտ 33 տոկոսն կը կազմէին, իսկ Շուէտի մէջ՝ 56 տոկոսը[8]:

Ճիշդ է, բազմաթիւ Արեւմտեան Եւրոպայի երկիրներու մէջ 1995–էն 2005 կառավարութիւններու ծախսերը բաղդատած ՀՆԱ–ի պակսեցան: Օրինակ՝ Շուէտի մէջ 65 տոկոսէն իչաւ 55 տոկոսի իսկ Ֆրանսայի մէջ 71–էն 53: Բայց բոլոր տնտեսապէս զարգացած Եւրոպական երկիրներու մէջ 50–ական, 60–ական և 70–ական տարիներուն պետութեան կշիռը բարձրացաւ մեծ չափերով: Անոր արդիւնքով ալ վերացան անօթութիւնը և անտունութիւնը, հաստատուեցան հանրային առողջապահութիւն, ուսում, փոխադրական միջոց, փոքրերու ցերեկուայ խնամք... այս բոլորը հասարակութեան տրամադրուեցաւ շնորհիւ իր կշիռը աւելցուցած պետութեան մը: Աւելին՝ առատաձեռն ծերութեան թոշակ, անգործութեան թոշակ և աղքատութեան նպաստներ տրամադրելի եղան այդ տարիներուն: 1980–ական և 90–ական թուականներուն Եւրոպական այս երկիրներուն մէջ, քուէարկողները որոշեցին նուազեցնել կառավարական նպաստները և պակսեցաւ պետութեան կշիռը տնտեսութեան մէջ: Սակայն գործածել Շուէտի օրինակը և ըսել թէ Հայաստանի կառավարութիւնը և պէտք չէ բարձրացնէ իր կշիռը տնտեսութեան մէջ անհեթեթ և վտանգաւոր է: Հայաստան շատ հեռու է Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն 1980–ական թուականներու կացութենէն: Հայաստանի մէջ կայ աղքատութեան բարձր տոկոս: Ժողովուրդին մէկ կարեւոր մասը չունի բաւարար բժշկական

8/ տե՛ս http://www.oecd.org/dataoecd/52/34/40209928.pdf այս ուսումնասիրութեան հեղինակներն են, Լօնդի և Վուտզ:

խնամք, բարձրագոյն ուսման կարելիութիւն, եւ նոյնիսկ բաւարար սնունդ: Հայաստանի մէջ տակաւին պետութեան կշիռը պէտք է աւելի քան կրկնապատկուի որպէսզի հասնի Շուէտի այսօրուան վիճակին, և պէտք է աւելի քան երեք անգամ մեծնայ որպէսզի հասնի այդ երկրի 1980–ականներուն մակարդակին:

Արեւելեան Ասիոյ կարգ մը տնտեսապէս զարգացած երկիրներու մէջ, ինչպես Ճաբոն և Հարաւային Քորէա, կառավարութեան ծախսերը բաղդատած ՀՆԱ–ին յարաբերաբար աւելի ցած են քան թէ Արեւմտեան Երոպայի երկիրներու պարագային, սակայն Ճաբոնի և Հարաւային Քորէայի մէջ անցնող տասնամեակներուն, պետութիւնները անմիջականօրէն ուղղութիւն տուած են երկրի տնտեսութեան, տնտեսական ծրագրաւորումին՝ հինգ տարուայ ծրագրերու և զօրաւոր տնտեսական կարգաւորումներու միջոցաւ:

Նաեւ պէտք է նշել թէ Հարաւային Քորէայի պարագային կառավարութեան ծախսերը բաղդատած ՀՆԱ–ին 1995–էն 2005 բարձրացած է 21էն 29 տոկոս:

Որպէս այս բաժնի եզրակացութիւն կարելի է նախատեսել թէ Հայաստանի տնտեսական զարգացման անխափան շարունակման պարագային պետութեան ծախսերն ու կշիռը պիտի բարձրանայ և բաղդատած ՀՆԱ–ին հասնի 30–35 տոկոսի սահմաններուն:

Բ) Պետութիւնը միշտ դերակատար է տնտեսութեան մէջ

Տնտեսագէտներու մեծամասնութիւնը, բացի ծայրահեղ ուղղափառներէն, համոզուած են թէ պետութիւնը բազմաթիւ բնագաւառներու և պարագաներու պէտք է միջամտէ շուկայի գործունէութեան և կարգաւորէ զայն:Կ'ընդունի թէ կան պարագաներ, ուր շուկան կը ձախողի հայթայթել կարգ մը ապրանքներ կամ ծառայութիւններ: Ուրիշ պարագաներու շուկան կը ձախողի զանոնք արտադրել ակնկալուած քանակով, արտադրելով շատ աւելի կամ շատ նուազ քան ինչ կ'ակնկալուի: Այս բոլոր պարագաներուն երբ շուկան կը ձախողի արտադրութեան վերաբերեալ ճիշդ որոշումներ առնել, արդարացուցիչ պատճառ կըստեղծուին որպէսզի պետութիւնը միջամտէ և սրբագրէ շուկային ձախող որոշումները: Շուկայի ձախողութիւնը ակնբախ է կարգ մը տնտեսական ճիւղերու մէջ, ինչպէս՝ առողջապահութիւն, դեղագործութիւն և ֆինանսական շուկաներ: Տնտեսագէտներ Ճորճ Ագրլով և Ճոզըֆ Ստիկլից տնտեսագիտութեան Նոպէլեան մրցանակին արժանացան այս մասին իրենց ուսումնասիրութիւններուն համար:

Հայաստանի Հանրապետութեան կարեւոր մարտահրաւէրներէն մէկն է աղքատութեան նուազեցումը ընդհուպ մինչեւ անոր վերացումը: Այս իրագործելու համար կարեւոր է ծայրահեղ անհաւասար հարստութեան և եկամուտներու բաժանումի նուազումը, որուն արդիւնքը պիտի ըլլայ միջին դասակարգին ընդլայնումը: Պետութիւնը ծանր պատասխանատուութիւնը ունի ջնջելու անօթութիւնը և անտունութիւնը ու ապահովելու բոլոր քաղաքացիներուն բժշկական խնամք, ուսում, բնակարան, ապահով ծերութեան տարիներ, փոխադրական միջոց, եւ այլն: Այս բոլորն իրագործելու համար յաջորդ տասնամեակներուն, ինչպէս զարգացած երկիրներու փորձը ցոյց կու տայ, Հայաստանի պետութեան ծաւալը և կշիռը պէտք է բարձրանայ:

Պետութիւնը կարեւոր դեր ունի տնտեսութեան մրցունակութեան ապահով-

ման,եւ այդ կ'իրագործուի արգիլելով մենաշնորհներու առաջացումը: Հոս եւս, հակառակ անոր որ կառավարական դիրքերէն անդադար կը խօսուի մրցունակ տնտեսութեան անհրաժեշտութեան մասին, Հայաստանի պետութիւնը տակաւին մեծ ճամբայ ունի կտրելիք եւ իրեն վերապահուած է մեծ դեր: Պետութեան տարրական պարտականութիւններէն մէկը՝ օրէնքի գերակայութիւնը և օրէնքի հաւասար գործադրութիւնը բոլորին համար: Առանց օրէնքի գերակայութեան և արդար մրցակցութեան, նոյնիսկ շուկայի ձեւաւորումը կ՛ըլլայ անկատար: Դժբաղդաբար այս է կացութիւնը Հայաստանի Հանրապետութեան պարագային: Առանց այս անհրաժեշտ պայմաններուն որպէսզի երկրի տնտեսութիւնը ունենայ առողջ զարգացում, տնտեսագիտական սկզբունքներու մասին վիճաբանութիւնները կը վերածուին մտքի մարզանքի, որ այս պարագային գաղափարախօսական յստակ ենթահող մը կը բացայայտէ:

Արեւմտեան Եւրոպայի երկիրներու և ԱՄՆի պետութիւնները տնտեսութեան բազմաթիւ մարզերու մէջ կենսական դերակատարութիւն ստանձնած են: Այս մարզերէն ամենէն յատկանշականներէն մէկը գիւղատնտեսութիւնն է: Տնտեսապէս զարգացած երկիրներու պետութիւնները իրենց երկրագործներուն տնտեսապէս կը պաշտպանեն շուկայի գիներու ելեւէջներէն: Նոյնիսկ ամենէն ձեռներէց երկրագործը կրնայ սնանկանալ եթէ կլիմայական պայմանները աննպաստ ըլլան: Հետեւաբար տնտեսապէս զարգացած երկիրները կը գիտակցին թէ գիւղատնտեսութեան մէջ կարելի չէ ամբողջապէս վստահիլ շուկայական համակարգին, եւ ուրեմն պետութեան վերապահած են ազդու միջամտութիւն դերակատարութիւն:

Այլ մարզ ուր պետութիւնը կարեւոր ու հիմնական դերակատարութիւն ունի արտադրութեան և բաշխումի կարգաւորումն է: Տնտեսապէս զարգացած երկիրներուն մէջ կան մեծ թիւով պետական օրէնքներ և մարմիններ որոնք կը կարգաւորեն և կը վերահսկեն շուկան: Երբ երկրի մը տնտեսութիւնը աճի ու զարգանայ, պատճառներ և առիթներ որպէսզի պետութիւնը տնտեսութիւնը կարգաւորէ կը բազմանան, չեն նուազիր:

2008ի Սեպտեմբերին, Չինաստանի մէջ մօտաւորապէս 13000 երեխաներ հիւանդանոց փոխադրուեցան և չորս երեխաներ մահացան երբ խմեցին թունաւոր քիմիական նիւթ –մելամին– պարունակող կաթ, որ արդիւնք էր յաւելեալ շահի ակնկալութեամբ գիւղատնտեսական ձեռնարկութիւններու քրէական անփութութեան: Այս օրինակը շուկայի ձախողութեան պերճախօս օրինակ մըն է: Չինաստանի պետութիւնը իր պարտականութիւնը չկատարելով և վստահելով շուկային, պատճառ հանդիսացաւ հազարաւոր երեխաներու հիվանդութեան: Դժբաղդաբար այս օրինակին նման կան բազմաթիւ ուրիշ պարագաներ: Օրինակ՝ 2007ին յայտնի դարձաւ որ Չինաստանի խաղալիք արտադրող կարգ մը ընկերութիւններ կը գործածեն կապար պարունակող թունաւոր ներկեր, որոնք կը վնասեն երեխաներուն առողջութեան: Տնտեսապէս զարգացած երկիրներուն մէջ պետութիւններն ունին բազմաթիւ օրէնքներ և վերահսկիչ պետական մարմիններ, որոնք կը կարգաւորեն տնտեսական արտադրութիւնը: Զարգացող երկիրները, երբ ժամանակի ընթացքին ունենան աւելի զարգացած տնտեսութիւն, պետութիւնը պարտադրուած պիտի ըլլայ և միաժամանակ պիտի կարենայ շուկային մէջ ստանձնել աւելի լայն դերակատարութիւն:

Գ) 2008–ի ֆինանսական տագնապը վերարժեւորած է պետութեան կարեւորութիւնը

ԱՄՆի 2008–ի ֆինանսական տագնապը սկսաւ երբ բնակարաններուն գիները սկսան անկում ապրիլ մօտաւորապէս տասը տարիներ արագօրէն աճ արձանագրելէ յետոյ: Երբ բնակարաններուն գիները ինկան բազմաթիւ բնակարանատէրեր դրամատուներուն իրենց պարտքերը վճառելէ դադրեցան, որուն պատճառով ալ բազմաթիւ դրամատուներ և ֆինանսական ընկերութիւններ որոնք բնակարան գնողներուն պարտք տուած էին դիմագրաւեցին տագնապ և նոյնիսկ իրենք իրենց յայտարարեցին սնանկացած: Այս կացութեան իբրեւ հետեւանք ֆինանսական ընկերութիւնները և դրամատուները կտրականապէս կրճատեցին ուրիշներու պարտք տալը որուն հետեւանքով ալ երկրի տնտեսութիւնը ենթարկուեցաւ տնտեսական տագնապի: Այս տագնապը նաև ազդեց Եւրոպայի երկիրներու ֆինանսական հաստատութիւններուն և երկիրներուն տնտեսութեան վրայ:

Մինչեւ օրս շարունակուող ֆինանսական այս տագնապը դիմագրաւելու համար ԱՄՆի կառավարութիւնը և Կեդրոնական Դրամատունը 2008–9–ին աննախընթացօրէն միջամտեցին շուկայէն ներս և բազմաթիւ ձեւերով սկսան կարգաւորել այն: Նոյնն է պարագան Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն:

Ֆրանսայի նախագահ լիբերալ Նիկոլա Սարքոզին, որ իր նախագահական ընտրապայքարի ընթացքին առաջարկած էր աւելի լայն մասշտապով հենուիլ ազատ շուկայական յարաբերութիւններուն վրայ, ֆինանսական տագնապին ընթացքին, 2008 Սեպտեմբեր 23–ին ՄԱԿի Ընդհանուր Ժողովին առաջ իր ելոյթի ընթացքին, փոխելով դրամատիրութեան և ազատ շուկայի ի նպաստ իր զօրաւոր կեցուացքը, յայտարարեց թէ պէտք է որդեգրել դրամատիրութեան այն տարբերակը որ հիմնուած է յաւելեալ կարգաւորումներու վրայ: Ան կոչ ուղղեց աշխարհի միւս երկիրներու ղեկավարներուն ըսելով «Եկէք միասնաբար կերտենք կարգաւորուած դրամատիրութիւն մը ուր բազում ֆինանսական գործունէութիւններ չեն ձգուած միմիայն շուկայի տրամաբանութեանե: Ան նաև պահանջեց Ֆրանսայի մեծ ձեռնարկութիւններու պատասխանատուներէն արդարացնել իրենց ստացած աշխատավարձերը: Իր ելոյթէն երկու օր անց, Սեպտեմբեր 25ին, այլ ելոյթի մը ընթացքին Սարքոզի ըսաւ.«Ամենակարող շուկայի գաղափարը, շուկայ մը առանց որեւէ կարգաւորումի և քաղաքական միջամտութեան խելագարութիւն է: Այն գաղափարը թէ շուկան միշտ ճիշդ որոշումներ կ'առնէ յիմարութիւն է:

Իր կարգին Գերմանիոյ վարչապետ, պահպանողական Անկելա Մըրքել, սկսած է բարձրաձայն քննադատել ազատ շուկայական գաղափարախօսութիւնը: Դարձեալ 2008ի ֆինանսական տագնապի ընթացքին, Սեպտեմբեր 23–ին, Վոլքզվակընն գերմանական ինքնաշարժի ընկերութեան 15,000 աշխատաւորներուն առջև ելոյթ ունենալով, ան համաձայն գտնուած է թէ պետութիւնը պէտք է պաշտպանէ ընկերութիւնը՝ թիկունք կանգնելով այն գաղափարին թէ առանց պետութեան կողմէ սահմանափակումներու, շուկայի դրութիւնը կրնայ ըլլալ վտանգաւոր: Անկէ մէկ շաբաթ առաջ, Մըրքել ըսած էր թէ ԱՄՆը անպատասխանատու գտնուած է թող տալով որ դրամատուները և ֆինանսական ընկերութիւնները գործեն շատ քիչ պետական վերահսկողութեամբ:

Նոյն ժամանակաշրջանին, Անգլիոյ վարչապետ Կորտըն Պրաուն, Պի–Պի–Սի հաղորդակցականին ըսած է թէ հարկ է միջազգային յաւելեալ գործակցութիւն՝ վերահսկելու համար ֆինանսական տնտեսական մարզը,ինչպէս նաեւ անհրաժեշտ է բարեփոխել միջազգային տնտեսական հաստատութիւնները –Միջազգային Դրամական Ֆոնտ և Համաշխարհային Դրամատուն:

Մագրոտնտեսագիտութեան գետնի վրայ 2008ի տնտեսական տագնապը վերակենդանացուց Քեյնզէնականութեան վերադարձի բանավէճը: Այսօր գրեթէ բոլոր տնտեսագէտները կ՛ընդունին թէ կառավարական ներդրումները կը բարձրացնեն ՀՆԱն և կը ստեղծեն աշխատատեղիներ: Տնտեսագէտներու մեծ մասը կ՛ընդունի թէ տնտեսական ճգնաժամի ընթացքին կառավարութիւնը պէտք է աւելցնէ իր ծախսերը և պիւտճէական բացը, պէտք է հայթայթէ ընկերային յաւելեալ պաշտպանուածութիւն աղքատներուն և անգործներուն (social insurance or safety net), եւ պէտք է ներդրում ընէ երկրի ենթակառոյցային ծրագիրներուն ուժ տալու համար:

Անցնող երեք տարիներու փորձառութիւնը, առ նուազն Միացեալ Նահանգներու մէջ, ցոյց տուաւ թէ Քեյնզէնականներուն պնդումները ճիշտ էին, թէ, մինչեւ այն ատէն երբ երկրի տնտեսութիւնը տագնապի մէջ է, դրամի քանակի բարձրացումը սղաճ չ՚ստեղծէր, թե պետական պիւտճէի հսկայական բացերը երկրի տոկոսները չեն բարձրացներ և վերջապես պետական, ինչպէս նահանգներու, ծախսերու պակսեցումը տնտեսական ճգնաժամը կրնայ խորացնել:

Այս բոլոր մէջբերումները ցոյց կուտան թէ Արեւմտեան Եւրոպայի թէ պահպանողական և թէ աշխատաւորական–ընկերվարական կուսակցութիւններուն ղեկավարները գործնականօրէն հետամուտ են պետութեան տնտեսութեան դերի և կշիռի բարձրացման նոյնիսկ եթէ հրապարակային կերպով ազատ–շուկայական համակարգը գովաբանեն: Որեւէ տնտեսապէս զարգացած երկրի ղեկավար չ՚առաջարկեր կամ չի նախատեսեր պետութեան կշիռի նուազեցում տնտեսութեան մէջ: Հետեւաբար զարմանալի և արկածախնդրական է երբ Հայաստանի Հանրապետութեան կարգ մը ղեկավարներ կ՚ըսեն համոզուած են թէ պետութեան դերը պէտք է պակսի, եւ իրենց թէզերը կը հիմնաւորեն պետութեան որպէս թէ «վախճանիե մը հեռանկարով»:

Մասնակի եզրայանգումներ

Ազատ շուկայի ութոփիան ինքզինք պարտադրեց Լատինական Ամերիկայի մէջ 1990ական թուականներուն: Մեքսիքօ, Փերու, Արժանթին, Պոլիվիա, Վենեզուելա, ի շարս ցամաքամասի մնացեալ երկիրներուն, որդեգրեցին, այսպէս կոչուած, Ուաշինկթընի Համաձայնութեան տասը պատուիրանները եւ անոնց հետեւումով նախաձեռնեցին տնտեսութեան ազատականացման եւ սեփականաշնորհման լայնամասշտապ ծրագիրներու, որոնցմով կը կարծէին շուտափոյթ կերպով ետին թողնել անցնող «կորսուած» տասնամեակը եւ բռնել զարգացման ուղին: Մեքսիքոյի 1994ի փլուզումը եղաւ առաջին ազդանշան մը, որ օրին չուզեցին հասկնալ մնացեալ երկիրները: Պատմութիւնը ծանօթ է. 1998–2003 տարիներուն գրեթէ բոլոր երկիրները անցան տագնապէ, եւ ոմանք –Արժանթին, Պոլիվիա, Էքուատոր

ի մէջ այլոց– ուղղակի փուլ եկան: 2002–3 թուականներէն ի վեր գրեթէ բոլոր այս երկիրներուն մէջ կեդրոն–ձախ քաղաքական ուժեր ժողովրդային լայն քուէներով հասած են իշխանութեան: Կարգ մը երկիրներ Վենեզուելայի, Պոլիվիայի եւ Էքուատորի օրինակներով, այսպէս կոչուած, «ձախ թեքում»ին տուած են արմատական ուղղուածութիւն որդեգրելով Վենեզուելայի նախագահ Ուկօ Չավէսի Պոլիվարեան Յեղափոխութիւնն ու «21րդ դարու սոցիալիզմ»ի ծրագիրը: Ուրիշներ, Պրազիլի, Արժանթինի եւ Չիլէի օրինակով, աւելի չափաւորական ուղիով կ'ընթանան: Բոլորին պարագային ալ սակայն 1990ականներուն տիրապետող ազատ շուկայական համակարգն ու գաղափարախօսութիւնը խորքային եւ քննադատական վերատեսութեան ենթարկուած է: Անսպասելի չէր, ուրեմն, որ ֆինանսական տագնապին խորացման ժամանակ այս երկիրները արդարօրէն քննադատէին զարգացող երկիրներուն անպատասխանատուութիւնը՝ պետութեան դերակատարութեան նուազեցման քաղաքականութիւններու որդեգրման համար: Հակառակ որ զարգացած երկիրներու ղեկավարները շրջանցեցին ինքնաքննադատութիւնը, չի լսուեցաւ սխալներու մատնանշում, այդուհանդերձ ֆինանսական տագնապին լուծում մը փնտռելու իրենց ճիգերուն ընթացքին անոնք յանգեցան այն եզրակացութեան որոնց արդէն հասած էին նախապէս Լատինական Ամերիկայի երկիրները: Երբ աշխարհի երկիրներուն մեծամասնութիւնը, հիմնուելով անցնող 2–3 տասնամեակներու փորձին վրայ, սկսած են համոզուիլ թէ պետութիւնը պէտք է շատ աւելի մեծ դեր ստանձնէ երկրի տնտեսութեան մէջ, Հայաստանի մէջ հակառակ ուղղութեամբ գաղափարի զարգացման որդեգրումը, որ կը շարունակէ պնդել պետութեան դերի կրճատման անխուսափելիութեան ու անհրաժեշտութեան վրայ, լաւագոյն պարագային անզգուշութիւն է, իսկ յոռեգոյն պարագային կրնայ վնասակար և վտանգաւոր ըլլալ հայութեան համար: Ամէն պարագայի, անոր ետին պէտք է տեսնել ոչ թէ տնտեսա«գիտութիւն» այլ՝ սոցիալական անարդարութեան իրականութիւնը անտեսող եւ անհաւասարութեան ջատագովը հանդիսացող գաղափարախօսութիւն, որուն ներշնչումով շարունակուող տնտեսական քաղաքականութիւնը կը ծառայէ միայն փոքրամասնական իշխանախաւի շահերուն ի հեճուկս ժողովրդային զանգուածներու բարեկեցութեան:

Հայաստանի մէջ թոշակային համակարգի ամբողջական սեփականաշնորհման պետական հեռանկարը օրինակի կարգով կու գայ ցոյց տալու ազատ շուկայական ութոփիայի շարունակումը:

Ֆինանսական շուկաներու տագնապէն առաջ ԱՄՆի 2008ի նախագահական ընտրութիւններու Հանրապետական թեկնածու Ճոն Մըքէյն կ'առաջադրէր թոշակներու մէկ մասը պետականէն վերածել պարտադիր սեփական հաշիւներու, ուր աշխատաւորները իրենց թոշակի տուրքերուն մէկ մասը պիտի դնեն սեփական ֆինանսական դրամագլուխներու մէջ: Սակայն ֆինանսական շուկաներու ձախողութիւններուն և տագնապին լոյսին տակ, երբ, ի մէջ այլոց, ֆինանսական շուկաներու մէջ ներդրումներ կատարած թոշակառուները մեծ վնասներ կրեցին և շատեր ստիպուած եղան հետաձգել իրենց թոշակի անցնելու ծրագիրները կամ մինչեւ իսկ վերսկսան աշխատանքի, Մըքէյն այդ մասին հրապարակային կերպով արտայայտուելէ հրաժարեցաւ: Հեգնական է որ այնպիսի պահու մը երբ աշխարհի

մէջ ֆինանսական շուկաներու նկատմամբ վստահութիւնը կտրուկ ինկած էր, Հայաստանի կառավարութեան առաջարկով, Ազգային ժողովը որոշեց 2014ի յունուարէն սկսեալ պետական թոշակի համակարգը յաջորդ մօտաւորապէս քսանհինգ տարուայ ընթացքին վերածել 100 տոկոսով պարտադիր սեփական հաշիւներու, որոնք փաստօրէն ենթակայ պիտի ըլլան ֆինանսական շուկայի քմահաճոյքին: Ոչ մէկ տնտեսապէս զարգացած երկիր նման գրաւ չէ դրած: Սակայն Հայաստանի մէջ, ուր տակաւին ֆինանսական շուկաներ չեն կայացած, ուր դեռեւս ֆինանսական շուկաները կարգաւորող անհրաժեշտ օրէնքները չեն անցկացուած, պիտի որդեգրուի ծայրայեղօրէն շուկայական ուղղուածութիւն ունեցող թոշակային համակարգ մը: Հայաստանի քաղաքացիները, որոնք ֆինանսական տագնապներու պատմական փորձառութիւն չունին, պէտք է դաս քաղեն այլ ժողովուրդներու փորձառութենէն եւ պահեն թոշակներու պետական համակարգը շրջանցելու համար ապագային ահաւոր ռիսկեր որ թոշակներու ազատ շուկայական համակարգը կ'ենթադրէ:

Հայաստանի մէջ ազատ շուկայական ութոփիայի շարունակումը անշուշտ պատահականութեան արդիւնք չէ: Անոր ետին կայ անցումային տարիներուն իրենց տնտեսագիտական պատրաստութիւնը Արեւմուտքի ամենաուղղափառ թեքումով համալսարաններուն մէջ ստացած մտաւորականներու ամբողջ հատուած մը, որուն թեքնիք պատրաստութիւնը եթէ բարձր մասնագիտական մակարդակի է, այդուհանդերձ, դժբաղդաբար, զուրկ է քննադատական մտածողութենէ կամ այլընտրանքային առաջարկներու բանաձեւումէ: Ամբողջ բանավէճը, երբ ըլլայ, զուտ թեքնիքական բնոյթի է, կամ ալ՝ անձնական մրցակցութեան մղումով: Քննադատական մտքի նման բացակայութիւն իր կարգին պատահական չէ երկրի մը մէջ ուր տնտեսական քաղաքականութիւնը հիմնականին մէջ իշխող փոքրամասնական դասակարգի մենաշնորհներու պահպանման կը ծառայէ: Չկայ ժողովրդային խաւ մը, որ քաղաքացիական հասարակութեան գիտակցութեամբ սոցիալական հարցերու բարձրացման եւ սոցիալական իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր զօրաշարժ առաջացնէ: Ոչ ալ կան քաղաքական ուժեր, որոնք այդ այլընտրանքի յանձնառութեամբ իշխանութեան համար մղուած օրինական պայքարը հիմնեն ժողովրդային գիտակցման ու զօրաշարժի երկարաժամկէտ հեռանկարին վրայ եւ ատոր համար ալ հրաժարին իշխող փոքրամասնութեան մենաշնորհներուն թէկուզ եւ մտաւորականօրէն քննադատելու ինքնազսպումէն: Հետեւաբար այնքան ալ պէտք չէ զարմանանք, որ Հայաստանի մէջ թէկուզ եւ առկայ է պետութիւն մը, որուն տնտեսական քաղաքականութիւնը հետամուտ է իշխող դասակարգի մենաշնորհներու պահպանման, նոյն այդ պետութեան մակարդակով հնչէ սեփական վախճանի համոզումը:

1970–ականներու սկիզբին, երբ ԱՄՆի տնտեսութիւնը ենթակայ էր տնտեսական տագնապի, նախագահ Ռիչըրտ Նիքսըն ստիպուեցաւ պարտադրել ապրանքագներու և աշխատավարձերու ժամանակաւոր սառեցում, ինչ որ համազօր է տնտեսութեան մէջ պետական դերի բարձրացման: Այդ օրերուն պահպանողական Նիքսըն յայտարարեց իր նշանաւոր խօսքը՝«ի վերջոյ, բոլորս ալ Քեյնզընական ենք»: 2008ի ֆինանսական տագնապը եւ անոր լուծման ի խնդիր պետութե-

ան դերակատարութեան բարձրացումը հեռու են պետութեան վախճանին մասին նախանշաններ տալէ: Ընդհակառակը, մինչ ազատ շուկայական ութոփիան, որ, մէջբերելով Մարքսին, այնքան «ամուր» եւ իրական կը թուար, ֆինանսական պղպջակներու պայթումին հետ օդին մէջ կ'անհետի, թերեւս մինչեւ իսկ ականջալուր ըլլանք «այլեւս բոլորս ընկերվարական ենք» հաստատման...

BENEATH THE "FREE MARKET" SYSTEM

The Ideological Sources of Social Injustice in Armenia

Summary

_This paper focuses on the social polarization in Armenia, tracing back its root–causes to Armenia's transition from a centrally planned economy to the free market system after the declaration of independence. While we do not deny the inevitability of liberalization and private enterprise after the fall of Communism, we strongly question the path followed as unique and criticize the persistence of the model despite its failure to create an inclusive social–economic system vital for the process of nation–building. We argue that the dominant "liberal democracy and market economy" model is an ideological fallacy, and the "shock therapy" transition in Armenia, as elsewhere, has been possible only through an authoritarian intervention, which prevailed as a guarantor of capital's initial accumulation and the creation of a socio–economic system of privileges and monopolies. In a second phase of transition, the already consolidated system imposed the dual condition of formal democracy and scarce, if ever existing, social upward mobility. As a consequence, while, despite internal, if not personal, differences and disputes, the dominant minority class shows a remarkable engagement with the system, the voiceless people seem to have chosen "exit," emigration, as its way of finding hope for a better future.

ՀՀ աշխատանքային միգրացիոն իրավիճակի առավելություններն ու թերությունները

Դիանա Մինասյան

«Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների» գործարան ՓԲԸ գլխավոր հաշվապահ, Երևանի «Գլաձոր» համալսարանի հայցորդ

Քաղաքակրթության առաջընթացը մշտապես ուղեկցվել է բնակչության ներպետական և միջպետական շարժունակության աճով: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ–ը, Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Իսրայելը կայացել և զարգացել են միջազգային միգրացիոն հոսքերի շնորհիվ:

Այսօր միգրացիան դարձել է լրջագույն անհանգստության առարկա երկու պատճառով: Դրանցից մեկը բնակչության շարունակական հավելաճն է, որը հանգեցնում է երկրագնդի զարգացած և զարգացող երկրների միջև բնակչության տեղաբաշխման ուժգնացող փոփոխության, իսկ մյուսը լայնածավալ տնտեսական տեղաշարժն է, ինչը հետևեց Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ–ում կոմունիստական համակարգի փլուզմանը և, որի արդյունքում տեղի է ունենում բնակչության լայնածավալ տեղաշարժ մայրցամաքի արևելյան մասից դեպի արևմուտք:

Ներկա ժամանակաշրջանում աշխատանքային միգրացիան անխուսափելի է և անհրաժեշտ որոշ պետությունների համար: Պետք է նկատի ունենալ, որ միգրացիան դինամիկ գործընթաց է և այսօր միգրանտներ արտահանող երկրները, վաղը կարող են դառնալ միգրանտներ ընդունող երկրներ: Այդպիսի գործընթացի վառ օրինակներ են հանդիսանում Կենտրոնական և Հարավային Եվրոպայի երկրները, իսկ որոշ երկրներ հանդիսանում են միգրանտներ և՛ ընդունող, և՛ արտահանող պետություններ:

Իհարկե, կան յուրահատուկ գործոններ, որոնք խթանում են մարդկանց հոսքը դեպի մի երկիր կամ շրջան, կամ ստիպում են մարդկանց լքել իրենց հարազատ երկրները և ավելի լավ ապագա փնտրել արտերկրում: Տնտեսական անկումը, գործազրկությունը և ցածր աշխատավարձը, ավտորիտար ռեժիմները, պատերազմները ստիպում են մարդկանց բռնել միգրացիայի ճանապարհը: Մյուս կողմից՝ այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ տնտեսական աճը, ավելի լավ կենսապայմանները, աշխատուժի առաջարկի պակասը և բարձր աշխատավարձը, գրավիչ են դարձնում միգրացիան դեպի զարգացած երկրներ:

Միջազգային աշխատանքային միգրացիայի արդյունքում արտերկիր է ուղարկվում հատուկ տեսակի ապրանք՝ աշխատանքային ուժ, որի սկզբունքային տարբերությունը այլ ապրանքներից այն է, որ ինքը աշխատանքային ուժը հանդիսանում է գործոն այլ ապրանքների արտադրության համար: Ներկայումս, գրեթե աշխարհի բոլոր երկրներն ակտիվ մասնակցություն են ունենում աշխատանքային ուժի ներհոսքի և արտահոսքի վրա, ընդ որում պետական կարգավորումները հիմնականում ուղղված են այդ ամենից մաքսիմալ արդյունավետություն ստա-

նալուն, այսինքն՝ առավելագույնի հասցնել միգրացիայի դրական հետևանքները, և նվազագույնի հասցնել բացասական ազդեցությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ–ի գնահատմամբ՝ ներկայումս 185 մլն մարդ կամ երկրագնդի յուրաքանչյուր 35–րդ բնակիչ միգրացիայի սուբյեկտներ են, անօրինական աշխատանքային միգրանտների հաշվառումով՝ այդ թիվն առնվազն, կրկնապատիկ ավելի է: Միայն Եվրամիության (ԵՄ) երկրներում յուրաքանչյուր տարի կես մլն–ով ավելանում է ապօրինի միգրանտների թիվը[1]:

Միջազգային միգրացիոն հոսքերում Հայաստանը ներկայանում է որպես միգրանտներ արտահանող երկիր: 21–րդ դարի նախաշեմին Հայաստանը հանդես եկավ որպես հարկադրված միգրացիայի երկիր: 1991 թվականից սկսած՝ արտագաղթի մեծ ալիքը որոշ չափով կայունացավ միայն 1996–1997 թվականներին: Արտագաղթողների պիկը գրանցվել է 1993 թ., երբ բացասական սալդոն հասնում էր մինչև 100 հազարի: 1998–1999 թվականների քաղաքական իրադրություններից հետո արտագաղթի հոսքը կրկին էապես աճեց: Ըստ անկախ փորձագետների, այդ տարիների ընթացքում մոտավորապես 950 հազար հայեր հեռացել են երկրից: Նրանց հիմնական մասը, գրեթե 3/4–ը, հիմնականում տեղափոխվել է Ռուսաստան, ինչպես նաև ԱՊՀ այլ երկրներ, իսկ մնացած 1/4–ը ապաստանել են Եվրոպայում և ԱՄՆ–ում:

Սոցիալական առումով աշխատուժի միգրացիան «փախուստ» է՝ բարձր գործազրկության գոտուց ցածր գործազրկության գոտի՝ աշխատանք գտնելու և եկամուտ ստանալու ակնկալիքով: Դա նաև տարբեր շրջանների և երկրների միջև եկամտային բևեռացումը հաղթահարելու հնարավորություն է: Աշխատուժի սեզոնային արտագաղթը տասնյակ տարիներ շարունակ դրական դեր է խաղացել Խորհրդային Հայաստանի աշխատունակ բնակչության զբաղվածության հարցի լուծման և բարձր կենսամակարդակի ապահովման գործում: 1960–ական թվականներից Հայաստանից սեզոնային արտագաղթողների թիվը տարեկան միջին հաշվով կազմել է 40–50 հազար աշխատանքային տարիքի տղամարդ[2]:

Հաճախ աշխատուժի արտագաղթն ուղեկցվում է մարդկային կապիտալի արժեզրկմամբ՝ հաշվի առնելով, որ բարձր որակավորում ունեցող սուբյեկտը ընդունող երկրում զբաղված է իր մասնագիտական որակավորմանը ոչ հարիր աշխատանքով: Պատճառները բազմաթիվ են՝ լեզվական խոչընդոտներից մինչև անձի որակավորումը հաստատող փաստաթղթերի, այդ թվում բուհերի դիպլոմների փոխադարձ չճանաչումը և ազգային անհանդուրժողականությունը:

Շուրջ 3 մլն բնակչությամբ երկրի համար տարեկան տասնյակ հազարավոր տնտեսապես ակտիվ բնակչության անգամ ժամանակավոր արտագաղթը, երկրի տնտեսական անվտանգությանն առնչվող լուրջ հիմնախնդիր է՝ այդ ոլորտը բախտի քմահաճույքին մատնելու համար: Այն անթույլատրելի է նաև սեփական քաղաքացիների աշխատանքային իրավունքները պաշտպանելու տեսանկյունից: Հայաստանում 2010 թ–ի վերջերից նկատվում է բնակչության կենսամակարդակի անկում: Այն հատկապես սուր է նկատվում տարեցների և երիտասարդների շրջանում: Այս

1 Handbook on Establishing Effective Labour Migration Policies in Countries of Origin and Destination p. 21, 2006.

2 «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 13 մայիսի, 2000 թ.:

տվյալները հրապարակել է «Արաքս» հասարակական կազմակերպությունը (ՀԿ), որը գործում է Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքներում:

Ըստ «Արաքս» ՀԿ–ի տվյալների՝ կենսամակարդակի անկումը բարձր է տարեցների շրջանում և կազմում է 70 տոկոս[3]: Խոսքը Շիրակի մարզի մասին է, որտեղ այդ ցուցանիշը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է, ընդ որում երիտասարդությունը մարզից արտագաղթել է և շրջանում գերակշռում են հիսուն–յոթանասուն տարիքային խմբի ներկայացուցիչները:

Գծապատկեր 1

Արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալները՝ ըստ սահմանային անցման կետերի[4]:



Ինչպես երևում է գծապատկեր 1–ից 2004–2006 թթ–երի ընթացքում ՀՀ ժամանողների քանակը գերազանցել է ՀՀ–ից մեկնողների քանակը, սակայն 2007 թ–ից նորից սկսվել է հակառակ գործընթացը: 2008 թ–ին 23100 մարդով մեկնողների քանակը գերազանցել է ժամանողների թվաքանակին:

2009 թ–ին ՀՀ սահմանային անցման կետերով իրականացվող հետազոտության համաձայն՝ արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալը կազմել է 2889 հազար ուղևոր և 2008 թ–ի համեմատ նվազել է 71,7 հազարով կամ

3 http://news.am/arm/news/63547.html

4 ՀՀ վիճակագրական տարեգիրք 2010 թ., հունվար–դեկտեմբեր, Ե., 2011, էջ 48:

2,5%–ով: Ուղևորափոխադրումների հաշվեկշիռը (ժամանումների և մեկնումների տարբերությունը) 2009թ–ին կազմել է 2500 ուղևորություն, որը 1900–ով կամ 8,3%–ով ավելի է 2008թ–ին արձանագրված ցուցանիշից: Իսկ 2010թ–ին մեկնողների քանակը 29900 մարդով գերազանցել է ժամանողներին :

Վերջին տարիներին Հայաստանում շատացել է ուղևորաշրջանառությունը, սակայն դա դեռևս էմիգրացիա չէ: Միգրացիոն ծառայության տվյալների համաձայն՝ 2008 թ–ին Հայաստանից մեկնել և չի վերադարձել 23 հազար մարդ, 2009 թ–ին՝ 25 հազար, իսկ 2010 թ–ին՝ 30 հազար մարդ: 2011 թ–ի առաջին կես տարվա ընթացքում այդ ցուցանիշը կազմել է 67 հազար մարդ: Սակայն, դեռ վաղ է եզրակացություններ անել, քանի որ անհրաժեշտ է նաև հաշվի առնել սեզոնայնության գործոնը, որովհետև գարնան ամիսներին արտերկիր ավելի շատ են մեկնում, այնուամենայնիվ, համադրելով այս թվերը կստացվի, որ 2008–2011 թթ–ների ընթացքում Հայաստանից մեկնել է 150 հազար մարդ: Հայաստանի միգրացիոն ծառայության տվյալների համաձայն՝ Հայաստանից հիմնականում մեկնում են աշխատանքի բացակայության պատճառով:

Հայաստանի ոստիկանության տվյալներով՝ 2010 թ–ին երկրից մեկնել է 4119 քաղաքացի ավելի, քան վերադարձել է[5]:

2011թ. առաջին 9 ամիսներին Հայաստանի սահմանի հատման տվյալներով՝ երկրից մեկնել է մոտ 90 հազարով ավելի մարդ, քան ժամանել է: Այս թիվը հրապարակել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը[6]: Հրապարակված տվյալը ներառում է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով սահմանահատման տվյալները: 2011թ–ին 2010թ. նույն ժամանակահատվածի համեմատ մեկնողների և ժամանողների բացասական տարբերությունը աճել է մոտ 25 հազարով: Տարվա վերջին 3 ամիսներին նախկինում մեկնածների մի մասը թեև վերադառնում է, սակայն սովորաբար արտագաղթը կազմում է սահմանահատումների բացասական տարբերության՝ սեպտեմբերին արձանագրված ցուցանիշի մոտ կեսը: Այսինքն՝ 2011թ–ի արտագաղթը կկազմի առնվազն 40–45 հազար: ՄԱԿ–ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հրապարակած տվյալներով՝ 2011թ–ի առաջին 6 ամիսներին ՀՀ 2872 քաղաքացի արտերկրում ապաստան է խնդրել[7]:

Աշխատուժի տեղաշարժը բոլոր գործընթացների նման ազդում է կյանքի շատ բնագավառների վրա՝ ունենալով իր առավելությունները և թերությունները:

Աշխատուժի արտագաղթը ռեսուրսային և հետևաբար չարտադրված ապրանքների ու ծառայությունների կորուստ է երկրի համար: Աշխատուժը նաև արտադրության գործոն է, տնտեսական ակտիվության և ձեռնարկատիրական նախաձեռնության գործոն, որոնք էլ ամբողջության մեջ տնտեսական աճի գործոններ են: Այս իմաստով աշխատուժի արտագաղթը համարժեք է երկրից տնտեսական աճի արտահանմանը:

---

5 http://www.yerkramas.org/2011/02/07/rastet–chislo–grazhdan–armenii–pereezzhayushhix–v–rf–po–rossijskoj–gosprogramme/

6 http://smsmta.am/?menu_id=17

7 http://www.armtimes.com/28844

Սակայն, Հայաստանի ընտանիքների բյուջեների ձևավորման գործում մեծ դերակատարում ունեն տրանսֆերտները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ միգրանտների ուղարկած դրամական փոխանցումները զգալի դեր են կատարում նրանց ընտանիքների, ինչպես առաջնային պահանջմունքների, այնպես էլ ընդհանուր կենսամակարդակի բարձրացման, կրթական ու առողջապահական խնդիրների լուծման գործում: Համաձայն Կենտրոնական բանկի տվյալների՝ արտաքին անձնական դրամական փոխանցումներ ստանում է Հայաստանի բնակչության 35,9 տոկոսը, ընդ որում 25 տոկոսը ստանում է դրամական օգնություն միգրանտներից[8]:

Այսպես՝ 2009 թ–ին դրամական փոխանցումների գումարը կազմել է 1 մլրդ 575,7 մլն դոլար, սակայն, համեմատած 2008 թ–ի հետ, այդ թիվը կրճատվել է 30,6 տոկոսով: Իսկ ՌԴ–ից կատարված փոխանցումները կրճատվել են 35 տոկոսով և կազմել են 950 մլն դոլար: Անձնական դրամական փոխանցումները Հայաստանից Ռուսաստան 2009 թ–ին աճել են 15,5 տոկոսով և կազմել են 190 մլն դոլար, այս գործառույթներում զուտ սալդոն կրճատվել է 1,7 անգամ, ինչը պայմանավորված էր տնտեսական ճգնաժամով[9]:

2011 թ–ի առաջին 8 ամիսների ընթացքում բանկային համակարգով ֆիզիկական անձինք ոչ առևտրային նպատակներով Հայաստան են փոխանցել 772 մլն դոլար: 2010 թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատած, տրանսֆերտներն աճել են մոտ 25 տոկոսով: Վիճակագրությունը հաստատում է նաև, որ այդ 8 ամիսների ընթացքում Հայաստանից հեռացել է այնքան մարդ, որքան ողջ 2010 թ–ի ընթացքում[10]:

Առավել համեստ գնահատականների համաձայն՝ մասնավոր տրանսֆերտների տարեկան ներհոսքը համաչափելի է օտարերկրյա ուղղակի ներդրումների գումարային մեծությանը և շուրջ 2 անգամ գերազանցում է մեր հանրապետության պետբյուջեի եկամտային մասը:

Օրինակ՝ Ռուսաստանի միգրանտների կողմից տուն ուղարկվող ֆինանսական հոսքերը բավականին նշանակալից ազդեցություն ունեն ՀՆԱ–ի ցուցանիշի ձևավորման գործում: Հայաստանի ՀՆԱ–ի 10,5%–ը, Ուզբեկստանի ՀՆԱ–ի 11,3%–ը, Մոլդովայի ՀՆԱ–ի 23%–ը և Տաջիկստանի ՀՆԱ–ի 49%–ից ավելին ձևավորվում է հենց այդ դրամական հոսքերի շնորհիվ[11]:

2009 թ–ին ՀՀ–ում տնտեսական ցուցանիշների, մարդկանց սոցիալական վիճակի ու գնողունակության անկման գլխավոր պատճառներից մեկը համարվում է արտասահմանից դրամական փոխանցումների ծավալների կտրուկ նվազումը (գծապատկեր 2): Ըստ մի շարք հետազոտությունների՝ միգրանտների կողմից իրենց հարազատներին ուղարկված դրամական փոխանցումները էականորեն ազդում են ՀՀ տնտեսական աճի և ընդհանրապես սոցիալ–տնտեսական ցուցանիշների ձևավորման վրա: Հայաստանն այն երկրներից է, որի ՀՆԱ–ի մեջ բա-

8 http://www.yerkramas.org/2010/04/09/armyanskie–gastarbajtery–v–rossii–chto–sulit–zavtra/

9 http://www.yerkramas.org/2010/04/09/armyanskie–gastarbajtery–v–rossii–chto–sulit–zavtra/

10 http://www.lragir.am/armsrc/comments53585.html

11 С.В. Чернышев, «Торгово–экономическое сотрудничество Российской Федерации со странами СНГ», Федеральный справочник, № I–VI (январь–июнь) 2009.

վական մեծ է դրսից մասնավոր դրամական փոխանցումների մասնաբաժինը: Պաշտոնական տվյալների համաձայն՝ տարբեր տարիներին դրանք տատանվել են 18–25%–ի միջակայքում: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մարդկանց մի զգալի մասն էլ իր հարազատներին ու ծանոթներին գումարներ է փոխանցում ոչ պաշտոնական խողովակներով, ապա վստահորեն կարելի է ասել, որ դրանց ծավալներն իրականում ավելին են:

Գծապատկեր 2

ՀՀ–ում ՀՆԱ ցուցանիշները 2002–2012 թթ.[12]



Հատկանշական է, որ եթե Հայաստանը համեմատենք աշխարհում դրամական փոխանցումներ ստացող առաջատար հնգյակի՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ֆիլիպինների, Մեքսիկայի ու Ֆրանսիայի հետ, ապա մեկ շնչի հաշվով փոխանցումների ծավալով մեր ցուցանիշը գերազանցում է այդ երկրներին շուրջ 3 անգամ: Սա նշանակում է, որ Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումները առանցքային նշանակություն ունեն մարդկանց կենսամակարդակի ու աղքատության հաղթահարման գործում:

Այսպիսով՝ միանշանակ չի կարելի միգրացիան լրիվ բացասական կամ դրական գնահատել, քանի որ դրա հետևանքները երկակի են թե՛ ընդունող, և թե՛ արտահանող երկրների համար:

Կարելի է ասել, որ միգրացիան ըստ էության դարձել է տնտեսական քաղաքականության ու կառավարման բացերը քողարկող մի այնպիսի միջոց, որի շնորհիվ մարդիկ փաստացիորեն իրենց վրա են վերցրել պետական կառավարման հնարավոր բացասական հետևանքների վերացման գործը: Եվ չնայած միգրացիայի վերաբերյալ գոյություն ունեցող ձևավորված բացասական կարծիքի՝ այն նաև

12 http://www.parliament.am/draft_docs4/K–1252/mas2.pdf;
http://www.bankir.am/news.php?lang=1&color=b&news_cat_id=10&news_id=3528

դրական դեր է կատարում՝ հնարավորություն տալով շատ ընտանիքների ունենալ բավարար կենսամակարդակ, իսկ պետությանը՝ ապահովել տնտեսական աճի դրական ցուցանիշներ:

Վեց տարի Հայաստանում երկնիշ տնտեսական աճի ցուցանիշ է արձանագրվել՝ ՀՆԱ–ի զգալի ավելացմամբ: Սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամի անմիջական ազդեցությամբ 2008թ. Հայաստանի տնտեսության աճը կտրուկ դադարել է:

Վերջին 10 տարիներին Հայաստանի տնտեսության զարգացման գործընթացում նպաստել են մասնավոր տրանսֆերտները, իսկ քանի որ այդ տրանսֆերտների մոտ 90%–ը գալիս է Ռուսաստանից, իսկ դրանք կտրուկ նվազել են՝ կապված տնտեսական ճգնաժամի ազդեցության հետ, բնական է որ Հայաստանում նույնպես տնտեսական վիճակը պետք է վատանար:

Չնայած միգրացիայի դրական արդյունքներին՝ գոյություն ունեն բազմաթիվ բարդություններ և չարաշահումներ ցածր աշխատավարձի, վատ աշխատանքային պայմանների, սոցիալական պաշտպանության բացակայության, աշխատողների իրավունքների և արտասահմանցիների նկատմամբ խտրականության և ատելության, ինչպես նաև սոցիալական բացառման տեսքով:

Հայաստան վերադարձած միգրանտներին վերաբերող որակական հետազոտությունների նյութերի համաձայն՝ Հայաստան վերադարձածներից շատերը բավականին կարճ ժամանակ անց, տեղում չգտնելով իրենց ներուժի իրացման համար նպաստավոր պայմաններ ու համարժեք վարձատրություն, նորից հակվում են հեռանալու այստեղից: Դրանք հիմնականում այն մարդիկ են, ովքեր առաջին միգրացիոն փորձի արդյունքում բարձրացրել են իրենց մարդկային ներուժի որակները, ինչն, ըստ էության, անհնարին է եղել իրականացնել Հայաստանում:

Վերադառնալուց հետո հեռանալու տրամադրվածության ձևավորման հիմնական պատճառ է դառնում այն, որ այդ մարդիկ չեն տեսնում աճի ու առաջընթացի իրենց պահանջմունքը Հայաստանում բավարարելու հնարավորություն: Այսինքն՝ վստահորեն կարելի է եզրակացնել, որ մի կողմից՝ միգրացիան մարդկանց հնարավորություն է ընձեռում ապահովել իրենց ընտանիքների բարեկեցությունը, իսկ մյուս կողմից՝ այն յուրատեսակ միջոց է մարդկանց կարողությունների ու հնարավորությունների աճի տեսանկյունից:

Ներկայումս ՀՀ միգրացիոն տեղաշարժերը այնպիսի չափերի են հասել, այնպիսի ձևեր են ստացել, որ սկսել են էականորեն ազդել երկրի սոցիալ–տնտեսական զարգացման ընթացքի, բարոյահոգեբանական մթնոլորտի, սոցիալական կայունության պահպանման, ժողովրդագրական իրավիճակի և դրանով պայմանավորված երկրի ազգային անվտանգության վրա:

Ակնհայտ դրական տեղաշարժերի հետ մեկտեղ, Հայաստանի միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ շարունակում է մնալ բարդ: Արտաքին միգրացիայի բացասական մնացորդի միջին տարեկան մեծությունը գերազանցում է բնակչության բնական աճի ցուցանիշը, ինչը շարունակում է մնալ երկրի բնակչության բացարձակ թվի կրճատման գործոն:

Այս իրավիճակը որոշ չափով կանոնակարգելու համար անհրաժեշտ է կատարվեն համակարգված միջոցառումների խումբ, այդ թվում՝

–Ելնելով միգրացիայի սոցիալական գործառույթների կարևորությունից՝ անհրաժեշտ է կիրառել զբաղվածության նպատակամղված քաղաքականություն, նոր աշխատատեղեր ստեղծելու միջոցով թուլացնել սոցիալական լարվածությունը, պայմաններ ստեղծել բնակչության արտագաղթը նվազեցնելու և արտասահմանյան երկրներում անօրինական գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձն ապահովելու համար:

–Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել միգրացիոն իրավիճակը կարգավորելու և հրատապ տեղեկատվություն ստանալու համար: Դրան կնպաստի նախ զբաղվածության պետական ծառայությունում գրանցվող գործազուրկների գրանցման խթանումը, քանի որ այսօր գործազուրկներից շատերը, և հատկապես տղամարդիկ, թերահավատորեն են վերաբերվում ԶՊԾ–ներին, և չեն գրանցվում, ուստի պաշտոնական տվյալները զբաղվածության մակարդակի մասին չեն համապատասխանում իրականությանը:

–Հայաստանի Հանրապետության համար փոքր և միջին բիզնեսի զարգացումը պետք է դիտարկել որպես գերակա խնդիր և ստեղծել բարենպաստ պայմաններ դրա զարգացման համար: Փոքր և միջին բիզնեսի զարգացումը նպատակ ունի ստեղծել նոր աշխատատեղեր, ինչպես նաև կնպաստի միջին խավի ձևավորմանը, որը կունենա էական դերակատարություն քաղաքական, տնտեսական բարեփոխումների համար:

–Անհրաժեշտ է ստեղծել ուսումնական կենտրոններ միգրանտների համար, որոնք պլանավորման, տեղեկատվության տարածման և կոորդինացման գործառույթ կիրականացնեն, ուր միգրանտները կարող են դիմել՝ խորհրդատվություն ստանալու համար: Մեկնումից առաջ դասընթացների կազմակերպումը նպատակ ունի ապահովել միգրանտներին անհրաժեշտ ֆինանսական, առողջապահական, իրավաբանական, լեզվական, սոցիալական և այլ տեղեկատվությամբ:

–Միգրացիան ուղեկցող վտանգների վերաբերյալ տեղեկատվական միջոցառումներ իրականացնել, հատկապես, ռիսկային խմբերի (գործազուրկների, փախստականների, կանանց, երիտասարդների և այլոց) համար:

–Աշխատանքային միգրացիայի մասին 1994 թ. ԱՊՀ համաձայնագրից հետո Հայաստանը ստորագրել է երկկողմ համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ, որոնք վերաբերում են այդ երկրների տարածքում աշխատող ՀՀ քաղաքացիների սոցիալական պաշտպանվածությանը: Սակայն, իրականում այդ համաձայնագրերից ոչ մեկը չի գործում, և ոչ միայն այն պատճառով, որ հետևողականորեն չի կիրառվել, այլ նաև այն պատճառով, որ դրանցից ոչ մեկը չի թարմացվել և չի արտացոլում այդ երկրների օրենսդրությունում շարունակ կատարվող փոփոխությունները: Անհրաժեշտ է թարմացնել միջազգային պայմանագրերը, և դրանք համապատասխանեցնել օրենսդրական փոփոխություններին:

–«Ուղեղների արտահոսքը» կանխելու, մտավոր կապիտալը երկրում պահելու համար կարևոր է գիտահետազոտական աշխատանքների իրականացման ու

ստեղծագործական զարգացման հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև մտավոր սեփականության արդյունքների պաշտպանությունը: Այս հիմնախնդիրների լուծումը ենթադրում է ֆինանսական հսկայական միջոցներ և արդյունավետ գործող դատաիրավական համակարգ:

Advantages and disadvantages of the trade migration in the RA

Summary

Historically, progress has always been accompanied by migration both within and between countries. According to UNESCO, currently 185 million people or each 35th person in the world can be considered as a potential migrant. In regard to illegal labor migration, this number doubles showing that even more people are exposed to it. Only in European countries the number of illegal migrants increases by half a million each year.

For a country with a population of approximately three million people, emigration of thousands of economically active people creates a great issue concerning the country's economic stability. Therefore, leaving this issue without an appropriate solution may create huge.

In the last ten years transfers in the private sectors have created a stable basis for Armenia's economic development. According to different assessments, annual transfers in a private sector can be compared with the sum of foreign investments in our country and are approximately two times bigger than the budget revenues declared by the government.

Աղքատության և անհավասարության հիմնախնդիրը ՀՀ–ում

Մարիամ Բախշյան

Եվրասիա միջազգային համալսարանի
կառավարման 4–րդ կուրսի ուսանողուհի

Աղքատության հիմնախնդիրը հետխորհրդային տարածքում ձևավորված անկախ պետությունների սոցիալական բնույթի հիմնահարցերի մեջ առանցքայիններից է: Ընդհանրապես այն բնորոշ է անցումային շրջանում մտած հասարակական–քաղաքական համակարգերին: Կախված անցման շրջանում վարվող քաղաքականությունից և դրա իրականացման հաջողությունից՝ աղքատությունը տարբեր երկրներում ունենում է տարբեր դրսևորումներ՝ ըստ խորության, սրության ու տարածվածության աստիճանի: Աղքատության առաջին ուսումնասիրությունը՝ որպես սոցիալ–տնտեսական երևույթ, կատարել է Ս.Ռոունտրին, աղքատությունը սահմանելով, որպես «հնարավորություն բավարարել, այսպես կոչված, մարդու հիմնական պահանջմունքները սննդի, բնակարանի և հագուստի տեսքով: Համաշխարհային բանկը, հետևելով ժամանակակից հետազոտություններին, առավել կոնկրետացրել է սահմանումը, նշելով, որ «Աղքատությունը որոշ կենսական մինիմումների պահպանության անկարողությունն է»[1]: Հայաստանում աղքատության ձևավորումը, որը սկսեց արդեն 1991–1992թթ., ստացավ տարերային ու անկառավարելի բնույթ՝ անցման շրջանում որդեգրված քաղաքականության հետևանքում: Աղքատության ձևավորման վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ 1991–1996թթ. որդեգրված պետական կառավարման և տնտեսական ոլորտներում իրականացված քաղաքականությունը: Տնտեսական ոլորտում Հայաստանի կառավարությունը, որդեգրելով, այսպես կոչված, ազատ քաղաքականություն, անցումային շրջանում, փաստորեն, առաջնային համարեց տնտեսական ոլորտի բարեփոխումների իրականացումը՝ լիովին անտեսելով դրա հնարավոր անդրադարձների հավանականությունը հասարակական կյանքում: Հետևանքը եղավ այն, որ մեզանում ձևավորվեց մի պետություն, որի ողջ մտահոգությունը հարուստների խավ ձևավորելու միջոցով տնտեսության անցման կազմակերպումն է պլանայինից շուկայականի: Աշխարհում դեռևս հայտնի չէ որևէ նորմալ գործող շուկայական տնտեսություն, որը չի զուգորդվում ժողովրդավարական, քաղաքական համակարգով և քաղաքացիական հասարակությամբ: Այս երեքը փոխկապակցված գործոններ են, և եթե անցման շրջանում շեշտադրվում է միայն առաջինը, իսկ քաղաքական և հասարակական ոլորտները համարվում են երկրորդական, ապա ազատ շուկայի ձևավորումը անխուսափելիորեն ձախողվում է:

Ներկայումս Հայաստանում աղքատությունը վեր է ածվել հասարակության մեծամասնությանը բնորոշ մի երևույթի, որից դուրս գալը ժողովուրդն արդեն համարում է անհավանական և որ ամենից վտանգավորն է՝ ժողովրդի մեջ արդեն ձևավորվել է իր վիճակի նկատմամբ խոր հարմարվողականություն: Իսկ եթե

1 Макоули А., Определение и измерение бедности. В. сб: Бедность: взгляд ученых на проблему., М., 1994г., с. 7–24.

կա այդ վիճակից դուրս գալու որևէ ելքի փնտրտուքի փորձ, ապա դա համենայն դեպս չի կապվում Հայաստանի հետ, և մարդիկ աղքատության հաղթահարման ուղին տեսնում են Հայաստանից փախուստի և այլ երկրներում բնակելիություն հաստատելու մեջ: Հայաստանում աղքատությունը դադարել է զուտ սոցիալական բնույթի հիմնախնդիր լինելուց և աճել ու խորացել է այն աստիճան, որ վտանգի է ենթարկել հասարակության վերարտադրության գործընթացները, ինչպես ժողովրդագրական տեսանկյունից, այնպես էլ՝ հասարակական–քաղաքական և կրթամշակութային ու արժեքային: Այն աստիճան է անկում ապրել մարդկանց առաջնային կարևորության պահանջմունքների բավարարման կարողությունները, որ հանուն ֆիզիկական գոյատևման նվազագույնի, մարդիկ պատրաստ են զիջել ոչ նյութական հարթության վրա գտնվող արժեքներն ու պահանջմունքները: Սա հուշում է, որ ժամանակն է անհանգստանալու և մտածելու, որ աղքատության ծայրահեղ դրսևորումները, այնպիսի մի հասարակության մեջ ինչպիսին հայաստանյանն է, վտանգավոր հետևանքներ կարող են ունենալ ընդհանրապես ազգային անվտանգության վրա, քանի որ անվտանգության կարևոր գործոններից է ոչ միայն բանակը, այլև առաջին հերթին այդ երկրի և այնտեղ ապրող ժողովրդի զարգացման տեմպերը և առկա ներուժը: Աղքատությունը հաճախ դիտարկվում է որպես թերզարգացածության արտահայտություն: 1997 թ. Մարդկային զարգացման զեկույցը տարբերակում է այս երկու հասկացությունները՝ կապելով առաջինը անհատների և երկրորդը՝ անհատների համախմբի (հասարակության) հետ[2]:

Աղքատության հաղթահարման համար ՀՀ կառավարությունը 2003 թ. մշակեց մի ծրագիր, որը ձեռնամուխ կլիներ աղքատության վերացմանը: Այդ ծրագիրն անվանվեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր»: Ծրագիրը հաստատելուց հետո, 2004 թ. հունվարին կառավարությունը հաստատել է նաև ԱՀՌԾ կատարումն ապահովող 2004–2006 թթ. միջոցառումների ցանկը միաժամանակ՝ սահմանելով նաև այդ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ըստ եռամսյակների պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության ներկայացման մեխանիզմը: «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» իրականացման հաջող ընթացքը մեծապես պայմանավորված է ինչպես քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի, այնպես էլ դոնոր համայնքի գործընթացի ներգրավմամբ և ակտիվ մասնակցությամբ[3]: Ծրագրի իրականացման առաջին տարիներին արդյունքներն արդեն վկայում են ծրագրով առանձնացված գերակա ուղղություններով նպատակասլաց քաղաքականություն վարելու կառավարության պատրաստակամության և ձեռքբերումների մասին՝ միաժամանակ բացահայտելով որոշ հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջելու է ջանքերի էլ ավելի կենտրոնացում:

2003 և 2004 թթ. աղքատության և անհավասարության կրճատման դրական միտումներին զուգահեռ, բացահայտվել են որոշ խնդիրներ, և կառավարությունը մտադիր է իր առաջիկա ծրագրերում կատարել համապատասխան ճշգրտումներ

2 Рынок труда: проблемы и решения. Монография /А.В. Кашепов, С.С. Сулакшин, А.С. Малчинов. — М.:Научный эксперт, 2009. — 232 с.

3 http://www.armstat.am/file/article/poverty_2011a_00.pdf

ուղղված այդ խնդիրների լուծմանը: Մասնավորապես խոսքը վերաբերում է տարածքային կտրվածքով զարգացման անհամամասնություններին, ինչպես նաև խոցելի սոցիալական խմբերի բարեկեցության հարցերին: Վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճը նպաստել է իրական աշխատավարձի բարձրացմանը, զբաղվածության կայացմանը և սոցիալական ծառայություններին և տրանսֆերտներին ուղղվող բյուջետային ծախսերի ավելացմանը: Այդ ամենը, ինչպես նաև արտասահմանից մասնավոր տրանսֆերտների աճը, նպաստել են աղքատության մակարդակի զգալի կրճատմանը: 2004–2008 թթ–ին ընդհանուր աղքատության մակարդակը նվազել է 34,6%–ից 23,5%–ի, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 6,4–3,1%–ի: 2008 թ–ին նվազել է թե՛ աղքատության մակարդակը, թե՛ աղքատության սրությունը: 2009 թ–ին 2008 թ–ի համեմատ աճել է թե՛ աղքատությունը, թե՛ դրա խորությունը և սրությունը: Աղքատության վերանայված գծերի վրա հիմնված 2009 թ–ին բնակչության ամեն 3–րդը՝ 34,1%, եղել է աղքատ, նրանցից ամեն 5–րդը՝ 20,1% շատ աղքատ, իսկ 3,6%–ը՝ ծայրահեղ աղքատ: Միայն մեկ տարվա ընթացքում մոտ 214 հազար մարդ դարձել է աղքատ, աղքատների թվաքանակը 2009 թ–ին մոտ կազմել է 1,1 մլն մարդ, մոտ 245 հազարը նույն ժամանակահատվածում դարձել են շատ աղքատ, շատ աղքատների թվաքանակը կազմել է ավելի քան 650 հազար: Միևնույն ժամանակահատվածում մոտ 65 հազարը դարձել են ծայրահեղ աղքատ, ծայրահեղ աղքատների թվաքանակը 2009 թ–ին կազմել է մոտ 117 հազար:

2007 թ–ի հունվարի 1–ից մինչև 2012 թ–ի հունվարի 20–ը իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունները համաֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) ֆինանսավորմամբ գործող «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ–Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ–Հայաստան) կողմից: Վերջին հինգ տարիների ընթացքում ՀՄԿ փորձագետներն աջակցել են ՀՀ ԱՎԾ–ին ՏՏԿԱՀ բնակչության հաշվարկները Հայաստանի բնակչության պաշտոնական տվյալների հետ համահարթեցման գործում, ինչպես նաև հին մեթոդաբանության հիման վրա ՏՏԿԱՀ աղքատության հաշվարկների ստուգաճշտման (վերիֆիկացման) մասով: Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի /ՀՄԿ/ ֆինանսավորմամբ վերանայվել է ՏՏԿԱ հետազոտության ընտրանքը և ընդլայնվել է հատկապես գյուղական ընտրանքը՝ ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) կողմից, Հայաստանի գյուղատնտեսության և ոռոգման ոլորտներում կատարված 177 մլն ԱՄՆ դոլարի ներդրման ազդեցությունը վերլուծելու նպատակով: «ՀՄՀ–Հայաստան» ծրագրի նպատակն է կրճատել գյուղական աղքատությունը՝ կենսական մեծ նշանակություն ունեցող ոռոգման ենթակառուցվածքների վերականգնման, ինչպես նաև ֆերմերներին ու վերջիններիս ջուր մատակարարող կառույցներին ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

Աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2008–2010 թթ–ին մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար (դրամ)

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2010/2009, %
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	17644	17483	19126	109,4
Աղքատության ստորին ընդհանուր գիծ	24388	25217	27410	108,7
Աղքատության վերին ընդհանուր գիծ	29903	30920	33517	108,4

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2008–2010թթ.

2008–2010 թթ–ին Հայաստանում աղքատության մակարդակի աճը պայմանավորող առավել կարևոր գործոնը՝ 2009 թ–ին տնտեսության խոր անկումն էր՝14,1%: Հայաստանի տնտեսությունը 2010 թ–ին մի փոքր աճեց նախորդ տարվա նկատմամբ՝ 2,1%: Տնտեսության խոր անկումը զուգորդվելով բնակչության եկամուտների ավելացող անհավասարության հետ, նպաստել է բնակչության սպառման նվազմանը: Ինչպես բացահայտում են 2010 թ–ի ՏՏԿԱՀ տվյալները, ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008 թ–ի համեմատ նվազել է 8%–ով: Նվազումը նկատվել է սպառման բոլոր քվինտիլներում, բացի ամենահարուստ 5–րդ քվինտիլի, որտեղ արձանագրվել է սպառման աճ:

2010 թ–ին 2008 թ–ի նկատմամբ աճել է թե՛ աղքատության մակարդակը, թե՛ դրա խորությունն ու սրությունը: 2010 թ–ին բնակչության ավելի քան ամեն երրորդը՝ 35,8%, եղել է աղքատ, նրանցից մոտ ամեն հինգերորդը՝ 21,3%–ը՝ շատ աղքատ, իսկ 3,0%–ը՝ծայրահեղ աղքատ: Երկու տարվա ընթացքում մոտ 270 հազար մարդ դարձել է աղքատ, հասցնելով աղքատների թվաքանակը 2010 թ–ին մոտ 1,2 մլն–ի (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), մոտ 290 հազարը, նույն ժամանակահատվածում, դարձել են շատ աղքատ՝ հասցնելով շատ աղքատների թվաքանակը 694 հազարի: Միայն երկու տարվա ընթացքում մոտ 46 հազարը դարձել է ծայրահեղ աղքատ՝ հասցնելով ծայրահեղ աղքատների թվաքանակը 2010 թ–ին մոտ 98 հազարի:

Աղքատության հիմնական ցուցանիշները 2008–2010թթ–ին,(%)

	2008 թ.			2009 թ.			2010 թ.					
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	%–ը ընդհանուր առկա բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1,9	13,0	27,6	4,6	20,4	33,7	4,1	21,1	35,7	64,3	8,4	2,7
Երևան	1,1	8,1	20,1	2,1	13,7	26,7	2,2	14,3	27,1	34,2	5,8	1,8
Այլ քաղաքներ	2,8	18,2	35,8	7,4	27,9	41,5	6,1	28,9	45,4	30,1	11,3	3,7
Գյուղական բնակավայրեր	1,2	11,9	27,9	1,7	19,4	34,9	1,1	21,5	36,0	35,7	7,6	2,1
Ընդամենը	1,6	12,6	27,6	3,6	20,1	34,1	3,0	21,3	35,8	100,0	8,1	2,5

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2008–2010 թթ.
Նշում՝ սպառումը գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով:

2010 թ–ի ընթացքում Հայաստանում աղքատությունը նկատելի աճել է 2008 թ–ի համեմատ: Առավել արագ ավելացել է ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1,9 անգամ (կամ 1,4 տոկոսային կետով), շատ աղքատների աղքատության մակարդակն ավելացել է 1,7 անգամ (կամ 8,7 տոկոսային կետով), իսկ ընդհանուր աղքատության մակարդակը՝ 29,7%–ով (կամ 8,2 տոկոսային կետով): Աղքատությունը 2010 թ–ին դարձել է ավելի խորը և սուր: 2010 թ–ին աղքատության խորությունը գնահատվել է 8,1%՝ 2008 թ–ի 5,1%–ի համեմատ (աճը 1,6 անգամ), իսկ աղքատության սրությունը գնահատվել է 2,5%՝ 2008 թ–ի 1,4%–ի համեմատ (աճը 1,9 անգամ): Աղքատության գծի նկատմամբ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառման պակասուրդը, %–ներով արտահայտված, կազմել է 22,6%:

Աղքատությունը 2010 թ–ին շատ չի տարբերվում ըստ քաղաքային (35,7%) և գյուղական բնակավայրերի (36,0%): 2008–2010 թթ–ին աղքատության մակարդակի աճը գյուղական բնակավայրերում ավելի արագ էր ընթանում, քան քաղաքային բնակավայրերում (8,5 տոկոսային կետ՝ 8,1 տոկոսային կետի դիմաց): Մայրաքաղաք Երևանում աղքատության մակարդակն ամենացածրն է երկրում (27,1%) ՝ ըստ տարածաշրջանների: 2008 թ–ի համեմատ աղքատության աճը 2010 թ–ին Երևա-

նում կազմել է 7,0 տոկոսային կետ, Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում՝ 9,6 տոկոսային կետ: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք–գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (64,3%) քաղաքաբնակներ են: Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բևեռացումն, ըստ եկամուտների ցուցանիշի, ավելի խորն է՝ սպառման ցուցանիշի համեմատ: 2010թ–ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ կազմելով 0,265՝ 2008թ–ի 0,242–ի համեմատ: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 2010թ–ին 0,362՝ 2008թ–ի 0,339–ի համեմատ:

Poverty and Inequality

Summary

Successful and prompt solution of such major problems as poverty reduction and income inequality elimination are the preconditions for future progress. Republic of Armenia along with other states takes considerable efforts for reducing poverty and inequality. Particularly, the RA Government developed and put into operation Poverty Reduction Strategic Paper.

Summarizing the major problems existing in the countries with transitory economy and analyzing the estimations of international organizations for the Republic of Armenia and former Soviet countries, numerous statistic indicators describing poverty in Armenia, as well as the goals and objectives of Poverty Reduction Strategic Paper, it is proposed to focus attention on those social policy priorities the implementation of which will solve the problem of income inequality.

ՀՀ սոցիալ–տնտեսական իրավիճակը և զարգացման խոչընդոտները

Նելլի Պետրոսյան

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի կառավարում և տնտեսական հարաբերություններ ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողուհի միջազգային տնտեսական հարաբերություններ մասնագիտությամբ

Կառավարությունը առագաստ է, ժողովուրդը՝ քամի, պետությունը՝ նավ, ժամանակը՝ ծով:
Բյոռնե

Երկրի տնտեսությունը զարգանում է համաչափ, եթե համահավասար են զարգանում, սոցիալական և տնտեսական հատվածները: Եթե տնտեսական հատվածին են վերաբերում երկրի ֆինանսական, արժութային, արտադրական, արտաքին տնտեսական կապերի, ապրանքաշրջանառության հետ կապված հարցերը, ապա սոցիալական քաղաքականությունն անհրաժեշտ է մարդկանց միջև հարաբերությունների կարգավորման, բնակչության անապահով խավերին օգնություն ցույց տալու, աղքատության մակարդակը իջեցնելու, հասարակության նվազագույն բարեկեցությունն ու եկամուտների հավասարաչափ բաշխումն ապահովելու, բնակչության գործազրկության կարգավորման համար:

Հասարակության սոցիալ–տնտեսական վիճակի մակարդակ հասկացությունն ընդգրկում է հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Այս շարքին կարելի է դասել՝

- տնտեսական զարգացման մակարդակի ցուցանիշները (ՀՆԱ կամ ՀԱԱ ընդհանուր կամ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ի աճի տեմպերը, արժեզրկման տեմպերը, բնակչության մեկ շնչին ընկնող կարևորագույն ապրանքների արտադրությունը և այլն),
- պետբյուջեի ցուցանիշները, այդ թվում՝ սոցիալական ծախսերի չափը,
- ժողովրդագրական ցուցանիշները,
- հասարակության սոցիալական կառուցվածքի ցուցանիշները, ներառյալ սոցիալական անհավասարության ցուցանիշները,
- կենսամակարդակի ցուցանիշները երկրի և առանձին՝ սոցիալական տարբեր շերտերի մակարդակով, այդ թվում՝ սպառման, բնակարանային պայմանների և ունեցվածքի ցուցանիշները,
- կյանքի որակի ցուցանիշները, որոնք ներառում են զբաղվածության և գործազրկության ոլորտի բնութագրերը, անձնական անվտանգության գնահատականը, ռիսկի երաշխիքները՝ քրեածին միջավայր, բժշկական սպասարկման մակարդակ, ինչպես նաև առողջության և կրթության ցուցանիշները, բնապահպանական մթնոլորտի բնութագրերը:

Սակայն երբ այս ցուցանիշները չեն համապատասխանում իրենց բնական սահմանային մակարդակին, այդ դեպքում երկրի բնականոն զարգացման ըն-

թացքը խաթարվում է: Նման պարագայում առաջնային է համարվում լուծել առաջացած սոցիալ–տնտեսական հիմնախնդիրը, սակայն ինչպես ասում էր Ա. Էյնշտեյնը. «Անհնար է լուծել հիմնախնդիրն այն մակարդակում որում այն առաջացել է: Պետք է վեր կանգնել այդ հիմնախնդրից՝ բարձրանալով հաջորդ մակարդակ»: Այսինքն՝ պարզել դրանց առաջացման պատճառները և նվազագույնի հասցնել պատճառած բացասական հետևանքները՝ կանխարգելով վերջիններիս հետագա ազդեցությունը:

ՀՀ սոցիալ–տնտեսական իրավիճակը կախված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջավայրից:

Նշենք, որ 2009 թվականին համաշխարհային տնտեսությունը վերջին շուրջ 60 տարիների ընթացքում առաջին անգամ անկում ապրեց: Համաշխարհային ՀՆԱ–ն նվազեց 0,6 տոկոսով, որը մեծապես պայմանավորված էր զարգացած երկրներում տնտեսական անկմամբ: Աշխարհի շուրջ 89 երկրներում գրանցվեց տնտեսական անկում: Տնտեսական անկումը խորն էր նաև ԱՊՀ–ում:

Գծապատկեր 1.

Համաշխարհային տնտեսական աճը 1980–2009 թվականներին, ՀՆԱ–ի միջին աճի տեմպը տոկոսով[1]:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ճգնաժամյան ժամանակաշրջանում աշխարհում մեծ անկում և աճ գրանցած 20 երկրներ:

1 ԱՄՀ «World Economic Outlook», ՀՏԶ (2010) հաշվարկներ:

Աղյուսակ 1.

2009 թվականին աշխարհում
մեծ անկում և աճ արձանագրած 20 երկրները[2]:

	Անկում գրանցած երկրներ	Անկումը	Աճ գրանցած երկրներ	Աճը
1	Լատվիա	–18,0	Աֆղանստան	22,5
2	Ուկրաինա	–15,1	Եթովպիա	9,9
3	Լիտվա	–14,8	Ադրբեջան	9,3
4.	Հայաստան	–14,2	Չինաստան	9,1
5.	Էստոնիա	–13,9	Լիբանան	9,0
6.	Ֆինլանդիա	–8,0	Քաթար	8,6
7.	Ռուսաստան	–7,9	Ուզբեկստան	8,1
8.	Սլովենիա	–7,8	Կոնգո	7,5
9.	Իռլանդիա	–7,6	Ուգանդա	7,2
10.	Ռումինիա	–7,1	Նիգերիա	7,0
11.	Իսլանդիա	–6,8	Մոզամբիկ	6,3
12.	Մեքսիկա	–6,5	Զամբիա	6,3
13.	Մոլդովա	–6,5	Թուրքմենիա	6,1
14.	Հունգարիա	–6,3	Թանզանիա	6,0
15.	Խորվաթիա	–5,8	Զիմբաբվե	5,7
16.	Մոնտենեգրո	–5,7	Հնդկաստան	5,7
17.	Ճապոնիա	–5,2	Բանգլադեշ	5,6
18.	Շվեդիա	–5,1	Վիետնամ	5,3
19.	Իտալիա	–5,0	Մարոկկո	4,9
20.	Բուլղարիա	–5,0	Եգիպտոս	4,7

Այն իր հետքը թողեց նաև ՀՀ սոցիալ–տնտեսական կյանքում: Վերջին մի քանի տարիների շարունակական աճի դիմաց 2009–ին առաջին անգամ Հայաստանում գրանցվեց տնտեսական անկում: Սկսած 1990–ական թվականների կեսերից Հայաստանը եղել է արագ զարգացող անցումային երկրներից մեկը: Շուկայական ուղղվածություն ունեցող բարեփոխումների հետևողական իրականաց-

2 ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի տնտեսական զեկույց 2009, Երևան, 2009:

ման արդյունքում 1994–2001թթ. ընթացքում գրանցվել է համեստ, բայց կայուն տնտեսական աճ (միջինում՝ տարեկան 5%), 2002–2007թթ. ընթացքում տնտեսական աճը եղել է երկնիշ, որը, սակայն, ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում նվազեց, 2008թ. հասնելով 6,9%–ի, իսկ 2009թ–ին գրանցվեց կտրուկ անկում (–14.4%): Անկումը, ըստ էության, սկսվել էր դեռևս 2008–ի վերջին. որն առավել արագացավ 2009–ի սկզբին:

Գծապատկեր 2.

Տնտեսական աճը Հայաստանում 2008–2010 թվականներին, ամսական ցուցանիշներ, տոկոս նախորդ տարվա համեմատ (կուտակային)



Այժմ փորձենք ներկայացնել ՀՀ սոցիալ–տնտեսական ցուցանիշները և պարզել, թե ինչպիսի հիմնախնդիրների առաջ է կանգնած մեր երկիրը, որոնք են եղել և մնում դրանց առաջացման պատճառները, և ինչպիսի հետևանքներ են ունեցել ՀՀ սոցիալ–տնտեսական կյանքի զարգացման վրա:

Աղյուսակ 2[3].

ՀՀ սոցիալ–տնտեսական ցուցանիշները

	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	13,7	6,9	–14,1	2,1	5,9
Արդյունաբերական արտադրանք (մլն դրամ)	716549,3	739291,9	664522,8	824292,2	992078,0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը (մլն դրամ)	633877,8	574848,3	509265,2	601061,8	825234,5
Առևտրի շրջանառությունը (մլն դրամ)	1421799,9	1676740,4	1589392,2	1779444,5	2042266,0
Ծառայությունների ծավալը (մլն դրամ)	599435,6	732002,6	769267,1	788805,4	872370,6
Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը, %	7,0	6,3	7,0	7,0	6,2
Գործազրկության մակարդակն ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մեթոդաբանության, % (աղյուսակ)	28,7	16,4	18,7	19,0	–
Գնաճ %	4,4	9,0	3,4	9,4	4,7

Ըստ վերոնշյալ ցուցանիշների՝ ՀՀ տնտեսական զարգացումը իր անկումային փուլն է ապրել, ինչպես արդեն նշվել է ճգնաժամային տարիներին՝ 2008 թ–ից սկսած, ընդ որում 2009 թ–ին անկում են ապրել գրեթե բոլոր սոցիալ–տնտեսական ցուցանիշները: Ճգնաժամն իր բացասական ազդեցությունն ունեցավ ոչ միայն ՀՀ տնտեսական հատվածի վրա, այլ նաև սոցիալական զարգացման և բակչության կենսամակարդակի վրա:

3 http://www.armstat.am

Գծապատկեր 3.

Աղքատության մակարդակն ըստ մարզերի, 2008–2009 թթ.



Եթե մինչ ճգնաժամը բնակչության 25 տոկոսը՝ մոտ 800 000 մարդ, աղքատ էին, այդ թվում մոտ 120 000 ծայրահեղ աղքատներ, ապա ըստ 2009 թ. գնահատականների 149 000 մարդ հատել են 25 ծայրահեղ աղքատության սահմանագիծը, իսկ ևս 31 000 մարդ ավելացել 2010 թ–ին: 2010 թ. ծայրահեղ աղքատների թիվը գերազանցել է 2004 թ. ցուցանիշը 77 000 մարդով: Սակայն այս ցուցանիշները պաշտոնապես հրապարակված տվյալներ են համարվում, իսկ իրականում պատկերն ավելի վատթար է: Ընդ որում նկատվում է մարզերի միջև աղքատության ցուցանիշների խիստ անհավասարություններ (գծապատկեր 3): Աղքատության տարածվածության և աղքատության կրճատման արագության տարածքային տարբերությունները թույլ են տալիս ենթադրել, որ վերջին շրջանի տնտեսական աճի արդյունքները հավասարապես բաշխված չեն եղել երկրով մեկ: Այն, որ բևեռացումը մեր երկրի մարզերի միջև գտնվում է առավելագույն մակարդակի վրա, կարելի համոզվել նաև ըստ վարձու աշխատողների աշխատավարձի չափի (գծապատկեր 4):

Գծապատկեր 4.

Վարձու աշխատողների աշխատավարձը ըստ ՀՀ մարզերի 2010 թ.



Գծապատկեր 5.

Գործազրկությունը Հայաստանում[4]



4 http://www.tradingeconomics.com/armenia/unemployment–total–percent–of–total–labor–force–wb–data.html

Մեր հանրապետությունում, սոցիալ–տնտեսական զարգացման հիմնախնդիրների առաջացման պատճառը միայն ֆինանսատնտեսական ճգնաժամը չէ, վերջինս դրան միայն նպաստում է: Նույնիսկ մինչ ճգնաժամյան ժամանակահատվածում բևեռացումը և սոցիալական անհավասարությունը մեր երկրում բավական մեծ էր: Վերջինս բերում է սոցիալ–տնտեսական զարգացման խեղաթյուրման, որն էլ հետևանք է մի շարք բացասական երևույթների: Մեր երկրում բավական տարածված են մենաշնորհային և օլիգոպոլ շուկաները (աղյուսակ 2.): Արտադրությունը, ծառայությունների ոլորտը, գտնվելով մի քանի հզոր ձեռներեցների ձեռքում, հնարավորություն չեն տալիս զարգացնել փոքր և միջին բիզնեսը: Սակայն, կառավարության հայտարարմամբ, ՀՀ–ում արվում է ամեն հնարավոր քայլ, փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

Աղյուսակ 2.

ՀՀ ապրանքային շուկայում գերիշխող դիրք գրավող կազմակերպությունները

Շուկա	Գերիշխող դիրք գրավող ընկերությունները	Մասնաբաժինը շուկայում
Կաթնամթերքի շուկա	«Դուստր Մարիաննա» «Աշտարակ կաթ» «Չանախ»	70%
Լուծվող սուրճի	«Մոնոկաթ» ՍՊԸ–ն՝ 48,1%, «Նյուֆորս» ՍՊԸ–ն՝ 30,3%, «Մարսերալ» ՍՊԸ–ն՝ 7,5%.	85,9%
Հավկիթի շուկա	«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկայից» (ԼՏԹՖ) 42,49% «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայից» (ԵԹՖ),	70%
Դեղագործակալություն	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալություն» ՓԲԸ	100%
Դեղորայքի շուկա	«Ալֆա ֆարմ» «Ֆարմատեք»	50,6%
«Ցորենի ալյուր» ապրանքային շուկա	«Ալեքս Գրիգ» 47,3% «Մանանա Գրեյն» 34,4%	81,7%
Ազոտական պարարտանյութերի շուկայում	«Դվին Հոլդինգ» «Ազոտինվեստ»	81,2%
Ռուսական արտադրության մարդատար նոր ավտոմեքենաների իրացման հայաստանյան շուկա	«Արմենիա Լադա» «Կարկոմավտո»	99,23%

Այժմ փորձենք ներկայացնել, թե որն է մենաշնորհային և օլիգոպոլ շուկաների ազդեցությունը երկրի սոցիալ–տնտեսական զարգացման վրա: Ոչ կատարյալ մրցակցության պատճառով շուկա այլ կազմակերպությունների մուտքը բավականին բարդ է և խոչընդոտվում է, որի հետևանքով նվազում է շահագրգռվածությունը տվյալ ոլորտում գործունեություն սկսելու, այսինքն՝ չկան նախապայմաններ նոր կազմակերպությունների ստեղծման համար, հետևաբար չկան նաև աշխատատեղերի ստեղծման հեռանկարներ, որից էլ բխում է գործազրկության կայուն կամ էլ, կարելի է ասել՝ ավելացող մակարդակը, իսկ աշխատունակ անձը, որն ունի աշխատելու ցանկություն և հնարավորություն, առավել ևս սեփական գոյության պահպանման խնդիր, անպայմանորեն կփնտրի աշխատանք այլ երկրում կամ այլ տարածաշրջանում, և այս ամենը բերում է արտագաղթի ավելացման: Իսկ մրցակցության առկայությունը, ինչպես գիտենք, բարձրացնում է արտադրվող ապրանքի (կամ մատուցվող ծառայության) որակը, օգտակարությունը՝ համալրվելով այլ հատկանիշներով, միևնույն ժամանակ նվազեցնում է գները, որն էլ չի նպաստի արհեստական գնաճին: Իսկ վերջին մի քանի տարվա շեշտակի գնաճի գլխավոր պատճառներից մեկը ոլորտում մենաշնորհային կամ օլիգոպոլ շուկայի առկայությունն է:

Հաջորդ գլխավոր պատճառներից է նաև հարկային բարձր դրույքաչափերը: Նույնիսկ այն պարագայում, երբ ինչ–որ մի ոլորտ հնարավոր է մուտք գործել, հարկային բեռն այնքան ծանր է, որ շատ կազմակերպություններ չեն դիմանում վերջինիս, և կամ դուրս են գալիս տվյալ ոլորտից կամ էլ կազմակերպում են իրենց գործունեությունը ոչ օրինական դաշտում: Սրա հետևանքը ՀՀ–ում ստվերայնության բարձր մակարդակն է, որն այսօր կազմում է ՀՆԱ–ի մոտ 40–50%–ը: Այսինքն՝ սրանից հետևություն, ինչքան բարձր են հարկային դրույքաչափերը, այնքան ավելի մեծ կլինի ստվերայնության մակարդակը: Այն հարկային մուտքերը, որոնք կարող էին վճարվել ստվերային տնտեսությունների կողմից ցածր հարկային դրույքաչափերի պայմաններում, ավելի մեծ զանգված կկազմեին, քան ներկայիս բարձր հարկերի պայմաններում ստացվող մուտքերը մի քանի կազմակերպություններից :

Կատարելով ուսումնասիրություններ և վերլուծություններ մեր երկրի սոցիալ–տնտեսական իրավիճակի վերաբերյալ՝ ակնհայտ է դառնում, որ կան բազմաթիվ հիմնախնդիրներ և առավել առաջնային է լուծել վերջիններիս առաջացման պատճառները, որոնք կարծես թե ինքնին համարվում են հիմնախնդիր: Որպես այդպիսին դիտարկելով մոնոպոլիան և օլիգոպոլիան մեր երկրում, առավել առաջնային է համարվում պայքարը դրանց դեմ: Մեր երկրի սոցիալ–տնտեսական առողջացման քաղաքականության իրականացման առաջին քայլը պետք է լինի մրցակցային շուկայի ստեղծումը, որն էլ իր հերթին պայմանավորված է բազմաթիվ բարեփոխումների իրականացմամբ, ինչպիսիք են օրինակ՝ ազգային ներդրողների խրախուսումը, հարկային բարեփոխումները, անօրինական սահմանափակումների և խոչընդոտների վերացումը, մոնոպոլիայի և օլիգոպոլիայի սահմանափակումը:

Ընդհանրացնելով կարող ենք գալ այն եզրահանգման, որ մեր երկրի սոցիալ–տնտեսական զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների պատճառը պետության վարած տնտեսական և սոցիալական քաղաքականությունն է:

Socio–economic situation and obstacles of development in RA

Summary

The global economic decline in 2008–2009 had negative influence on the economy of Armenia. The crisis had its negative impact on social sector as well. The impact on the living conditions was even stronger . But the reason of the problems of our social–economic development is not only financial crisis. Even before the crisis, the social polarization and poverty in our country had been very high. There are extended monopoly and oligopoly markets in our country. The industry and service sectors are owned by several powerful businessmen, therefore any small and medium business has less chance to prosper. Because of imperfect competition the entrance into market by other companies is quite difficult. It results in a situation where setting up new organizations is discouraged, hence there aren't prospects of creating new jobs. The consequence is the stability or increasing rate of unemployment in our country. A person, who has desire and opportunity to work, especially if there is a problem of preserving his existence, will certainly seek work in an other country or region. This leads to increasing emigration.

As we know, the existence of competition increases the quality of the product (or service) and the utility, meantimeare, reducing its costs, which doesn't promote inflation. In the recent few years one of the main reasons of drastic inflation are the monopolies or oligopolies.

The next main reason is high tax rates, the consequence of which is the extension of grey markets (the share of grey market in GDP makes up 40–50%).

Having carried out research and having made analysis on the socio–economic situation of our country, it becomes evident that there are many problems and it's urgent to solve them. The struggle against monopolies and oligopolies are becoming more essential. The primary step of our country's social–economic recovery policy must be the creation of competitive markets and the reduction of tax rates.

Սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները սոցիալական փոփոխությունների համատեքստում

Լուսիկ Ղուկասյան

Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի սոցիալական աշխատանքի կրթական կենտրոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու,

Հովիկ Մելքոնյան

Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի սոցիալական աշխատանքի կրթական կենտրոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Աշոտ Հակոբյան

Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի սոցիալական աշխատանքի կրթական կենտրոնի դասախոս

Էլվիրա Զարգարյան

Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի սոցիալական աշխատանքի կրթական կենտրոնի դասախոս, հայցորդ

Սոցիալական աշխատանքը Հայաստան մտավ սոցիալական օրինաչափ փոփոխություններին (քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն), ցավոք նաև անկանխատեսելի փոփոխություններին (բնական աղետ, պատերազմ, ներգաղթ ու արտագաղթ, տնտեսության աննախադեպ անկում և այլն) զուգընթաց:

Բնական է, որ մասշտաբային, ընդգրկուն, ծավալուն փոփոխությունները բարենպաստ պայմաններ պետք է ստեղծեին սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացման համար, քանի որ այն, սոցիալական առաջընթաց պայմանավորող ու ապահովող ինստիտուտից բացի անհապաղ միջամտություն իրականացնող ինստիտուտ է՝ սոցիալական դժվարություններ ունեցող մարդկանց, խմբերի ու համայնքների համար: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում ենթարկվում է սոցիալական տարբեր ռիսկերի և շատ դեպքերում նա չի կարող ինքնուրույն հաղթահարել ստեղծված դժվարությունները: Այս առումով էլ սոցիալական աշխատանքի ինստիտուտը մասնակցում է սոցիալական բարդ, դժվարին իրավիճակներում գտնվող մարդկանց աջակցության կազմակերպմանն ու իրականացմանը:

Փոխարկվող հասարակության (ինչպիսին այսօր հայ հասարակությունն է) առանձնահատկություններից մեկն այն է, որ փոփոխությունները համընդհանուր և շարունակական բնույթ ունեն: Այսինքն՝ ընդգրկում են հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի բոլոր ոլորտները և որոշակի փուլի ավարտը սկզբնավորում է փոփոխությունների մի նոր փուլ: Այս տեսանկյունից առավել ամբողջականորեն ընկալելի է դառնում արևելյան այն ասացվածքը, թե.«Թող որ դու ապրես փոփոխությունների ժամանակաշրջանում»:

Սակայն, մյուս կողմից, այս ժամանակահատվածն անհատական (անձնական) որակների դրսևորման, նախաձեռնություն հանդես բերելու միջոցով որոշակի ցան-

կալի արդյունքների հասնելու հնարավորություն է ստեղծում: Այսինքն՝ ի տարբերություն նախորդ՝ խորհրդային համակարգի, որտեղ ավելի շուտ գնահատվում էր վարքի **ենթարկվող տեսակը** (չընդունելով սոցիալական նպատակները, արժեքները՝ անձը, այնուամենայնիվ, ենթարկվում էր սոցիալական նորմերին), այսօր, ըստ էության, անձնական նախաձեռնությունը դարձել է հասարակական արժեք և գնահատվում է **հարմարվող տեսակը** (հասարակական կանոնների և նպատակների լիակատար ընդունում)[1]: Վերջին դեպքում կարևորվում են ոչ միայն հասարակայնորեն սահմանված և ընդունելի «խաղի կանոնները», այլև դրանց հարմարվելու անձնական ներքին հնարավորությունները, առկա ռեսուրսները, ինչպես նաև դրանց կիրառման ունակություններն ու կարողությունները: «Տարրերն իրենց հավասարակշռությունը կորցնում են նաև կամ կերակուրներից ու ըմպելիքներից, օդի ապականությունից, կրքերի ամբոխումից, խառնակեցիկ վարքից կամ էլ այլ ու զանազան պատճառներից, որոնք կարող են խանգարել մարմնի ու նրա գործարանների կազմությանը, չեն համապատասխանում մարդու էությանը, և քայքայում ու նվազում են նրան»[2]:

Արդյունքում խոցելի ու սահմանային /մարգինալ/ իրավիճակներում կարող են հայտնվել ոչ միայն առանձին մարդիկ, խմբեր, այլև ամբողջ հասարակությունը: Եվ այս գործընթացներն այնքան էլ սահուն ու «փափուկ» չեն կատարվում: Բնականաբար, առաջնային են դառնում նաև փոփոխությունների կառավարման հմտությունները:

Ինչպես նշում են մասնագետները. «… հնարավոր չէ հասկանալ հանրության կյանքը, առանց հաշվի առնելով այն պատկերացումները, որոնք էլ հենց ձևավորում են այդ կյանքը»[3]: Եվ որպեսզի մեղմվի սոցիալական խոցելիությունը և փոխակերպվող հասարակությանը համարժեք աջակցություն ցուցաբերվի, պետք է ուսումնասիրվեն ու կառավարվեն հենց այդ փոփոխությունները: Իսկ դա էլ հնարավոր չէ, առանց հաշվի առնելու և, անհրաժեշտության դեպքում, նաև փոփոխելու սոցիալական պատկերացումները, ընկալումները, նորմերն ու արժեքները:

Եթե սոցիալական աշխատանքի մուտքը հայ հասարակություն դիտարկենք 1988 թվականից, ապա սկզբնական շրջանում իրականացված գործունեությունն ուներ ավելի շատ բարեգործական և կամավորական ուղղվածություն, և որն այդ ժամանակահատվածում սոցիալական աջակցության առավել համարժեք և արդյունավետ միջոց էր:

Այսօր արդեն այդ առաքելությունն իր վրա է վերցրել սոցիալական աշխատանք մասնագիտությունը: Իհարկե, վերը նշված գործունեության տեսակները (կամավորականություն, բարեգործություն, մասնագիտական աջակցություն) ամենևին էլ իրար չեն բացառում, սակայն հասարակական գործընթացների ու զարգացումների ժամանակակից համատեքստում, վերջինիս ներքին տրամաբանության տեսանկյունից, երբեմն դրանք գտնվում են տրամագծորեն հակառակ դիրքերում:

---

1 Ա. Խաչատրյան, Ա. Ոսկանյան, Ս. Ջուհարյան, խմբ.՝ Լ. Հարությունյան, Սոցիալական աշխատանքի հիմունքները, ուղեցույց սոցիալական աշխատողների համար, գիրք 1, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոն, ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն, «Ոսկան Երևանցի» տպագրատուն, Երևան, 2002, էջ 8:

2 Պողոս Պատրիարք Ադրինապոլսեցի (18–19–րդ դդ.) Խրատի թանգարան, Ս. Էջմիածին, 2004, էջ 236:

3 www.yabloko.ru/Themes/History/Shanin/ – Теодор Шанин. Социальная работа как культурный феномен современности. Дата индексирования 18.11.2003, с. 2.

Մասնավորապես՝

1. Բարեգործի համար հիմնական դրդապատճառը, շարժիչ ուժը բարոյական պարտքի գիտակցումն է և բարի գործ անելու ձգտումը: Այս դեպքում առաջնային է դառնում բարեգործն ինքը, իսկ նրա ներդրման, աջակցության արդյունավետությունը չափվում է բարեգործության տևականությամբ, շարունակականությամբ և մեծությամբ: Իսկ ժամանակակից սոցիալական աշխատողն իր խնդիրն ու նպատակը տեսնում է նրանում, թե ինչքան շուտ շահառուն, որին ինքն աջակցում է, կարողանա գործառնել առանց իրեն և իր օգնության: Սա, ըստ էության, մասնագիտական հաջողության չափման կարևոր չափանիշ է:
2. Բարեգործության ժամանակ կարևորվում են բարեգործի համոզմունքները, ձգտումներն ու նպատակները: Իսկ սոցիալական աշխատանքում կենտրոնական անձը հենց շահառուն է և նրա «ազատագրումը» սոցիալական աշխատողից[4]:
3. Սոցիալական աշխատանքը, ապահովելով մասնակցային հաղորդակցում և համագործակցություն[5], փորձում է նվազագույնի հասցնել և, ի վերջո, իսպառ բացառել **կախվածության սինդրոմը** (համախտանիշը), որը «…. հատուկ է այն մարդկանց, որոնք կարծում են, թե իրենց խումբը չի կարող լուծել սեփական խնդիրները՝ առանց արտաքին օգնության: Իսկ բարեգործությունն էլ ավելի է վատթարացնում այդ թուլությունը»[6]:
4. Հիմնական տարբերություններից մեկն էլ այն է, որ սոցիալական աշխատանքը, որպես մասնագիտական գործունեություն, կարգավորվում է համապատասխան նորմերով, աշխատանքային սկզբունքներով և էթիկական կոդեքսով:

Այսպիսով՝ մասնագիտական այնպիսի աջակցությունը, ինչպիսին սոցիալական աշխատանքն է՝ վերը նշված առանձնահատկություններով, անխուսափելի է դարձնում նաև անձնական ու հասարակական արժեքների վերանայումը, վերաարժևորումը՝ դարձյալ մասնագիտական միջամտության ու համագործակցության միջոցով:

Այս համատեքստում «Սոցիալական աշխատանքը», իրոք, մշակութային երևույթ է (ֆենոմեն)[7], որի վերջնական ձևավորումը, որպես **ինքնուրույն մասնագիտություն** և **ակադեմիական գիտաճյուղ** (դիսցիպլին) նույն Շանինը համարում է 20–րդ դարի 40–50–ական թվականները:

Այս տարիները համընկնում են սոցիալական փոփոխությունների նպատակով իրականացվող **զարգացման հաղորդակցության տեսությունների** (նորարարու-

4 www.yabloko.ru/Themes/History/Shanin/ – Теодор Шанин. Социальная работа как культурный феномен современности. Дата индексирования 18.11.2003, с. 3.

5 Կաժոյան Հրաչյա, Հաղորդակցություն սոցիալական փոփոխությունների համար. Ցանցային համագործակցության հիմունքներ: Ուս. ձեռնարկ. – Եր., Հեղինակային հրատարակություն, 2004, էջ 86:

6 Կաժոյան Հրաչյա, Հաղորդակցություն սոցիալական փոփոխությունների համար. Ցանցային համագործակցության հիմունքներ: Ուս. ձեռնարկ. – Եր., Հեղինակային հրատարակություն, 2004, էջ 81:

7 www.yabloko.ru/Themes/History/Shanin/ – Теодор Шанин. Социальная работа как культурный феномен современности. Дата индексирования 18.11.2003, с. 4.

թյունների տարածում, մասնակցային հաղորդակցում, ցանցային համագործակցություն և այլն) ձևավորման ու կիրառման ժամանակաշրջանի հետ:

Հայաստանի Հանրապետությունում մարդասիրական օգնության տրամադրման ոչ համակարգված գործընթացն առաջադրեց սոցիալական ծառայությունների ստեղծման անհրաժեշտությունը (ՀՀ կառավարության 1993 թվականի սեպտեմբեր 10, թիվ 458 որոշում)[8]: Սոցիալական ծառայություններում սոցիալական աշխատանքի առաջին մասնագետները սկսեցին լայնորեն զբաղվել տարբեր սոցիալական ծրագրերի իրականացմամբ:

2005 թվականին ընդունված սոցիալական աջակցության մասին օրենքը զգալիորեն հստակեցրեց սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սոցիալական աջակցության կազմակերպման ու տրամադրման սկզբունքներն ու կարգը, նաև սոցիալական աջակցության կառավարման համակարգը: Ուրվագծվեցին սոցիալական ծառայություններ տրամադրող մարմիններում սոցիալական աշխատանքի մասնագետի իրավունքներն ու պարտականությունները:

Այնուամենայնիվ, սոցիալական աշխատանքի ինստիտուտն իր կայացման մակարդակում դեռևս ունի մի շարք կարևորագույն հիմնախնդիրներ, որոնցից են՝ մասնագիտական խորհրդատվության, մասնագիտական լեզվի մշակման ու հաղորդակցման միջոցների, սոցիալական քաղաքականության նպատակների իրականացման, ծառայությունների փաթեթի մշակման և փաստաթղթավորման, սոցիալական աշխատանքի վերահսկողության և արդյունավետ գնահատման, այլ ծառայությունների հետ համագործակցության և այլն:

Սոցիալական աշխատանքի միջոցով ակտիվանում են մարդկանց և նրանց շրջապատող միջավայրի միջև գոյություն ունեցող ինտերակցիաները, կարգավորվում են հարաբերություններ, լուծվում են խնդիրներ, ձևավորվում է այն մարդասիրական համակարգը, որը նպաստում է մարդկանց կյանքի, կենսակերպի բարելավմանը: Այսօր սոցիալական աշխատանքի մասնագետներն իրականացնում են ակտիվ մասնագիտական գործունեություն մեր երկրի սոցիալական գրեթե բոլոր ոլորտներում: Ստեղծվել է սոցիալական աշխատողների գործունեության իրականացման մշակույթ:

Հայաստանում ընթացող սոցիալական փոփոխությունների համատեքստում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումներում ենթադրվում են սոցիալական աշխատանքի մասնագիտական հարթության վրա հայի ազգային բնավորության, մտածողության, վարքի անհատական ձևերի, ավանդույթների կոնկրետ դրսևորումներ: Այս մոտեցմամբ կամբողջականացվեն հայ հասարակության մեջ սոցիալական աշխատանքի զարգացման հնարավորությունները, ինչը թույլ կտա ուրվագծել սոցիալական աշխատանքի ազգային մոդելն ու առավել արդյունավետ մասնագիտական գործունեություն իրականացնել վերջինիս շրջանակներում:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է ուսումնասիրել սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացման առանձնահատկությունները՝ սոցիալական աշ-

8 Ձեռնարկ սոցիալական ծառայությունների կենտրոնների համար. Ուսումնական ձեռնարկների շարք: ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոն, N 1, 2002, էջ 14:

խատանքի հիմնախնդիրների լուծման, սոցիալական ապահովության համակարգի զարգացման, սոցիալական քաղաքականության իրականացման մակարդակի տեսանկյուններից, ինչպես նաև իրականացնել գնահատումներ ՀՀ–ում սոցիալական աշխատանքի զարգացումների և կայացման գործընթացի վերաբերյալ:

The Features of Social Work in the Context of Social Changes

Summary

Every human being runs different kinds of social risks during their lives and in most of cases they cannot overcome the given situation by themselves. And in this regard the institution of social work takes part in the process of organizing and implementing the assistance of people who are in difficult and complicated social states.

Today the professionals of social work carry out active professional activities in nearly all the social spheres of our country. The culture of realizing the activity of social workers is established. It is supposed that concrete demonstration of the Armenian national way of thinking, character, individual ways of behavior and traditions should be observed in the institutional reforms, realized in the context of social changes in Armenia. According to this standpoint, the possibilities of development of social work will become united in the Armenian society, which let us outline the national model of social work and actualize more productive processional activity.

In this situation it is necessary to study the features of developing the institution of social work– the solution of problems of social work, the development of the system of social provision, the level of realizing the social policy from the point of view of productivity, likewise to make evaluation to the process of development and management of social work in the Republic of Armenia.

Հայաստան–Սփյուռք քաղաքական համագործակցության անհրաժեշտությունն ու հեռանկարները

Կարինե Խոջայան

Հայաստանի նորանկախ պատմությունը լի է բազմաթիվ վերելքներով և վայրէջքներով, և անկախության հռչակումից ի վեր հայկական սփյուռքի դերը նրա կայացման և զարգացման գործում իրավամբ կարելի է համարել զգալի:

Ինչպես հայտնի է, հայկական ավանդական սփյուռքի առաջացումը հետևանք է XX դարի սկզբին թուրքական իշխանությունների կողմից մշակված և իրականացված ցեղասպանության քաղաքականության: Նրա ձևավորման և կայացման հենց այս փուլում **հայրենիքը** կորցրած հայերի մոտ սկսվեց ինստիտուցիոնալացման գործընթացը: Այս համատեքստում ամենևին պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը դարձավ Սփյուռքի համար յուրօրինակ համախմբող գործոն, և որքան էլ որ ցանկալի չէ՝ հայկական համայնքները և նրանց գործունեությունը համախմբող յուրատեսակ գաղափարախոսություն:

Գաղտնիք չէ, որ Խորհրդային Հայաստանն ավանդական Սփյուռքի կողմից որպես **հայրենիք** դժվար էր ընկալվում, կամ ամենևին չէր ընկալվում, և նրա գոյության ավելի քան յոթանասուն տարիների ընթացքում քաղաքական համագործակցության մասին խոսք անգամ չէր կարող լինել: Այն հիմնականում կրում էր մշակութային բնույթ, իսկ ՀԽՍՀ–Սփյուռք միակ կապող օղակը համարվում էր արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական հասարակական կազմակերպությունը[1]:

Հարկ է նշել նաև դեռ 1921թ. ստեղծված Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասին իր ավելի քան 200 արտասահմանյան մասնաճյուղերով, որի հիմնական նպատակն էր ներգրավել սփյուռքահայերին երկրի վերաշինության գործին: Սակայն այս կառույցն երկար կյանք չունեցավ և արդեն 1937թ. լուծարվեց: Արդեն նորանկախ Հայաստանում Սփյուռքի հետ տարվող աշխատանքները համակարգելու նպատակով 2000թ. ՀՀ ԱԳՆ աշխատակազմում ստեղծվեց Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն[2]: Այն 2002թ. ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմավորվեց ՀՀ ԱԳՆ կազմում գործող Սփյուռքի հետ կապերի գործակալության, ապա 2008թ. նորից ՀՀ կառավարության որոշմամբ՝ Սփյուռքի պետական կոմիտեի[3]: որը գործեց 2008թ. հունիս–հոկտեմբեր ամիսներին: Նրա հիման վրա 2008թ. ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը:

Չնայած անցած տարիները զգալի ջրբաժան էին առաջացրել Հայաստան–

1 АОКС – Армянская общественная организация культурных связей с зарубежными странами.

2 «Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 342, հունիսի 23, 2000թ.:

3 ՀՀ կառավարության որոշում N 567–Ն, մայիսի 22, 2008թ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի աշխատակազմում պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, աշխատակազմի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1–ի N 1245 որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին:

Սփյուռք հարաբերություններում, այնուամենայնիվ, ԽՍՀՄ փլուզումը, անկախ Հայաստանի Հանրապետության հռչակումը և «կորցրած հայրենիքի» ինչ–որ չափով վերագտնելու հանգամանքը մեծ խանդավառությամբ ընդունվեց Սփյուռքի կողմից: Հայաստանում իրենց գործունեությունը սկսեցին ծավալել ավանդական կուսակցությունները: Միևնույն ժամանակ սփյուռքի գործունեության առանցքում շարունակում էր մնալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցը, այդ իսկ պատճառով անկախության առաջին տարիներին ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում Հայոց ցեղասպանության ռազմավարության բացակայությունը Սփյուռքի կողմից դիտվում էր որպես յուրօրինակ դավաճանության դրսևորում: Այդ համատեքստում տեղին է հիշատակել նորանկախ Հայաստանի արտաքին գործերի առաջին նախարար Ռ. Հովհաննիսյանի պաշտոնանկության փաստը՝ կապված վերջինիս կողմից 1992թ. սեպտեմբերին ԵԽ արտգործնախարարների ստամբուլյան հանդիպման ժամանակ Հայոց ցեղասպանության հարցի արծարծման հետ: Սփյուռքում հերթական հիասթափության ալիք բարձրացավ, երբ Հայաստանում կասեցվեց ՀՅԴ կուսակցության գործունեությունը:

Միայն 1998թ. իշխանափոխությունից հետո ՀՀ նորընտիր նախագահը ՄԱԿ–ի բարձր ամբիոնից հայտարարեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում ընդգրկելու մասին[4]: Այդ օրվանից ի վեր պաշտոնական Երևանի դիրքորոշումն այս հարցում փոփոխության չի ենթարկվել: Սակայն, չնայած այս հանգամանքին, գաղտնիք չէ, որ այդ ուղղությամբ հիմնական աշխատանքն իրականացվում է սփյուռքահայ միությունների ու կառույցների կողմից, որոնք հանուն պատմական արդարության վերականգնման չեն խնայում ո՛չ իրենց կարողությունները, ո՛չ ուժն ու եռանդը:

Սակայն, որքան էլ դա պարադոքսալ չէ, այսօր իրական քաղաքական համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի միջև գրեթե բացակայում է, և սփյուռքահայ կառույցների ներուժի զգալի մասը հիմնականում ուղղվում է զուտ բարոյական կարիքները հոգալուն: Մասնավորապես ՀՀ սփյուռքի նախարարությունը հիմնականում զբաղվում է գիտամշակութային, կրթական, հայապահպանությանը, ինչպես նաև արտերկրում ուծացման կանխմանը նպաստող մի շարք առաջնային բնույթի ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ:

Նույնը հնարավոր չէ ասել թուրքական պետության և թուրքական համայնքների մասին, որոնք վերածվել են իրենց բնակության երկրներում Թուրքիայի յուրօրինակ «դեսպանների»: Թուրքիան մեծ ջանքեր է գործադրում թուրքական համայնքների գործունեությունը ի նպաստ պետության ծառայեցնելու համար: Այն դրսևորվում է նախ և առաջ այս ուղղությամբ սփյուռքի իր կառույցներին բավականաչափ ֆինանսական միջոցների հատկացմամբ, որն էլ իր հերթին ուղղվում է պետության արտաքին քաղաքական հայեցակարգում առկա հարցերի լուծմանը:

Հայաստան–Սփյուռք քաղաքական համագործակցության անհրաժեշտու-

4 United Nations, General Assembly, Fifty–third Session, Official Report A/53/PV.1, 15th plenary meeting, Friday, 25 September 1998, 10 a.m., New York, http://disarmament.un.org/Library.nsf/01c42bde69f2133e85257631004ff53f/131cce4da0a2e662852576550050a4c6/$FILE/a–53–pv15.pdf

թյունն այսօր իրավամբ զգացվում է: Այս առումով մեծ նշանակություն է ձեռք բերում դեռևս 2008թ. ստեղծված ՀՀ սփյուռքի նախարարությունը, որի հիմնական նպատակը, բացի հայապահպանության խնդրով զբաղվելուց և Հայրենիք–Սփյուռք հարաբերությունների հետագա զարգացումը խթանող բազմապիսի միջոցառումներ կազմակերպելուց, որն իրավամբ կարելի է այսօր խիստ անհրաժեշտ խնդիրներից մեկը համարել, պետք է լինի հայկական սփյուռքի ներուժի նպատակահարմար և հանուն Հայաստանի Հանրապետության, որպես պետության, նրա պետական շահերի պաշտպանության օգտագործման համապատասխան մեխանիզմների մշակումը:

Այս կապակցությամբ կարծում ենք, անհրաժեշտ է կազմել ՀՀ և Սփյուռքի միջև քաղաքական համագործակցության ծրագիր, մշակել դրա իրականացման հիմնական մեխանիզմները և պետական մակարդակով ձեռնամուխ լինել դրա իրականացմանը: Որպես դրա հավանական տարբերակ կարելի է դիտարկել Սփյուռքի կողմից ինչպես Հայաստանի ապաշրջափակման հարցի բարձրացումը, առավել ևս, որ դրա համար կան բոլոր նախանշանները, այնպես էլ ՀՀ–ի հետ համատեղ Ադրբեջանի կողմից պատմությունը խեղաթյուրելու ուղղությամբ տարվող տեղեկատվական պատերազմին դիմագրավելու խնդիրը, որն իր հերթին խոչընդոտում է ԼՂ հարցի արդարացի լուծմանը:

ՀՀ–Սփյուռք հարաբերություններում խիստ անհրաժեշտ պայման է նրա փոխշահավետության ապահովումը: Մինչ այսօր ՀՀ–ն փորձել է կատարել դրան ուղղված որոշ քայլեր, որոնցից ամենազգալին, թերևս կարելի է համարել երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը, որը տեղի ունեցավ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում[5], իսկ 2007թ. Ազգային ժողովն ընդունեց ՀՀ քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ մտցնելու որոշումը[6], որով հստակեցվեց երկքաղաքացիություն ստանալու կարգը: Սակայն այս օրենքից հիմնականում օգտվեցին Ռուսաստանի և Վրաստանի ազգությամբ հայ քաղաքացիները հիմնականում արտագնա աշխատանքի անցնելու կապակցությամբ, ինչը պայմանավորված էր այդ ժամանակ Վրաստան–Ռուսաստան հարաբերությունների վատթարացմամբ, իսկ հայկական ավանդական սփյուռքից ՀՀ քաղաքացիություն շնորհվեց շատ քչերին:

Միևնույն ժամանակ Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովի փակման ժամանակ, որը տեղի ունեցավ 2011թ. սեպտեմբերին, ՀՀ սփյուռքի նախարարն իր ելույթում[7], ՀՀ–Սփյուռք քաղաքական համագործակցության հիմնական քայլերն ու նպատակները ներկայացնելով, նշեց պառլամենտում Սփյուռքի ներկայացուցիչների համար տեղեր տրամադրելու անհրաժեշտության մասին, առանձնացրեց ազգային խորհրդի

5 ՀՀ Սահմանադրություն (2005թ. 27 նոյեմբեր), Երևան, 2008, Իրավունք հրատ., հոդված 30.1:

6 Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշում, 26 փետրվարի, 2007, հոդված 5, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2903&lang=arm

7 ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ամփոփիչ խոսքը Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովի փակման ժամանակ, http://www.mindiaspora.am/am/Speaches_of_minister/1648

գաղափարը հանրապետության նախագահի գլխավորությամբ՝ ուղղված համահայկական խնդիրները քննարկելիս Սփյուռքի և Հայրենիքի միավորմանը, նշեց միջազգային սփյուռքյան կառույց ստեղծելու անհրաժեշտության մասին, որն ուղղված կլինի ՀՀ սփյուռքի նախարարության աշխատանքը դյուրացնելուն: Այլ կարևոր քաղաքական խնդիրների շարքում առանձնացվեց մասնագիտական խորհրդատվության առումով սփյուռքահայ մասնագետներին Հայաստանի պառլամենտ, Արցախի պառլամենտ, կառավարություն հրավիրելու անհրաժեշտության մասին: Որպես արդեն կայացած ձեռքբերումներ նախարարը նշեց սփյուռքի նախարարության, ինչպես նաև երկքաղաքացիության ինստիտուտի ստեղծումը:

Գաղափարներն, իհարկե, հետաքրքիր են, բայց ոչ մի դեպքում առարկայական: Նրանք չեն բխում թելադրվող իրականության պահանջներից և չեն կարող խթանել առկա խնդիրների լուծմանը: Մասնավորապես, անդրադառնալով ՀՀ ԱԺ–ում սփյուռքահայերի ներկայության, կարծում ենք, որ այդքան էլ իրատեսական գաղափար չէ սփյուռքահայերին ներքին խնդիրների լուծման մեջ ներքաշելը, հաշվի առնելով այն, որ նրանք հիմնականում քաջատեղյակ կարող են չլինել այդ հարցերում: Ինչ վերաբերում է սփյուռքի նախարարության աշխատանքի արդունավետության բարձրացմանը, ապա կարծում ենք, որ դրան կարող է նպաստել սփյուռքի նախարարության և արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ սերտ համագործակցությունը, քանի որ նախարարության բացակայության պայմաններում տարիներ շարունակ այս կառույցներն են հիմնականում զբաղվել այդ հիմնահարցերով, դրա համար տվյալ պարագայում առանձին մարմնի ստեղծման խիստ անհրաժեշտություն դեռևս չի զգացվում:

Այս համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի կողմից Սփյուռքին ուղղված որպես ամենահիրատեսական քայլ կարելի է դիտարկել սփյուռքահայ հայրենակիցների համար բարենպաստ գործարար միջավայրի ապահովումը և հարկային որոշ լուրջ արտոնությունների տրամադրումը, որն իր հերթին կհանգեցնի ներդրումների քանակի ավելացմանը, և դա տեղի կունենա ոչ թե ելնելով զուտ էթնոհայրենասիրական նկրտումներից, այլ իրական բիզնես–շահերից:

Կարևոր է նաև ՀՀ և սփյուռքահայ ուսանողների ուսման վարձի հավասարեցման ուղղությամբ սփյուռքի նախարարության կողմից տարվող աշխատանքը, ինչպես նաև այս հարցում Արցախի ու Ջավախքի և Հայաստանի ուսանողների միջև խտրականություն չդնելը, որն իհարկե դժվար է քաղաքական համագործակցության տարրերից համարել, սակայն Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացմանն ուղղված կարևորագույն քայլերից է:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ միայն Հայրենիք–Սփյուռք համատեղ գործունեությունն ի նպաստ ՀՀ, որպես պետության հետագա զարգացման, որը, կարծում ենք, պետք է դառնա հայկական ընդհանուր գաղափարախոսության հենք, կարող է նպաստել բազմաթիվ արտաքին և ներքին մարտահրավերներին դիմակայելուն և սփյուռքի գործոնն ու ներուժը քաղաքականապես նպատակահարմար ճանապարհով ուղղորդելուն:

Այս պարագայում հատկանշական էր ՀՀ նախագահի համահայկական ուղևորությունը սփյուռքի հիմնական գաղթօջախներով հայ–թուրքական արձանագրու–

թյունների ստորագրումից հետո: Այն, անշուշտ, կարևորագույն քայլ էր Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների մերձեցմանն ուղղված, որը թույլ կտա կարևորագույն քաղաքական հարցերի շուրջ միասնական ճակատով հանդես գալ: Սակայն այն, ցավոք, կրեց մասնավոր բնույթ և տեղի ունեցավ ոչ թե նրա նախաշեմին, այլ դրանից հետո, և քանի որ այս հարցի շուրջ կարծիքներն հակասական էին, այն մեծապես չնպաստեց այս հարցում միասնական դիրքորոշմամբ հանդես գալուն:

The Necessity of Republic of Armenia – Diaspora political cooperation and its perspectives

Resume

Since Declaration of independence adoption, the role of the Armenian Diaspora in life of the Republic of Armenia has been essential. Though since 1998 Armenia has declared the recognition of the Armenian Genocide as one of its foreign policy priorities, the main activity in this direction is held by Diaspora associations and organizations. At the same time, real political cooperation between Republic of Armenia and the Armenian Diaspora is at a very low level. The whole potential of the significant part of the Armenian Diaspora is mainly directed to the satisfaction of moral needs. The same thing cannot be said about the relationship between the Republic of Turkey and Turkish communities, which has been transformed into some kind of «ambassadors» of Turkey in all over the world.

In this context, it is important to develop political cooperation conception between the Republic of Armenia and Armenian communities, elaborate the mechanisms of its development and implementation, and undertake the realization of this priority in the state level. As a striking example of the realization of above mentioned issue we can suggest joint struggle for deblocking of Armenia, as well as for information war against distortion of history, initiated by the Azerbaijani side. This process cannot be unilateral. Armenian side, in its turn, should undertake some measures. In this process the role of Ministry of Diaspora should be essential.

Comparative analysis of United States' and Russia's programs in Armenia 1991–2010

Valentina Gevorgyan

Abstract

This paper examines the role of two world powers, namely United States and Russia, in the Republic of Armenia through a comparative analysis methodology from 1991 to 2010. The presence of both countries in Armenia is considered by mainly looking at the two sectors of operation: promotion of democracy and good governance, and promotion of peace and security. The sources for analysis are bilateral agreements and programs implemented in the fields to highlight the level of involvement as well as interests of the United States and Russia in their cooperation with Armenia on both bilateral and multilateral levels. For the purposes of this paper the research is conducted in chronological order to help define the gradual development of the cooperative structures of the two major powers with Armenia since its independence.

REVIEW OF THE LITERATURE

